

ՀԱՅԿԱԿՈՍԻ

325  
3-36

800 (25 974) 140 787

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՊԱՏՄԱՄՇՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ

Դ - Ե

Հրատարակվում է «Պատմամշակութային ժառանգության  
գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ - ի  
գիտական խորհրդի որոշմամբ

11 033 030

«ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ԻՒՄ 2008

ISBN 9953-6889-1-8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՏԴ 941 (479. 25): 008  
ՊՄԴ 63.3 (2Դ)+71  
Հ 964

**ԽՍՐԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՀԱԿՈՔ ՄԻՍՈՆՅԱՆ** (գլխավոր խմբագիր),  
**ՊԱՐՍՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ, ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ, ԿՈՐՅՈՒՆ ԴԱՅԱԴԱՐՅԱՆ,**  
**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՆԱՄՅԱՆ, ՆԵՐՏԵՍ ԿՈՍՏՅԱՆՅԱՆ** (պատասխանատու քարտուղար)

**EDITORIAL BOARD**

**HAKOB SIMONYAN** (editor-in-chief),  
**PARUYR MURADYAN, MURAD HASRATYAN, KORYUN GHAFADARYAN,**  
**HOVHANNES SANAMYAN, NERSES KOSTANYAN** (executive secretary)

Հ 964 «Հուլիարծան», տարեգիրք Դ - Ե  
Երևան, «Հուլիարծան» հրատ., 2008, 330 էջ

ՊՄԴ 63.3 (2Դ)+71

ISBN 99930-865-3-3

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
© **ՊԱՏՄԱՍՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԴԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

7(47.925)  
Հ-96

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄԱՍՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԳԻՏԱԴԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**ՀՈՒՇԱՐՉԱՆ**

ՏԵԽՆԻԿ

Դ - Ե

9004

«ՀՈՒՇԱՐՉԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2008



MINISTRY OF CULTURE AND YOUTH AFFAIRS OF REPUBLIC OF ARMENIA

SCIENTIFIC RESEARCH CENTER OF HISTORICAL AND CULTURAL HERITAGE

# HUSHARDZAN

(Monument)

ANNUAL

4 - 5

PUBLISHING-HOUSE "HUSHARDZAN"

YEREVAN 2008

МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ И ПО ДЕЛАМ МОЛОДЕЖИ РА

НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИЙ ЦЕНТР  
ИСТОРИКО-КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ

# УШАРДЗАН

(Памятник)

ЕЖЕГОДНИК

4 - 5

ИЗДАТЕЛЬСТВО "УШАРДЗАН"

ЕРЕВАН 2008

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԿՈՒ ՄԻՄՈՆՅԱՆ, ՆԱՍՄԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ - 24152 ՆՈՒՇԱՐԶԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈՒ .....	7
ՄԵՐՈՒԺԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ - ՂԻՄԻ ՍՈՒՐԲ ԽԱԶ ՎԱՆՔԸ ԵՎ 1993 - 2001 թթ. ՎԵՐԱԿԱՆԳԼՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ .....	19
ՀԱՎԻԹ ԲԵՐԹՄԵՆՋՅԱՆ - ՆԻՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՆՈՐԻՆՎԱՑՔԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՆԱՐՅԻ ՇՈՒՐՋ .....	43
ՆՈՎՆԱՆՆԵՍ ԿԱՐԱԳՅՈՋՅԱՆ - ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՏԱՐԱԾՔԸ ԸՍՏ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՂՔՈՒՐՆԵՐԻ .....	54
АРМЕН КАЗАРЯН - ВОССТАНОВЛЕНИЕ ЭЧМИАДЗИНСКОГО КАФЕДРАЛЬНОГО СОБОРА КАТОЛИКОСОМ КОМИТАСОМ И НОВАЯ ДАТИРОВКА СУЩЕСТВУЮЩЕГО КУПОЛА .....	68
МАРИЕТТА ГАСПАРЯН - ФОРМООБРАЗУЮЩИЕ ПРИНЦИПЫ В ТВОРЧЕСТВЕ АРХИТЕКТОРА ВАСИЛИЯ МИРЗОЯНА .....	93
АРШАВИР ТОРАМАНЯН - БОЛЬШАЯ ЦЕРКОВЬ В АРТИКЕ .....	113
ԳԱՌՆԻԿ ՇԱԽԿՅԱՆ - «ՄԱՍԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՔԱՇ ՆՎԻՐԱԿԱՆ ՏԱՃԱՐԸ», «ԳԵՂԱՔԱՆԴԱԿ ՆՐԱՇՔԸ» ԵՎ ՄՅՈՒՄՆԵՐԸ .....	121
ԱՐՏԱԿ ԳՆՈՒՆԻ, ԳԱԳԻԿ ԽԱԶԱՐՅԱՆ - ԿԵՐԵՆԻ ԴԱՍԱԿԱՆԱԴՐԱՇՏԸ .....	139
ФЕЛИКС ТЕР-МАРТИРОСЯН - РАСКОПКИ КРЕПОСТИ ЭРЕБУНИ .....	152
ԳԱՅԱՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ - ՄՈՒՐԱԲԱՆՈՒՐ ՆԱՎԱՅՐԸ .....	160
ՆՈՐԱ ԵՆԳԻՐԱՐՅԱՆ - ՉՈՐԱԳՅՈՒՂԻ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՍՐՈՎ ԴԱՍԱԿԱՆԸ .....	169
СТЕПАН ЕСАЯН, ЭММА ГЕВОРКЯН - УДИЛА ДРЕВНЕЙ АРМЕНИИ .....	174
АМИНА КАНЕЦЯН, ВАСИЛИЙ ЗИНДЖИРДЖЯН - ПОСЕЛЕНИЯ ДЖРАПИ .....	186
ՇԱՐԼ ՏԵՔՍԻԵ - Ա Ն Ի (հարված «Լկարագրություն Հայաստանի, Պարսկաստանի եվ Միջագետքի» գրքից) .....	192
ՀԱՎԻԹ ԲԵՐԹՄԵՆՋՅԱՆ - Թ. ԹՈՐԱՍՏԱՆՅԱՆԻ ԳՆԱՆԱՏԱՆՔԸ ՄԵՃԵՐԻ ՆՈՒՇԵՐՈՒՄ .....	201
ՆՈՐ ԳԻՐՔ .....	207
ՀԱՎԻԹ ԲԵՐԹՄԵՆՋՅԱՆ - ՊՐՈՖԵՍՈՐ ՄՈՒՐԱԴ ՆԱՍՐԱԹՅԱՆ .....	208
ՄՈՒՐԱԴ ՆԱՍՐԱԹՅԱՆ - ՊԱՈԼՈ ԿՈՒՆԵՆ (1936-1995) .....	220
ՀԱՎԻԹ ԲԵՐԹՄԵՆՋՅԱՆ - ԱՆԱՏՈՒ ՅԱԿՈՒՐԱՆ (1906-1984) .....	225
ՄՈՒՐԱԴ ՆԱՍՐԱԹՅԱՆ - ԺԱՆ - ՄԻՇԵԼ ԹԻԵՐՐԻ .....	231
ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - ԱՆԻ ՔԱՂԱՔԸ ԵՎ ԾԱՌԱՔԱՐ- ՄԱՂԱՍԲԵՐԴԸ (11-14-րդ դդ.) .....	236
ԱՆԴՐԵՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ - ԹԱՆԱՆԱՏԻ ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՅՈՒ ՎԵՐԱԿԱՆԳԼՄԱՆ ՆԱՐՅԵՐԻ ՇՈՒՐՋ .....	248
ԻՆԵՍԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՆՈՐԱ ԵՆԳԻՐԱՐՅԱՆ, ՆՈՒՄԻԿ ՄԵՆՔՈՆՅԱՆ - ԱՆՏԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԿԱՐԱՍԱՅԻՆ ԹԱՂՈՒՄ ԹԱԽԻՆՅ .....	260
ՆԱԿՈՒ ՄԻՄՈՆՅԱՆ, ԼԵՎՈՆ ՎԱՍԻՆՅԱՆ, ՆԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱԴԱՅԱՆ, ԱՐՄԱՆ ՆԱՐԱՆԴՅԱՆ, ՏԻԳՐԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, ՆԱՍՄԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ - ՎԵՐԱԿԱՆԳԼՎՈՒՄ Է ԵՂՎԱՐԴԻ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՅԻՆ .....	268
ԱՆՎԱՆՅԱՆԿԵՐ .....	312

## CONTENTS

<b>HAKOB SIMONYAN, HASMIK KARAPETYAN</b> - 24 152 MONUMENTS UNDER THE CARE OF THE STATE.....	7
<b>MERUJAN PETROSYAN</b> - MONASTERY SURB KHATCH AND ITS RESTORATION IN 1993- 2001 .....	19
<b>DAVID KERTMENJIAN</b> - ON THE PROBLEM OF COMPARATIVE CLASSIFICATION CONDUCTING THE LAYOUT-COMPOSITION OF ANCIENT ARMENIAN TOWNS .....	43
<b>HOVHANESS KARAGYOZIAN</b> - THE TERRITORY OF NAKHIJEVAN ACCORDING TO URARTIAN SOURCES .....	54
<b>ARMEN KAZARYAN</b> - THE RESTORATION OF ECHMIADZINE BY CATHOLICOS KOMITAS AND NEW DATING OF EXISTING DRUM .....	68
<b>MARIETTA GASPARYAN</b> - FORM-BUILDING PRINCIPLES IN THE CREATIVE ACTIVITY OF VASILI MIRZOYAN .....	93
<b>ARSHAVIR TORAMANYAN</b> - THE BIG CHURCH IN ARTIK .....	113
<b>GARNIK SHAKHKYAN</b> - "THE DEVOTED QASHATAGH TEMPLE OF THE MAMIKONYANS", "THE DELICATE WONDER" AND OTHERS .....	121
<b>ARTAK GNUNI, GAGIK KHACHATRIAN</b> - EXCAVATIONS OF KEREN BURIAL GROUND .....	139
<b>FELIX TER-MARTIROSSYAN</b> - EXCAVATIONS IN EREBUNI .....	152
<b>GAYANE KOCHARYAN</b> - MOKHRABLOUR SETTLEMENT .....	160
<b>NORA YENGIBARIAN</b> - THE URARTIAN GRAVE WITH A SWORD IN DZORAGYUGH .....	169
<b>STEPAN YESSAYAN, EMMA GEVORGYAN</b> - THE BITS OF ARMENIA .....	174
<b>AMINA KANETSYAN, VASILY ZINJIRJYAN</b> - SETTLEMENT OF JRARPI .....	186
<b>SHARL TECSIE</b> - ANI .....	192
<b>DAVID KERTMENJIAN</b> - THE APPRECIATION OF THE SCIENTIST'S MERITS .....	201
NEW EDITION .....	207
<b>DAVID KERTMENJIAN</b> - HIGH PROFESSIONAL QUALITY .....	208
<b>MURAD HASRATYAN</b> - PAOLO KUNEO (1936 - 1995) .....	220
<b>DAVID KERTMENJIAN</b> - ANATOLY JACOBSON (1906-1984) .....	225
<b>MURAD HASRATIAN</b> - JAN-MICHELE TIERRI .....	231
<b>KAREN MATEVOSIAN</b> - THE CITY OF ANI AND THE FORT TSARAKAR MAGHASBERD (XI - XIV cc.) .....	236
<b>ANDRANIK SARGUISSYAN</b> - THE MONASTERY OF TANAHAT .....	248
<b>INESSA KARAPETIAN, NORA YENGIBARIAN, HOUSSIK MELQONIAN</b> - KARAS BURIALS IN TALIN IN THE ANTIK PERIOD .....	260
<b>HAKOB SIMONYAN, LEVON VASSILYAN, HARUTYUN BADALYAN, ARMAN NALBANDYAN, TIGRAN ALEXANYAN, HASMIK KARAPETYAN</b> - THE CHURCH OF SURB ASTVATSATSIN IN YEGHVAR D IS BEING RECONSTRUCTED .....	268
TABLE OF THE NAMES OF THE MONUMENTS .....	312


### ՆԱԿՈՐ ՄԻՄՈՆՅԱՆ

*Պատմական զիջությունների թեկնածու, դոցենտ*  
**ՆԱՍՄԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

## 24152 ՆՈՒՇԱՐՉԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈ

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո մեր երկրում սկսվեց նոր իրավական դաշտի ձևավորման գործընթացը: Անկախության առաջին տարիներին ԽՍՀՄ մի շարք իրավական նորմեր և օրենքներ թեև գործում էին, սակայն կորցրել էին իրենց ուժը, կամ չէին համապատասխանում նոր ձևավորվող օրենսդրական դաշտին ու միջազգային համաձայնագրերին, որոնց միացել էր Հայաստանի Հանրապետությունը: Միևնույն ժամանակ, պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման և սեփականաշնորհման գործընթացը, հողատերերի նոր խավի ձևավորումը, վերջիններիս կողմից տարաբնույթ հողային աշխատանքների կատարումը, որոնք չէին վերահսկվում պետության կողմից, լուրջ խնդիրներ էին ստեղծել հուշարձանների պահպանության բնագավառում:

Նկատի ունենալով ստեղծված իրավիճակը, Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր հուշարձանների պահպանության վարչությունը վարչության պետ Կորյուն Ղաֆադարյանի նախաձեռնությամբ, 1992 թվականից ձեռնարկեց հուշարձանների պահպանության, ուսումնասիրման և վերականգնման օրենքների ու նորմերի մշակումը, պետական ցուցակների և այլ փաստաթղթերի կազմման մեթոդական միասնական սկզբունքների ու ձևաչափերի ստեղծումը: Պետական ցուցակների կազմման սկզբունքները մշակելիս հաշվի էին առնվել նաև եվրոպական երկրների, մասնավորապես՝



Ֆրանսիայի, փորձը:

Իշխանական տարբեր օղակներում և գերատեսչություններում երկարատև քննարկումներից հետո վավերացվեցին հուշարձանների պահպանության և ուսումնասիրման բնագավառի մի շարք նորմատիվային փաստաթղթեր, որոնցից առավել կարևորվում են 1998 թ. նոյեմբերի 11-ին ՀՀ Ազգային ժողովի ընդունած «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքը, «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության՝ 2002 թ. ապ-

րիլի 20-ի N 438 որոշումը (այսուհետև՝ Կարգ), «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին» 2003 թ. ապրիլի 11-ին ընդունված ՀՀ օրենքը:

Հանրապետության տարածքի պատմամշակութային անշարժ արժեքների պահպանությունն ապահովելու համար առաջնահերթ խնդիր էր հուշարձանների պետական ցուցակների ստեղծումը: Կառավարության հաստատած Կարգում, ի թիվս այլ նորմատիվային ու կարգավորող ձևակերպումների, սահմանված էր նաև ցուցակների պատրաստման ձևաչափը (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հուշարձանի համարը				Հուշարձանախումբը, հուշարձանը	ժամանակ	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը, հանրապետական/տեղական	Ծանոթություն
1	2	3	4					

Ըստ այդ ձևաչափի, 2001 թ. ձեռնարկվեցին ՀՀ տարածքում առկա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակների կազմման աշխատանքները:

Հուշարձանների պահպանության կարևորագույն փաստաթուղթը՝ հուշարձանների պետական ցուցակը, ստեղծվել էր նաև խորհրդային կարգերի օրոք, սակայն՝ բավականին ուշացումով: ՀԽՍՀ Մի-

նիստրների խորհուրդը ՀԽՍՀ հուշարձանների պետական միակ ցուցակը հաստատել էր լույս 1983 թ.: Այն չունեի կառուցվածքային կուռ տրամաբանություն, մեթոդական միասնական սկզբունքներ, սահմանված ձևաչափ և ներառում էր միայն հանրապետական նշանակության հուշարձանները: Այնուհանդերձ, այս խիստ կարևոր փաստաթղթով պետական պահպանության տակ էր առնվում հայոց պատմու-

թյան և մշակույթի առավել հայտնի 9158 հուշարձան: 1983-ից հետո հուշարձանների ցուցակները կազմում և հաստատում էր ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչությունը: 1986 թ. վարչության հաստատած տեղական նշանակության հուշարձանների ցուցակում ընդգրկված էր 13278 հուշարձան: Այս ցուցակը նույնպես չունեի որևէ տրամաբանական կառուցվածք և շատ ավելի անփույթ էր կազմված, քան ՀԽՍՀ Կառավարության հաստատածը: Նշենք, որ թեև վարչության կազմածը կոչվում էր տեղական նշանակության հուշարձանների ցուցակ, սակայն ներառում էր նաև 1983 թ. ցուցակում ընդգրկված հուշարձանների զգալի մասը: Հաճախ նույն հուշարձանը կրկնվում էր տարբեր անվանումներով կամ էլ հանդես էր գալիս տրոհված ձևով (մասնավորապես՝ մեծ դամբարանադաշտերը և բնակատեղիները): Այս իրավիճակը պայմանավորված էր մի կողմից հուշարձանների որոշ վկայագրերում տեղ գտած անճշտություններով, մյուս կողմից՝ բազմաթիվ հուշարձանների վկայագրերի բացակա-

յությամբ, և ցուցակները կազմելիս հիմնարար փաստաթղթերի ոչ լիարժեք ու մանրագնին քննությամբ: Հուշարձանների մասին տեղեկատվության խառնաշփոթ ավելի էին խորացնում իրավիճակին չտիրապետող պետական այն գործիչները, որոնք տարբեր ատյաններից հնչեցնում էին Հայաստանի Հանրապետությունում 30 000 հաշվառված հուշարձանի գոյության մասին տեղեկատվությունը, որը շրջանառվում էր նաև մամուլում, լրատվական հաղորդումներում՝ ընդհուպ մինչև այժմ:

Հայաստանի Հանրապետությունում հաշվառված և 1983 թ. ու 1986 թ. հաստատված հուշարձանների քանակական պատկերն արտահայտում է ստորև ներկայացված աղյուսակը, որը, սակայն, խիստ պայմանական է, քանի որ ցուցակներում, ինչպես նշեցինք, բազմաթիվ են կրկնությունները, որոնց հետևանքով խորհրդային տարիներին կազմած հուշարձանների ցանկերի պարզ համադրման արդյունքն ուռճացված է (տե՛ս աղյուսակ 2):<sup>1</sup>

Աղյուսակ 2

**ՀԽՍՀ հուշարձանների ցուցակները թվերով (ըստ ՀՀ վարչատարածքային բաժանման)**

ՀՀ վարչատարածքային միավորը և համարը	Հուշարձանների ընդհանուր քանակը	Հանրապետական նշանակության հուշարձանների քանակն ըստ 1983 թ. պետական ցուցակի	Տեղական նշանակության հուշարձանների քանակն ըստ 1986 թ. վարչության ցուցակի
1. Երևան քաղաք	941	602	339
1. Արագածոտնի մարզ	2753	1059	1694
2. Արարատի մարզ	1734	723	1011
3. Արմավիրի մարզ	726	228	498

1. Ներկայացված ցուցակում ՀԽՍՀ շրջանները միավորված են ըստ ժամանակակից մարզերի՝ նոր կազմած ցուցակների հետ համեղությունը հեշտացնելու նպատակով:

4. Գեղարքունիքի մարզ	5097	2102	2995
5. Լոռու մարզ	2488	1088	1400
6. Կոտայքի մարզ	2621	927	1694
7. Շիրակի մարզ	887	304	583
8. Սյունիքի մարզ	2141	745	1396
9. Վայոց ձորի մարզ	1750	795	955
10. Տավուշի մարզ	1298	585	713
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>22436</b>	<b>9158</b>	<b>13278</b>

Չնայած նշված թերություններին, մենք կարևորում ենք այս փաստաթղթերի դերն ու նշանակությունը հուշարձանների պահպանության և ուսումնասիրության բնագավառում:

2001-2003 թթ. հուշարձանների պետական ցուցակներ կազմելու գործընթացը վերապահված էր ՀՀ Կառավարությանն առընթեր հուշարձանների պահպանության վարչության «Հուշարձանների հետազոտման գիտաարտադրական կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետև՝ ՓԲԸ): Այդ տարիներին պատրաստվեցին և ՀՀ Կառավարության հաստատմանը ներկայացվեցին Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Վայոց ձորի մարզերի և Երևան քաղաքի հուշարձանների պետական ցուցակները: ՓԲԸ-ում պետական ցուցակներ կազմելիս հիմք էին ընդունվում միայն հուշարձանների մասին ձեռնարկության արխիվում պահվող վկայագրերը և պահպանական գոտիների նախագծերը: Մոնիտորինգ իրականացվում էր միայն առանձին դեպքերում: Այդ

պատճառով ցուցակներից դուրս են մնացել գիտությանը հայտնի այնպիսի կարևորագույն հուշարձաններ, ինչպիսիք են՝ Լճաշենի ամրոցը, Շենգավիթի դամբարանադաշտը, վաղուց հայտնի կամ վերջին տասնամյակում հայտնաբերված հին ու միջնադարյան բազմաթիվ հուշարձաններ Երևանում, Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի, Վայոց ձորի մարզերում և այլն: Ձարմանալի է, որ ՓԲԸ-ի կազմած պետական ցուցակներում չեն ընդգրկվել նաև մի շարք վկայագրված և հաշվառված հուշարձաններ: Կան նաև անվանումների, տեղադրության և թվագրման բազմաթիվ անճշտություններ:

2003 թ., ՓԲԸ-ի լուծարումից հետո, պետական ցուցակներ կազմելու գործառույթը ՀՀ Կառավարության՝ 2003 թ. N 896 որոշմամբ վերապահվեց ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետև՝ ՊՈԱԿ): 2003-2005 թթ. ընթացքում

ՊՈԱԿը պատրաստեց առավել բարդ ֆիզիկաաշխարհագրական միջավայրերում գտնվող և բազմաբանակ հուշարձաններով հայտնի Կոտայքի, Լոռու, Շիրակի, Տավուշի և Սյունիքի մարզերի հուշարձանների պետական ցուցակները:

Գիտահետազոտական կենտրոնում կազմած պետական ցուցակները կոլեկտիվ աշխատանքի, մեթոդական միասնական սկզբունքների կիրառման և գիտական այլ հիմնարկների հետ սերտ համագործակցության արդյունք են: *Այս բարդ և աշխատատար գործընթացն իրականացվեց առկա բոլոր նյութերի մանրագնին ուսումնասիրության, հին և նոր ցուցակների համադրության ու ճշգրտման սկզբունքով:* Հուշարձանների առավել ամբողջական ու ճշգրիտ ցուցակներ կազմելու նպատակով կատարվել են հետևյալ իրար հաջորդող աշխատանքները՝ նախ ուսումնասիրվել են հայոց պատմության և մշակույթի վերաբերյալ հրատարակված գիտական հարուստ գրականությունը, հուշարձանների պահպանության վարչության՝ Հայաստանի ազգային արխիվ հանձնած նյութերը, այլ կազմակերպությունների պատմաարխիվային նյութերը, որոնցից բաղկվել է հուշարձանների մասին եղած ողջ տեղեկատվությունը: Այնուհետև քաղված նյութերի, հանրապետական (1983 թ.) և տեղական (1986 թ.) նշանակության հուշարձանների, ինչպես նաև նորահայտ հուշարձանների ցուցակների և այլ նյութերի հիման վրա կազմվել են նախնական ցուցակներ, որոնք ստուգվել, ճշգրտվել, լրամշակվել ու ամբողջացվել են ՊՈԱԿ-ի տարբեր արշավախմբերի կողմից՝ 2003-2005 թթ. ՀՀ մարզերում հուշարձանների բնապայման ուսումնասիրության (մոնիտորինգ, հաշվառում, վկայագրում, վավերագրում և պահպանական գոտիների նախագծերի կազմում) արդյունքում: Ճշգրտումներ ու լրացումներ են կատարվել հուշարձանների պահպանվածության, անվանումների, թվագրման, տեղադրության, արժեվորման, ներկայիս վիճակի վերաբերյալ և այլն: Ցուցակները կազմելիս օգտագործվել են նաև հայ-ամերիկյան

(ղեկ.՝ Ռ. Բադալյան, Մ. Ջարդարյան), հայ-գերմանական (ղեկ.՝ Պ. Ավետիսյան), հայ-իտալական (ղեկ.՝ Ռ. Բիշոնե, Ս. Հմայակյան), ՊՈԱԿ-ի և Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի (ղեկ.՝ Հ. Սիմոնյան, Ի.Ղարիբյան) և այլ հնագիտական արշավախմբերի ու «ԳՖոնելլեր» հիմնադրամի հայկական մասնաճյուղի հետազոտությունների տվյալները: Ցուցակներում ընդգրկված հուշարձանները հիմնավորված են ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված տարաբնույթ ելակետային նյութերով՝ վկայագիր, վկայագրի ներդիր, հաշվառման քարտ, լուսանկար, տեղահանույթ, պատմամշակութային հիմնավորման նախագիծ, պահպանական գոտի և այլն: Սահմանված կարգի համաձայն՝ հուշարձանների պետական ցուցակների նախագծերը կարծիքի են ուղարկվել շահագրգիռ գիտական ու հասարակական կազմակերպություններ (ԳԱԱ Պատմության, Արվեստի, Հնագիտության և ազգագրության, Արևելագիտության ինստիտուտներ, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետ, ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն», ճարտարապետների միություն և այլուր), հանրապետական գերատեսչություններ և ՀՀ մարզեր: Ստացված կարծիքների ու առաջարկությունների հիման վրա լրամշակված ցուցակները քննարկվել են ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության փորձագիտական հանձնաժողովի նիստերում, և ապա, վերջնական տեսքի բերվելուց հետո, սահմանված ժամկետում տրվել են ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն՝ ՀՀ Կառավարության հաստատմանը ներկայացնելու համար:

ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակները ՀՀ Կառավարության կողմից հաստատվել են 2001-2005 թթ., ապա հրատարակվել «ՀՀ Պաշտոնական տեղեկա-

գիր» հանդեսի տարբեր համարներում (տես հավելված 1): Նրանցում ներկայացված է 24152 հուշարձան՝ 7254 պահպանական միավորով, Երևան քա-

ղաքի և ՀՀ տաս մարզերի հուշարձանների հետևյալ համամասնությամբ (տես աղյուսակ 3):

**Աղյուսակ 3**

**ՀՀ հուշարձանների պետական ցուցակները թվերով**

ՀՀ վարչատարածքային միավորը և համարը	Հուշարձանների քանակը	Պահպանական միավորների քանակը	Ցուցակի էջերի քանակը (համակարգչային տարբերակ)
1. Երևան քաղաք	977	389	73
1. Արագածոտնի մարզ	1796	814	119
2. Արարատի մարզ	906	224	65
3. Արմավիրի մարզ	420	179	31
4. Գեղարքունիքի մարզ	5270 (որից՝ գյուղ Արծվաշեն՝ 14 հուշարձան)	828 (որից՝ գյուղ Արծվաշեն՝ 4 պահպ. միավոր)	308
5. Լոռու մարզ	3045	1050	170
6. Կոտայքի մարզ	3208	811	163
7. Շիրակի մարզ	2349	824	130
8. Սյունիքի մարզ	2812	997	175
9. Վայոց ձորի մարզ	1373	341	88
10. Տավուշի մարզ	1996	797	149
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>24152</b>	<b>7254</b>	<b>1471</b>

Պետական ցուցակները կազմվել են ըստ աղյուսակ 1-ում ներկայացված ձևաչափի, վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքով սահմանված կառուցվածքի համապատասխան՝ մարզի և համայնքների նույն համարակալմամբ:<sup>2</sup> Հուշարձանները տրված են պահպանական միավորների անվանումների այբբենական հաջորդականությամբ: Յուրաքանչյուր բնակավայրի հուշարձանների համարակալումն սկսվում է 1-ից: Հուշարձանը (հուշարձանախումբը) ներկայացված է պահպանական միավորով: Պահպանական միավորը կարող է ընդգրկել մեկ առանձին հուշարձան, հուշարձանախումբ կամ համալիր: Ցուցակում ներկայացված հուշարձանների համարներն ու ենթահամարներն արտահայտում են հուշարձանախումբը կամ առանձին հուշարձանը (սյունակ 1), ենթահուշարձանը (սյունակ 2), կրկնակի (սյունակ 3) և այլ ենթակայության (սյունակ 4) հուշարձանները:

Առանձին հուշարձաններն ու համալիրները ներկայացված են 11 չափի գլխատառերով՝ տիպային անվանում-հատուկ անուն (այլ անվանումներ) հերթականությամբ: Ենթահուշարձանն ունի 10, իսկ կրկնակի ենթակայության հուշարձանը՝ 9-ը տառաչափ: Միևնույն տիպի հուշարձանները, անվանումների այբբենական հաջորդականությունից զատ, դասավորված են նաև ըստ ժամանակագրական հաջորդականության՝ վաղից դեպի ուշ: Բնակելի տները ներկայացված են հասցեների այբբենական դասավորությամբ (թացառություն է կազմում միայն Գյումրի քաղաքի պատմամշակութային արգելոց-թանգարանի ցուցակը, ուր բնակելի տները ներկայացված են ժամանակագրական կարգով՝ վաղից դեպի ուշ):

2. Հուշարձանների հետազոտման գիտաարտադրական կենտրոնում Արագածոտնի և Արարատի մարզերի ցուցակները կազմելիս իսխուել են ՀՀ մարզերի պետականորեն հաստատված համարակալումները. Արագածոտնի մարզի, հետևաբար նաև՝ բնակավայրերի, 1 ցուցիչը դարձել է 2, Արարատի մարզի 2 ցուցիչը դարձել է 3: Արմավիրի ցուցակում սխալն ուղղվել է, և մարզը ներկայացված է ճիշտ ցուցիչով (3): Արդյունքում երկու՝ Արարատի և Արմավիրի մարզերի հուշարձանները պետական ցուցակներում ներկայացված են միևնույն՝ 3, ցուցիչով:

Ցուցակի 5-9-րդ սյունակներում ներկայացված է հետևյալ տեղեկատվությունը՝

- 5. **Հուշարձանի (հուշարձանախմբի) անվանումը**
- 6. **Ժամանակը**
- 7. **Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն**
- 8. **Նշանակությունը (հանրապետական կամ տեղական)**
- 9. **Ծանոթագրություն:**

Հուշարձանի հատուկ անունը (եթե այդպիսին կա) տրված է տիպային անվանումից հետո: Որպես հուշարձանի հատուկ անուն ներկայացված են այն անվանումները, որոնք

- ստեղծվել են պատմականորեն կամ ընդունված են գիտական գրականության մեջ,

- նշում են պատմական կամ դիցաբանական այն անձանց անունները, որոնց նվիրված են հուշարձանները, կամ որոնց հիշատակի հավերժացմանն են կոչված դրանք,

- նշում են պատմական այն իրադարձությունը, որին նվիրված է հուշարձանը:

Ճանաչողական նպատակներով ցուցակում ներկայացվել են նաև տեղաբնակների կողմից հուշարձաններին տրված անվանումները: *Ըստ որում, ՓԲԸ-ում կազմված բոլոր ցուցակներում, ինչպես նաև ՊՈԱԿ-ի առաջին երկու ցուցակներում (Կոտայք, Լոռի) օտարախունջ անվանումները զետեղ-*

**Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ց ՈՒ Ց Ա Կ**

Հայաստանի Հանրապետության պատմության  
և մշակույթի անշարժ հուշարձանների

**8. ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐՁ**

**8.1 ԿԱՊԱՆ քաղաք**

ված են 5-րդ սյունակում: Շիրակի, Տավուշի և Սյունիքի ցուցակներում, փորձագիտական հանձնաժողովի որոշմամբ, դրանք տեղափոխվել են ծանոթագրության մեջ:

«Ժամանակը» սյունակում նշված են հուշարձանի կառուցման և գոյատևման դարաշրջանը, դարը (դարերը), հիմնադրման տարեթիվը (տարեթիվերը), էական վերակառուցման ժամանակը:

«Տեղը, հասցեն» սյունակում ներկայացված է հուշարձանի տեղը բնակավայրի նկատմամբ կամ

ժամանակակից հասցեն: Բնակավայրերից դուրս գտնվող հուշարձանների համար նշված են հեռավորությունը և դիրքը բնակավայրից, դիրքը որևէ հաստատուն օբյեկտի (օրինակ՝ սար, գետ և այլն) նկատմամբ, հանդամասի կամ տարածքի տեղական անվանումը և այլն: Հուշարձանի դիրքը և հեռավորությունը բնակավայրի նկատմամբ արտահայտված են կմ-ով կամ մ-ով և հետևյալ համառոտագրություններով՝

- հս = հյուսիս
- հվ = հարավ
- ան = արևելք
- ամ = արևմուտք
- հս-ան = հյուսիս-արևելք
- հվ-ան = հարավ-արևելք
- հս-ամ = հյուսիս-արևմուտք
- հվ-ամ = հարավ-արևմուտք
- կենտր. = կենտրոնական

Ենթահուշարձանի (կրկնակի ենթակայության հուշարձանի) դեպքում նշված է նրա դիրքը հուշարձանախմբի մեջ: Ըստ որում, ՓԲԸ-ի ցուցակներում ենթահուշարձանների տեղադրությունը, որպես կանոն, տրված է ծանոթագրության մեջ, ինչը հակասում է ձևաչափի պահանջներին: ՊՈԱԿ-ի ցուցակներում սխալը ճշտվել է, և այդ հիմնական տեղեկատվությունը տեղափոխվել է «Տեղը, հասցեն» սյունակ:

«Նշանակությունը» սյունակը ներկայացնում է հուշարձանի կարգավիճակը, արժեքավորման չափանիշը, այն է՝

• հանրապետական՝ ժողովրդի պատմության, նրա նյութական և հոգևոր մշակույթի նշանակալի, բարձրարժեք, հնագույն կամ հազվագյուտ արժեքների համար

• տեղական՝ հանրապետության տվյալ տարածաշրջանի պատմությունն ու մշակույթը, տեղական առանձնահատկությունները բնութագրող արժեքների համար:

«Ծանոթագրություն» սյունակում ներկայացված են լրացուցիչ տեղեկություններ, որոնք օգնում են ամբողջացնելու հուշարձանի վերաբերյալ պատկերացումները, և ճանաչելի են դարձնում այն: Օրինակ, լրացուցիչ տվյալներ տեղադրության մասին, հուշարձանի արդի վիճակը, կառուցողները, պատվիրատուները, հեղինակները, օգտագործողները, հուշարձանի վերականգնումները, բարեկարգումները, պեղումները, էական հայտնագործությունները, ուսումնասիրողները, հուշարձանի անբարեհունչ կամ օտար անվանումները և այլն:

Ստորև բերվում է կազմված ցուցակի էջերից մեկը (տե՛ս աղյուսակ 4):

1	2			4	5	6	7	8	9
	3	3	3						
1					ԱՄՐՈՑ ԿԱՏԱՐԱՎԱՆՔ	10-18 դդ.	քաղաքից 5 կմ ամ, Ողջի գետի աջ ափին, նախկին Ջրախոր գյուղի մոտ, «Տանձուլենջ» վայրում	Հ	կիսավեր է
	1.1				Դիտակետ	10-12 դդ.	Ողջի գետի ձախ ափին	Հ	կիսավեր է
	1.2				Շինություններ օժանդակ	10-11 դդ.	ամրոցի տարածքի ամ և հվ-ամ կողմերում	Հ	ավերված է
	1.3				Պալատական համալիր	10-12 դդ.		Հ	ավերված է
2					ԱՐՁԱՆ «ՋԱՆԳԵԶՈՒՐՑԻ ԱՂՋԻԿԸ»	1978 թ.	ավտոկայարանամերձ հրապարակում	Հ	քանդ.՝ Մ. Բաղդասարյան
3					ԱՐՁԱՆ «ՔԱԶԱՐԱՆԻ ԲԱՆԱԼԻՆ»	1966 թ.	Կապան-Քաջարան մայրուղու ձախ կողմում, Ողջի գետի աջ ափին	Հ	քանդ.՝ Մ. Նուրիջանյան
4					ԲՆԱԿԱՏԵՂԻ	Ք.ա. 1 հազ.	քաղաքից 5 կմ հս-ամ, Ողջի գետի ձախ ափին, ձորում	Հ	ավերված է

5		ԲՆԱԿԵԼԻ ԹԱՂԱՄԱՍ ԱՉԱՂՈՒ (ՀԱՄԼԵՏԱՎԱՆ)		քաղաքից 5-6 կմ հս-ամ		նախկին գյուղը մտել է քաղաքի շրջագծի մեջ
	5.1	Ամրոց Կկոց քար	10 դ.	Քաղաքերը ամրոցից աե	Հ	ավերված է
	5.2	Գյուղատեղի Աջաղու	10-18 դդ.	Քաղամասի հս կողմում, անտառապատ լեռնալանջին	Հ	ավերված է
	5.2.1	Գերեզմանոց	13-14 դդ.		Հ	ավերված է
	5.2.2	Եկեղեցի	17-18 դդ.	գերեզմանոցի տարածքում	Հ	միանավ սրահ
5.3		Հուշարձան ազատամարտիկ Համլետ Քոչարյանի	1991 թ.	Քաղամասի ամ եզրին	Տ	Քաղամասը Համլետական է վերանվանվել ի հիշատակ Հ. Քոչարյանի
6	5.4	Մատուռ	17-18 դդ.	Դ. Հարությունյանի տնամերձ հողամասում	Հ	կիսավեր է
		ԲՆԱԿԵԼԻ ԹԱՂԱՄԱՍ ԲԱՂԱԲՈՒՐՋ		քաղաքից հվ-ամ, բարձրադիր վայրում		նախկին գյուղը քաղաքի շրջագծի մեջ է մտել 1958 թ
	6.1	Գյուղատեղի	11-17 դդ.	Քաղամասից 1.5 կմ ամ, անտառապատ վայրում	Հ	Գյուղատեղի Ղուլչի (Ղուրճիկ) ավերված է
	6.1.1	Եկեղեցի	11 դ.		Հ	փոքր, ավերված
	6.1.2	Խաչքար	11 դ.	եկեղեցու մոտ	Հ	տեղահանված է
	6.1.3	Տապանաքար	11 դ.	եկեղեցու մոտ	Հ	արձանագիր
	6.2	Գյուղատեղի Վանք	միջնադար	Քաղամասից 2 կմ հվ, անտառապատ բարձունքի վրա	Հ	տարածքի մեծ մասը մելիորացված է
	6.2.1	Եկեղեցի	17-18 դդ.		Հ	պատերը տեղ-տեղ պահպանվել են մինչև 2.5 մ բարձրությամբ
	6.2.1.1	Տապանաքար	1462 թ.	ազուցված է եկեղեցու հվ ճակատին	Հ	
	6.2.2	Խաչքար	10-11 դդ.	եկեղեցու ամ պատի մոտ	Հ	վերնամասը բացակայում է
6.3		Դամբարանադաշտ	Ք.ա. 1 հազ.	Քաղամասի տարածքում	Հ	

ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակի կազմումը պատմամշակութային ժառանգության ուսումնասիրման և պահպանության բնագավառի խիստ կարևոր և անհրաժեշտ գործընթաց է, որը, սակայն, երբևէ չի կարելի համարել ավարտված: Յուրաքանչյուր տարի հնագիտական հետազոտությունների, պեղումների, հուշարձանների մոնիտորինգի, նորագույն մեթոդներով ու սկզբունքներով ուսումնասիրությունների, ինչպես նաև գյուղատնտեսական, հողաշինական, ճանապարհաշինական և շինարարական աշխատանքների հետևանքով բացահայտվում և բացահայտվելու են նոր հուշարձաններ, որոնք, որպես նորահայտ արժեքներ, ընդգրկվելու են արդեն ամբողջացած հուշարձանների պետական ցուցակում:

**Հավելված 1**

1. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքը, Երևան, 1999:

2. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N 438 որոշումը:

3. «ՀՀ երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 07.10.2004 թ. N 1816-Ն որոշումը, «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 66', 13.12.2004 թ., էջ 3-78:

4. «ՀՀ Արագածոտնի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 29.05.2002 թ. N 628 որոշումը, «ՀՀ պաշտոնական

տեղեկագիր», N 19 (194), 19.06.2002 թ., էջ 58-118:

5. «ՀՀ Արարատի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 24.01.2002 թ. N 65 որոշումը, «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 8 (183), 18.02.2002 թ., էջ 3-64:

6. «ՀՀ Արմավիրի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 03.10.2002 թ. N 1589-Ն որոշումը, «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 46 (221), 30.10.2002 թ., էջ 95-120:

7. «ՀՀ Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 09.01.2003 թ. N 80-Ն որոշումը, «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 11 (246), 24.02.2003 թ., էջ 47-203:

8. «ՀՀ Լոռու մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 29.01.2004 թ. N 49-Ն որոշումը, «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 11 (310), 25.02.2004 թ., էջ 152-321:

9. «ՀՀ Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 24.12.2003 թ. N 1793-Ն որոշումը, «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 8 (307), 11.02.2004 թ., էջ 3-166:

10. «ՀՀ Շիրակի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 09.09.2004 թ. N 1270-Ն որոշումը, «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 52 (351), 29.09.2004 թ., էջ 16-146:

11. «ՀՀ Սյունիքի մարզի պատմության և մշակույթի



անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 29.12.2005 թ. N 2322-Ն որոշումը, «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 8', 20.02.2006 թ., էջ 3-113:

12. «ՀՀ Վայոց ձորի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 17.06.2003 թ. N 754-Ն որոշումը, «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 9 (381), 02.02.2005 թ., էջ 61-210:

**Hakob Simonyan, Hasmik Karapetyan**

նական տեղեկագիր», N 37 (272), 16.07.2003 թ., էջ 38-83:

13. «ՀՀ Տավուշի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 30.12.2004 թ. N 1929-Ն որոշումը, «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», N 9 (381), 02.02.2005 թ., էջ 61-210:

## 24 152 MONUMENTS UNDER THE CARE OF THE STATE

### (Summary)

Among the documents on the preservation of the immovable cultural-historical heritage the state list of the monuments is of special importance. It summarizes and puts under state care all the noteworthy historical, archaeological, of monumental art, architectural, and other kind of monuments on the territory of RA that have got governmental status.


Resolution N 438 of RA passed on 20. 04. 2002 confirms the rules "On enumeration, study, preservation, conservation, renewal, restoration and exploitation of the immovable historical and cultural monuments". The rule also deals with the creation and formation of state lists of the noteworthy monuments. According to it the monuments included in the state list are grouped by their location, i.e. by each marz (province), by each community and in alphabetical order of their names. In 2003-2005 the historical-cultural center fulfilled the state list of the monuments begun in 2001, which were ratified by the resolutions of the government of RA. Thus 24 152 monuments have been involved under the government care. The fulfillment of the list is an important document for the preservation and study of the monuments on the territory of RA.

## Վերականգնված արժեքներ

### ՄԵՐՈՒԺԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

(Ղրիմի Ինքնավար Նահրապետություն)


## ՂՐԻՄԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ՎԱՆՔԸ ԵՎ 1993 - 2001 թթ. ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ



Նկ. 1. Սր. Խաչ համալիրը 1898 թվականին


Չայերը Տավրիկյան կամ Ղրիմի թերակղզու հետ առնչվել են դեռևս Տիգրան Մեծի և Միհրդատ Պոնտացու օրոք: Տեղեկություններ կան նաև հայ իշխան Վարդանի մասին, որը, VIII դարի սկզբին քարտեզավորված Տավրիկյան Խերսոնես, այստեղից պայքար է մղել Գուստինիանոս Բ կայսեր դեմ, ապա, տասնվեցվոր նրան, հռչակվել Բյուզանդիո կայսր: Խերսոնեսի հետ է առնչվում նաև հայ ազդեցիկ իշխանավոր Կալոկիրի անունը, որը X դարում օգնում էր Բյուզանդիային՝ դիվանագիտական կապեր հաստատելու Կիևյան Ռուսիայի հետ: Չայերի թիվը Ղրիմում աճել է XI, հատկապես՝ XIII-XIV դարերում՝ Անիի անկման և Չայաստանում սելջուկյան, ապա՝ մոնղոլական արշավանքների հետևանքով: Ղրիմի հայ վերաբնակներն, ըստ ձեռագիր հիշատակարանների, անեցիներ էին, սեբաստացիներ, բաբերդցիներ: Եղել են նաև Արձեշի, Դերջանի, Երևանի նախկին բնակիչներ: Նրանք բնակվել են թերակղզու արևելյան ափերին, լեռների ստորոտներին, որտեղ բնաշխարհը նման է հայկականին:

լու Կիևյան Ռուսիայի հետ: Չայերի թիվը Ղրիմում աճել է XI, հատկապես՝ XIII-XIV դարերում՝ Անիի անկման և Չայաստանում սելջուկյան, ապա՝ մոնղոլական արշավանքների հետևանքով: Ղրիմի հայ վերաբնակներն, ըստ ձեռագիր հիշատակարանների, անեցիներ էին, սեբաստացիներ, բաբերդցիներ: Եղել են նաև Արձեշի, Դերջանի, Երևանի նախկին բնակիչներ: Նրանք բնակվել են թերակղզու արևելյան ափերին, լեռների ստորոտներին, որտեղ բնաշխարհը նման է հայկականին:



ՂՐԻՄ. ՄՈՒՐԲ ԽԱՉ ՎԱՅԷ  
ՂԼԻ. ՀԼՏԱԿԱՆՈՒԹ 1:200

- 1. ՄՈՒՐԲ ԽԱՉ ԵՆՏՐԵՑ
- 2. ՂԵՐԻՑ
- 3. ՍԵՊԱԿՏՈՒՆ
- 4. ՎԱՅԷՑԵՐ
- 5. ՂԼՔԱԿՏՈՒՆ
- 6. ԲԱՐՎԱԿՏՈՒՆ
- 7. ԿԵՇԱՊԵՐ
- 8. ՎՏՅՈՒՄՆԻ
- 9. ՏՐՔՈՒՐ
- 10. ԵՆՏՐԵՆ ԲԱՅԵՐ
- 11. ՂԵՐՈՒՆԵՐ
- 12. ԽՈՒՄԻՑ



9 □

1260-ական թթ. մինչև 1475 թ. Ղրիմի արևելյան ափերին իր բուռն գործունեությունն էր ծավալել ճեմովացիների առևտրական ֆակտորիան Կաֆա (ներկայումս՝ Թեոդոսիա) կենտրոնով: Ճեմովացիները, որոնք Ղրիմում փոքրաթիվ էին և հարկատու թերակղզուն տեր դարձած թաթարներին (սկզբում՝ Ոսկե Հորդային, իսկ այնուհետև՝ Ղրիմի խանությանը), հոժարությամբ ընդունել են քրիստոնյա հայերին իրենց տարածքներում: Նույն շրջանում հայ բնակչությունն ապրել է նաև անմիջականորեն թաթարներին ենթակա տարածքներում, օրինակ՝ Սուրխաթ (այժմ՝ Հին Ղրիմ), Ղարասուբազար (Բելոգորսկ) քաղաքներում և դրանց մերձակա գյուղերում:

Հայ գաղթականների հաջորդ խոշոր ալիքը Ղրիմ թափանցել է XVII դարի սկզբին, երբ Հայաստանում մոլեզնում էին ջալալիները: Թե՛ նոր և թե՛ հին վերաբնակիչների շնորհիվ այստեղ արագ զարգանում են արհեստները, առևտուրը, հիմնվում են դպրոցներ, կառուցվում հայկական հոգևոր ճարտարապետության բազմաթիվ կոթողներ, որոնք իրենց ազդեցությունն են թողել շրջակա քրիստոնեական և մահմեդական շինությունների թե՛ կառուցվածքային, թե՛ դեկորատիվ լուծումների վրա: Սկզբնաղբյուրները վկայում են, որ XV դարի կեսին միայն Կաֆայում գործել են չորս տասնյակից ավելի հայկական վանք ու եկեղեցի: Դրանցից մի քանիսն իրենց դպրոցներն են ունեցել: Նույնիսկ թուրքական տիրապետության շրջանում (1475-1774 թթ.), երբ Ղրիմահայ հոգևոր օջախների թիվը կտրուկ նվազել էր, Կաֆայում դեռ գործել են երկու տասնյակից ավելի հայկական եկեղեցիներ<sup>2</sup>: Սրանցից բացի մեծ թվով հայ հոգևոր կենտրոններ կային նաև Սուրխաթում, Սուրոժում (Սուդակ), Ղարասուբազարում, Բախչիսարայում և այլուր:

Այսօր Ղրիմահայոց մշակութային հարուստ ժառանգությունից քիչ բան է պահպանվել: Խոսքն առաջին հերթին վերաբերում է ճարտարապետական ժառանգությանը: Կաֆայի, Սուրխաթի և սրանց

հարակից տարածքների հոգևոր և աշխարհիկ շինություններից շատ քչերն են հասել մինչև մեր օրերը, և դրանց մեջ առանձնանում է լավագույնը՝ Սուրբ Խաչ վանական համալիրը: Այն գտնվում է նախկինում «Սուրբ Խաչ» կոչվող լեռան անտառապատ դարավանդներից մեկի վրա<sup>3</sup>, Հին Ղրիմ (անցյալում՝ Սուրխաթ, Սուլխաթ, Ղրիմ, Խրիմ և այլն) քաղաքից 4 կմ հարավ-արևմուտք: Ի դեպ, մի շարք ուսումնասիրողների կարծիքով, այս քաղաքի միջնադարյան «Սուրխաթ» անվանումը «Սուրբ Խաչի» աղավաղված ձևն է<sup>4</sup>: Ժամանակին այն եղել է առևտրական խոշոր բնակավայր, որի բազմազգ բնակչության զգալի մասը կազմել են հայերը: Համաձայն ձեռագիր աղբյուրների՝ Սուրխաթում XIV դարում գործել է վեցից ավելի հայկական եկեղեցի, իսկ շրջակայքում մի այդքան էլ վանք ու անապատ<sup>5</sup>: Ինչպես նշում է Ղրիմահայ պատմության վաստակաշատ գիտակ Վ. Միքայելյանը, XIV-XV դարերում բնակչության քանակով, տնտեսական և մշակութային նշանակությամբ Սուրխաթը, իրեն մերձակա Սուրբ Խաչ վանքի համալիրով հանդերձ, Կաֆային քիչ է զիջել<sup>6</sup>:

Սուրբ Խաչը Ղրիմահայ գաղթօջախի հոգևոր ամենանշանավոր կենտրոնն է, հայկական մշակույթի փառապանծ առհավատչյան, որը դարեր շարունակ եղել է տեղի աթոռակալ եպիսկոպոսների նստավայրը: Այն համակողմանի ուսումնասիրության առարկա դարձավ միայն վերջերս՝ անցյալ դարի 90-ական թթ.: Առաջին անգամ փորձ արվեց վանքի անցյալը լուսաբանել հայկական միջնադարյան աղբյուրների և առաջին հերթին՝ Ղրիմում գրված հայերեն ձեռագիր վկայությունների հիման վրա: Կիրառվեցին նաև վիճագիր արձանագրությունների տվյալները, ինչպես նաև ուշ շրջանի հայ և ռուս հեղինակների հաղորդումները, պատմաբաններ Վ. Միքայելյանի, Խ. Փորքեյանի, ճարտարապետներ Հ. Խալիփախյանի, Յ. Թամանյանի, հնագետներ Օ. Դոմբրովսկու, Վ. Սիդորենկոյի, Ֆ. Բաբայանի, արվեստաբաններ Ա. Յակոբսոնի, Է. Կորխամազյանի և այլոց հետազոտությունների արդյունքները<sup>7</sup>:

Թե կոնկրետ ե՞րբ և ով է հիմնադրել Սուրբ Խաչ վանքը՝ հայտնի չէ: Նրա մասին առաջին ձեռագիր հիշատակարանը վերաբերում է 1347 թ. «...Ի թվին Հայոց ՉՂԶ (1347) կատարեցաւ սուրբ մատեանս՝ աստուածախաւս յաշխարհս Հոնաց, որ այժմ Ղրին ասի, ի մեծ և ի հոյակապ քաղաքս Սուրխաթ կոչեցեալ, ի Հողետներս Վերի, առ ոտն Սուրբ Խաչին...»<sup>8</sup>: Մեկ այլ ձեռագրի՝ 1348 թ. Ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «...Ի Հայոց թուականի ՉՂԷ (1348) եղև գրաւ գրչութեան սրբոյ աւետարանիս ... ի հռչակաւոր և ի հոյակապ քաղաքիս, որ կոչի Սուրխաթ, ի Հողետներս Վերի, որ ճղբնիս անուանի առ ոտն Սուրբ Խաչին...»<sup>9</sup>: Մի շարք հեղինակներ այն կարծիքն են հայտնել, թե հայոց Վերին Հողետներ կամ ճղբնիս կոչված թաղը տարածվել է Սուրբ Խաչ լեռան լանջին, սակայն վերջին շրջանի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն, իր բազմաթիվ հայկական հոգևոր կառույցներով հանդերձ, գտնվելիս է եղել հենց Սուրխաթի ներսում և գերիշխող դիրք է ունեցել քաղաքային մյուս թաղամասերի նկատմամբ<sup>10</sup>:

Այսպիսով, արդեն 1347-1348 թթ. Սուրխաթ քաղաքի մերձակայքում գործել է «Սուրբ Խաչ» կոչվող հայկական հոգևոր կենտրոնը: Եվ, չնայած դրան, այս կենտրոնի՝ մեզ հասած հնագույն կառույցը՝ Սուրբ Նշան եկեղեցին կառուցվել է շատ ավելի ուշ՝ 1358 թ., Հովհաննես կրոնավորի, նրա հարազատ եղբայրների և հոգևոր աջակիցների օժանդակությամբ: Այդ մասին է վկայում եկեղեցու շինարարական արձանագրությունը, որ փորագրված է գմբեթի թմբուկի քիվատակին.

**ՓԱՌԱՑ ՏԱՃԱՐՍ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ՝  
ՅԵՐԿՐԻ ԴՐԱՆՑ ԿԵՆԱՑ ՓԱՅՏԻՆ,  
ՈՐ Է ՊԱՏԿԵՐ ԵՐԿՆԻՑ ՎԵՐԻՆ,  
ԵՒ ԵՈՒՆՉՆԵԱՆՆ ԿԱՅԱՆԻՆ.  
Ի ԾՆՆԴԵՆ ԵՍՐԱՆՈՎ ՓՐԿՉԻՆ  
ՅԵՐԵՔ ՀԱՐԻՐ ԵՒ ՀԱԶԱՐԻՆ  
ՅՈՒԹ ԵՒ ՅԻՍՈՒՆ ՍԿՍԵԱԼ ԱՄԻՆ (1358)**

**ԿԱՆԳՆԵԱԼ ՅԱՆՈՒՆ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԻՆ  
ՍԱՏԱՐՈՒԹԵԱՄԲ ԻՐ ԾԱՌԱՅԻՆ՝  
ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ԿՐԱՒՆԱՒՈՐԻՆ  
ԵՒ ՀԱՐԱՋԱՑ ԵՂԲԱՐՑ ՆՈՐԻՆ  
ԵՒ ԸՍՏ ՈԳԻՑ ՈՐԴԻՑ ԲՆԱԿԻՆ՝:**

Սույն վկայագրի մեջ հիշատակվող Հովհաննես կրոնավորը միջնադարի հոգևոր խոշոր գործիչ էր, աստվածաբան, հռետոր, ուսուցիչ, որը, ըստ ձեռագիր աղբյուրների, XIV դարի երկրորդ կեսին դրիմահայ գաղութի հոգևոր առաջնորդն էր: Սեբաստացին որպես աթոռակալ առաջնորդ, առաջին անգամ հիշատակվում է 1346 թ. ընդօրինակված մի ձեռագրում<sup>12</sup>: Ժամակակիցները նրան բնորոշում են որպես «կորովամիտ և ուղղափառ հռետոր», «յոյժ հմուտ աստուածաշունչ մատենից», «իմաստուն և խոհեմական», «հերձուածողաց հալածող, ցոփագնացից ահարկանող, զոր այժմ փայլ է ի մեջ եկեղեցւոյ իբրև զսին լուսոյ և իբրև զպարիսպ բարձրապատուար շուրջանակի»<sup>13</sup>: 1368 թ. ընդօրինակված դրիմյան մի Աստվածաշնչի հիշատակարանում գրիչ Ստեփանոսը մեծագույն պատկառանքով գրում է. «...այրն աստուծոյ սրբազան և առաքինի, վեհիմաստ և հանճարեղ, կորովամիտ և խոհեմիմաց, սրբասէր կրոնաւոր քահանայն տէր Յովհաննես, աթոռակալ այցելութեան հիւսիսական աշխարհի, ստացավ զգիրքս աստուածաբան մարգարէիցն...: Եւ այնչափ ուներ փոյթ յանձն իւր և սէր, և սիրէր յոյժ զբանն աստուծոյ, մինչ զի ոչ տալ քուն աչաց կամ մինչ արտևանաց յընթեռնոյ զգիրքս սուրբս և քննելոյ զխորոս խորհրդոցն, որ ծածկեալ են ի նմա»<sup>14</sup>: Ապա գրիչ Ստեփանոսը շարունակում է. «Յորում և ընդ բազում արդիւնարարութիւնսն զոր առնէր, արմատացուցեալ կանգնեաց ի վանս իւր և տաճար երկնաման գեղապաճոյճ կամարածև, գմբեթայարկ, սրբագործ վիմաք, ոսկեզաւծ գեղազանութեամբ, տեղի անտանելոյն և ի հանգիստ անախտ կամացն աստուծոյ և զեմարան գառինն անմահի, անուանելով զնա Սուրբ Նշան, հինգ խորանաւք, ինն աստիճանաւք յաւրի-

նակ վերնոյն Սիոնի ...»<sup>15</sup>: Այսպիսով, Հովհաննես Սեբաստացին «արմատացուցեալ կանգնեաց», այսինքն՝ հիմնադրեց Սուրբ Նշան եկեղեցին «ի վանս իւր»՝ իր վանքում, ասել կուզի, թե արդեն գոյություն ունեցող և գործող վանքում, որը բնականաբար, մինչև Սուրբ Նշանի կառուցումն ունեցել է իր հոգևոր կառույցը: Ընդ որում, 1358 թ. հիմնադրված եկեղեցու շինարարությունն ըստ երևույթին ավարտվել է հիշատակարանի գրառման շրջանում, այսինքն՝ մոտ 1368 թ.: Հարցն այն է, որ գրչի տպավորությունները, հիացմունքն ու խանդավառությունն առ աստվածահաճոյ այդ ձեռնարկը՝ Աստուծո արդեն կանգնեցված տունը, շատ թարմ են հնչում բերված հիշատակարանում: Գրիչ Ստեփանոսը մանրամասնորեն նկարագրում է եկեղեցու կառուցվածքը, որը ճշգրտորեն համընկնում է Սուրբ Խաչի գլխավոր հոգևոր կառույցի ներկայիս տեսքին: Սա արտաքուստ ուղղանկյուն, ներքուստ՝ խաչաձև, գմբեթավոր շինություն է՝ եռանավ գմբեթավոր սրահներին բնորոշ հատկանիշներով: Եկեղեցու սյուները, կրող կամարները, թաղերը, դռների և պատուհանների շրջանակները, ինչպես նաև մեծադիր գմբեթն իրականացված են կրաքարի սրբատաշ սալերից՝ կանոնավոր շարվածքով: Մնացալը կառուցված է անկանոն շարված զանազան ապարների անտաշ բեկորներից: Նույնն է ասում նաև գրիչը: Նա նշում է եկեղեցու գմբեթավոր լինելը, կամարների (թաղերի) առկայությունը, շեշտում է դրանց սրբատաշ լինելը, բնորոշում է եկեղեցին որպես «հինգ խորանաւք»՝ նկատի ունենալով կենտրոնական խորանը և շինության չորս անկյունում տեղադրված ավանդատները, որոնք արևելքում խորանածև կառուցվածք ունեն: Ինչ վերաբերում է եկեղեցու շենքի և գմբեթի՝ տարբեր տիպի քարերից և տարբեր շարվածքով կառուցված լինելուն, ապա պետք է նշել, որ շինարարական այս ոճն ընդունված էր Արևելյան Ղրիմում և պայմանավորված էր ամուր, հղկվող ապարների սակավությամբ: Մշակելի քարը օգտագործվել է բացառապես գմբեթների և կրող տարրերի (սյուներ, կամարներ, թաղեր) կա-

ռուցման ժամանակ: Այս կերպ են կառուցված նաև Արևելյան Ղրիմի՝ XIV-XV դարերի մի քանի այլ հայկական գմբեթավոր կառույցներ, ինչպես օրինակ՝ Հովհաննես Մկրտչի և Հրեշտակապետաց եկեղեցիները Թեոդոսիայում:

Ինչպես տեսանք, Հովհաննես Սեբաստացին հիմնադրել է Սուրբ Նշան եկեղեցին արդեն գոյություն ունեցող վանքում, ինչով, փաստորեն, նոր էջ է բացել հոգևոր այս կենտրոնի պատմության մեջ: Սույն հանգամանքը շեշտվում է նաև Հակոբ Կաֆայեցու գրչին վերագրվող 1694 թ. մի բանաստեղծությունում, որում Սուրբ Խաչ վանքը հիշատակվում է իր միակ հոգևոր կառույցի՝ Սուրբ Նշանի անունով.

**Կամաւ սուրբ հոգւոյն ոմըն գիտնական,  
Յովհաննես անուն շնորհիւ պետական.  
Լեալ նա աշխարհէն մեծ սեբաստական,  
Կանգնեալ հաւատով զվանքս Սուրբ Նշան.  
Ունելով ընդ իւր զփայտն փրկչական,  
Եկեալ ի աշխարհս փառօք մեծական.  
Ամփոփեալ զմասն խնամօք տեառնական,  
Վերակառուցեալ զվանքս Սուրբ Նշան՝:**

Այսպիսով, բանաստեղծության հեղինակը ևս հաստատում է Հովհաննես Սեբաստացու՝ արդեն կանգուն վանքում վերակառուցողական աշխատանքներ կատարելու փաստը: Ենթադրելի է, որ բանաստեղծության չորրորդ տողում խոսքը բուն եկեղեցու՝ Սուրբ Նշանի կառուցման մասին է, իսկ ութերորդում՝ այդ կառուցման հետևանքով վանքում կատարված վերակառուցման:

Միջնադարյան աղբյուրները տեղեկություններ են տալիս նաև Սեբաստացու եղբայրների մասին, որոնց հիշատակում է վերը բերված 1358 թ. վիճաբանությունը: Նրանցից կրտսերը՝ Ղազարը, որն, ի դեպ, մասնակցել է Սուրբ Նշան եկեղեցու կառուցմանը, եղել է հոգևորական, եղբոր՝ Հովհաննեսի հավատարիմ աջակիցը: Շինարարական աշխատանքների ավարտից քիչ անց Ղազարը վախճանվել է և թաղվել նորակառույց եկեղեցու հովանու ներքո. «... մանաւանդ զհարազատ եղբայր տէր Յովհաննիսի՝ զսիրե-

Թե կոնկրետ ե՞րբ և ով է հիմնադրել Սուրբ Խաչ վանքը՝ հայտնի չէ: Նրա մասին առաջին ձեռագիր հիշատակարանը վերաբերում է 1347 թ. «...Ի թվին Յայոց ՉՂԶ (1347) կատարեցաւ սուրբ մատեանս՝ աստուածախաւս յաշխարհս Յոնաց, որ այժմ Ղրիմ ասի, ի մեծ և ի հոյակապ քաղաքս Սուրխաթ կոչեցեալ, ի Յողետներս Վերի, առ ոտն Սուրբ Խաչին...»<sup>8</sup>: Մեկ այլ ձեռագրի՝ 1348 թ. Ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «...Ի Յայոց թուականի ՉՂԷ (1348) եղև զրաւ գրչութեան սրբոյ աւետարանիս ... ի հռչակաւոր և ի հոյակապ քաղաքիս, որ կոչի Սուրխաթ, ի Յողետներս Վերի, որ ճղբնիս անուանի առ ոտն Սուրբ Խաչիս...»<sup>9</sup>: Մի շարք հեղինակներ այն կարծիքն են հայտնել, թե հայոց Վերին Յողետներ կամ ճղբնիս կոչված թաղը տարածվել է Սուրբ Խաչ լեռան լանջին, սակայն վերջին շրջանի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն, իր բազմաթիվ հայկական հոգևոր կառույցներով հանդերձ, գտնվելիս է եղել հենց Սուրխաթի ներսում և գերիշխող դիրք է ունեցել քաղաքային մյուս թաղամասերի նկատմամբ<sup>10</sup>:

Այսպիսով, արդեն 1347-1348 թթ. Սուրխաթ քաղաքի մերձակայքում գործել է «Սուրբ Խաչ» կոչվող հայկական հոգևոր կենտրոնը: Եվ, չնայած դրան, այս կենտրոնի՝ մեզ հասած հնագույն կառույցը՝ Սուրբ Նշան եկեղեցին կառուցվել է շատ ավելի ուշ՝ 1358 թ., Յովհաննես կրոնավորի, նրա հարազատ եղբայրների և հոգևոր աջակիցների օժանդակությամբ: Այդ մասին է վկայում եկեղեցու շինարարական արձանագրությունը, որ փորագրված է գմբեթի թմբուկի քիվատակին.

**ՓԱՈՍ ՏԱԾԱՐՍ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ՝  
ՅԵՐԿՐԻ ԴՐԱՄՏ ԿԵՆԱՅ ՓԱՅՏԻՆ,  
ՈՐ Է ՊԱՏԿԵՐ ԵՐԿՆԻՅ ՎԵՐԻՆ,  
ԵՒ ԵՌԱՆՉՆԵԱՆՆ ԿԱՅԱՆԻՆ.  
Ի ԾՆՆԴԵՆԷ ՍԱՐՄՆՈՎ ՓՐԿՉԻՆ  
ՅԵՐԵՔ ԶԱՐԻՐ ԵՒ ԶԱԶԱՐԻՆ  
ՅՈՒԹ ԵՒ ՅԻՍՈՒՆ ՍԿՍԵԱԼ ԱՄԻՆ (1358)**

**ԿԱՆԳՆԵԱԼ ՅԱՆՈՒՆ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԻՆ  
ՍԱՏԱՐՈՒԹԵԱՍԲ ԻՐ ԾԱՌԱՅԻՆ՝  
ՅՈՎԿԱՆՆԻՍԻ ԿՐԱՒԱԿՈՐԻՆ  
ԵՒ ԶԱՐԱԶԱՏ ԵՂԲԱՐՑ ՆՈՐԻՆ  
ԵՒ ԸՍՏ ՈԳՒՈՑ ՈՐԴՒՈՑ ԲՆԱԻՆ՝:**

Սույն վկայագրի մեջ հիշատակվող Յովհաննես կրոնավորը միջնադարի հոգևոր խոշոր գործիչ էր, աստվածաբան, հռետոր, ուսուցիչ, որը, ըստ ձեռագիր աղբյուրների, XIV դարի երկրորդ կեսին դրիմահայ գաղութի հոգևոր առաջնորդն էր: Սեբաստացին որպես աթոռակալ առաջնորդ, առաջին անգամ հիշատակվում է 1346 թ. ընդօրինակված մի ձեռագրում<sup>12</sup>: Ժանակակիցները նրան բնորոշում են որպես «կորովամիտ և ուղղափառ հռետոր», «յոյժ հմուտ աստուածաշունչ մատենից», «խմաստուն և խոհեմական», «հերձուածողաց հալածող, ցոփագնացից ահարկանող, զոր այժմ փայլ է ի մեջ եկեղեցոյ իբրև զսին լուսոյ և իբրև զպարիսպ բարձրապատուար շուրջանակի»<sup>13</sup>: 1368 թ. ընդօրինակված դրիմյան մի Աստվածաշնչի հիշատակարանում գրիչ Ստեփանոսը մեծագույն պատկառանքով գրում է. «...այրն աստուծոյ սրբազան և առաքինի, վեհիմաստ և հանճարեղ, կորովամիտ և խոհեմիմաց, սրբասէր կրոնաւոր քահանայն տէր Յովհաննես, աթոռակալ այցելութեան հիւսիսական աշխարհի, ստացավ զգիրքս աստուածաբան մարգարէիցն...: Եւ այնչափ ուներ փոյթ յանձն իւր և սէր, և սիրէր յոյժ զբանն աստուծոյ, մինչ զի ոչ տալ քուն աչաց կամ մինչ արտևանաց յընթեռնոյ զգիրքս սուրբս և քննելոյ զխորոս խորհրդոցն, որ ծածկեալ են ի նմա»<sup>14</sup>: Ապա գրիչ Ստեփանոսը շարունակում է. «Յորում և ընդ բազում արդիւնարարութիւնսն զոր առներ, արմատացուցեալ կանգնեաց ի վանս իւր և տաճար երկնաման գեղապաճոյճ կամարածև, գմբեթայարկ, սրբագործ վիմաւք, ոսկեզաւծ գեղազանութեամբ, տեղի անտանելոյն և ի հանգիստ անախտ կամացն աստուծոյ և զեմարան գառնն անմահի, անուանելով զնա Սուրբ Նշան, հինգ խորանաւք, ինն աստիճանաւք յաւրի-

նակ վերնոյն Սիոնի ...»<sup>15</sup>: Այսպիսով, Յովհաննես Սեբաստացին «արմատացուցեալ կանգնեաց», այսինքն՝ հիմնադրեց Սուրբ Նշան եկեղեցին «ի վանս իւր» իր վանքում, ասել կուզի, թե արդեն գոյություն ունեցող և գործող վանքում, որը բնականաբար, մինչև Սուրբ Նշանի կառուցումն ունեցել է իր հոգևոր կառույցը: Ընդ որում, 1358 թ. հիմնադրված եկեղեցու շինարարությունն ըստ երևույթին ավարտվել է հիշատակարանի գրառման շրջանում, այսինքն՝ մոտ 1368 թ.: Գարցն այն է, որ գրչի տպավորությունները, հիացմունքն ու խանդավառությունն առ աստվածահաճո այդ ձեռնարկը՝ Աստծո արդեն կանգնեցված տունը, շատ թարմ են հնչում բերված հիշատակարանում: Գրիչ Ստեփանոսը մանրամասնորեն նկարագրում է եկեղեցու կառուցվածքը, որը ճշգրտորեն համընկնում է Սուրբ Խաչի գլխավոր հոգևոր կառույցի ներկայիս տեսքին: Սա արտաքուստ ուղղանկյուն, ներքուստ՝ խաչածև, գմբեթավոր շինություն է՝ եռանակ գմբեթավոր սրահներին բնորոշ հատկանիշներով: Եկեղեցու սյուները, կրող կամարները, թաղերը, դռների և պատուհանների շրջանակները, ինչպես նաև մեծադիր գմբեթն իրականացված են կրաքարի սրբատաշ սալերից՝ կանոնավոր շարվածքով: Մնացյալը կառուցված է անկանոն շարված զանազան ապարների անտաշ բեկորներից: Նույնն է ասում նաև գրիչը: Նա նշում է եկեղեցու գմբեթավոր լինելը, կամարների (թաղերի) առկայությունը, շեշտում է դրանց սրբատաշ լինելը, բնորոշում է եկեղեցին որպես «հինգ խորանաւք»՝ նկատի ունենալով կենտրոնական խորանը և շինության չորս անկյունում տեղադրված ավանդատները, որոնք արևելքում խորանածև կառուցվածք ունեն: Ինչ վերաբերում է եկեղեցու շենքի և գմբեթի տարբեր տիպի քարերից և տարբեր շարվածքով կառուցված լինելուն, ապա պետք է նշել, որ շինարարական այս ոճն ընդունված էր Արևելյան Ղրիմում և պայմանավորված էր ամուր, հղկվող ապարների սակավությամբ: Մշակելի քարը օգտագործվել է բացառապես գմբեթների և կրող տարրերի (սյուներ, կամարներ, թաղեր) կա-


ռուցման ժամանակ: Այս կերպ են կառուցված նաև Արևելյան Ղրիմի՝ XIV-XV դարերի մի քանի այլ հայկական գմբեթավոր կառույցներ, ինչպես օրինակ՝ Յովհաննես Մկրտչի և Յրեշտակապետաց եկեղեցիները Թեոդոսիայում:

Ինչպես տեսանք, Յովհաննես Սեբաստացին հիմնադրել է Սուրբ Նշան եկեղեցին արդեն գոյություն ունեցող վանքում, ինչով, փաստորեն, նոր էջ է բացել հոգևոր այս կենտրոնի պատմության մեջ: Սույն հանգամանքը շեշտվում է նաև Յակոբ Կաֆայեցու գրչին վերագրվող 1694 թ. մի բանաստեղծությունում, որում Սուրբ Խաչ վանքը հիշատակվում է իր միակ հոգևոր կառույցի՝ Սուրբ Նշանի անունով.

**Կամաւ սուրբ հոգւոյն ոճըն գիտնական,  
Յովհաննես անուն շնորհիւ պետական.  
Լեալ նա աշխարհէն մեծ սեբաստական,  
Կանգնեալ հաւատով զվանքս Սուրբ Նշան.  
Ունելով ընդ իւր զփայտն փրկչական,  
Եկեալ ի աշխարհս փառօք մեծական.  
Ամփոփեալ զմասն խնամօք տեառնական,  
Վերակառուցեալ զվանքս Սուրբ Նշան»<sup>16</sup>:**

Այսպիսով, բանաստեղծության հեղինակը ևս հաստատում է Յովհաննես Սեբաստացու՝ արդեն կանգուն վանքում վերակառուցողական աշխատանքներ կատարելու փաստը: Ենթադրելի է, որ բանաստեղծության չորրորդ տողում խոսքը բուն եկեղեցու՝ Սուրբ Նշանի կառուցման մասին է, իսկ ութերորդում՝ այդ կառուցման հետևանքով վանքում կատարված վերակառուցման:

Միջնադարյան աղբյուրները տեղեկություններ են տալիս նաև Սեբաստացու եղբայրների մասին, որոնց հիշատակում է վերը բերված 1358 թ. վիճաբանությունը: Նրանցից կրտսերը՝ Ղազարը, որն, ի դեպ, մասնակցել է Սուրբ Նշան եկեղեցու կառուցմանը, եղել է հոգևորական, եղբոր՝ Յովհաննեսի հավատարիմ աջակիցը: Շինարարական աշխատանքների ավարտից քիչ անց Ղազարը վախճանվել է և թաղվել նորակառույց եկեղեցու հովանու ներքո. «... մանաւանդ զհարազատ եղբայր տէր Յովհաննիսի՝ զսիրե-



Նկ. 2. Սր. Նշան եկեղեցին հարավից: Լուսանկարն արվել է մինչև գմբեթի վերականգնումը

լին և զհամակ արի զՂազար յիշեսջիբ ի Քրիստոս, որ յանս յայս (1368 թ. Մ.Պ. ) փոխեցավ առ տեր... և թաղեցավ պատուական մարմին նորա ընդ հովանեաւ նորաշէն սրբոյ տաճարին Սուրբ Նշանին, որում և բազում էր աշխատեալ նոյն ինքն Ղազարն, ի կանգնումն նորին տաճարի»<sup>17</sup>: 1362 թ. մի արձանագրությունում Ղազարի հետ մեկտեղ հիշատակվում է Հովհաննես աթոռակալի մյուս եղբայրը՝ Հակոբը, որը հմուտ վաճառական լինելով, հավանաբար նյութապես աջակցել է եկեղեցու կառուցմանը. «...յիշեսջիբ զվերոգրեալ տեր Յոհանես, և զժնաւոսն... և զպատուելի եղբարսն իւր զիմաստուն վաճառականն զպարոն Յակոբն և զՂազարոս գրամարտիկ»<sup>18</sup>:

Հովհաննես Սեբաստացու և նրա եղբայրների մասին հայտնում է նաև Մ. Բժշկյանցը: Հիմնվելով տեղաբնակների և ներկայումս մեզ ահայտ մի ձեռագրի հաղորդումների վրա՝ նա Սուրբ Խաչի կառուցումը վերագրում է կրոնավոր եղբայրներ Հով-

հաննեսին և Գևորգին (այստեղ նա սխալ է նշում Ղազարի անունը), որոնք թաղված են Սուրբ Խաչի հովանու ներքո, և որոնց գերեզմանների գավազանադրոշմ տապանաքարերն ինքը տեսել է<sup>19</sup>: Այս ավիմագիր տապանաքարերը, բարեբախտաբար, մինչև օրս էլ դեռ վանքում են գավթի ներսում:

Ուշագրավ է, որ 1370-1375 թթ. հիշատակարանները Հովհաննես Սեբաստացուն արդեն ներկայացնում են ոչ միայն որպես դրիմահայության հոգևոր առաջնորդ, այլև որպես տարածաշրջանի «ամենայն հիւսիսական կողմանց» կաթողիկոսական տեղապահ<sup>20</sup>: Սակայն ավելի ուշ շրջանի՝ 1381-1384 թթ. ձեռագրերը Սեբաստացուն նորից հիշատակում են որպես Ղրիմի աթոռակալ առաջնորդ, իսկ որպես տարածաշրջանի եպիսկոպոս՝ տեր Ստեփանոսին «տղայ հասակաւ»<sup>21</sup>: Այդ տարիներին Հովհաննես կրոնավորը պիտի որ պատկառելի տարիք ունենար: Հավանաբար ամբողջ «նահանգի» հոգևոր առաջնորդի պաշտոնավարումն արդեն նրա ուժե-


րից վեր է եղել և նա վերադարձել է իր նախկին տեղը:

Զանազան ենթադրությունների առիթ է տվել խնդրո առարկա վանքի անունը: Քր. Քուշնեյանը նշում է, որ առաջներում վանքը կոչվել է Սուրբ Նշան, իսկ դրանից էլ առաջ՝ Գամճակ<sup>22</sup>: Սուրբ Խաչի նույնացումը Գամճակ կամ Քիմճակ վանքի հետ անընդունելի է այն պարզ պատճառով, որ վերջինս, լինելով դրիմահայոց ամենաճանաչված և սիրված հոգևոր կենտրոններից մեկը, գտնվել է Սուրխաթ քաղաքի ծայրամասում՝ ակնառու, դյուրամատչելի տեղում և ունեցել է մեկ հոգևոր կառույց՝ «Սուրբ Աստվածածին» անունով: Պակաս կարևոր չէ նաև այն, որ ձեռագրերի հեղինակները Քիմճակի XIV դարի պատմությունը կապում են վանահայր Ավետիք վարդապետ Խոտաճարակի անվան հետ<sup>23</sup>: Նման բնորոշիչ հատկանիշներ Սուրբ Խաչը չունի: Այդ իսկ պատճառով, Քր. Քուշնեյանի այս հաղորդումը կարող ենք մի կողմ դնել: Առավել հետաքրքրական է վանքի «Սուրբ Խաչ» և «Սուրբ Նշան» անվանումներ-

րի հետ կապված խնդիրը: Երկու անվանումն էլ հավասարապես կիրառվում են վանքին առնչվող և՛ վիմագրերում, և՛ ձեռագիր աղբյուրներում, հավաստելով, որ խոսքը միևնույն հոգևոր կենտրոնի մասին է<sup>24</sup>:

Ինչպես տեսանք, 1347 և 1348 թթ. վերը բերված հիշատակարաններում նշվում է «Սուրբ Խաչ» անունը: «Սուրբ Նշան»-ը, որպես ընդհանուր վանքի անուն, շրջանառության մեջ է մտնում միայն համանուն եկեղեցու՝ տեղի միակ հոգևոր շինության կառուցումից հետո: Այդ անունով վանքը հիշատակվում է 1694 թ. վերը բերված բանաստեղծության մեջ: Այդ անունով է այն հիշատակվում նաև XV-XVII դարերի մի շարք վիմագրերում և ձեռագրերում: Վերջիններում հատկապես հաճախ է հանդիպում «Խրիմու Սուրբ Նշան» ձևը<sup>25</sup>, ինչը նշանակում է, թե վանքն այնքան հանրահայտ էր, որ միայն թերակղզու անվան հիշատակումը բավական էր այս հոգևոր կենտրոնը ճանաչելու համար:

Այս դեպքում ի՞նչպես է առաջացել «Սուրբ



Նկ. 3. Սր. Նշան եկեղեցու երկայնական կտրվածքը:


հաննես Մկրտիչը: Եկեղեցու մուտքի վերևում ևս մեկ որմնանկար կա: Այստեղ պատկերված է «Աստվածամայրը մանկան հետ» տեսարանը: Օ. Դոմբրովսկին իր «Фрески средневекового Крыма» աշխատությունում նշում է, որ, ամենայն հավանականությամբ, Սուրբ Նշանի որմնանկարներն ստեղծվել են XIV-XV դարերում, եկեղեցու կառուցումից անմիջապես հետո, քանի որ դրանք նկարված են սվաղի նախնական շերտի վրա<sup>36</sup>: Ուկրաինայի հատուկ գիտավերականգնողական արտադրական վարչության մասնագետները 1969 թ. կատարած հետազոտություններից հետո այս որմնանկարները վերագրեցին XVIII դարին, նշելով, որ դրանք պատկերված են սվաղի ոչ թե նախնական, այլ երրորդ շերտի վրա<sup>37</sup>: Ինչևէ, Սուրբ Խաչի որմնանկարները ներկայումս կարիք ունեն լիարժեք ուսումնասիրման և վերականգնման: Դրանք յուրատիպ են թե՛ իրենց հորինվածքով, թե՛ գունավորմամբ<sup>38</sup>:

Համալիրի մեծ բակի քարե աստիճանները տանում են դեպի համեստորեն ձևավորված շքամուտքը, որից այն կողմ այցելուի առջև բացվում է գավթի ընդարձակ սրահը: Այն արևմուտքից կցված է Սուրբ Նշան եկեղեցուն: Ակնհայտ է, որ Սուրբ Խաչի գավթի իր հարավ-արևմտյան անկյունում բարձրացող աշտարակով հանդերձ, կառուցվել է Սուրբ Նշան տաճարից անմիջապես հետո, ճենովացիների օրոք և հանդիսանում է XIV դարի վերջին քառորդի կառույց: Այդ են վկայում ոչ միայն ճարտարապետական լուծումները, այլև այս հուշարձանի պատերին պահպանված 1401 և 1406 թթ. արձանագրությունները (տե՛ս 32): Սրահի կենտրոնում բարձրանում են քառանիստ երկու սյուն՝ ներքին տարածքը բաժանելով երեք նավի: Սյուներին են ապավինում ինչպես արևմուտքից արևելք ձգվող զույգ թաղակիր կամարաշարը, այնպես էլ եզրային նավերը երկու մասի բաժանող ընդլայնական կամարները: Շինությունը լուսավորվում է հարավային պատի՝ դեպի ներս լայնացող երկու պատուհանի միջոցով, որոնք երիզված են դեղնավուն քարից պատրաստված շրջանակներով:

Գավթի ունի երկու մուտք. արևմտյան՝ այսինքն մեծ բակի կողմից, և հարավային՝ Մենաստանի բակից: Հատակը մեծմասամբ ծածկված է բազալտե սալատապաններով, որոնցից մի քանիսը հարդարված են առաջնորդական գավազանների պատկերներով: Եռակազմ թաղակապ ծածկն առնված է երկթեք տանիքի տակ, որն իրականացված է քարե ձևավոր սալերից: Ծիշտ նույնպիսի սալերից է կազմված նաև եկեղեցու ներկայիս տանիքը: Նշենք, որ վանքերի այս տիպի տանիքներն ուշ շրջանի վերականգնումների արդյունք են: Եկեղեցու գմբեթը, գավթի ընդարձակ մասնական շինությունները ժամանակին կղմինդրածածկ են եղել: Այդ են վկայում վաղ շրջանի լուսանկարները և ծածկասալերի բեկորների բացակայությունը պեղածո նյութերում<sup>39</sup>:

Գավթի հարավ-արևմտյան անկյունում տեղադրված աստիճանները տանում են դեպի աշտարակ և օթյակ: Վերջինս ներկայումս գոյություն չունի: Պահպանվել են միայն նրա մուտքը և փայտե մի քանի հեծան: Աշտարակը, ինչպես արդեն ասվեց, տեղադրված է գավթի վրա՝ հարավ-արևմտյան անկյունում: Այն ուղղանկյուն հատակագծով, միաթեք տանիքով, բարձր շինություն է: Ներսում կա ընդամենը մեկ սենյակ՝ ուղղանկյուն հատակագծով և թաղակապ ծածկով: Սենյակի հարավային և արևմտյան պատերին մեկական նեղ, հրակնատ հիշեցնող պատուհան է բացված:

Սուրբ Խաչ վանքի երկսրահ սեղանատունը, համաձայն IX-XIV դարերի հայկական ճարտարապետական ավանդույթների, գտնվում է համալիրի հոգևոր կառույցներից քիչ հեռու, աչքի ընկնող և բանուկ տեղում<sup>40</sup>: Այն զբաղեցնում է համալիրի ամբողջ արևմտյան հատվածը: Սրահներից հյուսիսայինն ուղղանկյուն հատակագծով շինություն է, որի կենտրոնական մասում բարձրացող, կտրվածքում քառանկյուն երկու սյունը ներքին ծավալը բաժանում են երեք նավի: Ուշագրավ է սրահի հյուսիսային պատի կամարածև բացվածքով խոշորաչափ բուխարին, որը մինչև օրս էլ օգտագործելի է: Բուխարուն հյուսիսից կցված է մի փոքրիկ սենյակ, որը, հավանաբար, ծառայել է որպես չորանոց: Սրահը լուսավորվում է արևելյան պատի մեկ և արևմտյան՝ երեք պատուհանի միջոցով: Մուտքն արևելքից է՝ մեծ բակից: Ծածկն իրականացված է երեք քարաշեն կամարակապ թաղով: Սրահի հարավային պատին բացված մուտքը տանում է դեպի սեղանատան հարավային հատվածը, որը հայտնի է «խոհանոց» անվամբ: Սա չափերով և ընդհանուր գծերով մոտ է նկարագրված նախորդ սրահին, ուղղանկյուն հատակագծով ընդարձակ ծավալ է, որի նախնական եռանավ կառուցվածքը, սակայն, միայն վերջերս է վերականգնվել: Նախքան վերականգնումն այս շինության ասիմետրիկ տեղադրությամբ միակ մույթը իր




Նկ. 4. Գավթի արևմտյան մուտքը և աշտարակը

վրա հենվող երկկազմ կամարաշարով, ներքին ծավալը բաժանում էր երկու մասի: Հյուսիսային, ընդարձակ հատվածը ծածկված է երկու աղյուսաշեն, քառանիստ բուրգերով: Հարավային մասն ուներ թաղակապ նավի տեսք: Կասկածից վեր է, որ խոհանոցը ժամանակին ունեցել է ճիշտ այնպիսի եռանավ կառուցվածք, ինչպիսին հյուսիսային սրահինն է: Այդ են վկայում պահպանված, սակայն կիրառումից դուրս մնացած որմնամույթերը, միակ սյան դիրքը, ինչպես նաև երկրորդ սյան հիմքերի մնացորդները:


Խոհանոցի մուտքը ևս արևելքից է՝ մեծ բակից: Լուսավորվում է արևմտյան պատի երեք պատուհանով: Ներքին, հյուսիս-արևմտյան անկյունի աստիճանները տանում են դեպի բավականին ընդարձակ, թաղակապ նկուղը, որի արևմտյան պատին նեղ, երկար անցքեր են բացված՝ օդափոխության համար: Սեղանատան հյուսիսային սրահի և խոհանոցի տանիքները չեն պահպանվել, քանի որ այս շինությունների վրա հարկ է կառուցվել՝ ամենայն հավանականությամբ՝ XVIII-XIX դարերի սահմանազլխին<sup>41</sup>: Սեղանատունը հետագայում ևս մի շարք անգամ նորոգվել է ու ձևափոխվել: Ներկայումս սեղանատան երկրորդ հարկից միայն մեկ-երկու պատի մնացորդներ են պահպանվել:

Նշված շինություններից բացի, հուշարձանախմբի պարսպապատ հատվածում կան նաև երկու



Նկ. 5. «Խոհանոց» կղզված սրահը՝ եռանավ կառուցվածքով

ներքին բակ, մի մեծ երկհարկ շենք և մեկ աղբյուր: Համալիրի կենտրոնում ընդարձակ, սալահատակ մեծ բակն է՝ արևմուտքից շրջափակված սեղանատան ճակատային պատերով, հյուսիսից և հյուսիս-արևելքից՝ բարձր պարսպապատով, արևելքից՝ գավթի արևմտյան պատով, իսկ հարավից՝ բարձր միջնապատով, որը բակը բաժանում է մենաստանից, կամ փոքր բակից: Միջնապատին, մեծ բակի կողմից կից է քարաշեն, թեք հարթակ-հենապատը, որի վրայի սալավոր աստիճանները ժամանակին տարել են դեպի սեղանատան երկրորդ հարկ:



Նկ. 6. Վերին աղբյուրը

1830-ական թթ., վարդապետ Մանվել Գյումուշխանեցու օրոք, աստիճանատակ հենապատի մեջ կամարածև խորշ է բացվել, որտեղ և տեղադրվել է վանքի ներքին աղբյուրը: Ստորին մասում այն ունի քարե ուղղանկյուն կարճ սյուններ, որոնց միջև զետեղված է ջրահավաք ավազանը: Կառուցված է կոպտատաշ, մանր ու միջին քարաբեկորներից: Աղբյուրի շինարարության ծախսերը հոգացել է Աղաջանովի կին գերազմվուհի Մարիամը<sup>42</sup>: Ներքին աղբյուրն իր դիմային կողմով ուղղված է դեպի մեծ բակը: Այն ներկայումս չի գործում: Աղբյուրի ջրահեռացման խողովակաշարի մի ծյուղը, որը քողարկված է սալահատակի տակ, ձգվում է մեծ բակի ամբողջ տարածքով, անցնում հյուսիսային պարսպապատի տակով և դուրս գալիս դեպի մոտակա ձորակը: Մյուս ծյուղն անցնում է դեպի հարավ-արևմուտք և դուրս գալիս

օժանդակ շինության տակից: Ներքին աղբյուրից արևելք, մեծ ու փոքր բակերը միմյանցից բաժանող միջնապատի մեջ բացված է մենաստան տանող շքամուտքը: Այն դրսից երիզված է կիսազլանածև ժապավեններով: Ուղղանկյուն բարավորին փորագրված արձանագրությունից տեղեկանում ենք, որ մենաստանը, որը բաղկացած է վանախցերից, երկհարկ շինությունից և փոքր բակից, կառուցվել է 1694 թ. Հակոբ եպիսկոպոսի և նրա աջակիցների ջանքերով:

**ԱՍՏՈՒԾՈՎ ԾԻՆԵՑԱՒ ՊԱՐԻՍՊԱՍ ԱՐՏԱՔԻՆ ԳԵՂԵՑԻԿ ԽՅԵՐՍ ՎԵՐԻՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ ՀԱԶԱՐ ՀԱՐԻՐ ՔԱՌԱՍՈՒՆ ԹՎԻՆ ԸՆԴ ԵՐԵՔԻՆ Ի ՓԱՌՍ ԵՒ Ի ՎԱՅԵԼ ՍՐԲՈՑ ՆՇԱՆԻՆ, ՏԻՆԱ ԴՈՒ ԶՅԻՇԱՏԱԿՍ ԵՒ ՏՈՒՔ ԶՈՂՈՐՄԻՆ ՑԱԿՈՐ ՊԻՏԱԿ ՊԵՏԻՆ ԸՆԴ ԱՂԼ ՀԱԲՏԻՆ ՆԱԵՒ ԱՇԽԱՏՈՂԱՑՆ ՀՈԳՈՎ ՀԱՄԱՅՆԻՆ**<sup>43</sup>

Փոքր բակը ևս սալածածկ է: Հյուսիսից այն շրջափակված է գավթի հարավային պատով, արևելքից՝ պարսպապատով, իսկ հարավից և հարավ-արևմուտքից՝ երկհարկ վանախցերի երկթև շենքով: Այս խոշորաչափ շենքը, որ ժամանակին ծածկված է եղել կղմինդրե երկթեք տանիքով, յուրաքանչյուր հարկում ունի յոթ խուց: Դրանք բոլորն էլ ինքնուրույն, քառանկյուն հատակագծով, թաղակապ սենյակներ են: Սուտքերը և մեկական պատուհանները բացվում են փոքր բակի կողմը: Բոլոր վանախցերն էլ, թե՛ առաջին, և թե՛ երկրորդ հարկում, ունեն պատուհան կամ խորշ, արևմտյան պատի մեջ բուխարի: Բացառություն են միայն առաջին հարկի եզրային խցերը, որոնք, հավանաբար, սանիտարական նշանակություն են ունեցել: Ուշագրավ է առաջին հարկի հյուսիս-արևմտյան սենյակը, որը հայտնի է «Վարդապետի խուց» անունով: Առաջնորդի համար նախատեսված այս սենյակը մյուս խցերից առավել ընդարձակ է և, ի տարբերություն դրանց, երկու պատուհան ունի: Ծածկն այստեղ հենվում է երկու խաչվող կամարի վրա: Բուխարին նույնպես, իր հարդար

րանքով և չափերով, տարբերվում է մյուսներից:

Փոքր բակի տարածքում պահպանված քարե խարխուխները հուշում են, որ մենաստանի երկրորդ հարկը ժամանակին սյուներին ապավինող տախտակամած է ունեցել, և դեպի այդ հարկը տարել են բակի արևելյան կողմի աստիճանները: Պեղումների արդյունքում, վանախցերի բակում հայտնաբերվել են կավե խողովակներից բաղկացած XVII դարի ջրամատակարարման ցանցի մի երկար հատված և միջնադարյան խեցեղենի մեծաքանակ բեկորներ<sup>44</sup>:

Հարկ է նշել, որ 1694 թ. կառուցված մենաստանի շենքը մեզ չի հասել: Այն կործանվել է 1940-ական թթ.՝ երկրորդ աշխարհամարտի տարիներին<sup>45</sup>: Վերականգնվել է միայն անցյալ դարի 70-80-ական թթ.՝ փաստացի նյութերի, պահպանված լուսանկարների և նկարագրությունների հիման վրա:

Դեպի մենաստան տանող շքամուտքից ձախ, պարսպապատի մեջ ազուցված մարմարե սալի արձանագրությունը հայտնում է 1751 թ. վանքի տարածքում կատարված վերականգնողական աշխատանքների մասին:

**ՈՂՈՐՍՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՑ ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՑԱՒ ՍՈՒՐԲ ԽԱՉ ՎԱՆՔՍ. ԳԵՂԵՑԿԱՑՈՐԻՆԵԱԼ ԹԵ ՏԱՃԱՐՆ ԵՒ ԹԵ ԱՐՏԱՔԻՆ ՍՐԱՊԵՆ ՊԱՐՔՍ. ՊԱՐՆ ՊԱՐԱԳԱՑԻՒՔ, ՈՐ Է ԱԹՈՈՒ ԲՈԼՈՐ ԿՂՁՈՑՍ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԳԱԿԱՆ ԱԶ-ԴԻՍ. ԱՑՄԻՆԵՆ ԿԱՅԱՅՈՒ, ԴԱՐԱՍՈՒՅՈՒ, ՊԱՂԱՍՍԱՐԱՅՈՒ, ԿԵՕԶԼԵՎԵՅՈՒ ԲՈԼՈՐ ԳԻՒՂՕՐԵԻՒՔԵՆ, ՀԱՆԴԵՐՉ ԴԱԻՇԱՆԱԻՆ ԸՆԴ ՆՄԻՆ ՈՐՈՈՄԵԼԵԱԻՆ, ՈՐՔ ԵՂԵՆ ԶԵՆՆՆՈՒ ԲԱՐԵՊԱՇՏՕՐԵՆ ԶԵՐՄԵՈԱՆԴ ՍԻՐՈՎ ԱՐՔ ԵՒ ՎԱՆԱՅՔ ՈՂՈՐ-ՍՈՒԹԵԱՄԲ Ի ԺԱՄԱՆԱԿԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՑԱՂԱՄԱՑ ԱՐՔԵՊԻՍԿՊՈՍԻ ԿՂՁՈՑՍ (ՈՐ ԷՐ ԱՇԽԱԿԵՐՑ ՅՈՂԱՆՆՈՒ, ՊԱՏՐԻԱՐԳԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԿՈՑ, ԲԱԳԻՇԵՅՈՑ), ՈՐ ԵՂԵՒ ԴՈԳԱՔԱՐ-ՅՈՒ ԵՒ ՊԱՏՃԱՈՒ ԾԻՆՈՒԹԵԱՆ ԲԱԶՄԱԴԻՄԻ ԱՇԽԱ-**

**ՏՈՒԹԵԱՄԲ ՎԱՍՆ ԻՐՈՑ ՀՈԳՈՑՆ ԵՒ ՆԱԽՆԵԱՑՆ: ԵՒ ԵՂԵՒ ՆԵՐԹՊՈՋ ՓՐԿՉԻՆ ՄԵՐՈՑ 1751, ԻՍԿ ԸՍՏ ՀԱՅՈՑ՝ ՈՍ: ՈՎ ԲԱՐԵՊԱՇՏՈՆՔ, Ի ՑԸՆԹԵՆՆՈՒԼ ԱՐՉԱՆԱԳԻՐՍ ՅԻՇԵՑԵՔ ՄԻՈՎ ՀԱՅՐ ՄԵՐԻՒ ՎԵՐՈՑԳՐԵՑԵԱԼ ԲԱՐԵՊԱՇՏՈՆՔՆ ԵՒ ԱՅՅԵԼՈՒ ՍՐԲՈՑ ՏԱՆՍ ՑԱՂԱՄԱ ԵՒ ԵԹ ԱՐԵՂԱՅՍ**<sup>46</sup>:

Այսպիսով, բերված արձանագրության համաձայն, XVIII դարում Սուրբ Խաչը մնում է տեղի լուսավորչադավան հայության աթոռանիստ հոգևոր կենտրոնը: Այստեղ է գահակալել Կոստանդնուպոլսի պատրիարք Հովհաննես Բաղիշեցու աշակերտ եպիսկոպոս Ադամը, որը 1751 թ. նախածեռնում է ամբողջ վանքի նորոգումը, այդ նպատակին տրամադրելով ինչպես դրիմահայերի՝ Կաֆայի, Դարասուի, Բախչիսարայի, Կեոզլևի (ներկայումս՝ Եվպատորիա) և սրանց շրջակա գյուղերի, այնպես էլ Ղոշանի (Կաուշան՝ Մոլդովայում) և Ուռումելիայի (Նկատի ունի փոքրասիական գաղութները) հայ բնակիչների հանգանակած միջոցները:

Վանքի զլխավոր մուտքից ձախ, խոհանոցի հարավային պատին կցված փոքրիկ շինությունը, հավանորեն ծառայել է որպես փարախ՝ գրաստների և այլ կարգի անասունների համար: Այն կարող էր լինել նաև պահակատուն: Սա ուղղանկյուն հատակագծով մի սենյակ է, որի ծածկն ու տանիքը չեն պահպանվել: Հնագիտական պեղումների արդյունքում, կառույցի հատակին, ի հայտ է եկել ներքին աղբյուրից ձգվող ջրահեռացման համակարգի մի ծյուղը, իսկ գրեթե կենտրոնում՝ մի մեծ քարե խարխուխ<sup>47</sup>: Այս խարխուխ դիրքը, XIX դարի վերջին վերաբերող լուսանկարները, ինչպես նաև տեղում հայտնաբերված խեցեղենի մեծաքանակ բեկորները վկայում են, որ դիտարկվող սենյակն ունեցել է կղմինդրե միաթեք տանիքի տակ առնված փայտաշեն ծածկ: Լուսավորվում է արևմտյան և հարավային պատերի երկուական պատուհանի շնորհիվ: Սուտքն արևելյան կողմից բացվում է դեպի մենաստանի արևմտյան թևին զուգահեռ միջանցքը: Վերջինս

վանքի գլխավոր մուտքը կապում է մեծ բակի հետ: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Սուրբ Խաչ վանական համալիրի երեք աղբյուրները: Դրանցից ներքինը, որ չի գործում, արդեն ներկայացվեց վերը: Մյուս երկուսը՝ վանքի պարիսպներից դուրս են և գործում են: Սրանց ջուրը սառնորակ է, գուլալ, հար և նման Հայաստանի ջրին: Պատմում են, որ այդ ջուրն ապշեցրել է հայ վերաբնակներին, պահել նրանց իր շրջակայքում:

Սուրբ Խաչի վերին աղբյուրը գտնվում է վանքի գլխավոր մուտքից մի քանի մետր հարավ-արևելք: Այն կանգնեցված է քիվով երիզված գետնախարսի վրա: Ճակատային երեսը կառուցված է խոշոր, սպիտակավուն, սրբատաշ քարերից՝ կանոնավոր շարվածքով: Կենտրոնում նշտարած կամարը բոլորված է տրամատված շրջանակով: Կամարի տակ երեք փոքրիկ, զարդարուն խորշ կա: Ժամանակին աղբյուրի դիմային երեսը զարդարել է մարմարե մի սալ (ներկայումս անհետ կորած է), որի վրա քանդակված են եղել ամպերից վեր ելնող երկու հրեշտակ՝ ողջ հասակով: Նրանք բարձրացնելիս են եղել անոթանման պատվանդանին ապավինող խաչը<sup>48</sup>:

Ստորին աղբյուրը գտնվում է լեռնալանջի ստորոտին, ձորակի մեջ, դեպի ուր տանում է երեք սանդղաբազկից կազմված քարե աստիճանադիմ: Սանդղաբազկների միջանկյալ հարթակներից յուրաքանչյուրը կողքից առանձին դռնակ է ունեցել, որոնք բացվել են դեպի կից դարավանդի վրա տարածվող վանքապատկան այգիներն ու բանջարանոցները: Դռնակներից ներկայումս պահպանվել են միայն ծղնիները և դրանք կրող անկյունային քարերը: Աստիճանուղու գագաթին, այսինքն՝ վերին հարթակին, ժամանակին երկթեք վերնամասով քարե կամարակապ շքամուտք է եղել: Այն ևս ներկայումս գոյություն չունի: Պահպանվել են միայն ստորին կողաքարերը:

Աստիճանուղու ստորոտին, վանքի մուտքից մոտավորապես 100 մ հարավ գտնվում է ստորին աղբյուրը: Այն սկսել է գործել միայն վերջերս՝ 2001 թ.

վերականգնումից հետո: Մինչ այդ ամբողջությամբ ավերված էր: Դեռևս 1986 թ. այս հուշարձանը վերականգնելու փորձ է արվել. աղբյուրի ճակատային քարերն իրենց տեղերից հանվել են, մի կողմ դրվել, իսկ այնուհետև՝ տարիներով բարձիթողի մատնվել: Բնականաբար, մշակված և զարդերով հարդարված այս քարերի մի մասն անվերադարձ կորսվել է, իսկ բուն շինությունը՝ քայքայվել: Պահպանվել են ստորին աղբյուրի նախնական տեսքը պատկերող մի քանի լուսանկարներ, գծանկարներ, որոնցով էլ հնարավոր եղավ 2000-2001 թթ. վերականգնել այս հուշարձանը: Հարկ է նշել, որ ստորին աղբյուրն իր բազմադարյա գոյության ընթացքում քանիցս նորոգվել է, ձևափոխվել: Հին զարդաբեկորները համակցվել են նորատաշ քարերի հետ և, որպես մեկ ընդհանուր համակարգի տարրեր, ներդաշնակ ու համահունչ չեն միմյանց:

Հուշարձանի հնագույն վիճագիրը վերաբերել է 1749 թ.<sup>49</sup>: Սակայն այս հանգամանքը որոշիչ նշանակություն չի կարող ունենալ շինության թվագրության հարցում, քանզի Սուրբ Խաչի աղբյուրները հիշատակվում են ինչպես 1694 թ. բանաստեղծության, այնպես էլ Դորտելիի դ'Ասկոլիի 1634 թ. նկարագրության մեջ<sup>50</sup>: Համաձայն պահպանված տեղեկությունների, ստորին աղբյուրը, որ կից է բլրալանջին, երկու կողմից առնված է եղել լանջի փլուզմանը դիմակայող բարձր հենապատի մեջ և դրա հետ, փաստորեն, մեկ ընդհանուր հարթություն կազմել<sup>51</sup>: Աղբյուրը բաղկացած է երկու հիմնական մասերից՝ սրբատաշ քարից և քիվով երիզված հիմնախարսից ու տրամատված, լայն քիվով շրջանակված կամարած կերամասից: Ուշագրավ է շրջանակի մեջ առնված և տարբեր հարթությունների վրա տեղադրված ներքին հորինվածքը: Այն եռակազմ է և գմբեթավոր եկեղեցու կտրվածքի տպավորություն է թողնում: «Վեղարը» կիսած կոն է՝ հարդարված դեպի վեր նվազող ցածր կամարաշարերով: Ներքևում «թմբուկի» կենտրոնական մասում քանդակված է խաչքար՝ եռաստիճան պատվանդանին ապավինող

կենաց ծառից ելնում է ծաղկած խաչը, որն առնված է եռակազմ կամարի տակ: Խաչքարից աջ և ձախ, կիսադեմով դեպի խաչը շրջված, հրեշտակների պատկերներ են՝ ողջ հասակներով: Նրանց գլխավերևում քանդակված են հավերժության խորհրդանշաններ:

Խաչքարից ներքև, «գմբեթատակի» կենտրոնում, եռակազմ վերնամասով փոքրիկ խորշ կա, իսկ դրա վերևում՝ զարդարուն վարդակ: Վարդակի և խորշի միջև երկու փոքրիկ, դեպի դիտողը թռչող հրեշտակներ են: Նկարագրվածից աջ և ձախ բուսական մոտիվներ են՝ բարդու կամ կիպարիսի ծառեր հիշեցնող պատկերներ՝ մեկական թռչուններով: Բուսազարդերից աջ և ձախ խոշոր վարդակներ են: Ջուրը բխում է հիմնախարսի կենտրոնից և թափվում ջրահավաք ավազանի մեջ, այնուհետև միմյանց հաջորդաբար կցված սալաքարերի մեջ փորված բաց ջրատարով հոսում դեպի մոտակա ձորակը:

Այսպիսին է Սուրբ Խաչի ճարտարապետական նկարագիրը: Ավելացնենք նաև, որ այն աչքի է ընկնում խիստ ձևերով, անպաճույճ հարդարանքով, զուսպ արտահայտչականությամբ: Կառուցված լինելով օտար հողում՝ հուշարձանը, բնականաբար, կրել է իրեն շրջապատող ժողովուրդների և մշակութային ազդեցությունը, ներառել որոշակի, ոչ ազգային ճարտարապետական տարրեր, ինչպիսիք, օրինակ, աշտարակն է (ճեմովական ճարտարապետությանը բնորոշ շինություն), արտաքին հարդարանքի որոշ տարրեր: Սակայն, ընդհանուր առմամբ, այստեղ իշխում է հայկական ճարտարապետությունը, հայեցի մտածելակերպը<sup>52</sup>:

Մեզ հասած պատմական աղբյուրները վկայում են, որ վանքը բավականին հարուստ է եղել. ունեցել է եկեղեցական թանկարժեք սպասք և հանդերձանք: Վերը բերված 1694 թ. բանաստեղծության հեղինակը այդ մասին հետևյալն է գրում.

**Արժաք և ոսկի անօք ընտրական,  
Բուրվառ և կանթեղ, խաչ, ալետարան,  
Շուրջառ և վակաս, ուրար ու բազպան,**

**Ջանազան զարդիւք զեղուն Սուրբ Նշան<sup>53</sup>:**  
Դրիմահայերի 1778 թ. տեղահանության ժամանակ այս հարստությունը տեղափոխվել է Դոնի մերձափնյա տափաստաններ և այնուհետև հանձնվել Նոր Նախիջևանի մերձակայքում կառուցված Սուրբ Խաչ վանքին: XIX դարում դրիմյան վանքի հոգևոր հայրերը ստիպված նոր սպասք ու հագուստ են հայթայթել<sup>54</sup>: Այս շրջանում ձեռք բերվածն իր արժեքով արդեն բավականին զիջել է նախկին ունեցվածքին<sup>55</sup>: Ժամանակին վանքն ունեցել է նաև անշարժ գույք, ինչպես օրինակ՝ շրջակա անտառը, խաղողի այգին Սուղակում, հողակտորներ Հին Դրիմում և Պերեկուպում<sup>56</sup>:

Սուրբ Խաչը XIV-XVIII դարերում հանդիսացել է հոգևոր և մշակութային խոշոր կենտրոն: Աթոռանիստ լինելու հետ մեկտեղ, այն արդեն Հովհաննես Սեբաստացու օրոք ունեցել է իր հոգևոր դպրոցը, գրադարանը: Այդ մասին վկայում է գրիչ Ստեփանոսը, նշելով, թե Սեբաստացին, որ մեծ թվով ձեռագրեր է հավաքել, ուսանել է և ուսուցանել «ոչ միայն բանի», այլև՝ գործով<sup>57</sup>: Նա, որ հմուտ էր Սուրբ Գրքի մեկնաբանության մեջ, «անտարակոյս լեզուաւ տայր զլոյս բանին Աստուծոյ ի սիրտ և յոգի ունկնդրաց»<sup>58</sup>: Հոգևոր դպրոցի գործունեությունը շարունակվել է նաև XV-XVIII դարերում<sup>59</sup>: Այստեղ դասավանդել են դրիմահայ և Հայաստանից եկած կրթյալ վարդապետներ, գրվել և պահվել են հայերեն բազում ձեռագիր մատյաններ, որոնք աչքի են ընկնում իրենց գունագեղ մանրանկարներով և յուրօրինակ գլխատառերով:

Սուրբ Խաչը, որպես հոգևոր կենտրոն, գործել է մինչև 1920-ական թթ.: Խորհրդային կարգերի հաստատումից հետո այն վերածվել է պիոներական ճամբարի, երկրորդ աշխարհամարտի տարիներին՝ օգտագործվել որպես պահեստ, իսկ այնուհետև լքվել: Պատմության և ճարտարապետության այս վեհաշուք կոթողին անդրադարձել են միայն 1970-ական թթ: Այս շրջանում մասնակիորեն վերականգնել են Սուրբ Նշան եկեղեցու և գավթի տանիքները, մե-

նաստանի շենքը, սվաղել ճաքերը: Կատարվել են նաև հնագիտական պեղումներ, որոնք ղեկավարել են Օ. Մախնյովան, Օ. Դոմբրովսկին և Վ. Սիդորենկոն: 1986 թ., Ե. Լոպուշինսկայայի գլխավորությամբ, Կիևի հատուկ գիտա-վերականգնողական արտադրական վարչությունում կազմվել է Սուրբ Խաչի վերականգնման և հետագա օգտագործման նախագիծ, ըստ որի նախատեսվել է երբեմնի վանքը վերածել հանգստյան տան: Այդ ծրագրի մի չնչին մասն է իրագործվել միայն: Պարսպապատերից դուրս գտնվող հյուրատունը, որը կառուցվել է XVIII-XIX դարերի սահմանագլխին և ավերվել երկրորդ աշխարհամարտի տարիներին, վերականգնվել է որպես հյուրանոց:

90-ական թթ. սկզբին Դրիմի Ինքնավար հանրապետության կառավարությունը և հուշարձանների պահպանությամբ զբաղվող կազմակերպությունները, հաշվի առնելով Դրիմի հայ համայնքի խնդրանքը, ինչպես նաև Սուրբ Խաչի մշակութային բացառիկ արժեքը, որոշում կայացրին համալիր անհապաղ վերականգնելու մասին և մասնագետներ հրավիրեցին Հայաստանից (հնագետ Ֆրիմա Բաբայան, վերականգնող-ճարտարապետ Մերուժան Պետրոսյան): Այս ծրագրի իրագործման մեջ իրենց զգալի դերն ունեցան դրիմահայոց համայնքի այդ շրջանի նախագահ Անուշավան Դանիելյանը, տեղակալներ Վարդան Սարգսյանն ու Շամիր Խուբլարյանը:

Վերջին տարիներին իրավացիորեն հաստատվել է այն կարծիքը, թե բոլոր ավերված հուշարձանները չէ, որ կարելի է վերականգնել: Կան դեպքեր, երբ պետք է բավարարվել միայն եղածը պահպանելով, այն ամրացնելով: Սուրբ Խաչի վերականգնումն այս առումով բարդություններ չունեցավ: Հուշարձանը հիմնականում կանգուն էր և վերականգնման վերաբերյալ կասկածելի հարցեր չկային: Խնդիր չկար նաև շինանյութի հարցում: Փլվածքների մեծ մասում շարերի քարերը պահպանվել էին: Կար նաև մեկ այլ կարևոր հանգամանք: Դրիմահայերն ավան-

դույթ են դարձրել Սուրբ Խաչում նշել եկեղեցական ծեսերը, ազգային տոները, համայնքային հավաքները: Համալիրն ապագայում հանդիսանալու է ոչ միայն զբոսաշրջիկների այցելությունների վայր, այլև գործուն, կենդանի օրգանիզմ, մի փոքրիկ Հայաստան՝ տեղի հայության համար: Հետևաբար վերականգնումը պիտի կազմակերպվեր այնպես, որ բավարարեր այս պահանջները, անշուշտ, չվնասելով հուշարձանի շահերը:

1992 թ. աշնանը կատարվեցին նախապատրաստական աշխատանքներ. ստուգվեցին համալիրի շինությունների հիմքերը, պատերի ու ծածկերի տեխնիկական վիճակը, տարածքը մասամբ մաքրվեց աղբակույտերից, հողից և բուսածածկից: Բարեբախտաբար կառույցների հիմքերը բավարար վիճակում էին, սակայն իրենց՝ շինությունները, գրեթե առանց բացառության, կարիք ունեին վերականգնման: Դրանցից գավիթը, սեղանատան երկու սրահն անհապաղ օգնության կարիք էին զգում: Նման պայմաններում նպատակահարմար չէր ամբողջովին ավարտել շինություններից որևէ մեկը և, ապա, անցնել հաջորդին: Անհրաժեշտ էր ամրակայել բոլոր շինությունները, ըստ դրանց վնասվածության աստիճանի և, հետո միայն, անդրադառնալ դրանց՝ ավարտուն տեսքի բերելու խնդրին: Բուն վերականգնողական աշխատանքների համար հիմք ընդունվեց 1986 թ. նախագիծը և դրա վերաբերյալ հետազոտությունների՝ քարի, շաղախների լաբորատոր տարրալուծումների արդյունքները:

1993 թ. շինարարական շրջանը նշանավորվեց անհետաձգելի աշխատանքների իրականացմամբ: Առաջնահերթ վերականգնման կարիք էին զգում գավթի պատերը, տանիքը, ինչպես նաև Սուրբ Նշան եկեղեցու տանիքը և գմբեթը: Շինարարության կազմակերպումը բարդանում էր նրանով, որ համալիրի պարսպապատ տարածք տեխնիկա մտցնել հնարավոր չէր: Պետք էր կիրառել շինարարական ավանդական միջոցներ՝ ճախարակ, պատգարակ և այլն, ինչը և արվեց:

Գավթի հյուսիսային և հարավային պատերը (հաստությունը 90-95 սմ է) երկատվել էին, արտաքին շարերը՝ թափվել: Աշնանային անձրևաջրերը, թափանցելով պատերի ճեղքերի մեջ, ծմռանը սառչում, ընդարձակվում, լայնացնում էին ճեղքերը, խարխլում կառույցը՝ օրըստօրե մոտեցնելով դրա կործանումը: Այդ իսկ պատճառով անհապաղ հեռացվեցին պատերի վնասված, ոչ պիտանի մասերը, մշակվեցին փլվածքներում և քանդված մասերում եղած արտաքին շարի քարերը: Որոշ տեղերում հեռացված մասերի հաստությունը հասնում էր 40-55 սմ: Երկու պատերն էլ վերականգնեցին նախնական տեսքով՝ օգտագործելով նախկին շարի բոլոր քարերը: Շաղախը պատրաստվեց ըստ Ուկրաինայի մասնագետների տված բաղադրաչափի, որը հաստատվել էր այս շինության շարի մեջ օգտագործված շաղախի լաբորատոր հետազոտության հիման վրա: Իրենց նախնական տեղը դրվեցին պատուհանները գոտևորող շրջանակների քարերը: Վերականգնվեց գավթի տանիքը: Բացակայող տրամատված ծածկասալերը փոխարինվեցին նորերով: Լիովին վերականգնվեց նաև գավթի հարավային պատին հարող պարսպապատը:

Սուրբ Նշան եկեղեցու հիմքերը բարվոք վիճակում էին: Հիմնական ուշադրությունը դարձվեց դրա տանիքին, գմբեթին, հատակին և հյուսիսային պատին, որի վերին, կենտրոնական հատվածն ուռել և ընդհանուր հարթությունից դուրս էր եկել: Կային նաև այլ կարգի վնասվածքներ, ինչպես, օրինակ, առաստաղի, թմբուկի և առագաստների վրայի ճաքերը, որոնք, սակայն, այդ պահին վտանգավոր չէին և դրանց կարելի էր անդրադառնալ հետո: Պատի փքված հատվածը քանդվեց և վերաշարվեց: Վերականգնվեց նաև եկեղեցու հատակը, որի սալերը տեղահանված ու ցաքուցրիվ էին: Տանիքի պահպանված ծածկասալերը մաքրվեցին, շարվեցին սկզբում չոր եղանակով, այնուհետև ամրացվեցին ցեմենտի, սև ավազի և կրի շաղախով: Բացակա և վնասված սալերը փոխարինվեցին նորերով: Սակայն գավթի և

Սուրբ Նշան եկեղեցու տանիքների նման վերականգնումը ժամանակավոր բնույթ էր կրում: Հետագայում անհրաժեշտ էր վերականգնել այս կառույցների սկզբնական կոմպոզիցիոն տանիքները:

Եկեղեցու թմբուկի վերնամասը բոլորող քիվի տեղաշարժված քարերը դրվեցին իրենց տեղերում: Գմբեթի վրայից հեռացվեց նախորդ նորոգումից մնացած բետոնի հաստ, ծանր շերտը և փոխարինվեց կերամզիտից ու ցեմենտից պատրաստված թեթև շաղախի շերտով: Դա իր հերթին պատվեց կարմիր կավից և ծղոտից պատրաստված կապակցող շաղախով, որի վրա էլ հավաքվեց 12 նիստից բաղկացած կոմպոզիցիոն վեղարը: Աշխատանքները եզրափակվեցին խաչակիր քարի և խաչի տեղադրմամբ: Երկարատև ընդմիջումից հետո վանքի վրա նորից հառնեց հայ քրիստոնեական հավատի խորհրդանիշը:

1993 թ. նորոգվեցին նաև սեղանատան նկուղի պատերը, լուծվեց վերին աղբյուրի ջրահեռացման հարցը: Մաքրվեցին և շինարարության համար նախապատրաստվեցին սեղանատան երկու սրահը, մենաստանը, վերին և ստորին աղբյուրները:

1994 թ. շինարարական-վերականգնողական շրջանն ամբողջովին նվիրված էր սեղանատան երկու սրահների վերականգնման աշխատանքներին: Վնասված էր դրանց արևելյան պատը՝ իր ողջ երկարությամբ, խաթարված էին նաև արևմտյան պատի մեջ բացված պատուհանների եզրաքարերը: Ծածկը ևս մաքրման, ամրացման կարիք ուներ: Ակնհայտ էր, որ սեղանատան հատակը բարձրացել էր տարիների ընթացքում կուտակված իհաստ հողաշերտի պաստճառով: Սյուները և դրանց վրա հենվող կամարները, կրճատվելով, կորցրել էին երբեմնի վեհությունը: Սրահի մաքրման աշխատանքների շնորհիվ, 120-130 սմ հաստությամբ հողածածկույթի տակ, ի հայտ եկավ նախնական հատակը: Հայտնաբերվեցին նաև մուտքի առջևի՝ դեպի Երես իջնող աստիճանների սալերը: Ինչպես գավթի վերականգնման ժամանակ, այս անգամ ևս հեռացվեցին պատե-

րի վնասված, խարխլված շարքերը, մաքրվեցին և շարի համար պատրաստվեցին նախատեսված քարերը: Կառույցի պատերը վերաշարելուց հետո ամրացվեց հյուսիսային սրահի տանիքը, ժամանակավորապես լուծվեց դրա ջրահեռացման հարցը:

Ինչպես արդեն ասվեց, խոհանոցի ճարտարապետական հորինվածքն աղճատված էր: Սրահի հարավային կողմի սրբատաշ, կամարաշար ժապավենով գոտևորված միակ սյունը չէր համադրվում աղյուսաշեն, քառանիստ, երկու բուրգի ձև ունեցող ծածկի հետ: Որոշակի է, որ վերջիններս ավելի ուշ շրջանում էին կառուցվել՝ կրելով մահմեդական ճարտարապետության ազդեցությունը: Ինչ վերաբերում է սյան ասիմետրիկ դիրքին, ապա այդ մասին Ա. Յակոբսոնը հետևյալ կարծիքն էր հայտնել.

«Соседнее помещение, соединенное с первым проходом, также перекрыто цилиндрическими кирпичными сводами на четырех подпиружных арках, которые опираются на массивный столб, стоящий не по середине, а ближе к южной стене помещения, что вызвано было расположением входа в помещение с того же двора»<sup>60</sup>.

Այն, որ սրահի միակ սյան ասիմետրիկ դիրքը հետևանք է մուտքի հետ հարմարվածության, համոզիչ չէ: Սեղանատան երկու սրահի հատակագծերը համադրելուց հետո պարզվեց, որ դրանք ունեցել են նույնատիպ կառուցվածք: Այսինքն՝ խոհանոցն էլ եղել է թաղակապ, եռանավ մի շինություն, որի միայն հարավային նավն էր անխաթար մնացել: Բոլոր համաչափությունները խոսում էին այս տեսակետի օգտին, որն ապացուցելու համար անհրաժեշտ էր հայտնաբերել երկրորդ սյան որևէ հետք: Հատակի համապատասխան մասում փորվեց և հայտնաբերվեց սյան հիմքը: Ամենայն հավանականությամբ՝ կենտրոնական և հյուսիսային թաղերը ինչ-որ ժամանակ փլվել էին և, վերակառուցելիս, վանականները նախընտրել էին վեղարատիպ աղյուսե ծածկը:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին, ռմբահարման հետևանքով, աղյուսե բուրգերից արևելյանն ավերվել էր, ծածկի մյուս հատվածները

խարխլվել: Այսպես թե այնպես խոհանոցի ծածկի մի մասն անհրաժեշտ էր հեռացնել: Հաշվի առնելով այս հանգամանքը, որոշվեց վերականգնել շինության սկզբնական եռանավ կառուցվածքը: Սակայն այս աշխատանքը 1994 թ. ընթացքում ավարտել չհաջողվեց: Այդ իսկ պատճառով սեղանատան հյուսիսային սրահը, կամ խոհանոցը, ամրակայեցինք և վերցրեցինք երկաթե շինիրի վրա հենվող ժամանակավոր ծածկի տակ, որպեսզի հաջորդ տարի վերսկսենք թաղերի վերականգնումը:

Այդ բոլորին զուգընթաց, որոշ տեղերում ամրացվեցին շինությունների պատերը, լրացվեցին պատուհանների և մուտքերի շարերի քանդված հատվածները, ամրակայվեցին մեծ բակի հյուսիսարևելյան անկյունում գտնվող շինությունների մնացորդները (սրանք պահպանվել էին 70-100 սմ բարձրությամբ): Ամբողջությամբ վերաշարվեց մեծ բակի միջով ձգվող հենապատը, ամրացվեցին, կարգի բերվեցին դեպի գավիթ տանող աստիճանները և շրջակա հարթակը: Քայքայված էին նաև սեղանատան վերնահարկ տանող աստիճանները՝ բակի կողմը նայող հենապատով հանդերձ: Այս հատվածը նույնպես բերվեց իր նախնական տեսքին: Ամրացվեցին աստիճանների պոկված, տեղահանված սալերը: Հենապատի և դրա մեջ շինված ներքին աղբյուրի վերականգնման ժամանակ օգտագործվեցին հին շարի թափված քարերը: Վերականգնվեցին նաև համալիրի հարավ-արևմտյան անկյան սենյակի պատերը՝ պատուհաններով և կամարակապ մուտքով:

1995 թ. վերականգնվեցին մեծ բակը, դեպի գավիթ տանող սանդուղքը, վերին աղբյուրի շրջակա հենապատերը:

Անձրևաջրերը և հալոցքի ջրերը տասնամյակներ շարունակ հոսելով վանքի շինությունների տանիքներից՝ կուտակվել էին մեծ բակում, ապա ներծծվել սեղանատան պատերի ու հատակի մեջ, քանզի վերջինիս հատակի մակարդակը 100-110 սմ-ով ցածր է բակից: Այս հանգամանքը պահանջում էր առաջնահերթ լուծել մեծ բակի ջրահեռացման հար-

ցը: Սեղանատան ցանկացած տիպի վերականգնում, առանց պատերը և հատակը չոր պահելու երաշխիքի, անհիմաստ կլիներ: Այս էր պատճառը բակի վաղաժամ վերականգնման, ի հակադրություն ընդունված կարգի, երբ շրջապատի բարեկարգումը կատարվում է հուշարձանախմբի հիմնական կառույցների վերականգնումից հետո:

Դեռևս XX դարի 70-ական թթ. պեղելով մեծ բակը, Վ. Սիդորենկոն այստեղ հայտնաբերել էր ուղղանկյունաձև շինությունների մնացորդներ<sup>61</sup>, որոնց ընդհանուր գծագրությունն անհրաժեշտ էր արտահայտել բակի մակերեսին: Ուստի հին հիմքերն ու պատերն ամրակայվեցին և թողնվեցին սալահատակի տակ՝ տեսանելի պահելով միայն դրանց վերին շարքերը: Բակի՝ մեծ չափերի շերտաքարերով սալապատումը, ընդհանուր հատակի և պեղված պատերի փոքր չափի անտաշ քարերով ամրակայված մակերեսների հակադրությունը ցայտուն արտահայտեց միջնադարյան շինությունների ուրվագծերը: Այնուհետև վերականգնվեցին բակի ջրահեռացման համակարգը և դեպի գավիթ տանող աստիճանները:

Այս աշխատանքներին զուգընթաց զգուշորեն մաքրվել են Սուրբ Նշան եկեղեցու և գավթի պատերը: Արդյունքում, կեղտի և ուշ շրջանի (XX դարի առաջին կես) սվաղի տակից հայտնաբերվեցին XV-XVIII դդ. մեկ տասնյակից ավելի հիշատակագրեր<sup>62</sup>: Տաճարի պատին հայտնաբերվեցին նաև որմնանկարների հազիվ նկատելի հետքեր, ծաղկեփնջի պատկեր և, ըստ երևույթին, «խաչելություն» տեսարանից մի հատված:

Մասամբ վերականգնվեցին վանքից արևմուտք իջնող, երբեմնի մշակովի դարավանդները սատարող հենապատերը: Սրանք ոչ միայն արգելակում են այս թեք լանջի փլուզումը, հողածածկույթի հոսքը, այլև պաշտպանում են վանական շինությունները՝ առաջին հերթին՝ սեղանատունը, հնարավոր սահեքից: Ընդհանրապես այս տեղանքը հատուկ ուշադրության կարիք է զգում: Բացի այն, որ դարարդ, կտրտված ռելիեֆ ունի, նաև ենթակա է սելա-

վային հոսքերի ավերիչ ազդեցությանը:

1996 թ. աննախադեպ առատ տեղումների պատճառով չհաջողվեց կանոնավոր վերականգնողական աշխատանքներ կազմակերպել: Ծանրագույն կլիմայական պայմաններում շինարարները վանքի շուրջ ստեղծեցին ժամանակավոր, բայց հզոր ջրահեռացման համակարգ՝ 500 մ ընդհանուր երկարությամբ (հին համակարգը մասամբ է պահպանվել և չի գործում), որն առաջիկա տարիներին հուշարձանը կպաշտպանի առատ տեղումներից և հալոցքի ընթացքում լեռնալանջերից իջնող սելավային հոսքերից: Նույն 1996 թ. վերականգնվեցին սեղանատան հարավային սրահի զույգ մույթերը (հյուսիսային՝ քանդված մույթը կառուցվեց հիմնովին, ճիշտ հարավային նման) և այդ մույթին ապավինող թաղակիր կամարները: Վերականգնվեց և սեղանատան սրահների միջնորմի մուտքը:

Գավթի հարավ-արևմտյան անկյան դիտաշտարակը վթարային վիճակում էր՝ ակոսված վերից վար իջնող ճեղքերով: Աշտարակի փլուզումն անխուսափելիորեն պիտի բերեր գավթի ավերմանը և շատ ծանր հետևանքներ ունենար հուշարձանի համար: Այդ պատճառով, չնայած պետֆինանսավորման հետզհետե նվազմանը և տեխնիկական դժվարություններին, որոշվեց 1997 թ. սեղանատան հարավային սրահի եռանավ ծածկի վերականգնմանը զուգընթաց վերականգնել նաև դիտաշտարակը:

Ձգալի բարձրությունից (մոտ 18 մ) իջեցվեց ծածկը, այնուհետև՝ դրա ներսի սենյակի թաղակապ ծածկը, իսկ հետո՝ պատերի վթարային հատվածները: Հիշեցնեմ, որ Սուրբ Խաչ վանքը փակ համակարգ է, որտեղ տեխնիկական չի կարող մուտք գործել: Անհրաժեշտ միջոցառումներից հետո իրենց իսկ քարերով վերականգնվեցին դիտաշտարակի պատերը, ներսի սենյակի ծածկը: Աշտարակի տանիքի սալերը, որոնք տեղադրվել էին XX դարի 70-ական թթ. և բնորոշ չէին Սուրբ Խաչին, փոխարինվեցին կղմինդրով: Ներկայումս դիտաշտարակն ունի միաթեք, կղմինդրե ծածկ, որը նման է նախնականին:

1998 և 1999 թթ. Սուրբ Խաչի վերականգնողական աշխատանքների պետական ֆինանսավորումը դադարեցվեց, և վանքի տարածքում այդ տարիներին որևէ գործ չկատարվեց: Միայն 2000 թ. մեծ ջանքերով հաջողվեց պետքյուզեից գումարներ հայթհայթել և շարունակել վանքի վերականգնումը:

2000 թ. վերականգնողական աշխատանքների ընթացքում ամբողջովին ավարտվեց սեղանատան հարավային սրահի եռանավ ծածկի վերականգնումը, սակայն որոշվեց այն թողնել 1995 թ. կառուցված ժամանակավոր ծածկի տակ՝ մինչև այս հատվածի տանիքի տեղադրումը: Կիսով չափ վերականգնվեց նաև ստորին աղբյուրը: Դրա մշակված և զարդանախշերով հարդարված քարերը դրվեցին իրենց նախկին տեղերը: Քանդված հատվածներում տեղադրվեցին նոր սալեր, որոնք ընդհանուր հարդարանքով համապատասխանում են նախկիններին, սակայն զուրկ են զարդաքանդակների մանրակրկիտ մշակումից: Այսպիսով անխախտ պահվեց հուշարձանի ամբողջականությունը և միևնույն ժամանակ պարզորոշ զատվեցին հին մասերը նորերից:

2001 թ. ամռանն ու աշնանն ամբողջությամբ ավարտվեց ստորին աղբյուրի վերականգնումը, լուծվեց դրա ջրամատակարարման խնդիրը: Ավարտվեց նաև աղբյուրի առջևի հարթակի և սրան կից աստիճանաշարի վերականգնումը: Իրենց նախկին տեսքն ստացան կից և մերձակա հենապատերը, ինչպես նաև դեպի ստորին աղբյուր տանող աստիճանուղու ստորին հատվածները:

2001 թ. մեծ աշխատանք կատարվեց նաև մենաստանի վերականգնման գործում: Վերականգնվեց վանքի փոքր բակը՝ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերով հանդերձ (այստեղ ժամանակին պեղումներ են կատարել Վալերի Սիդորենկոն և Ֆրինա Բաբայանը): Ամրակայվեց վանախցերի երկհարկ շենքի առաջին հարկը: Շարի կարերը ներքուստ և արտաքուստ պատվեցին միջնադարյան շաղախին մոտ շաղախի նեղ ժապավեններով: Վերականգնվեցին երկրորդ հարկ տանող

աստիճանները, ինչպես նաև զավթի հարավային մուտքի առջևի աստիճանները: Վանախցերի կամ մենաստանի շենքը վերցվեց ժամանակավոր ծածկի տակ, որպեսզի կատարված գործը մինչև հաջորդ տարվա եզրափակիչ աշխատանքները, այսինքն՝ երկրորդ հարկի և տանիքի վերականգնումը, մնա անխաթար: Այն մինչև օրս էլ դեռ ժամանակավոր ծածկի տակ է և սպասում է շինարարության շարունակմանը:

2001 թ. Ղրիմի մի քանի տասնյակ հայերից բաղկացած կրոնական համայնքը, հայ առաքելական եկեղեցու՝ Ղրիմի թեմի և Ուկրաինայի՝ հայոց թեմի առաջնորդի խորախուսմամբ, պետական մարմիններից համառոտ են սկսեց պահանջել Սուրբ Խաչ վանքը: 2002 թ. պահանջողներին միացավ նաև ղրիմահայոց համայնքը: Սուրբ Խաչի հանձնմանը դեմ էին ՂԻՉ մշակութային ժառանգության պահպանության պետական կոմիտեն, շիննախարարությունը, մտավորականների մի ստվար խավ: Եվ չնայած այս ամենին, 2002 թ. հուլիսի 23-ին ՂԻՉ նախարարների խորհուրդը, հիմք ընդունելով Ուկրաինայի նախագահի «Չոզևոր կառույցները նախկին տերերին հանձնելու մասին» հրամանագիրը, իր 286 որոշմամբ բավարարեց ներկայացված պահանջը և Սուրբ Խաչը հանձնեց Հին Ղրիմի հայկական համայնքին: Ահա թե ինչ է գրում այս առթիվ Ղրիմի մշակութային ժառանգության պահպանության հանրապետական կոմիտեի նախագահի տեղակալ Վ. Ջարոբինը հայկական «Մասյաց աղավնի» թերթում (N6, 2002 թ.). «Կասկածելի է, ընդ որում նաև իրավական տեսանկյունից, Սուրբ Խաչ վանքային համալիրի հանձնումը Հին Ղրիմ քաղաքի հայկական կրոնական համայնքին: Համաձայն Ուկրաինայի «Մշակութային ժառանգության պահպանման մասին» օրենքի, ազգային նշանակության հուշարձանների հանձնումը հնարավոր է իրականացնել միայն գործադիր իշխանության մշակութային ժառանգության պահպանման բնագավառի կենտրոնական մարմնի համաձայնությամբ, ինչը չի արվել: Բացի

այդ, համայնքն այժմ պարտավոր է սեփական միջոցներով հոգալ տվյալ օբյեկտի ծախսերը, չնայած դժվար թե նա դրա համար ունի համապատասխան միջոցներ, էլ չենք խոսում այստեղ վերականգնման աշխատանքները շարունակելու մասին»:

Բնականաբար, 2002 թվականից վանքի վերականգնման պետական ֆինանսավորումը դադարեցվեց: Հայ քահանան ու եպիսկոպոսն էլ, որոնք խոստումներ էին տալիս միջոցներ հայթհայթելու մասին, մինչև օրս անկարող են գտնվել վանքի օգտագործումը ճիշտ կազմակերպելու և վերականգնողական աշխատանքները շարունակելու գործում:

Արդեն 4 տարի Սուրբ Խաչում լռություն է: Հուշարձանի չվերականգնված և մասամբ վերականգնված կառույցներն անմխիթար վիճակում են: Հատկապես անհանգստացնող է Սուրբ Նշան եկեղեցու վիճակը: Հինավուրց այս շինությունը, որի լիարժեք վերականգնումը պետական միջոցներով նախատեսվում էր իրականացնել 2002-2004 թթ., սկսում է խոնարհվել:

1. Ղրիմահայոց միջին դարերի և նոր շրջանի պատմությանը վերաբերող հիմնարար աշխատություններ է հեղինակել Վ. Ա. Միքայելյանը: Տես՝ Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964, էջ 23-82: Հայերը Ղրիմում, Հայկական Սովետական Հանրապետության, Երևան, 1981, հատոր 7, էջ 42-43: Ղրիմահայ գաղութը արևելք-արևմուտք հարաբերությունների ոլորտում (13-18-րդ դարեր). Երևան, 2000, էջ 5-9:

2. *Саргсян Т.* Некоторые вопросы истории армянских культовых сооружений Кафы (Феодосии), Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), N 2, 2003, էջ 138-162:

3. Լեռան «Սուրբ Խաչ» անվան մասին վկայում է Մինաս Բժշկյանը: Տես՝ Ճանապարհորդութուն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, շարադրեալ հանդերձ բանասիրական տեղեկութեամբ, Վենետիկ, 1830, էջ 324:

4. *Смирнов В. Д.* Археологическая экскурсия в Крым летом 1886 года, Записки Восточного отдела Императорского русского археологического общества (ЗВОИРАО), т. I. вып. IV, с. 287; *Акчокраклы О.* Старо-Крымские и отузские надписи XIII-XV вв., Известия Таврического общества истории, археологии и этнографии (ИТОИАЭ). т. I. Симферополь, 1927, с. 7; *Якобсон А. Л.* Армянская средневековая архитектура в Крыму, Византийский временник (далее — ВВ). т. 8. 1956, с. 168; *Якобсон А. Л., Таманян Ю. А.* Армянская средневековая архитектура в Крыму. Ереван, 1992, с. 8; *Քուշմերյան Զր.*, Պատմութիւն գաղթականութեան խրիմու հայոց, Վենետիկ, 1895, էջ 107: *Սուրխաթյան Գ.*, Ղրիմի հայոց վանքը, «Սուրճ», N 6. Թիֆլիս, 1904, էջ 71:

5. *Սարգսյան Տ.*, Միջնադարյան Սուրխաթի հայերը և նրանց հավատատեղիները, ՊԲՀ, N 1, 2000, էջ 107-123:

6. *Միքայելյան Վ. Ա.*, Ղրիմահայոց պատմություն, Երևան, 1989, էջ 36:

7. *Սարգսյան Տ. Է., Պետրոսյան Մ. Վ.* Սուրբ Խաչ, Սիմֆերոպոլ, 1998: *Սարգսյան Տ.*, Ղրիմի Սուրբ Խաչ վանքը և նրա նորահայտ վիմագրերը, ՊԲՀ, N 2-3, 1999, էջ 311-323:

8. ՀՀ ԳԱԱ հին ձեռագրերի Մ. Մաշտոցի անվան ԳՀԻ՝ Մատենադարան. Ձեռագիր 7742, թղթապանակ 251 ա: ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. *Խաչիկյան*, Երևան, 1950, էջ 358:

9. Նույն տեղում, ձեռագիր 7857, թղթապանակ 288 ք: ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 369-370:

10. *Սարգսյան Տ.* Միջնադարյան Սուրխաթի հայերը և նրանց հավատատեղիները, ՊԲՀ, N 1, 2000, էջ 110-111:

11. Դիվան հայ վիմագրության, արակ VII, Ուկրաինա, Սոլոդվա, կազմեց՝ *Գր. Գրիգորյան*. Երևան, 1996, էջ 103: Արձանագրությունն առաջին անգամ հրատարակել է *Մ. Բժշկյանը* (տես՝ նշվ. աշխ., էջ 324), որը, սակայն, սխալ է վերծանել եկեղեցու կառուցման թվականը: Արձանագրության 7-րդ տողը նա ընթերցել է. «ՅՈՒԹ ԵՎ ԵՆԵՍՈՒՆ ՍԿՍԵԱԼ ԱՄԻՆ...», այսինքն՝ 1338 թիվ: Սխալը թափանցել է այլ հեղինակների աշխատություններ՝ հիմք տալով թյուր տեսակետների:

12. Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր 7636, թղթապանակ 275 բ: ԺՂ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 248:

13. ԺՂ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 428, 448-449, 461-462, 494:

14. Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր 2705, թղթապանակ 486 բ- 487 ա: ԺՂ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 485-486:

15. Նույն տեղերում:

16. **Բժշկանց Ա.**, ճանապարհորդություն ի Լեհաստան ..., էջ 327: Հեղինակը նշում է, թե բանաստեղծությունը գրվել է 1694 թվին և բերում է դրա ստեղծման տարեթիվը ըստ Հայոց թվականության ՌճԽԴ: Վերջինս համապատասխանում է 1695 թվին:

17. Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր 2705, թղթապանակ 487 ա: ԺՂ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 486-487:

18. Նույն տեղում, ձեռագիր 24, թղթապանակ 271 բ: ԺՂ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 456:

19. **Բժշկանց Ա.**, ճանապարհորդություն ի Լեհաստան ..., էջ 325:

20. ԺՂ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 504-505, 518:

21. Նույնը, էջ 548-549:

22. **Քուշներյան Քր.**, Պատմություն գաղթականության խրիմու հայոց, Վենետիկ, 1895, էջ 102:

23. Սարգսյան Տ., Ավետիք Խոտանարակի և Քիմճակի Ս. Աստվածածին վանքի մասին, ՊԲՀ, N 1, 2001, էջ 130-144:

24. Հայերեն ձեռագրերի ժՂ դարի հիշատակարաններ, հատոր Բ (1621-1640 թթ.), կազմեցին **Վ. Հակոբյան, Ա. Գովհաննիսյան**, Երևան, 1978, էջ 590-591, 642-643, 857-859: Նույնը, հատոր Գ (1641-1660 թթ.), կազմեց **Վ. Հակոբյան**. Երևան, 1984, էջ 19-20, 356, 531, 559-560, 612: Դիվան հայ վիմագրության, պրակ VII, էջ 101-109: **Սարգսյան Տ. Է., Պետրոսյան Ա. Վ.**, Սուրբ Խաչ, էջ 94-109: **Սարգսյան Տ. Է.**, Դրիմի Սուրբ Խաչ վանքը և դրա նորահայտ վիմագրերը, ՊԲՀ, N 2-3, 1999, էջ 321-322:

25. ԺՂ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարան-

ներ, մաս Ա (1401-1450 թթ.), կազմեց **Լ. Խաչիկյան**. Երևան, 1955, էջ 245: Նույնը, մաս Գ (1481-1500 թթ.), կազմեց **Լ. Խաչիկյան**, Երևան, 1967, էջ 19-20, 531-532:

26. **Սուրխարյան Գ.**, Դրիմի հայոց վանքը, «Սուրճ», N 6. Թիֆլիս, 1904, էջ 71:

27. **Սարգսյան Տ.**, Դրիմի Սուրբ Խաչ վանքը և դրա նորահայտ վիմագրերը, ՊԲՀ, N 2-3, 1999, էջ 311-323:

28. **Խաչկյան Ս.** Խաչքար Սուրբ Խաչ և նորա Սուրբ Խաչ, Община. Амаинк. Историко-культурный журнал юга России, Вып. № 6 Пятигорск, 1997, с. 28.

29. **Շահազիզ եր.**, Նոր Նախիջևանի Սուրբ Խաչ վանքը, Թիֆլիս, 1901, էջ 7:

30. **Շահազիզ եր.**, Նոր-Նախիջևանը և Նոր-Նախիջևանցիք, Թիֆլիս, 1903, էջ 72:

31. Հայաստանի միջնադարյան կրթողային հուշարձանները., IX-XIII դարերի խաչքարերը, Երևան, 1984, պատկեր 12:

32. Այդ մասին է վկայում 1401 և 1406 թվերի վիմագրերի առկայությունը գավթի պատերին /տես՝ Դիվան հայ վիմագրության, պրակ VII, էջ 106, 107: **Սարգսյան Տ. Է., Պետրոսյան Ա. Վ.**, Սուրբ Խաչ, էջ 100-101, 104, 107/:

33. **Домбровский О., Сидоренко В.** Солхат и Сурб Хач, Симферополь, 1978, с. 98.

34. **Спаский Г.** Старый Крым, Записки Одесского общества истории и древностей (далее -ЗООИД). т. IV. Одесса, 1860, с. 101.

35. Սուրբ Նշան եկեղեցու դեկորատիվ հարդարանքի մանրամասն վերլուծությունը տվել է Ա. Յակոբսոնը /տես՝ Армянская средневековая архитектура в Крыму, ВВ., т. 8. 1956, с. 173-181; **Якобсон А. Л., Таманян Ю. А.** Армянская средневековая архитектура в Крыму, с. 12-19/.

36. **Домбровский О.** Фрески средневекового Крыма, Киев, 1966, с. 43.

37. Տես հաշվետվությունը, որ պահվում է ԴԻՀ մշակութային ժառանգության պահպանության պետական կոմիտեի և շինարարական քաղաքականության և կոմունալ տնտեսության նախարարության արխիվում:

38. **Корхмазян Э. М.** Армянская миниатюра в

Крыму. Ереван, 1978, с. 107.

39. **Домбровский О., Сидоренко В.** Солхат и Сурб Хач, с. 89.

40. **Халтахчян О. Х.** Гражданское зодчество Армении., Москва, 1971, с. 155.

41. **Կոմդակ Յովսեփ** արքեպիսկոպոսի ի վերայ հասարակութանն զրեցար ի Մոսկով յաղագս Դռիմու Ս. Խաչ վանից պայծառութան, Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ, Թիֆլիս, 1911, սյունակ 155-156:

42. **Խորեն վարդապետ Ստեփանե**, Դրիմի Սուրբ Խաչ վանք, Սանկտ Պետերբուրգ, 1891, էջ 9: **Սուրխարյան Գ.** Դրիմի հայոց վանքը, «Սուրճ», N 6, 1904, էջ 73:

43. Դիվան հայ վիմագրության, պրակ VII, էջ 104: **Սարգսյան Տ. Է., Պետրոսյան Ա. Վ.**, Սուրբ Խաչ, էջ 21:

44. **Бабаян Ф. С.** Раскопки монастыря «Сурб Хач», Археологические исследования в Крыму, 1993 год., Симферополь, 1994, с. 34. Համալիրի պեղումների արդյունքների վերաբերյալ, տես նաև **Бабаян Ф.** Об археологических исследованиях средневековых монастырей Сурб Хач и Сурб Степанос, Археологические исследования в Крыму, 1994 год., Симферополь, 1995: **Бабаян Ф. С., Корхмазян Э. М.** Археологические изыскания монастырей Сурб Хач и Сурб Степанос близ города Старый Крым, ՊԲՀ, N 1, 1999: **Бабаян Ф. С., Корхмазян Э. М.** Армянские монастыри Сурб Хач и св. Степаноса близ города Старый Крым, Ереван, 2000.

45. **Якобсон А. Л.** Средневековый Крым, М.- Л., с. 173, прим. 95.

46. Դիվան հայ վիմագրության, պրակ VII, էջ 104-105: Սարգսյան Տ. Է., Պետրոսյան Ա. Վ., Սուրբ Խաչ, էջ 23-24:

47. **Бабаян Ф. С.** Раскопки монастыря «Сурб Хач», Археологические исследования в Крыму, 1993 год, с. 35.

48. **Домбровский О., Сидоренко В.** Солхат и Сурб Хач, с. 72-73.

49. **Բժշկանց Ա.**, ճանապարհորդություն ի Լեհաստան ..., էջ 326: **Տեր-Արրահամյան Գ.**, Պատմություն խրիմու, Թեոդոսիա, 1865, մաս 2, էջ 158:

50. **Բժշկանց Ա.**, ճանապարհորդություն ի Լեհաստան ..., էջ 327: Описание Черного моря и Татарии, составил доминиканец Эмиддио Дортелли д'Асколи, префект Каффы, Татарии 1634 г. Перевод Н. Н. Пимнова, примечания А. Бертье-Делагарда, ЗООИД., т. XXIV., Одесса, 1902, с. 106.

51. **Խորեն վարդապետ Ստեփանե**, Դրիմի Սուրբ Խաչ վանք, էջ 9:

52. **Якобсон А. Л.** Армянская средневековая архитектура в Крыму, ВВ. т. 8, 1956, с. 180-181; **Якобсон А. Л., Таманян Ю. А.** Армянская средневековая архитектура в Крыму, с. 18-19.

53. **Բժշկանց Ա.**, ճանապարհորդություն ի Լեհաստան ..., էջ 327:

54. **Կոմդակ Յովսեփ** արքեպիսկոպոսի ի վերայ հասարակութանն զրեցար ի Մոսկով յաղագս Դռիմու Ս. Խաչ վանից պայծառութեան, Դիւան հայոց պատմութեան., գիրք Թ, 155-156:

55. XIX դարի վերջին վանքում եղած եկեղեցական սպասքի և հագուստի ցուցակը տես Խորեն վրդ. Ստեփանե, Դրիմի Սուրբ Խաչ վանք, էջ 15-17:

56. Յովսեփ կաթողիկոսի անդրանիկ կոմդակը Ղազար վարդապետին, Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ, 334-335: Խորեն վրդ. Ստեփանե, Դրիմի Սուրբ Խաչ վանք, էջ 22:

57. Մ. Մաշտոցի անվան Մատենադարան. ձեռագիր 2705, թղթապանակ 487 ա: ԺՂ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 486:

58. Նույն տեղում:

59. **Միքայելյան Վ. Ա.**, Դրիմի հայկական գաղութի պատմություն, էջ 293-294:

60. **Якобсон А. Л.** Армянская средневековая архитектура в Крыму, ВВ. т. 8. 1956, с. 174; **Якобсон А. Л., Таманян Ю. А.** Армянская средневековая архитектура в Крыму, с. 13.

61. **Домбровский О., Сидоренко В.** Солхат и Сурб Хач, с. 96-98.

62. **Սարգսյան Տ.**, Դրիմի Սուրբ Խաչ վանքը և դրա նորահայտ վիմագրերը, ՊԲՀ, N 2-3, 1999, էջ 319-321:

Merujan Petrosyan

### MONASTERY SURB KHATCH AND ITS RESTORATION IN 1993- 2001

(SUMMARY)

Monastery Surb Khatch (St. Cross) is one of the brightest representations of Armenian architecture and building-art on the north shore of the Black Sea. In the course of several centuries it was the residence of the clerical chief of Armenians in the Crimea. The monastery is located 4 km southwest of the settlement named Old Crimea (Surkhat in the past), on a slope of the woody mountain once named Surb Khach. In the opinion of a number of authorities, the medieval Surkhat was populated by Armenians long before the tartars appeared there and its name was related to the name of the Armenian monastery Surb Khatch.

The ancient monastery construction - the church Surb Nshan (St. Sign) - according to the Armenian inscription carved on its cupola, was founded in 1358 by the religious leader Hovhannes Sebastatsy and his brothers: merchant Hakob and clergyman Khazar. But the Armenian manuscripts of the XIV century written in the Crimea, the archeological investigations, as well as the difference between the names of the whole monastery and its single church come to prove that the monastery existed long before the foundation of the church Surb Nshan and had had another church long before Surb Nshan was built.

At the end of the XIV century a porch was added to the church from the west. The subsidiary constructions of Surb Khatch are located on the west and separated from the clerical part by a big yard. The southern section of the monastery is designated for the cloister and is represented by a two-storied house split into cells, and a small yard. The Armenian inscription, carved on the portal to this section, runs that the cloister was built in 1694 by Archbishop Hakob.

The mentioned constructions, together with high walls, form a closed and well-fortified system, which gives the monastery a look of a firm fortress. Outside two fountains and monastery gardens hanging on the terraces, are located.

Since 1993 up to 2001, except 1998 and 1999, the Surb Khatch monastery was under restoration financed by the Crimean government. Many of its medieval buildings were saved for the next generations. In 2002 the Council of Ministers of the Autonomous Republic of Crimea fulfilled the Armenian Religious Community's request in Old Crimea concerning the monastery Surb Khatch and passed it over them. Unfortunately, the financing for the restoration works of this monument of national status was cut short. The Community has no sources to continue the restoration. The local representatives of the Armenian Church, who stood behind the Community's activity, are helpless in solving the problem as well.

Now the monastery Surb Khatch needs urgent help. Its half-restored and untouched shabby constructions continue to ruin.

### ԴԱՎԻԹ ՔԵՐԹՄԵՆՋՅԱՆ

Դոկտոր, պրոֆեսոր

## ՆԻՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՆՈՐԻՆՎԱԾՔԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՆԱԲՅԻ ՇՈՒՐՁ

Անտիկ և հելլենիստական Հայաստանի բնավայրերի դասակարգումը և ուսումնասիրումը համաշխարհային քաղաքաշինության կարևոր խնդիրներից է: Արդարև, Հին Աշխարհի բնակավայրերի կատարելագործման մեջ արձանագրված է արևելքի և արևմուտքի քաղաքաշինական մշակույթի հետևողական զարգացումը, որն իր հետաքրքիր դրսևորումները պետք է գտներ նաև հայկական օրինակներում: Վերջիններիս մասին կան մատենագրական որոշ տեղեկություններ, սակայն, դժբախտաբար, նյութական տվյալները դեռևս սուղ են: Այս առումով, հայագիտության տվյալ բնագավառը սոսկ քաղաքաշինական ճարտարապետական հետազոտության ասպարեզ չէ, այլ նաև իր ծիրում ընդգրկում է պատմագիտությունը, հնագիտական պեղումները, հայ և օտար մատենագրությունը: Եղած բացը լրացնելու համար անհետաձգելի գիտական խնդիրներ են Հին Հայաստանի քաղաքների համադրումը և ներգրավումը միջազգային նույնատիպ հուշարձանների դասակարգումներում:

Հայկական անտիկ քաղաքաշինության ուսումնասիրության գործընթացում կարևոր է Վ. Մ. Հարությունյանի «Հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինական մշակույթը» վերնագիրը կրող դոկտորական ատենախոսությունը (1964 թ.): Նույն թեմային, 20 էջի սահմաններում, անդրադարձել է

նաև Արմեն Ջարյանն իր «Ակնարկներ Հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմության» գրքում (1986 թ.): Հարցի վերաբերյալ որոշ դիտարկումներ կան նաև Թ. Թորամանյանի ժողովածուում (1942 թ.), Ալ. Սահինյանի և Ն. Բունիաթյանի՝ Գառնիին նվիրված ուսումնասիրություններում և այլն: Վ. Մ. Հարությունյանի աշխատություններն ունեն ֆունկցիոնալ ելակետ, մինչդեռ Ա. Ջարյանի ակնարկն ավելի կենտրոնանում է քաղաքների խորհրդանշական և գաղափարական բովանդակության վրա: Երկու հեղինակների տեսակետների համադրումը մեծ կարևորություն ունի: Բնագավառի ուսումնասիրության համար կարևոր են նաև Հ. Մանանդյանի «Տիգրան երկրորդ և Հռոմ», Գ. Սարգսյանի «Տիգրանակերտ», Ս. Կրկյաշարյանի «Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ» աշխատությունները, ինչպես նաև Արմավիրի, Երվանդաշատի, Արտաշատի, Վաղարշապատի, Շիրակավանի, Ջօրինակիի, Գառնիի, Առինջի, Բենիամինի հնագիտական հետազոտությունները և այլն: Հարցի վերաբերյալ խիստ կարևոր վկայություններ են պարունակում Մովսես Խորենացու, Ագաթանգեղոսի, Թովմա Արծրունու և Անանունի, Ստրաբոնի, Պլուտարքոսի, Ապիանոս Ալեքսանդրացու, Մանվել Միրախրյանի, Լեհման Հաուպտի, Ալբերտ Գաբրիելի և այլ աշխատությունները:

Հին Հայաստանի քաղաքների հանույթային նյութերը սուղ են: Այսօր, այդ բնակավայրերի մի մասն է ներկայիս Հայաստանի սահմաններում, մյուսները գտնվում են Թուրքիայի տարածքում: Հնագիտական պեղումներ իրականացվում են միայն Հայաստանի Հանրապետության մի քանի հնավայրերում: Ներկա դրությամբ տվյալ խնդիրը կարելի է զարգացնել գիտահետազոտական, դասակարգողական հիմքերով: Այսինքն, շրջանառության մեջ եղած նյութերը խորացնել միջազգային զուգահեռների հետ համադրելու սկզբունքով՝ դրանցում ընդգրկելով դաշտային ուսումնասիրությունները, մատենագրական նյութերը և ճանապարհորդական տեղեկությունները:

Մինչմիջնադարյան քաղաքների կառուցվածքը, հորինվածքային առումով, առաջադրում ենք խմբավորել հետևյալ չորս սկզբունքներով՝ 1/ ըստ քաղաքաշինական տարրերի՝ ամրոցի, բերդաքաղաքի, քաղաքային կենտրոնի, բնակելի թաղամասերի, արվարձանների դասավորության, 2/ քաղաքամասերի համադրությամբ ստեղծված բնակավայրեր պարագծային ձևով, որոնք սովորաբար լինում են տեղանքին հարմարվող, երկրաչափական, քաղաքային միավորների տարանջատված և տարածական զանազան դասավորություններով, 3/ ըստ քաղաքամասերի կառուցապատման սկզբունքի, որը սովորաբար հանդիպում է ազատ, կանոնավոր և դրանց երկուսի համադրման եղանակներով:

Բնականաբար, ակնարկվող հորինվածքային խմբերում բնորոշիչ տարրն ամրոցն է: Ըստ այդմ, բնակավայրերը դասակարգվում են հետևյալ տարբերակներով՝ առանց ամրոցի, ամրոցը՝ կառուցապատման կենտրոնում, ամրոցը՝ բերդաքաղաքի պարիսպների նկատմամբ պարագծային դասավորությամբ, ամրոցը բերդաքաղաքից կամ բնակելի թաղամասերից զատված կամ կղզիացած դասավորությամբ: Առանձին տարբերակ կարելի է համարել նաև ամրոցի բովանդակ շենքերի տեղաբաշխումը հենց բերդաքաղաքի կազմում, որպես նրա բաղկա-

ցուցիչ ինֆրաստրուկտուրալ մասեր: Դիտարկենք տվյալ դասակարգման օրինակները.


**1/ Հնագույն բնակավայրերից զարգացած քաղաքներ՝ առանց ամրոցների (Աղ. 1. 1-2):**

Նմանատիպ քաղաքները հիմնականում տարածում են ունեցել Հին Եգիպտոսում: Դրանց կարևորագույն օրինակներից են 1/ ազատ պարագիծ ունեցող Ֆիվը և Ախտթաթոնը կամ Թել էլ Ամարնան, 2/ երկրաչափական ուղղանկյուն պարագծով և կանոնավոր հատակգծման սկզբունքով կառուցապատված, բուրգ կառուցողների, Կախուն քաղաքը, 3/ իրարից առանձնացված պարսպապատերով կառուցապատված քաղաքային հորինվածքը, որը հիմնականում տեղանքին հարմարվող ազատ պարագիծ ունի: Վերջին առանձնահատկությունները նկատելի են նաև հունական Պալեկաստրոյում, Գուրնիայում, ամերիկյան Մաչու-Պիկչույում, Հնդկաստանում՝ Սոհենջո-Դարոյում և այլն:՝ Ուշագրավ է, որ նշված քաղաքները, մասնավորապես եգիպտական օրինակները գոտևորման սկզբունք ունեն և կազմված են բուն քաղաքից, այն շրջապատող նեկրոպոլից կամ մեռյալների քաղաքից և պաշտամունքային համալիրների համադրումից կազմված տաճարների քաղաքից: Անդրադառնալով հայկական օրինակներին՝ նշենք, որ տարածական տեղաբաշխման առանձնահատկությամբ կարելի է մեկնաբանել հայկական Երվանդաշատ, Երվանդակերտ և Բազարան ազլոմերացիան, որը Հայկական լեռնաշխարհում ունի իր այլ զուգահեռները ևա՞:


**2/ Հնագույն բերդշենքերից առաջացած՝ ամրոց կենտրոնում կամ կենտրոնածից հորինվածքով քաղաքներ (Աղ. 2)**

Սրանք գոտևորված քաղաքների զարգացած տարբերակներ են: Այստեղ ամրոցի և պաշտամունքային կենտրոնի կամ ակրոպոլիսի քաղաքաստեղծ գործոնների շուրջ ծավալվել են քաղաքային մյուս մասերը: Տվյալ բնակավայրերի ազատ պարագծային և ազատ կառուցապատված օրինակներ են՝ Ուրը, Հոռոնը, Աթենքը, Տիգրոնը կամ Ցտիֆո-


Աղ. 1 Հնագույն բնակավայրերից զարգացած քաղաքներ՝ առանց ամրոցների



Ֆիա քաղաքի սխեմատիկ հանույքը




Հայկական պատմական քաղաքների տարածքային գոտևորման սխեմաներ (ըստ Արմեն Զարյանի)



Գուռնիայի հատակագիծը


Հիերոգլիֆներում վկայված Հին Եգիպտական իդեալական քաղաքի սխեման



Մոհենջո Դարոյի հատակագիծը

Կախունի հատակագիծը

Աղ. 2 Հնագույն բերդեմներից առաջացած ամրոցը բնակավայրի կենտրոնում կամ կենտրոնաձիգ հորինվածքով քաղաքներ



Հոռոմ քաղաքի իդեալական սխեման ըստ M. C. Neddens-ի

Ուր քաղաքի հատակագիծը

Արենքի հնագույն սխեմատիկ հանույթը

Ցտիֆոն քաղաքի սխեման ըստ Ա. Բերքյանի

Բարբելունի հատակագիծը

Արտաշատի սխեմատիկ հանույթը

Թախտի Սուլեյման բնակավայրի հանույթը ըստ Գիրշմանի

Վաղարշապատի սխեման ըստ Գ. Տիրացյանի

Մամալ քաղաքի հատակագիծը

Հերոդիոն Երուսաղեմի մերձակայքում ըստ Յ. Նեղարի

Թեոդոսոպոլսի սխեման ըստ Դ. Քերթմենչյանի

Աղ. 3 Բերդաքաղաքի պարիսպների նկատմամբ պարագծային դասավորությամբ ամրոցներ




Աշուր քաղաքի հատակագիծը

Խորասբաղ կամ Դուր Շարուկին քաղաքի հատակագիծը


Սուգայի հատակագիծը




Թեյշեբահնի հատակագիծը



Վան բերդաքաղաքի հատակագիծը




Կարքեմիշի հատակագիծը



Արգիշտիխիևիլի և Արմավիր քաղաքների սխեմատիկ տեղադրությունը

Աղ. 4 Բերդաքաղաքից հեռացված դասավորությամբ ամրոցով բնակավայրեր




Տարածքային (այդ թվում նաև քաղաքների) համաստեղային անտիկ պատկերումներ



Պերգամոնի հատակագիծը




Պոմպեյի հատակագիծը



Դիմգատի ճամբարային քաղաքի հատակագիծը




Դուրո եվրոպոսի հատակագիծը




Զորինակի (ճամբարային քաղաք) հատակագիծը

Աղ. 5 Բերդաքաղաքի պարիսպների նկատմամբ պարագծային դասավորությամբ ամրոցներ



Ամիդ և Դիարբեքիր  
Մարտիրոսապոլիս և Մուֆարգին Տիգրանակերտ և Արզեն

Վանա լճի հարավ արևմտյան տարածքների և Տիգրանակերտ, Մուֆարգին և Ամիդ քաղաքների հանույթը ըստ Գ. Քիպերտի և Տիգրանակերտ քաղաքի ենթադրյալ հատակագիծը ըստ Թեյլորի



Պրիենն քաղաքի հատակագիծը  
Միլեթոս քաղաքի հատակագիծը  
Մարտիրոսապոլիս կամ Մուֆարգին, Գերկայիս Միլվանի հանույթը ըստ Ալբերտ Գաբրիելի

նը և Արտաշատը: Նկատելի է, որ բացի Ուրից, մյուս երեք քաղաքները սկզբում զետեղված են եղել առանձին բլուրների վրա և հետո՝ ամփոփվել են միասնական պարսպապատի մեջ: Բնակավայրերի երկրաչափական պարագիծ ունեցող նմուշներից կարելի է առանձնացնել Բաբելոնը, Բիշաբուրը, Տախտի Սուլեյմանը, Սամալը, Երուսաղեմի մերձակա Դերոդիումը: Հայկական քաղաքներից այս խմբում կարելի է ընգրկել «Աչքի բիբ»-ի հորինվածքն ունեցող Երվանդակերտ դաստակերտը<sup>4</sup>, Վարդգեսավանը: Երվանդակերտի, Արտաշատի և Վարդգեսավանի այս խմբում հայտնվելը պատահական չէ: Փաստորեն նման հորինվածքների նախատիպեր են Ծաղկահովիտը, Լճաշենը, որոնք համակենտրոնացված հորինվածք ունենալով հանդերձ կազմված են եղել առանձին պարսպապատ միավորներից<sup>5</sup>: Պետք է կարծել, որ այս տիպին է պատկանել նաև Կարին-Կարինիտիումը, որի հետևությամբ կառուցվել է Թեոդոսուպոլիսը՝ իր կենտրոնում եղած բարձունքի վրա՝ Մովսես Խորենացու նկարագրած ամրոցով<sup>6</sup>: Այն շարունակաբար հանդիսացել է քաղաքի Կարա-կալե անվանումը կրող ու մինչև օրս պահպանված երբեմնի միջնաբերդը:

**3/ Բերդաքաղաքի պարիսպների նկատմամբ պարագծային դասավորությամբ ամրոցներ ( Աղ. 3 և 4 )**

Եթե քաղաքների կենտրոնածիզ դասավորությունը զարգացնում էր գոտևորված բնակավայրերի տիպը, ապա ամրոցը բերդաքաղաքի պարսպապատերի պարագծում հորինվածքը քաղաքաչինական մշակույթի ավելի զարգացած ոլորտ էր: Աճող քաղաքային համայնքը ամրոցատակ տարածությունում ձևավորում էր քաղաքային կենտրոնը: Փաստորեն, նախորդ տիպերում արտաքին առևտուրն ու մարդկանց այլ շփումներն իրականացվում էին քաղաքից դուրս: Բնակավայրերում հետագայում առաջացած ագորաները կամ ֆորումները ունեցել են բաց տեղաբաշխման սկզբունք: Այստեղ, ներքաղաքային տարածքների ֆունկցիոնալ գոտևորումն անհրաժեշտություն էր, ինչպես նկատելի է ա-

զատ պարագծով իրականացված Աշուր քաղաքի օրինակում, ուղղանկյունաձև կամ այլ երկրաչափական պարագծի պարիսպներով կառուցապատված հորսաբաղ, Թեյշեբահինի, Կարքեմիշ քաղաքների հորինվածքներում, քաղաքային տարածքների գոտևորման սկզբունքով իրականացված և առանձին պարսպապատ միավորներից կազմված Սուլայում<sup>7</sup> և այլն: Այս կարգում կարելի է ընդգրկել՝ Վանը, Արմավիրը, Երիզան կամ Անահտականը, Արծկեն և այլ հայկական հելլենիստական քաղաքներ:

**4/ Բերդաքաղաքի գաղտնի ամրոցով բնակավայրեր ( Աղ. 4 )**

Քաղաքների տվյալ տիպում ամրոցն ու բուն բնակավայրը կամ բերդաքաղաքն ինքնուրույն միավորներ են: Սա հանդիպում է միայն հելլենիստական բնակավայրերում: Ազատ կառուցապատման հետաքրքիր նմուշն է Պերգամոն քաղաքը: Սրա հայկական զուգահեռներն են Արտամետը<sup>8</sup>, Աշտիշատն<sup>9</sup> ու Շիրակավանը: Ազատ պարագծով, բայց կանոնավոր հատակագծմամբ օրինակներ են Պրիենեն, Միլեթոսը, Կնիդոսը: Երկրաչափական պարագծով պարսպապատեր ունեն Աբրան և Տակսիլլան: Հավանական համարելով Հայաստանում սույն հորինվածքի լայն տարածված լինելը, այնուամենայնիվ, եղած նյութերով դժվար է դրանք անձնավորել: Սակայն, քաղաքաչինական և այլ տեղեկությունների հիման վրա կարելի է պնդել, որ տվյալ հորինվածքի հայկական օրինակ է Տիգրանակերտ մայրաքաղաքը:

Տիգրանակերտ քաղաքի հատակագծի կապակցությամբ կան զանազան վարկածներ: Փաստորեն Տիգրան Բ-ի աշխարհահռչակ մայրաքաղաքը ինչ և ինչ հանգամանքներով նույնացվել է Ամիդի կամ Դիարբեքիրի, Մուֆարգինի կամ Մարտիրոսապոլիսի, Նփրկերտի կամ Միլվանի հետ<sup>10</sup>: Նշվածներից Դիարբեքիրը և Մուֆարգինը<sup>11</sup> հայտնի են իրենց հատակագծերով: Աղծնիքի Արզանեն գավառի անունների շուրջ եղած աղբյուրագիտական շփոթները<sup>12</sup> բերել են տվյալ բնակավայրերի անհարկի նույնացմանը: Այստեղ ավելի հավաստի պետք է համարել Գ.

Քիպերտի Աղծնիքի տարածքի հանույթը<sup>13</sup>: Փաստորեն, հեղինակը հստակորեն ցույց է տալիս նույն տարածքում գտնվող երեք բնակավայրերն՝ առանձին-առանձին: Տվյալ ուսումնասիրության կամ Տիգրանակերտի հատակագծի կապակցությամբ կարևոր է, որ 3. Քիպերտը, ակնարկվող քարտեզում, բնակավայրերի անվանումները տալիս է անտիկ և միջնադարյան զուգահեռներով՝ Մարտիրոսոպոլիս և Մուֆարգին, Ամիդ և Դիարբեքիր, Տիգրանակերտ ու Արգենը: Այստեղ, խնդրո առարկա հարցի կապակցությամբ, կարևոր է Տիգրանակերտ անվան վրա նկարված անտիկ քաղաքի սխեման, որը մեծացված ձևով ներկայացվել է քարտեզի ստորին աջ անկյունում ու վերագրվել Մեծ Բրիտանիայի դեսպան Թեյլորին (տես Աղ. 5): Աներկբա սա Տիգրանակերտի հատակագծի սխեման է, որը միանգամայն հելլենիստական է և զուգահեռում է Միլեթոս և Պրիենե քաղաքների հատակագծային առանձնահատկություններին: Երեք քաղաքներում էլ ամրոցներն ունեն բնակավայրից շեշտված հեռավորություն: Ինչը չի կարելի ասել Մարտիրոսոպոլիս և Դիարբեքիր քաղաքների կապակցությամբ, որոնք հատակագծում ուղղանկյունաձև են, իսկ դրանց ամրոցներն ունեն պարագծային դասավորություն և բերդաքաղաքից հեռացված չեն: Այս կարգի քաղաքներում ուշագրավ է երկու գետերի խառնարանում տեղադրված ամրոցների առկայությունը, բերդաքաղաքների կվադրանտային (ագորատիպ) կառուցվածքը, ինչը հանդիպում է պարսկական մի շարք զուգահեռներում (Արգե բամ, Կազվին, Լար, Քերմանշահ), սիրիական Անտիոքում և այլուր<sup>14</sup>:

Այս տիպի քաղաքների մի զուգահեռը պետք է համարել այն քաղաքները որոնց ամրոցները գորանոցատիպ են և ամբողջապես անջատված բերդաքաղաքից, իսկ թաղամասերը տարածվում են ոչ թե ամրոցի, այլ քաղաքային կենտրոնի կամ պալատական համալիրի շուրջ: Սրանք հիմնականում ճամբարային քաղաքներ են, այդ թվում՝ Պոմպեյը, Պալմիրան, Դուրա Եվրոպոսը, Տիմգադը, Սիլչեստ-

րը, Զերկուլանունը, Լամբեգիսը և այլն: Ճամբարային հայկական քաղաքի նմուշ կարելի է համարել Տարոն-Վասպուրականի Արճեշին մերձակա Ջորինակը:

Վերևում կատարված համեմատությունների հիման վրա կարելի է եզրակացնել, որ 3ին 3այաստանի քաղաքաշինության վերաբերյալ տվյալները սահմանափակ լինելով հանդերձ ունեն հեռանկարային ընդարձակման ներուժ: Ներկա դրությամբ հայտնի են միայն արդի 3այաստանի քաղաքական սահմաններում եղած նյութերը: Ներկայիս Թուրքիայում գտնվող պատմական 3այաստանի քաղաքները սկզբունքային կարգով պեղումների ծիրում չեն ընդգրկվում: Տվյալ իրադրությունում հուսալիմ մեզ հասած մատենագրական նկարագրություններն են և, հատկապես, Մովսես Խորենացու, հելլենիստական մշակույթին քաջածանոթ հեղինակի հաղորդումները, որոնք կարող են նպաստել բնագավառի լուսաբանմանը: Մյուս կողմանը հելլենիստական քաղաքաշինության դասական, օրինաչափ սխեմաների գոյությունն է: Զուգահեռների մեթոդով նյութերի քննությունը հստակություն է մտցնում հայկական քաղաքների հորինվածքային խնդիրներում և օժանդակում դրանց տվյալների բյուրեղացմանը, լրացմանն ու հարստացմանը:

Փաստորեն, հայկական անտիկ քաղաքաշինական նմուշներում նշմարելի են՝

- 1/ Եզիպտական զուգահեռներով պարզաբանվող քաղաքային ազլոմերացիայի գոտևորված կառուցվածքը:
- 2/ Պարսկական և միջագետքյան զուգահեռներով լուսաբանվող քաղաքամասերի խորհրդանշական (երկմաս, եռամաս, քառամաս, յոթ կամ ինը մասերով) ենթակառուցվածքը:
- 3/ 3ամաշխարհային քաղաքաշինության դասական զուգահեռներով՝ 3ին Արևելյան կենդանական և հունական մարդակերպ մոտիվների քաղաքաշինական նախատիպերի գոյությունը:
- 4/ 3ատակագծման հելլենիստական դասական սխե-

մաների առկայությունը, որոնք միջինացնում են արևելյան և արևմտյան սկզբունքները:

1. *Hartmut Hofrichter*, Stadtbaugeschichte von der Antike bis zur Neuzeit, Wiesbaden, 1995, s. 3, 7, 8, 36.
2. *Всёобщая история архитектуры в 12 томах, том 1, Архитектура Древнего Мира, Москва, 1971, стр 73.*
3. *Մովսես Խորենացի*, 3այոց պատմություն, աշխատասիրությամբ՝ Ստ. Մալխասյանի, Երևան, 1940, էջ 109-110. Արմեն Զարյան, Ակնարկներ հին և միջնադարյան 3այաստանի քաղաքաշինության պատմության, Երևան, 1986, էջ 22-38 և տախտակ:
4. *Մովսես Խորենացի*, նշվ. աշխ., էջ 110-111:
5. *Վ. Մ. 3արությունյան*, 3այկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 9-13:
6. *Մովսես Խորենացի*, նշվ. աշխ., էջ 235:

David Kertmenjian


ON THE PROBLEM OF COMPARATIVE CLASSIFICATION CONDUCTING THE LAYOUT-COMPOSITION OF ANCIENT ARMENIAN TOWNS

(Summary)

The goal of the article is to enrich the existing information about Ancient Armenian cities. The state of art conducts the fact that part of the corresponding cities lay abroad of current political boundaries of Armenia. However they are in an intended manner excluded from expedition programs by the Turkish authorities. The comparative analysis of the indicated cities with the identical world tradition actually hands to expand their information. The latter has been treated by an inductive method importing the Armenian instances within the classification of the world's ancient cities. The cause of such undertaking is due to the revelation plan of the city Tigranakert, one of the famous capitals of Hellenistic Armenia from Antique period dating by the I century B.C. Also the plan and its interpretation are presented in this article.

ՆՈՎ ՆԱՆՆԵՍ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՏԱՐԱԾՔՆ ԸՍՏ  
ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ



Օձասար

Սարղուրյան արքայատոհմի հիմնադիր Սարղուրե I-ը (845-825) Տուշպա քաղաքը պարսպապատելուց և մայրաքաղաքի վերածելուց հետո<sup>1</sup>, ձեռնամուխ է եղել Հայկական լեռնաշխարհի արյունակից և ոչ արյունակից ցեղերն ու ցեղային միավորումները մեկ միասնական պետության կազմում համախմբելու նպատակային գործընթացին, որը

հետևողականորեն շարունակվել է և Իշպուինեի (825-810), և՛ Մինուայի (810-788) գահակալության ժամանակ:

Անխոնջ շինարար, հմուտ քաղաքագետ և փայլուն զորավար Մինուան իր դիրքերն ամրապնդելով հարավում (Պարսկահայք, Կորդուք, Աղծնիք, Տուրուբերան), ձեռնարկել է պետության հյուսիսա-

յին սահմաններն ամրացնելու գործը: Սկզբնական շրջանում անհրաժեշտ էր հասնել մինչև Արաքս գետը և այն դարձնել ամուր սահման: Ուստի գետի աջ (հարավային) ափի հարմար վայրերում ամրոցներ է կառուցում: Հիշատակենք Լուխիու (հետագայում՝ Ցոլակերտ) քաղաքի տեղում Մինուախինելե ամրոցի կառուցումը<sup>2</sup>:

Հարկ է նշել, որ փաստերի բացակայության պատճառով Մ. Վ. Նիկոլսկին, Գ. Ա. Ղափանցյանը և Ն. Գ. Ադոնցը ենթադրում են, որ Մինուան Արաքսից հյուսիս չի անցել<sup>3</sup>, սակայն Բ. Բ. Պիոտրովսկին նման անցումը հնարավոր է համարում<sup>4</sup>: Բարեբախտաբար, այժմ կարող ենք անցումը հաստատել փաստերով: Բանն այն է, որ Տուշպայի եռանդուն տիրակալը, դեռևս իր հոր կենդանության օրոք, ներխուժել է ներկայիս Նախիջևանի տարածքը՝ հետագա Գողթն գավառի շրջանում: Խորանալով երկրի խորքը, նա գրավել է այն, իսկ վերադարձին Օձասար լեռան լանջի ժայռերին հոր և իր անունից թողել է հինգ տողանոց սեպագիր մի արձանագրություն, որը հայտնաբերել է երկրաբան Վ. Ա. Իգումնովը: Այնուհետև այդտեղ եղել են Մոսկվայից Երևան ժամանած նրա գործընկերները: Երկրաբանական արշավախումբը մեքենայով տեղ էր հասել և վերադարձել մեկ օրում՝ 1989 թ. օգոստոսի 11-ին, խիստ վտանգավոր պայմաններում՝ Արցախի ազատագրության համար մղվող պայքարի թեժ օրերին:

Արձանագրությունը լուսանկարվել է տարբեր դիրքերից և տարբեր ժամերի, հատվածներն առանձին-առանձին: Այն հրատարակվել է Վ. Ա. Իգումնովի, Ս. Գ. Հմայակյանի և իմ ջանքերով, նախ՝ Հռոմում (անգլերեն)<sup>5</sup>, ապա՝ Երևանում (հայերեն)<sup>6</sup>:

Ներկայացնում ենք արձանագրության տառադարձությունը (վանկագիր և հնչյունագիր), ինչպես նաև հայերեն թարգմանությունը<sup>7</sup>:

1. Տառադարձությունը

ա) վանկագիրը

1. [D]Hal-di-ni-n[?] uš-ma-[š]i-lneš lš-pu-ū-i-nē-še I<sup>D</sup>XY


- sar-dur<sub>8</sub>-hi-[nē-še] [KA] (?)
- 2. 'Mi-nu-a-še [lš-]pu-ū-[i]-[nē]-hi-nē-še URU Ar-Si-[n]ē [KU]R-nē ha-ū-nē URU lš-[x-x-x] [x-x]
- 3. [U]RU Ar-ši-qu(?)-me-l KUR-nē URUA-a-ni-a-nē KUR-nē-e ha-ū-nē<sub>7</sub> za-áš-gu-nē KU-[u-ar-šū-nē]
- 4. Gi<sub>4</sub>-a-še t[e]-ru-nē DHal-de-e-i pu-lu-se GENBu-lu-ū-d[e]-e te-ru-nē a[r]-[di-še]
- 5. NIG. [GA] [j-]nē-j[e] DHal-de-e ur-bu-li-nē GU<sub>4</sub>-A'B DHal-de-lel EN MAH-e GENB[u]-[lu]-[lū]-a-d[e]-lel

բ) Հնչյունագիրը

- 1. [D]Halদিনine ušmašine 'lšpuúineše I<sup>D</sup>XY Sardurhinēše [KA] (?) (=ale):
- 2. 'Minuaše 'lšpuinehineše URUArsine [KU]R-nē (=ebane) haune URU[š(?)]...
- 3. URUArsiqumei(?) [KU]R-nē (=ebane), URUAianianē [KU]R-nē (=ebane) haune, zašgune, kuluaršune(?).
- 4. Gi<sub>4</sub>-a-še(=bidujaše) terune DHaldei puluse GENBuluade, teruneardiše:
- 5. NIG-GA inele DHaldeje urbuline, GU<sub>4</sub>-A'B DHaldeje EN(=eureje) MAH-e (=alsuneje) GENBuluade.

2. Թարգմանությունը

- 1. Խալդյան զորությամբ Իշպուինե Սարղուրորդին ասում է.-
- 2. Մինուա Իշպուինորդին Արծինե (քաղաքի) երկիրը գրավեց, իշ [...] (քաղաքի) [երկիրը] գրավեց,
- 3. Արծիկունե (՝) (քաղաքի) երկիրը (գրավեց), Այանիանե (քաղաքի) երկիրը գրավեց, (թշնամիներին) սպանեց, վտարեց.
- 4. Վերադարձին հիմնեց Խալդեի կոթողը Բուլուա - (լեռան) – վրա: Սահմանեց կարգ.
- 5. Առարկաներն այս Խալդեին թող - զոհաբերվեն, (մեկ) ցլիկ (թող - զոհաբերվի) Խալդե տիրոջն – իր բարձրյալ՝ Բուլուա - (լեռան) – վրա:



Հատված Ջուղայի գերեզմանոցից

Այսպիսով, մեր ձեռքի տակ ունենք մի անգնահատելի փաստաթուղթ, որի տվյալներով ուրարտացիները եղել են ոչ միայն Արաքսի ձախ (հյուսիսային) ափին, այլև նվաճել են դրա մի նշանակալի հատվածը՝ հետագա Գողթնի տարածքը և հարակից շրջանները:

Ժամանակակից ուրարտագիտության և հայագիտության միջոցով քննենք Նախիջևանի այս և այլ արձանագրություններում հանդիպող տեղանունները, հնարավորինս պարզենք դրանց լեզվական պատկանելիության հարցը, որը խիստ կարևոր է ոչ միայն հայ ժողովրդի պատմության և էթնոգենեզի կնճռոտ հարցերը լուսաբանելու համար, այլև ունի քաղաքական հրատապ նշանակություն:


### 1) Արծին

Ինչպես նշվեց, հիշատակվում է Իշպուհնի (825-810) և Մինուայի (810-788) Օծասարում գտնված սեպագիր արձանագրության մեջ, որպես Արծին:

Նե: Հետագայում այն դարձել է Արծին (բառավերջում է ձայնավորով տրված ը կիսաձայն հնչյունի օրինաչափ անկմամբ, մի երևույթ, որը բացահայտել է Ի. Մ. Դյակոնովը)<sup>8</sup>, իսկ ավելի ուշ նաև՝ Արծն:

Հարկ է նշել մի շատ կարևոր հանգամանք. Արծն տեղանունը բացի Սյունիքից (Գողթն գավառն սկզբում եղել է Սյունիքի կազմում)<sup>9</sup>, հանդիպում է նաև Այրարատում (Արծնի, Արզնի), Աղծնիքում (Արծն, Արզն) և Բարձր Հայքում (Արծն, նաև հենց Արծին):

Սյունիքի Արծինե (Արծին, Արծն, այժմ Արազին) քաղաքանունը, որը տեղանունների մեջ հնագույնն է (ավելի քան 2800 տարեկան), բացահայտում է ևս մի իրողություն. Այրարատի, Աղծնիքի, Բարձր Հայքի և Սյունիքի համանուն հիշյալ քաղաքները (իհարկե, նաև դրանց շրջակա տարածքները), անշուշտ, բնակեցված են եղել միևնույն լեզվաընտանիքին պատկանող ցեղային միավորումներով: Տվյալ տեղանուններում վկայված **արծ** արմատը (**Մ** հավելվածով՝ **արծն**) հնդեվրոպական-հայկական է և



Եկեղեցի

որի նախնական իմաստն է **փայլ, ցուլք, լույս**, իսկ արմատի կրկնությամբ՝ **արծարծ (բորբոք), աիծարծել (մոռացվելու մոտ եղած մի բան նորոգել, վառել, գոգոել)** և այլն, որը ծագում է հնդեվրոպական **արզ (փայլուն, սպիտակ)** արմատից<sup>10</sup>, իսկ ըստ Գ. Բ. Ջահուկյանի՝ **ար(ե)զ (փայլուն, սպիտակավուն)**, որից էլ ծագել են հայերենի մի շարք բառեր (**արծաթ, արծնեմ, արծարծեմ**)<sup>11</sup>:

Հետևաբար, **արծն** արմատով կազմված տեղանունները, այդ թվում նաև Օծասարի ավելի քան 2800-ամյա սեպագիր արձանագրության վկայությամբ, հայտնի **Արծինե (Արծին)** բնակավայրի անունն առանց վարանման պետք է ընդունել որպես հնդեվրոպական – հայկական:

### 2) Հայնեան


Օծասարի վերոհիշյալ արձանագրության մեջ հիշատակվում է նաև **Այանիանե** քաղաքանունը: Նման վերջավորությամբ տեղանունները Հայկական

լեռնաշխարհում այնքան էլ շատ չեն: Դրանցից են Աղծնիքի **Կալիբիլիանե** և **Արպուլիանե** բնակավայրերի, Այրարատի **Ախուրիանե** քաղաքի և **Աբելիանեխե** ցեղի, ինչպես նաև **Կուրիանե** երկրի, Ծոփքի **Մե-լուիանե** բնակավայրի անունները: Եղածների մեջ հնագույնն **Այանիանե** բնակավայրն է, որը հետագայում դառնում է **Այանեան**, հետո՝ երկրորդ անշեշտ **ա** հնչյունի անկմամբ, **Այնեան** (հմմտ. **Կաղարջք > Կղարջք, Սերեմաձոր > Սրեմաձոր**), իսկ սկզբի աճական հնչյունով՝ **Հայնեան** (հմմտ. **Աղամակերտ > Հաղամակերտ, Ամբերդ > Համբերդ, Աղի > Հաղի, Աբուրգանե > Համբոյրագան**): Սակայն հայտնի է, որ **Հայնեան** բնակավայրը գտնվում է ոչ թե Գողթն, այլ Սյունիքի Քաշունիք գավառում, որի անունը մեզ հասել է աղավաղված՝ **Հացնեան**<sup>12</sup> (յ և ց տառերի շփոթի պատճառով):

Քաղաքների անունների տեղափոխությունը տեղից տեղ զարմանալի չէ: Նման դեպքեր հաճախ են պատահել, մասնավորապես, որ արձանագրության մեջ նշվում է, որ Տուշպայի տիրակալը թշնամիների



Օձասարի սեպագիր արձանագրությունը և գրչանկարը




սպանել կամ վտարել է: Հավանական է, որ վտարվածների մեջ եղել են նաև Այանիանե քաղաքի բնակիչները, որ հայտնվել են նոր վայրում և միևնույն անվամբ բնակավայր հիմնել:

Ավելացնենք, որ հայերենի իան > էան ածանցն ունի երկու ստուգաբանություն: Հ. Հ. Աճառյանը կարծում է, որ այն ծագում է իրանական որևէ լեզվից<sup>13</sup>: Վերջերս Ջ. Ա. Գրեպինն առաջ է քաշում վարկած, ըստ որի հայերենի իան > էան ածանցը ծագել է լուվիերենից<sup>14</sup>, Ք. ա. VI դ., այն դեպքում, երբ

տվյալ ածանցը հայերենում հայտնի էր դեռևս Ք. ա. IX դ.:

Ավելին, Գ. Բ. Ջահուկյանն ունի շատ ավելի համոզիչ փաստարկ: Նա ենթադրում է, որ Թիզլաթպալասար I-ի (1115-1077) հիշատակած Շուլիանգի լեռնանունը<sup>15</sup>, թերևս, կազմված է միևնույն իան > էան վերջածանցով<sup>16</sup>. Շուլիանգի (իմա՝ Շուլիանց > Շուլեանց), այսինքն՝ ոչ թե իան > էան, այլ հայերենի հոգնակի քվի սեռական հոլովով՝ իանց > էանց վերջածանցով:



Եկեղեցի



Չատված Ջուղայի գերեզմանոցից

Գ. Բ. Ջահուկյանի առաջ քաշած տեսակետի հիման վրա հայերենի **իան** > **եան** վերջածանցի հնությունը հասնում է մինչև Բ. ա. XII դ., այսինքն դրա մասին գրավոր հիշատակությունը 3113 (1115+1999-1) տարեկան է:

Չետևաբար, Օծասարի սեպագիր արձանագրության մեջ հիշատակված **Այանիանե** քաղաքանունը ( հետագայում Չայնեան) բացարձակ հայկական է, ինչը վիճարկման ենթակա չէ:

### 3) Արծիկումն (?)


Օծասարի սեպագիր արձանագրությունում հիշատակվածներից է **Արծիկումն** բնակավայրի անունը: Այն առայժմ հնարավոր չէ կապել որևէ տեղանվան հետ: Հազարամյակների ընթացքում, հա-

վանաբար, այն ջնջվել և մոռացության է մատնվել: Սակայն, կարելի է ենթադրել, որ այն կազմված է միևնույն **արծ** արմատից և **կումն** (?) բաղադրիչից, որը, թերևս, կարող է հնդեվրոպական լինել և կապվել **Կումայրի** քաղաքանվան **կում** արմատի հետ, որը, անշուշտ, հնդեվրոպական է և նշանակում է բնակավայր, գյուղ: Հայերենում այն հայտնի է նաև որպես **զոմ** (հմմտ. **Մանկան զոմ**, **Բզրայրի զոմ**, **Շաղազոմ**, **Մայրազոմ** և այլն):

Նշենք նաև, որ նույն տեղում հիշատակված Իշ [...] քաղաքանվան մասին առայժմ որևէ որոշակի բան ասել հնարավոր չէ:

### 4) Բղև

Արձանագրությունում հիշված **Բուլուա** լեռ-



Շոռոտի եկեղեցին

նանունը հանդիպում է Վանում կանգնեցված Արգիշթե I-ի (786-764) քարակոթողից մնացած երկու բեկորից մեկի վրա, որպես **Բու- [լու-ա]**<sup>17</sup>: Նշենք, որ Հայկական լեռնաշխարհի սեպագիր տեղանունների մի մասը հանդես է գալիս հայերենի սեռական հոլովով, այսինքն՝ ուրարտացի գրագիրը հայերենի սեռական հոլովով տրված ձևն ընկալել է որպես տեղանվան ուղիղ ձև և դրանով էլ առաջնորդվել: Օրինակ, **Արգուկիու** (իմա՝ **Արգուկիո**, հայերենի սեռական հոլովով) ծագել է **Արգուկիա** ձևից (ուղղական հոլով), որից հետագայում առաջացել է **Արգիճի** տեղանունը: Կամ **Լուխիու** (իմա՝ **Լուխիո**, հայերենի սեռական հոլովով) ծագել է **Լուխիա** ձևից (ուղղական հոլով), որը հետագայում թարգմանաբար դարձել է **Ցուլակերտ** (լուխ հնդեվրոպական արմատ է, որը նշանակում է **լույս**, այսինքն՝ նաև **ցուլ**) և այլն: Չետևաբար, **Բուլուա** ձևը ևս հայերենի սեռական հոլովով է (հմմտ. **Մակու** > **Մակուա**, **Բալու** > **Բալուա**, **Ալելու** > **Ալելուա**, **Հաշու** > **Հաշուա** և այլն):

**Բալուա** տեղանվան ուղղական հոլովը կլի-մի **Բուլու**: Այս ձևից բառավերջի **ու** > **եյ** անցումով

ծագել է նախ՝ **Բուլեյ**, ապա՝ **Բուլե** ձևը, իսկ **ու** > **ը** անցումով և սղմամբ՝ **Բղե** (հմմտ. **Ալիշթու** > ...**Ալիստեյ** >...**Աղստեյ**, **Խերիխու** > ...**Խախրեյ** **Խախրե**, **Մանուլու** > ... **Մանլեյ** > **Մանլեու** և այլն):

Առաքել Դավրիժեցին հիշատակում է **Բղեկի** անունով Սյունիքի մի բնակավայր<sup>18</sup>, որի տեղը մինչև վերջերս անհայտ էր: Տվյալ **Բղեկի** ձևի մեջ **ի** վերջավորությունը պատահական վրիպակ է, այն տրական հոլովով տրված հաջորդ տեղանվան **ի** նախդիրն է, որը սխալմամբ կրկնվել է: Բառամիջի **ը** տառը **ու** > **ը** հնչյունափոխության հետևանք է, որը թեև հնչում է և վկայված է գրավոր, բայց կարող էր և չգրվել:

Ուստի, **Բուլու** > **Բղե** անցումը, որ հիմնված է հայերենի լեզվական օրինաչափությունների վրա, միանգամայն ակնհայտ է և անժխտելի:

Այսպիսով, ավելի քան 2800-ամյա գրավոր հիշատակությամբ հայտնի **Բուլու** > **Բղե** գյուղանունը մեր օրերում էլ անսքող կերպով վկայում է տվյալ տարածաշրջանի հայաբնակ լինելը:

### 5) Աժդանական

**Բուլուա** լեռնանունը Ս. Գ. Հմայակյանի դիտարկումներով ունի հնդեվրոպական ծագում, և դրա արմատն առնչվում է վիշապի պաշտամունքի հետ<sup>19</sup>: Այդ իսկ պատճառով **Բուլուա** անունից կարող էր թարգմանաբար առաջանալ մի լեռնանուն, որն իրականում վաղուց հայտնի էր և մինչև այսօր էլ կոչվում է **Օծասար**: Սակայն, նկատի ունենալով, որ **օծ** բառին զուգահեռ ունենք **վիշապը**, այդ լեռը կարող էր կոչվել նաև **Վիշապասար**: Այս լեռնանունը, հավանաբար, շաղկապվում է նաև մարերի, այսինքն՝ այդ վայրերում Բ. ա. IX դ. առաջ բնակվող վիշապագունների անվան հետ, որի մասին հիշատակություն կա հայ պատմագրության էջերում: Պատմահայր Մովսես Խորենացին, հենվելով ավանդության տվյալների վրա, նշում է, որ վիշապագունների մի մեծ խումբ, այսինքն՝ մարական ծագմամբ մի ցեղ (պարսկերեն **մար** նշանակում է **օծ**, որին հայերը կարող էին ան-

մար նշանակում է **օձ**, որին հայերը կարող էին անվանել նաև **վիշապ**՝ Բ. ա. VI դ. բնակեցվում է Հայաստանում<sup>20</sup>:

Բնականաբար, մարերի բնակավայրերում պետք է առաջանային մարական ծագման տեղանուններ: Դրանցից մեկը լեռնանուն է, որը հիշատակվում է հետևյալ հատվածում. «**Իսկ բազումս ի սերմանէն Աժդահակայ աղջկունս, հանդերձ պատանէկօք եւ բազմութեամբ գերեացն, որչափ թէ աւելի զբիր մի, բնակեցուցանէ յարեւելից ուսոյ մեծի լեռինն մինչեւ ի սահմանս Գողթան, որ են Տամբատ, Ոսկիողայ, Դաժգոյնք, եւ որ այլք առ եզ երբ գետոյն դաստակերտք, յորոց մինն է Վրանջունիք, մինչեւ հանդէպ ամրոցին Նախճաւանու. եւ գերիս աւանսն. զխրամ, եւ զջուղայ, եւ զխորշակունիս ի միւս կողմանէ գետոյն, զբոլոր դաշտն, որոյ գլուխն Աժդահական, մինչեւ ցնոյն ամուրն Նախճաւանու**»<sup>21</sup>: Հետևաբար, մարերի վիշապագունների ցեղի բնակության վայրերից մեկի մոտակա լեռը կոչվել է հենց այդ ցեղի անվամբ՝ Աժդահական, որտեղ պատմականն ու ավանդականը միահյուսված են:

Հարկ է նշել, որ բազմահմուտ ուսումնասիրող Ս. Տ. Երեմյանի պատահական վրիպումի հետևանքով ժամանակակից պատմագիտական ուսումնասիրություններում մի թյուրիմացություն է սպրդել, որն ընդունվել է որպես ճշմարտություն: Այսինքն՝ վերոհիշյալ մեջբերման **գլոխ** բառը, որ տվյալ դեպքում նշանակում է **ծայր**, սխալմամբ ընկալվել է **վերև** և Աժդահական լեռը (գտնվում է **Գողթն** գավառում և այսօր էլ կոչվում է **Օձասար**) համարվել է Գեղամա լեռներից մեկը՝ Աժդահակ (Սախուրակ) լեռը<sup>22</sup>, ինչը ոչ միայն չի համապատասխանում իրականությանը, այլև խեղաթյուրում է թե՛ պատմությունը, թե՛ պատմական աշխարհագրությունը:

Այսպիսով, կարելի է պատմականի ու ավանդականի հիման վրա ճշտել պատմության մի մութ կետ ևս, այսինքն՝ մարերը վերաբնակվել են Հայաստանում ոչ թե Բ. ա. VI դ., այլ Բ. ա. IX դ. էլ ավելի վաղ:

**6) Արած**

Վանի Իշպուհների (825-810) և Մինուայի (810-788) քրաժայռին՝ Միերի դարպասների արձանագրությունում հիշատակված 35 արական աստվածություններից մեկը՝ 27-րդը, վկայված է Արածա անունով<sup>23</sup>:

Հայտնի է, որ ուրարտական դիցարանի տարբեր աստվածություններ հիմնականում կոչվում են լեռների անուններով: Օրինակ՝ **Նալաիսե, Մելարդե, Կուերա Ջիուկունե**:

Տվյալ **Արածա** դիցանունը ևս, հավանաբար, ծագում է որևէ երկրի կամ լեռան անունից: Իհարկե, շատ գայթակղիչ է այն կապել **Արծանիա (Արածանի)** գետանվան հետ, ինչպես այդ անուն է Ն. Վ. Հարությունյանը, սակայն **Արածա** դիցանունը տվյալ դեպքում բխում է ոչ թե **Արծանիա (Արածանի)** գետանունից, այլ ընդհակառակը, գետանունը՝ դիցանունից<sup>24</sup>, ըստ ոչ այնքան հիմնավոր մի ենթադրության, որին անքննադատ հետևում է Ս. Գ. Հմայակյանը<sup>25</sup>:

Մեր կարծիքով՝ **Արածա** դիցանունը ևս տրված է հայերենի սեռական հոլովով, և դիցանվան ուղիղ ձևն է **Արած**, որը և հանդիսանում է Այրարատի 22-րդ գավառը՝ ներկայիս Նորաշենի շրջանում, **Գայլի դրունք** կոչվող վայրում և մոտակայքում<sup>26</sup>. «**Իսկ ելից կուսէ Ոստանին Դունայ են գաւառք. Ուրծանոր եւ Արածոյ կողմն, ընդ մէջ կալով Վայոցձորոյ, եւ Շարուր դաշտն, ընդ որ հոսի գետն Արփանեալ, առ Մարաւանայ քաղաքով, անցանելով ի հարաւ խառնի յերասխ**»<sup>27</sup>:

Հետևաբար, **Արածա** դիցանունը կապվում է **Արած** գավառանվան հետ, որտեղ և գտնվել են **Գայլի դրունք** բարձունքները:

Այս տեսակետը կարելի է հիմնավորել նրանով, որ Մինուան, անշուշտ, եղել է նաև հենց այդ շրջանում և տեղի գլխավոր աստծուն մտցրել է ուրարտական դիցարան, ինչը կատարվել է նաև հետագայում, երբ ուրարտական դիցարան են մտցվել **Իվարշա և Մարդուք** աստվածությունները, որոնք բացա-

կայում են Միերի դարպասների հայտնի արձանագրությունում<sup>28</sup>:

Հետևաբար, **Արած** գավառանունը, որը, հավանաբար, ծագում է տեղի լեռնանունից (թերևս՝ **Գայլի դրունք** բարձունքների անվանումից), որը հետագայում անցնում է այնտեղ գոյություն ունեցող (բնակվող) աստվածությանը և դրա պատճառով էլ կոչվում է **Արածա աստված**, որտեղ **Արածա** ձևը տրված է հայերենի լեզվական օրինաչափություններին համապատասխան, բուն հայկական անվանում է:

**7) Գողթն**

Արգիշթե I-ը (786-764) Խորխոռյան տարեգրության կրկնօրինակում և Վանում գտնված արձանագրության մեջ հիշատակում է **Գուլութախե** անվամբ մի երկիր<sup>29</sup>, որը տեղորոշվում է Սյունիքի **Գողթն** գավառում<sup>30</sup>:

**Գուլութախե** երկրանունը ուրարտերենի օրինաչափություններին համաձայն, հնարավոր է, որ լիներ նաև **Գուլութանե** ձևով, որը կարող էր հնչել **Գոլութան**: Ուստի **Գոլութան > Գողթան > Գողթն** անցումը լեզվական առումով ոչ մի բարդություն չէ: Ընդ որում՝ **Գուլութախե > Գողթան** անցման մասին խոսել է դեռևս Հ. Սանտալճյանը<sup>31</sup>, իսկ Է. Բ. Աղայանը նշում է, որ **Գողթան** գավառանունը հնդեվրոպական ծագում ունի<sup>32</sup>:

Նշենք, որ եթե Մինուան Բ. ա. մոտ 810 թ. անցել է Արաքսը հյուսիսից և ներխուժել Սյունիք: Առաջինը հենց **Գողթն**, ապա կարելի է եզրակացնել, որ հայ ժողովրդի պատմության մեջ հայտնի գինեվետ **Գողթն** գավառի համբավն ստեղծել է հենց այդ արքան, որը հայտնի է եղել ոչ միայն ռազմական փայլուն ունակություններով, այլ նաև որպես նշանավոր քրանցքաշինարար (հիշենք թեկուզ Շամիրամի՝ 70 կմ երկարությամբ ճարտարապետական բարդ կառուցվածքով քրանցքը), հատկապես որպես խաղողի այգիների անխոնջ տնկարկող և հովանավոր:

**8) Արքասպա**

Արգիշթե II-ը (713-685) իր արձանագրություններից մեկում հիշատակում է **Արխու** երկրի անունը<sup>33</sup>, որը գտնվել է Արաքսի աջ (հարավային) ափերի մոտակայքում, Նախիջևանի դիմաց, և որը **Խ > ք** հնչյունափոխությամբ դարձել է **Արքու**, ինչը վկայված է նաև **Արխե > Հարք** անցման դեպքում, ըստ Գ. Խ. Սարգսյանի<sup>34</sup>: Հետագայում **Արքու** ձևից կազմվել է **Արքուշատ > Արքշատ** տեղանունը, որը Ստրաբոնի երկում վկայված է որպես **Արքսատա**. «**Հայաստանի քաղաքները հետևյալներն են. Արտաքսատա<...> և Արքսատա<...>**»<sup>35</sup>:

Այսպիսով, **Արխու > Արքու > Արքուշատ > Արքշատ > Արքսատա** կազմված է իրաներենից փոխառյալ **շատ** բաղադրիչով, ինչպես հետևյալ տեղանուններում. **Արշամաշատ, Երուանդաշատ, Արտաշատ, Ջարիշատ**:


Ենթադրելով, որ **Արքշատ > Արքսատա** քաղաքանվան մեջ առաջին բաղադրիչը՝ **արք**, կարող է նշանակել **արքա**, այն փոխել և դարձրել են **Շահթախտի**, ինչպես ենթադրում է Ֆ. Ի. Տեր-Մարտիրոսովը<sup>36</sup>:

Հիշյալ քաղաքը գտնվում է Արաքսի ձախ (հյուսիսային) ափերի մոտակայքում, Նորաշենի և Նախիջևանի միջև:

Հետևաբար, Արաքսի աջ (հարավային) ափերին եղած **Արխու** երկրի բնիկների հավանական վերաբնակեցման հետևանքով (կամավոր կամ պարտադիր) տվյալ երկրանունը, որպես քաղաքանուն՝ **Արքշատ > Արքսատա > Շահթախտի**, օրինաչափորեն հայտնվել է Արաքսի ձախ (հյուսիսային) ափերի մոտակայքում:

**9) Աւշ**

Արևիս գյուղից 4 կմ դեպի հյուսիս գտնվող Թանահատի վանքում հայտնաբերված Արգիշթե II-ի (713-685) Սիսիանի շրջանի կոթողի արձանագրու-



Եկեղեցի

ակնհայտորեն հայերենի սեռական հոլովով է, որի ուղղական հոլովը կլինի **Ամուշ**: Հայտնի է, որ բառամիջում ևս հանդիպում է **ու > էյ** հնչյունափոխությունը (հմմտ. **Արգուկիա > Արգուկի > Արգեյկի > Արգեկի > Արգիկի > Արգիճի**): Ուստի, **Ամուշ > Ամեյշ > Ամեշ** անցումն օրինաչափ է: Բայց քանի որ հայերենում կան նաև **մ > լ** հնչյունափոխությունը (հմմտ. **մրջիմն** (մրջման), նաև **մրջիւն**, **պաշտամն** (պաշտաման), **պաշտաւն-պաշտօն**), ապա **Ամեշ** տարբերակից առաջանում է **Աւեշ** ձևը, որը վկայված է Նորավանքի արձանագրություններից մեկում. **«Շիմեցի զհիրատունս եւ տուի հիրանոցս զեղ զԱւեշ իւր ամէն սահմանաւքն**

**եւ զերկու ակնի քաղացն յԱւփա»**<sup>38</sup>: Հնում **Աւեշ** գյուղը գտնվել է Սյունիքի Վայոց ձոր գավառում, իսկ այժմ, որպես **Չավուշ**՝ Նորաշենի շրջանում, շրջկենտրոնից մոտ 20 կմ դեպի արևելք<sup>39</sup>, որի անվան գրավոր հիշատակությունը կազմում է 2711 (713 + 1999 - 1) տարի:

### 10) Որդուապ

Սիսիանի շրջանի Արևիս գյուղից 4 կմ հյուսիս (Որոտան գետի աջ ափին՝ գեղատեսիլ, բարձր լեռնային մի անկյունում)<sup>40</sup> գտնվող Թանահատի

լեռնային մի անկյունում)<sup>40</sup> գտնվող Թանահատի վանքի նորոգման աշխատանքների ժամանակ հայտնաբերված Արգիշթե II-ի (713-685) կոթողի արձանագրությունում հիշատակվում է **Իրդուա** քաղաքանունը<sup>41</sup>:

Նկատի ունենալով, որ **Իրդուա** քաղաքը եղել է պատերազմական գործողությունների թատերաբեմ, ընդ որում՝ հարթավայրային տեղանքում, ապա կարելի է ենթադրել, որ այն գտնվել է Արաքսի ձախ (հյուսիսային) ափերի մոտակայքում:

Եվ այսպես, **Իրդուա** (անվան ուղիղ ձևը, որտեղ **ուա** վերջավորությունը, հավանաբար, վերջածանց է, որի պատճառով էլ վերջին ձայնավորը՝ **ա**, սեռական հոլովի ցուցիչ չէ, ուստի և չի ընկնում) > **Որդուա** (**իր > որ** հնչյունափոխությամբ, որը թեև խիստ սակավ, բայց, այնուամենայնիվ, հանդիպում է): Օրինակ, **Իշթայաում > Իշթայա**, քանի որ **ոււն** վերջավորությունն ածանց է: **Իշթայա** ձևի մեջ **այա** հատվածը նույնպես ածանց է, ինչպես՝ **Մենեզայա**, **Ալբայա**, **Իննայա**, **Կալայա**, **Աշկայա** և այլ տեղանուններում, ուստի **Իշթայա** ձևից կարելի է առանձնացնել **իշթ** արմատը, որը ծագում է **իրս** ձևից, քանի որ գոյություն ունի **րս > շթ** իրանաբնույթ հնչյունափոխություն, որը բացահայտել է է. Ա. Գրանտովսկին<sup>42</sup>: Ուստի, **Իրս > Որս** անցումով և դեռևս անհասկանալի **իր** միջածանցով ստացվում է **Որսիրանք** գավառանունը: Հետևաբար, **Իրդուա > Որդուա > Որդուատ** (բառավերջում **տ** ածականով, որը հանդիպում է նաև **Սալմաստ**, **Սուստ**, **Ցագատ**, **Դորբանտ** և այլ տեղանուններում): Նկատենք, որ **Իրդուա > Որդուատ** զուգահեռն առաջինը նկատել է Վ. Ա. Գայսերյանը<sup>43</sup>:

Այսպիսով, **Իրդուա > Որդուատ**, քաղաք, որն իրոք գտնվում է Արաքսի ձախ (հյուսիսային) ափերի մոտակայքում, որի անվան գրավոր հիշատակությունը կազմում է 2711 (713 + 1999 - 1) տարի:

### 11) Սուսպ

Նախիջևանի տարածքում կան նաև որոշ

տեղանուններ, որոնք թեև սեպագրով չեն վկայվել, սակայն կազմված են ուրարտերենով վկայված բառերով:

Այսպես, օրինակ, ուրարտերենում հայտնի է **սուսե** (**տաճար**) բառը, որը հանդիպում է նաև հայերենում որպես սիւս (պալատ)<sup>44</sup>: Սյունիքի և Արցախի տարածքում հանդիպում են տեղանուններ, որոնք կազմված են ուրարտերենի հենց վերոհիշյալ **սուսե** (**տաճար**) բառով: Հիշենք դրանցից մի քանիսը. **Սոս** (ԼՂՀ Մարտունու շրջանում, Ղարաբաղի բարբառին հատուկ **ու > ո** հնչյունափոխությամբ, ինչպես՝ **տուն > տոն**, **շուն > շոն**, **թուրք > թորք**, **մուկն > մոկն**, **ծունկն > ծոյնը**, **դուռն > տոռնը**), **Սուս** (Քաշաթաղի շրջանում, Բերձոր քաղաքից 8 կմ դեպի հարավ-արևմուտք), **Սուսկերտ** > **Սսկերտ** > **Սկերտ** (Սյունիքի Գեղարքունիք գավառում, Արգիճի գետի ստորին հոսանքների աջ (արևելյան) ափին գտնվող Կոթ գյուղաքաղաքի մոտակայքում), **Սուստ** (Նախիջևանի շրջանում, Ազնաբերդից 10 կմ դեպի հարավ և Նախիջևանից 25 կմ դեպի հյուսիս-արևմուտք, ուրարտերենից մեզ հասած տեղանուններում հանդիպող **տ** ածականով, որի մասին խոսք եղավ վերևում)<sup>45</sup>:

Նախիջևանի տարածքում հնդեվրոպական-հայկական սեպագիր տեղանունների նման առատությունը մեզ չպետք է զարմացնի, որովհետև **Եթիու** երկիրը, որի կազմի մեջ մտել են Տայքը, Գուգարքը, Ուտիքը, Սյունիքը, Արցախը և Այրարատը, հանդիսացել է հնդեվրոպական և հայաբնակ տարածաշրջան: Այստեղ է, որ առաջին անգամ հանդիպում է հնդեվրոպական **վեդոր** (ջուր) բառի սեպագիր վկայությունը, որի հնությունը հասնում է առնվազն Ք. ա. XX դ., եթե ոչ ավելի վաղ ժամանակները<sup>46</sup>:

Այսպիսով, Նախիջևանի տարածքը, որը գտնվել է Եթիու երկրի սահմաններում (Այրարատի արևելյան և Սյունիքի հարավային գավառներ), որպես Հայկական լեռնաշխարհի անկապտելի մասը, հանդիսանում է հայ ժողովրդի նախահայրենիքի բաղկացուցիչ հատվածը:

1. *Г. А. Меликишвили*, Урартские клинообразные надписи, Москва, 1960 (այսուհետև՝ УКН), N 1-3, 319-325:
2. УКН, N 30-31, 70 = *F. W. K nig*, Handbuch der chaldischen Inschriften, Graz, 1955-1957 (այսուհետև՝ HChI), N 21-22, 45:
3. *М. В. Никольский*, Клинообразные надписи Закавказья, Материалы по археологии Кавказа, V, Москва, 1896, с. 21,
- 4. Ա. Ղափանցյան**, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 149, **Ե. Գ. Աղրնց**, Հայաստանի պատմություն, Երևան, 1971, էջ 204, 222:
4. *Б. Б. Пиотровский*, Ванское царство, ( Урарту), Москва, 1959, с. 64.
5. *S. G. Hmayakyan, V. A. Igumnov, H. H. Karagyozyan*, An urartian cuneiform inscription from Ojasar- Ilandagh, Nakichevan, «Studi Micenei ed Egeo- Anatolici, fasc.», XXXVIII, Roma, 1996, p. 139-151.
6. **Վ. Ա. Իզումնով, Գ. Գ. Կարազոզյան, Ա. Գ. Գնայակյան**, Օձասարի սեպագիր արձանագրությունը, ՀՀ ԳԱԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1997, N1, էջ 193-202:
7. **Յ. Կարազեղզեան**, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, հատոր I, գիրք 1, սեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում), Երևան, 1998, (այսուհետև՝ US, 1), էջ 323-324 (XVI, 2,2):
8. *И. М. Дьяконов*, 1) Урартские письма и документы, Москва-Ленинград, 1963, с. 30, 2) Языки древней Передней Азии, Москва, 1967, с. 113-165.
9. **Ա. Տ. Երեմյան**, Հայաստանն ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963 (այսուհետև՝ ՀԸԱ), էջ 109, Բ. Հ. Հարությունյան, Նախնավանդան սահմանային պայքարը և նրա քաղաքական հետևանքները: «Աշտանակ», I, Երևան, 1995, էջ 127-137:
10. **Գ. Գ. Աճառյան**, Հայերեն արձանատկան բառարան, I, Երևան, 1971, էջ 319:
11. **Գ. Բ. Զահուկյան**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժնմանակաշրջան, Երևան, 1987, էջ 57:
12. **Ստեփաննոս Օրբելեան**, Պատմություն նահանքին Սիսական, Թիֆլիս, 1910, (կազմի վրա՝ 1911), էջ 519:
13. **Գ. Գ. Աճառյան**, [Հայերենի] «եան» մասնիկի ծագումը, «Հայ տոհմաբաններ», Իսթանբուլ, 1937, էջ 11:

14. *Джон Греггин*, Происхождение суффикса -ian армянских фамилий из иероглифического лувийского, ՀՍՄՀ ԳԱ "Լրաբեր հասարակական գիտությունների", 1980, N 9, էջ 102-106:
15. *И. М. Дьяконов*, Ассиро-вавилонские источники по истории Урарту, Вестник древней истории, 1951, N 2, 3, 4, (այսուհետև՝ АВИИУ), N 10, IV, տող 43 և հաջ.:
16. **Գ. Բ. Զահուկյան**, Ուրարտուերենը և հայերենը, «Ուրարտու – Հայաստան», Երևան, 1988, էջ 155.:
17. УКН, N 129в, տող 2 = HChI, N 83, տող 2:
18. **Առաքել Ղարիծեցի**, Գիրք պատմությանց, Երևան, 1990, էջ 235:
19. **Վ. Ա. Իզումնով, Գ. Գ. Կարազոզյան, Ա. Գ. Գնայակյան**, Օձասարի սեպագիր արձանագրությունը, էջ 196-197:
20. **Սուլեսու Խորենացի**, Պատմություն Հայոց, Տփղիս, 1913, էջ 83 ( I, 30):
21. Նույն տեղում: Տեքստում մտցված է ուղղում հանված է ավելորդ «իսկ» բառն ըստ նույն էջի ծան. 11-ի:
22. ՀԸԱ, էջ 79:
23. *C. F. Lehmann-Haupt*, Corpus Inscription Chaldicarum, I - II, Berlin und Leipzig, 1928-1935 (այսուհետև՝ CICH), VII-X УКН, N 27, տող 11,49 = HChI, N 10, II, X).
24. *Н. В. Арутюнян*, Бианлилу (Урарту), Ереван, 1970, с.356-357:
25. **Ա. Գ. Գնայակյան**, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 56-57:
26. ՀԸԱ, էջ 38:
27. Նույն տեղում, էջ 111: **Արփանեալ** գետը ներկայիս **Արփա** գետն է, իսկ **Մարասամ** քաղաքը՝ ներկայիս **Նորաշեն** շրջկենտրոնը:
28. **Ա. Գ. Գնայակյան**, նշվ. աշխ., էջ 60-64:
29. CICH, XXVI ( УКН, N 128, B1, տող 36 = HChI, N 82, Rs., VIII): УКН, N 129, տող 2 = HChI, N 83, տող 2.
30. US, 1 էջ 193 (VI, 2, 5):
31. **Joseph Sandalgian**, Les inscriptions cuneiformes Urartiques, Venise, 1900, p. 362 և այլ աշխատանքներում:
32. **Է. Բ. Աղայան**, Գողթան < Գողթն տեղանունը ( ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1957, N 12, էջ 51-52):
33. УКН, N 445, տող 2.

34. **Գ. Խ. Սարգսյան**, Սուլեսու Խորենացու "Հայոց պատմությունը" և սեպագրական աղբյուրները , ՀՀ ԳԱ "Պատմա-բանասիրական հանդես", 1992, N 2-3, էջ 37-38, 48:
35. Strabo, XI, 14,6.
36. **Ֆ. Ի. Տեր-Մարտիրոսով**, Աբենքի հունարեն արձանագրությունը, ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1989, N 1, էջ 185:
37. *Н. В. Арутюнян*, Новая урартская надпись из Сисиана "Древний Восток", 4, Ереван, 1983, с. 214.
38. **Ա. Գ. Բարխուդարյան**, Դիվան հայ վիճագրության, III, Երևան, 1967, էջ 216 (N 813, տող 8-11):
39. **Թ. Խ. Հակոբյան, Ա. Տ. Սելիք-Բախչյան, Գ. Խ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 1, Երևան, 1986, էջ 361:
40. *Н. В. Арутюнян*, Новая урартская надпись из

- Сисиана..., с. 214.
41. Նույն տեղում:
42. *Э. А. Грантовский*, Ранняя история иранских племен Передней Азии, Москва, 1970, с. 165.
43. **Վ. Ա. Գալսերյան**, Սեպագիր աղբյուրների KURḪtū երեք տոպոնիմիկայի հարցեր, ՀՍՄՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1990, N 3, էջ 86:
44. **Գ. Գ. Կարազոզյան**, «Սիա»-ի մեկնաբանության շուրջը, ՀՍՄՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս.գիտ., 1958, N 9, էջ 105-106 և այլ աշխատանքներում:
45. US, 1, p. 117-120 (III, 1, 42-46).
46. *О. О. Карагезян*, Проблема этногенеза и самоназвания армянского народа по клинописным источникам , ՀՍՄՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1988, N 7, էջ 57-76, US, 1, էջ 173-177 (IV, 1, 1):

**Hovhanness Karagyozyan**

**THE TERRITORY OF NAKHIJEVAN ACCORDING TO URARTIAN SOURCES**

**(Summary)**

As a result of a comprehensive and thorough study of the names of places mentioned in the Urartian cuneiform inscriptions discovered in Odzasar and in Van (a cliff) in 1989 a number of place names of Indo-European-Armenian origin have been detected on the territory of Nakhijevan. They are: Azhdanakan, Arats, Goghtn, Arqsata, Avesh, Vorduat, Soust. According to Urartian cuneiform sources about 3 000 years ago the abundance of Armenian place names here is an irrefutable evidence, which proves that in the IX century BC the territory of Nakhijevan, being included in the boundaries of the country Yetiu, was one of the areas where the Armenian people generated.

**АРМЕН КАЗАРЯН**  
Кандидат архитектуры, Москва

## ВОССТАНОВЛЕНИЕ ЭЧМИАДЗИНСКОГО КАФЕДРАЛЬНОГО СОБОРА КАТОЛИКОСОМ КОМИТАСОМ И НОВАЯ ДАТИРОВКА СУЩЕСТВУЮЩЕГО КУПОЛА<sup>1</sup>

Кафедральный собор Армянской Апостольской Церкви в Вагаршапате (Эчмиадзин), названный также храмом, возведен в IV в. на легендарном месте Сошествия Единородного. За свою долгую историю пережил множество восстановлений и ремонтов.


Историки искусства на протяжении последних полутора-двух столетий пытались распознать происхождение его необычной композиции, время его основания и перестроек, принадлежность отдельных строительных слоев деятельности конкретных католикосов и князей, прямо или косвенно отмеченной в летописях.

Фрагментарные археологические раскопки, проведенные в связи с укрепительными работами на соборе в 50-х гг. прошлого века, выявили интересные факты строительной истории памятника IV-V вв. Тем не менее, по вопросам о первоначальной композиции постройки, основанной Григорием Просветителем, и о датировке нынешней композиции единого мнения в научной среде не сформиро-

ровалось. По итогам натуральных исследований А. А. Саинян пришел к заключению, что в целом нынешняя объемно-пространственная композиция собора в виде квадрифолия с далеко выдвинутыми углами квадрата и внутренней четырехстолпной крестово-купольной структурой была создана в 70-е гг. V в.<sup>2</sup> Но ряд особенностей этой композиции и археологические находки позволяют отнести ее основу, скрытую от глаз зрителя повышенным полом, внутренней штукатуркой и новым внешним цоколем, к более раннему времени<sup>3</sup>, скорее всего, к концу IV в.<sup>4</sup>

Целью же настоящего исследования является раскрытие строительной деятельности на соборе спустя 150 лет после его восстановления Вааном Мамиконяном.

Сообщение историографа - епископа Себеоса (VII в.) о ремонте Эчмиадзинского собора, произведенном католикосом Комитасом Ахцеци (613 - 628), широко известно историкам архитектуры и не раз ими публиковалось. Согласно Себеосу, католикос Комитас «снес и деревянное перекрытие



1. Эчмиадзинский собор, барабан центральной главы с юго-востока.

святой католике, отремонтировал ветхие стены, построил каменное перекрытие»<sup>5</sup> («Վերացոյց եւ զփայլաշարկս սրբոյ կաթողիկէին. նորոգեաց եւ զխախուր քրնոյն. շինեաց զքարաշարկսն»<sup>6</sup>).


Но, как ни странно, исследователи не придавали этому свидетельству особого значения. Лишь Т. Тораманян, проявивший особую фантазию в реконструкции древнейшей композиции собора в виде квадратного здания с вписанным тетраконхом и камерами между его рукавами, высказал предположение о замене деревянного купола на каменный в начале VII в. и о добавлении экседр, выдвинутых

за пределы основного квадрата, в его середине.<sup>7</sup> Работы 1950-х гг. не подтвердили эту гипотезу. Наоборот, А. А. Саинян справедливо указал на одновременность возведения всех внешних стен храма, которые, судя по строительной технике и особенности по форме окон и бровок можно безошибочно датировать временем восстановления собора Вааном Мамиконяном.<sup>8</sup>

С. Х. Мнацаканян уверенно полагает, что сказанное Себеосом должно было относиться только к реконструкции купола. «Термин «զփայլաշարկ» - деревянное перекрытие-, применен-

ный Себеосом, мог означать и купол, и все перекрытие огромного храма. Однако в последнем случае это были бы работы значительного масштаба, и Себеос не мог бы сообщить о них вскользь, как это он сделал в своем труде. Остается предположить, что разговор идет лишь о замене деревянного купола каменным, и ничего больше», - заключает С. Х. Мнацаканян, указывая и на подобную интерпретацию этих событий историком X в. Иоаннесом Драсханакертци.<sup>9</sup> Но этот историк не повторяет Себеоса, а лишь акцентирует внимание читателя именно на купол, отмечая строительство его «красивыми (или замечательными) и прекрасного вида отесанными камнями», («գեղեցկաշարիւր եւ ջրնաւորեալ կոփածոյ րարիւր») .<sup>10</sup> Видимо, купол заметно отличался своим роскошным обликом от остальных реконструированных частей храма. Масштаб строительства при Комитасе четко усматривается в сообщении Себеоса. Предшествующий этому событию и дважды упомянутый Лазарем Парпеци пожар собора в конце V в. свидетельствует о существовании на стройке деревянных конструкций. Согласно Парпеци фанатики «подожгли деревянную часть церкви» («ի հրոյ վնասեալ փայտակերտն եկեղեցոյն») .<sup>11</sup> Однако и эта формулировка ни в коей мере не позволяет ограничить упомянутые конструкции лишь куполом, как это с уверенностью делает С. Х. Мнацаканян .<sup>12</sup>

Еще Н. Я. Марр указывал на ошибоч-




2. Эчмиадзинский собор.

Восточная сторона северного фасада. Зона VII века.

ность подобной трактовки сведений Себеоса и Драсханакертци Т. Тораманьяном. Деревянным, по мнению Н. Я. Марра, следует считать все перекрытие собора, перестроенное уже в начале VII в.<sup>13</sup> Наличие на другой странице цитированной работы С. Х. Мнацаканяна заключения, совпадающие с этим, свидетельствует о неуверенности ученого в своих выводах, изложенных, однако, безапелляционно. Так, он отмечает, что «строительство Багарана по времени совпало с обновлением Эчмиадзинского храма католикосом Комитасом, когда, по всем данным, было снято все перекрытие (как деревянный купол, так и каменные своды боковых и угловых частей) и оно было заменено новой кладкой» .<sup>14</sup>

Н. Я. Марр исключал также вероятность проведения каких-либо значительных работ на соборе при католикосе Нерсесе III Таеци (641 – 661), к деятельности которого Т. Тораманян относил пристройку трех экседр.<sup>15</sup>



3. Эчмиадзинский собор. Окно и кладка VII в. в центральной части западного фасада (ныне – алтарная часть часовни Хрештакапетца над западной экседрой)



4. Эчмиадзинский собор, рельеф с образом апостола (Андрей)

В одной из своих последних работ, посвященной анализу Эчмиадзинского собора, О. Х. Халпахчян отмечает: «Выступающие на северном, западном и южном фасадах пятигранные снаружи и полуциркульные внутри апсиды были выполнены не в V в., как полагает С. Мнацаканян, а, как утверждает Себеос, в начале VII в. католикосом Комитасом, с одновременной заменой деревянного перекрытия собора каменным. Это подтверждается не только различием качества кладки этих частей с основным объемом, но и прикрытием горизонтального выступа оконной бровки на южном фасаде гранью смеж-


ной с ней апсиды, а также и другими деталями»<sup>16</sup>. Последние, не указанные автором, нам не известны. Но ничего о возведении экседр (апсид) не содержится в тексте Себеоса. Приведенная аргументация не выдерживает критики: кладка выдвинутых экседр и стен, к которым они примыкают, полностью идентичная; окна южного фасада не имеют бровок. Может, имелась ввиду часть оконной арки, с востока от экседры, но эта арка слегка заходит за грань экседры, лишь подтверждая перевязь рядов, имеющую место на всех стыках экседр с прямоугольным основным объемом церкви (единство кладки стен по

всему периметру подтверждается и ее непрерывной рядностью, чего практически нельзя достичь при добавлении нового объема).<sup>17</sup>

Очевидно, что окна экседры и стен кубовидного объема одинаковы по форме, все они перекрыты подковообразными арками. Бровка, высеченная на арке окна северной экседры, своей конструкцией и прорисовкой родственна бровкам на постройках второй половины V в., именно Касахской базилики и Текорского храма (480-е гг., построен вслед за восстановлением Эчмиадзинского собора). И уж никак эта бровка не походит на образцы VII в. В последних арка полуциркулярна, лежит над аркой перекрытия окна, а горизонтальные отвороты расположены выше центра этих арок. Поэтому надо согласиться с выводами А. А. Саиняна о сложении в конце V в. (если не ранее – А. К.) той композиции, которая в общих чертах сохранилась до наших дней.<sup>18</sup> Этого же мнения придерживается и С. А. Маилов, представивший аксонометрическую реконструкцию собора V в.<sup>19</sup> Тем не менее, для настоящей работы представляется существенным, - по моему, единственный верный - вывод О. Х. Халпахчяна, относящийся к замене всего перекрытия собора Комитасом и сделанный в полном соответствии с сообщением Себеоса, современником событий. Буквальное понимание сообщения Себеоса отстаивает и М. М. Асратян,<sup>20</sup> полагающий, однако, что купол, в отличие от остальных перекрытий, не перестраивался, поскольку он особо не упоминается историографом. Этот купол, по мнению исследователя, уже на храме V в. должен был быть кубообразным и каменным, как на одновременном Текорском храме.<sup>21</sup> Не соглашаясь с этой версией, можно напомнить о параллельной практике создания и каменных, и деревянных куполов в раннехристианскую эпоху. Из известного письма Григория Нисского в связи со строительством им мартирия в Ниссе следует, что каменное строительство куполов было чуть ли не вынужден-

ным способом в условиях с отсутствия в близости строительного леса.<sup>22</sup> Лишь позже, вероятно с VI в., строительство каменных куполов, как и каменных перекрытий в целом, стало общепринятой практикой.

Գլխավոր եկեղեցին **Սբ. Աստվածածինն է** (այդ անունով է ավանդված պատերին պահպանված նեոթվով արձանագրություններում), որը գտնվում է Նիանավ դահլիճի և գավթի միջև: Պահպանված են պատերը (հարավային և արևմտյան կողմերում՝ մասնակիորեն), մույթերը՝ կամարների մի մասով, հարավարևմտյան անկյունային մասի ծածկը, կառուցվածքային և ճարտարապետական տարրեր, զարդաքանդակների մեծ թվով բեկորներ, որոնք հավաքված չեն ինչպես աղոթասրահում, այնպես էլ դրսում պատերի շուրջը: Գմբեթից ոչինչ չի պահպանվել: Սբ. Աստվածածինը հատակագծային հորինվածքով տարբերվում է նմանօրինակ կառույցներից: Քառակուսուն մոտ համաչափություններով աղոթասրահը (9,6 x 10,2 մ) զույգ կամարաշարով, հյուսիս-հարավ ուղղությամբ, բաժանված է եղել երեք նավի: Դրանցից միջինը՝ մոտ երեք անգամ լայն եզրայիններից, արևելյան կողմում ավարտվում է մեծ բացվածք, սա-



Սբ. Գրիգոր վանքի գավթի մերթին տեսքը

կայն փոքր խորություն ունեցող հնգանիստ խորանով, իսկ եզրայինները՝ կրկնահարկ ավանդատներով, որոնց ստորին հարկի մուտքերը եզրային նավերից են, իսկ վերին հարկինը՝ խորանից: Գմբեթը հենվել է արևմտյան զույգ սյուներից և խորանի ան-


կյունային մասերին կից որմնասյուներից բարձրացող կամարների վրա: Գմբեթատակ մասի և խորանի միջև տարածության բացակայությունը պայմանավորել է գմբեթի տեղադրությունն արևելք-արևմուտք առանցքի միջին մասում, որի շնորհիվ կառույցը եղել է հավասարակշռված նաև այդ ուղղությամբ:

Թաղերի մնացորդներից երևում է, որ դրանք ունեցել են տարբեր հորինվածք՝ կիսագլանաձև, հարթ, շթաքարե անցումով և այլն: Սյուների և որմնասյուների բները, որոնց բարձրությունը հասնում է մոտ 3 մ, ինչպես նաև զարդաքանդակներով և շթաքարային մշակմամբ խոշոր խոյակներն ու խարիսխները միակտոր քարից են: Հյուսիսային փլված մասում երևում է, որ միանավ դահլիճի կիսամշակ քարերով շարված պատին կցված է Սբ. Աստվածածին եկեղեցու միաշերտ պատը:


Հուշարձանն ավերակ վիճակում էլ աչքի է ընկնում հարդարման բարձր մակարդակով, գեղարվեստական արտահայտչամիջոցների առատ ու տեղին կիրառմամբ:

Ըստ հարավային պատի ստորին մասի՝ 1221 թվակիր արձանագրության, Բարձրաքաշ վանքի (իմա՝ եկեղեցու) կառուցումն սկսել է Համազասպ Մամիկոնյանի թոռ, Սարգսի որդի Մարծպանը՝ Թամարի որդի Գիորգիի թագավորության և Իվանե Ջաքարյանի աթաբեկության ժամանակ (նկատենք, որ Իվանեն արքունի խնամակալի՝ աթաբեկի պաշտոնն ստանձնել է 1212 թ.՝ Ջաքարեի մահից հետո):

Ընդարձակ **գավիթը** Սբ. Աստվածածին եկեղեցուն կից է հարավից՝ շեղված լինելով արևմուտքից կցվելու ավանդական սովորույթից (պայմանավորված, երևի թե, ռելիեֆի և տարածքի աննպաստ պայմաններով): Այն ունի XIII դարում լայնորեն տարածված կենտրոնակազմ գավիթների հորինվածքը, որտեղ ծածկը հենվել է միջին մասի չորս սյուներից և պատերին կից որմնասյուներից բարձրացող կամարների վրա՝ կենտրոնում ունենալով երդիկ: Սակայն, ի տարբերություն քառակուսի համաչափու-



Դրվագներ Սբ. Գրիգոր վանքի գավթից




թյուններ ունեցող այդ տիպի դասական օրինակների, այն հատակագծում ուղղանկյունի է՝ 11,3 x 14,3 մ չափերով: Ուշագրավ է, որ ինչպես գավթի, այնպես էլ Սբ. Աստվածածին եկեղեցու երկար կողմը լայնականն է՝ հավանաբար, նույնպես պայմանավորված տարածքի աննպաստ դիրքով:

Արևելյան կողմում կիսաշրջանաձև ոչ մեծ բացվածքով խորանն է, որը երկլանջ կտուրի տակ առնված իր հնգանիստ ծավալով դուրս է շեշտված պատի սահմաններից: Դրա հետագայում հավելվելը մատնում են գավթի պատի հետ կապի բացակայությունը, հարուստ հարդարված եզրակալի ծածկվելը խորանի պատով, որմնախարիսխների անհամապատասխանությունը և այլն: Ստացվում է, որ գավիթը նախապես ունեցել է երեք մուտք՝ արևելյան,

արևմտյան և հարավային կողմերից, որոնցից արևելյանը հետագայում առնվել է խորանի բացվածքի մեջ:

Գավթի արևելյան անկյուններում եղել են քառակուսի հատակագծով, կրկնահարկ, ոչ մեծ ավանդատներ (հարավային պատին պահպանվում են ավանդատան երկրորդ հարկ տանող բարձակային աստիճանների մնացորդները):

Բոլոր մուտքերը և պատուհանները պսակված են եզրակալներով: Հատկապես ուշագրավ է արևմտյան շքամուտքը, որի տիմպանի որմնակամարով և արտաքին ուղղանկյուն շրջանակով եզերված հարթությունը պատած է վառ կարմիր ֆելզիտե հընգաթև աստղերով, որոնցից մի քանիսն են պահպանվել (աստղերն այստեղ հանդես են գալիս որպես



Դրվագ Ար. Գրիգոր վանքի գավթից:

պահպանիչ խորհրդանշաններ՝ մարմնավորելով հավերժության գաղափարը): 1970 թ. մաքրման աշխատանքների ժամանակ գավթի արևմտյան շքամուտքի մոտ գտնվել է կտիտորակա բարձրաքանդակ՝ առանձին բեկորի ձևով: Վերջինս իր չափերով, քարտեսակով, գույնով, մշակմամբ և, որ կարևոր է, տրամատով համապատասխանում է գավթի արևմտյան շքամուտքի կիսաշրջան ճակատակալ մասին, որից պարզ է, որ այն նախապես ձևավորել է շքամուտքի բարավորը: Բարձրաքանդակի հորինվածքային կենտրոնում պատկերված է Քրիստոսը նստած, ձեռքերը դրած աջ ու ախյակ կողմերում, խնդրատուի դիրքով ծունկի իջած կտիտորների գլխերին՝ հանդես գալով որպես խնդրանքն ընդունող և փրկիչ: Քանդակախումբը, որպես միաժամանակյա և



Բարձրաքաչ Ար. Գրիգոր վանքի եկեղեցու մանրակերտը

նույն մտահղացմամբ իրականացված ստեղծագործություն, վարպետորեն է համադրված բարավորի եզրակալի և ֆոնը լրացնող բուսական զարդածների հետ: Ֆիգուրները, ինչպես առանձին վերցրած, այնպես էլ միմյանց հետ համադրմամբ, խիստ անհամասն են: Դա հատկապես վերաբերում է Քրիստոսի և կտիտորների քանդակների բացարձակ չափերին: Եթե այդ անհամասնությունն ինչ-որ չափով պատճառաբանելի է միջնադարյան պայմանականությամբ և խորհրդապաշտ մտածողությամբ, նաև՝ Քրիստոսի աստվածային էության հանգամանքով, ապա անհասկանալի է Քրիստոսի մարմնի ծայրահեղ աններդաշնակությունը, որտեղ գլուխը կազմում է մարմնի ընդհանուր բարձրության 1/3-ը, իսկ թևերը, դաստակներն ու ոտքերն աչքի են ընկնում անմասշտաբայնությամբ: Այս բարձրաքանդակներն էականորեն տարբերվում են հուշարձանի մյուս քանդակներից ու զարդածներից: Ինչպես ընդունված է, կտիտորական քանդակներում շեշտադրվում են դիմաքանդակները: Արտահայտիչ են դեմքերը՝ խոհուն, խորհրդավոր, մտախույզ: Քրիստոսի, առավել ևս կտիտորների քանդակները, զերծ են իդեալականացումից: Դրանք առօրեական են, հողեղեն, տոգորված աշխարհիկ ոգով, տեղական դրսևորումներով: Կա «ժողովրդական ճարտարապետություն» հասկացություն, նույն տրամաբանությամբ կարող է լի-


նել նաև «ժողովրդական քանդակագործություն», որի լավագույն ստեղծագործություններից մեկը կհամարվի Բարձրաքաչի քանդակը: Միայն պատկերացնել կարելի է, թե ինչ տպավորիչ տեսք է ունեցել գավթի մուտքը, երբ բարձրաքանդակն իր նախաստեղծ ձևով զարդարել է այն՝ ֆոն ունենալով շքամուտքի համեստ, անպաճույճ ձևերը, ճակատային հարթության աստղազարդ զուևապնակը:

Քանդակագործական արվեստի կատարյալ մոուշ է արևելյան նիստի պատուհանների պսակների հետ հորինվածքային սերտ կապի մեջ գտնվող Մամիկոնյանների տոհմանշանը՝ մագիլներում գառ բռնած երկգլխանի արծվի բարձրաքանդակը, որին Թումանյանը «զեղաքանդակ հրաշք» է անվանում:

Արծվի գլուխներն իրար նկատմամբ հակադիր դիրքով են, մանրամասերը լավ տեսանելի են, վիզը ձևավորված է եղևնանախշով: Վերնամասում շրջանաձև պարուրածն գալարներով կազմված թևերն իջնում են մինչև ճանկերը, որ խրված են գառան մարմնի մեջ: Գառը գլխով ուղղորդված է դեպի ձախ ու դեմքով նայում է դիտողին:

Թումանյանը մանրամասն ներկայացնում է Բարձրաքաչի մնացորդները՝ փորձելով նաև կռահումներ ու տրամաբանական եզրահանգումներ անել երբեմնի անաղարտ տեսքի և կարևոր այլ մանրամասների վերաբերյալ: Այսպես, պատերը հարուստ են արձանագրություններով, որոնցում շատ են գավթի կառուցմանը մասնակցած անձանց (Սևճի, Գանլիկ, Մամբան, Զատկեր, Ասանթ, Կիկտ և ուրիշներ) վերաբերող հիշատակությունները, որպիսիք հանդիպում են նաև Սանահինի գավթի արձանագրություններում: Դրանում Թումանյանը նուրբ դիտողականությամբ տեսնում է գավթի ներքնատեսքի բաղադրիչ մասերի՝ «զանազան ժամանակներում, զանազան ձեռքերով» կառուցվելը:

Կառուցման հետ կապված արձանագրություններից ամենաուշը վերաբերում է 1247 թվականին, որը և ընդունվում է որպես գավթի կառուցման



Բարձրաքաչ Ար. Գրիգոր վանք. Վիճափր արևելյան պատի խորշում

ավարտի ժամանակ: Դա նաև վկայում է, որ համալիրը երկար կյանք չի ունեցել: Մամիկոնյանների տոհմանշանի առկայությունը՝ հորինվածքային և վիճագրական տվյալների հետ փաստում է, որ գավթից ևս կառուցել են Մամիկոնյանները: Մասնավորապես Մարծպան իշխանի սկսած շինարարությունը 1240-ական թթ. վերջին ավարտել են Ասլանբեկ և Գրիգոր որդիները (եղել են նաև օժանդակողներ և աջակիցներ, ինչպես Սևճին, Գաղպատի առաջնորդ Գամազասպի եղբայր Գրիգորը, Պռոշ Խաղբակյանը և ուրիշներ):

Թումանյանը զարմանում է և սևեռվում հաս-



«Սիրուն խաչ» խաչքարը

կանալու, թե տեղանքի այս բացառիկ բարդ պայմաններում ինչպես են կարողացել զանգվածեղ քարաբեկորները տեղաշարժել կամ տաշած սյուների և որմնասյուների բները (որոնց բարձրությունը մոտ 3 մ է), հսկայական քվադրները, գեղաքանդակ կամարունքներն ու խոյակները տեղադրել: Նա բարձր է գնահատում համալիրի գեղարվեստական հարդարանքը, կառուցվածքային կատարելությունը, ճար-



Միանավ դահլիճի մնացորդները

տարապետության և քանդակի ներդաշնակությունը ինչը քանիցս շեշտում է իր ստեղծագործություններում:

Գրողը բերում է Բարձրաքաչի հետ կապված ավանդություններ՝ փոքր-ինչ խտացված չափազանցություններով:

**ԹՈՒՄԱՆՅԱՆ - Այնքան բարձր էր վանքի կաթողիկեն, որ գլխի խնձորը երևում էր դաշտից (վերին սարահարթից՝ Գ. Շ.), այնքան մեծ էր այստեղի միաբանությունը, որ ձմեռը վանքի մարագի տակ վարդապետ գտան, որ ամառը՝ կալի ժամանակ խեղդվել էր, և մինչ այն օրը նրա բացակայությունը չէր նկատվել:**


Գրողը խորհուրդ է տալիս վանքի պատերի արձանագրությունների տեքստերը կարդալ Ս. Ջալալյանցի «ճանապարհորդութիւն ի մեծն Դայաստան» աշխատությունում, թեպետ ինքը համեմատելով բնօրինակների հետ, պարզել է, որ դրանցում բոլոր արձանագրությունները չեն ընդգրկված և ընդգրկվածների մի մասն էլ սխալներով է արտաբերված:

Թումանյանի ժամանակներում ևս համալիրը ավերակ վիճակում է եղել: Գրողը քանիցս անդրադարձել է վանքի անմխիթար վիճակին: Նա ցավով է նշում, որ արևելյան պատից մի կտոր պոկվել է և թեքվել դեպի ծորը: Այդ մասին լսածը փոխանցում է.

**«Նա վաղուց կլիներ քանդված, բայց Օվագիմ Յուզբաշին քարերով ամրացրեց ներքևից»<sup>4</sup>:**

Խնամանյանը խոսում է մի արատավոր երևույթի մասին, որը վնասել է (և այսօր էլ վնասում է) ճարտարապետական հուշարձաններին: Դա գանձագողությունն է, երբ որոշ մարդիկ, համակված գանձ գտնելու մարմաջով, ավերում են կառույցները:

Գրողը մանրամասն ներկայացնում է Բարձրաքաչ վանքի մնացորդները, վշտանում նրա վիճակով, փորձում ելք գտնել՝ այն հետագա ավերմունքից փրկելու: Նա իր կենդանի պատկերմամբ կարո-



Խաչելություն խաչքարը


ղանում է հարազատորեն փոխանցել այն սրբազնագույն զգացումը, որ ապրել է ինքը՝ Բարձրաքաչի հմայքով կախարդված: Իրոք, այն շատ է զմայլելի իր մեղմ ու թափանցիկ ուրվանկարով, շրջապատին ծուլված եթերային երանգներով, շողարձակող արժաթափայլով՝ անտեսած բնականի և ձեռակերտի սահմանը...

Մշակույթի հուշարձանների նկարագիրը գրողը վարպետորեն զուգակցում է գեղարվեստական կերպավորման հետ՝ նյութը դարձնելով առավել տպավորիչ և առարկայական:

**ԹՈՒՄԱՆՅԱՆ - Ահա ծորափին կանգնած սիրուն «Սիրուն խաչը». մեխվում ես առաջին, հիանում ես ճարտարվեստ ու նուրբ քանդակներով, և հանկարծ սիրտդ թունդ է առնում, երբ ծաղկանկարների մեջ կարդում ես. «Յիշխանութեան տանն Մամիկոնեան» և այլն:**

**Սիրուն խաչը** տեղադրված է եռաստիճան, սրբատաշ, բարձր պատվանդանի վրա: Ողջ ճակատը պատած է նրբակերտ և գեղատեսիլ զարդաքանդակների, վարդակների ու խաչաքանդակների օրգանական հյուսվածքով: Հորինվածքի կենտրոնը կազմող ծաղկանկար խաչը և հյուսվածքազարդ վարդակն ընդգրկող մասի եզրով փորագրված է արձանագրություն, ըստ որի խաչքարը կանգնեցրել է Մամիկոնի և նրա որդի Վարդանի իշխանության ժամանակ Թերիի որդի Դայրադեղը: Հորինվածքից դատելով հավանական է, որ խաչքարը կանգնեցվել է XIII դ.:

Գյուղի կենտրոնական հրապարակից հարավ, միջնադարյան գերեզմանոցի տարածքում 5,00 x 3,75 մ չափերով **միանավ դահլիճի** տիպի եկեղեցու մնացորդներն են: Դրանք չորս պատերն են ներսից 3-4 մ բարձրությամբ (դրսից հողի մակարդակը 1,5-2 մ բարձր է հատակից): Եկեղեցին ունեցել է կիսաշրջանաձև խորան, որի հյուսիսային կողմում կա ամբողջական քարի մեջ փորված, Ս-աձև պատուհան: Արևմտյան պատի կոր տաշվածքով քարե-



Քառակող կոթողը

րից, նաև պատերի զանգվածեղությունից (հաստությունը՝ 110-125 սմ) երևում է, որ կառույցը եղել է թաղածածկ: Մուտքը հարավից է՝ կիսով չափ թաղված հողի մեջ: Եկեղեցին կառուցված է խոշոր, մաքրատաշ, ծակոտկեն բազալտ քարերով (կան 1,5 մ և ավելի երկարությամբ քարեր, իսկ դռան բարավորի քարն ունի 2,48 մ երկարություն): Պարզ երևում է խորանի և արևմտյան պատի վերին մասի վերակառուց-



Արձանագրություն քառակող կոթողի վրա

ված լինելը, որտեղ քարերը մանր, վարդագույն ֆելզիտից են:

Կառուցման ժամանակը որոշակիացնող տվյալներ չեն պահպանվել: Ս. Ջալալյանցը, առանց նշելու աղբյուրը, գրում է. «Ի մէջ հանգստարանիս սագաշէն եկեղեցի շինուած ի թվին ԾԴ (655)-ին»<sup>5</sup>:

Հուշարձանն իրենով լրացնում է Լոռվա տարածքի արտաքին սրահ չունեցող վաղմիջնադարյան եկեղեցիների ոչ այնքան հարուստ շարքը:

Նույն գերեզմանոցում են մեծ վարպետությամբ կերտված խաչելություն խաչքարը և մի քառակող հուշակոթող: Դրանցից առաջինն ավանդաբար վերագրվում է երկրի պաշտպանության համար նահատակված Գրիգոր իշխանին, իսկ երկրորդը նույնպես նահատակված, նրա քույր խորիշահին: Ավանդությունը, որ բերված է Թումանյանի «Մի ավանդություն» և «Քարծրաքաշ Ս.Գրիգորի վանքը» հոդվածներում, հիմք է տվել հեղինակին մեկնաբանելու նշված հուշակոթողների կառուցման շարժառիթը Գրողը համոզված է որ այդ կառույցները ոչ միայն ճարտարապետական-քանդակագործական արվեստի հոյակապ նմուշներ են, այլև հանդիսանում են պատմական կարևոր վավերագրեր: Հնուտ բանագե-

պատմական կարևոր վավերագրեր: Հնուտ բանագետի խորաթափանցությամբ նա փորձում է գտնել ավանդության ծագումնաբանական հենքը՝ դրա բացահայտման շրջանակի մեջ ներառելով բանահյուսական, վիճագրական, պատմագիտական և այլ տվյալներ:


**Խաչելություն խաչքարը** գտնվում է գերեզմանոցի հարավարևելյան եզրին՝ եռաստիճան բարձր պատվանդանի վրա, աչքի է ընկնում պատկերագրական հարստությամբ, տարբեր արտահայտչամիջոցների՝ պատկերաքանդակների, զարդամոտիվների և վիճագրերի սերտ միահյուսմամբ, կատարման բարձր արվեստով: Պատվանդանի վերին աստիճանի հյուսիսային երեսի արձանագրության համաձայն՝ խաչքարը 1281 թ., հանուն Գրիգորի կանգնեցրել է իսախի որդի Տերունը՝ իր եղբայրների հետ: Քանքարաշատ վարպետն է Վահրամը, որի անունը փորագրված է հյուսիսային կողմին. «Վարհամ յիշեսցի»: Ենթադրվում է, որ պատվանդանի արձանագրությունում հիշվող Գրիգորը, հանուն որի կանգնեցվել է խաչքարը, Բարձրաքաշի վանքը կառուցող Մարծպան Մամիկոնյանի որդին է, որն ապրել է XIII դ. երկրորդ կեսին, մասնակցել հոր նախածեռնած վանքի կառուցման ավարտին: Խաչքարն իր հորինվածքով, պատկերագրական համակարգով և ժամանակով ընդհանրանում է նույն տարածաշրջանում գտնվող Հաղպատի (1273 թ.) և Մարցի (1285 թ.) Ամենափրկիչ խաչքարերի հետ, որոնք համարվում են նույն Վահրամ վարպետի գործը<sup>6</sup>: Քարգործը Դսեղի խաչքարում հասել է գեղարվեստական բացառիկ հնչեղության, ծայրահեղ նրբակերտության ու ներդաշնակության: Կերտել է բաղադրիչ եռամասերի՝ պատվանդանի, մարմնի և վերնամասի՝ ծածկանի (Թումանյանի տերմինն է) մշակվածությամբ, օրգանական միասնությամբ աչքի ընկնող հազվագյուտ ստեղծագործություն, որը հայ արվեստի գլուխգործոցներից է, որտեղ քարն, ասես, շնչում է, տրոփում: Թումանյանը վերլուծում է խաչարձանի հո-

րինվածքը, մեկնաբանում աստվածաշնչյան թեմաներով քանդակները, վերծանում վիճակալարձանագրությունները, բացահայտում դրանց խորհուրդները:

Իսկ ինչո՞ւ Գրիգոր Մամիկոնյանի գերեզմանի վրա որպես հուշակոթող կանգնեցվել է հենց խաչքար, կամ ինչո՞ւ այդչափ շատ են խաչքարերը հայոց ճակատագրում և հենց Թումանյանի միջավայրում («ամբողջ ճանապարհին ուղեկցում են խոնարհված և ջարդված խաչարձանները»): Պետականությունից զրկված, մշտապես ասպատակությունների և հարստահարման ենթակա հայ մարդն ամենից շատ է զգացել Աստծո բարեխնամ աջակցության կարիքը: Եվ խաչը, խաչքարը, Ն. Մառի խոսքերով «այդ մտերմագույն հիշատակարանը» ամենից հարմար բարեխոսն էր հայ մարդու և Աստծո միջև: Այսինքն, այն ոչ միայն հուշակառույց է, այլև՝ պահպանիչ խորհրդանշան: Ինչպես Ս. Կապուտիկյանն է գրում.

**«Հողդ քիչ էր, քարերդ շատ,  
Քարերից էլ շատ էր մահդ,  
Որ հաղթեիր քարին, մահին՝  
Դու խաչքարդ հորինեցիր»:**

**Քառակող կոթողը** բարձրանում է եռաստիճան խարսխին դրված խորանարդածև պատվանդանի վրա: Կոթողի չորս երեսն էլ քանդակազարդ են: Ժամանակին այն պսակված է եղել գլխաքարով, որի մասին է հուշում թեքությամբ ջարդված վերնամասում առանցքային փորվածքի առկայությունը: Կոթողը կերտված է դեղին, աստիճանները և պատվանդանը՝ կարմիր ու բաց վարդագույն ֆելզիտից: Պատվանդանի արևմտյան երեսին քանդակված է եռաստիճան հենարանին կանգնած հավասարաթև խաչ՝ ստորին թևի երկու կողմում ոճավորված դափնետերևներով: Հարավային երեսին փորագրված է հինգ տողանի անթվակիր արձանագրություն. «**Ես Վարհամ զԱստարշին արգանն թողի, վկա Ապմայն, Գաւկայն եւ խորիշահ: Ով խափանէ :ՅԺԸ: Հայրապե-**



Քառասնից մանկանց վանքի մնացորդները հարավ-արևմուտքից

**չին»:**

Արձանագրությանն անդրադարձել են Ե. Լալայանը, Գ. Սարգսյանը, Ա. Շահինյանը: Աբգան (աւգան) բառը որոշակի և սպառիչ ձևով ստուգաբանված է որպես ջրի հարկի տերմին: Ավտարշին բառը դիտվում է որպես բնակավայր, որը Վահրամն ազատել է արգանից: Չի արդարացվում դրա Ավտարշահ կամ Ավտարծին վերծանությունը: Ե. Լալայանն արգան-ը դարձրել է արքանկ, Գաւկայն-ը՝ Գազկայ, Գ. Սարգսյանը՝ արգանն՝ արձանն: Արձանագրության գրիչն է վերջում հիշվող Մխիթարիչը: Արձանագրու-


թյան մեջ հիշվող անունները (Վահրամ, Գաւկ, Խորիշահ) հանդիպում են Դսեղի նաև այլ հուշարձանների վրա, որոնք բոլորն էլ XIII դ. գործեր են: Այդ հանգամանքը, ինչպես նաև արձանագրությունների հնագրական հատկանիշների և գրածների ընդհանրությունը հիմք են տալիս կոթողի պատվանդանի արձանագրությունը ևս համարել XIII դ. գործ: Հիշատակվածը Վահրամը Մամիկոնյան տոհմի իշխաններից մեկն է, որը հնարավորություն է ունեցել Ավտարշին-Ավտարշեն բնակավայրն ազատելու ջրի հարկից: Բոլոր հիմքերը կան նրան նույնացնելու Դսեղի

ծիթհանի արձանագրությունում հիշվող Վահրամի հետ:

Քառակող կոթողը բնորոշվում է ինքնատիպ արվեստով և վաղմիջնադարյան քանդակագործական նմուշների (Արդվի, Օծուն, Կողես, Բրդաձոր, Դարբանդ և այլն) հետ ունեցած անմիջական աղերսով: Ժամանակագրական առումով այն չի կարող նույնանալ պատվանդանի խաչաքանդակի հետ, որն իր նկարագրով, կերտման արվեստով ավելի ուշ շրջան է կողմնորոշում՝ մերձենալով Օծունի եկեղեցու արևելյան ճակատի, հարավային շքամուտքի բարավորի, Հացառատի արևելյան ճակատի խաչերի, Կողբի գերեզմանատան Սբ. Աստվածածին մատուռ-եկեղեցու բեկորների քանդակների ժամանակին, այն է՝ VIII-IX դդ.: Նշանակում է, Դսեղի հուշակոթողի վրա կա առնվազն երեք դարաշրջանի դրոշմ քառակող կոթողը վերաբերում է V-VII դդ., պատվանդանի խաչը՝ VIII-IX դդ., արձանագրությունը՝ XIII դ.: Ակնհայտ է, որ խաչը քանդակվել է պատվանդանի կառուցման հետ միաժամանակ: Հավանականն այն է, որ հուշարձանն իր ավարտուն տեսքով կանգնեցվել է VIII-IX դդ.: հորինվածքի մեջ ներառելով մինչ այդ գոյություն ունեցող քառակող սյունանման կոթողը:

Քառակող կոթողների կառուցման ավանդույթը հարատևել է հնագույն ժամանակներից մինչև ուշ միջնադար: Այդ առումով Դսեղի հուշարձանը մեծորիակ կոթողների միջանկյալ օղակներից է:

Դսեղի կենտրոնի միջնադարյան մյուս գերեզմանոցի տարածքում է **Լուսավորչի եկեղեցին**, որի քահանան է եղել Հովհ. Թումանյանի հայրը՝ Տերթաղևուրը: Ներկա վիճակով այն ուղղանկյուն դահլիճ է, որի արևելյան կողմում գտնվում է բեմից մոտ 3 մ ետ ընկած խորանը՝ երկու կողմի ավանդատներով: Խորանի ուղղանկյուն ծավալը դուրս է գալիս արևելյան պատի սահմաններից: Շենքում զգացվում են առնվազն երեք վերակառուցման հետք: Նախնականը որմնախարիսխներն ու հարավային ավանդա-



Մարցի Ամենափրկիչ խաչքարը  
 Սբ. Էջմիածնի Մայր Աթոռի բակում

տան պատերի ստորին շարքերն են՝ իրականացված բազալտե խոշոր մաքրատաշ քարերից: Առաջին վերակառուցումը կատարել են Մամիկոնյանները, երբ զանգակատան հարավային ավանդատունը վերափոխել են, որն ի տարբերություն բազալտե նախնական մնացորդների, իրականացված է դեղնակարմրավուն ֆելզիտից: Նրա արևելյան ճակատին, պատուհանի պսակից վերև, պահպանվում է Մամիկոնյանների տոհմանշանը՝ երկզվխանի արծիվ՝ ճանկերում գառ, ինչպես Բարձրաքաչի գավթի արևելյան պատին: Տոհմանշանից ձախ, կից քարի վրայի եր-

պատին: Տոհմանշանից ծախս, կից քարի վրայի երբեմնի հարթաքանդակից մնացել է միայն եղնիկի սլացիկ ֆիգուրի ընդհանուր ուրվագիծը: Չանգակատունն ունի 3 մ բարձրություն, նրա սալածն քիվը կտրվում է տոհմանշանի քանդակի քարով, իսկ անկյունագարդերը բռնում են պատի ողջ բարձրությունը: Պարզ է, որ զանգակատունն իր նախնական բարձրությամբ չէ: Մամիկոնյանների ժամանակից են մնացել նաև բեմի ճակատային պատը և հարավային մուտքի եզրակալի մի մասը:

Շենքն իր ներկայիս տեսքով հիմնականում արդյունք է 1900 թ. երկրորդ վերակառուցման, որի ժամանակ պատերը գրեթե ամբողջությամբ նորացվել են:

Վերջին՝ երրորդ վերակառուցումը կատարվել է 1969 թ.՝ հայրենագիտական թանգարան կազմակերպելու կապակցությամբ: Կառույցն ուշագրավ է տարբեր դարաշրջաններում կատարված վերակառուցումների զուգարկությամբ՝ այդ դարաշրջաններին բնորոշ հատկանիշներով: Ներկայումս Լուսավորիչը գործող եկեղեցի է և հաջողությամբ ծառայում է համայնքի հավատացյալների և ՅՈՒՆԵՍԿՕ-ի թուղթ-թանգարանի հյուրերի հոգևոր պահանջներին:

**Քառասնից մանկանց վանքը** գտնվում է գյուղի հյուսիսարևմտյան մասում, Դեբեդի կիրճի աջակողմյան զառիթափ լանջի «Տախտեր» կոչվող վայրում, Թումանյանի քանիցս հիշած «Տան տակի ծորում»: Համալիրը բաղկացած է եղել եկեղեցուց, ժամատնից, կացարաններից, օժանդակ շինություններից և խաչարձաններից, որոնցից մեզ են հասել միայն կիսավեր մնացորդներ: Հիմնական կառույցն ուղղանկյուն հատակագծով (11,0 x 8,0 մ արտաքին չափերով) եկեղեցին է, որի զմբեթը չի պահպանվել, խարխված ու կիսաքանդ վիճակում են պատերը (հատկապես՝ հարավայինը), թաղերը, զմբեթակիր կամարները: Այն իր հորինվածքով սերվում է զմբեթավոր դահլիճի տիպից: Արևելյան որմնամույթերը համատեղված են խորանի եզրային մասերի և սրան

երկու կողմից կից կրկնահարկ ավանդատների ճակատային պատերի հետ: Միակ մուտքը արևմուտքից է: Սրա հարավային եզրաքարի փորվածքներից երևում է, որ ունեցել է հարուստ պարակալ: Պատերը ծածկված են առատ արծանագրություններով, խաչապատկերներով: Հարավային և արևելյան կողմերում կան ուշագրավ քանդակներով խաչքարեր, տարածքում թափված են պատերի բեկորներ, ձևավոր և քանդակագործ քարեր:

Թեև ժամատան հետքերը մեզ չեն հասել, սակայն արևմտյան պատի մի արծանագրությունից (որի թվականը չի պահպանվել) որոշակի է դրա երբեմնի գոյությունը և հայտնի է նույնիսկ կառուցողը. «Ողորմածութեամբն Աստուծոյ ես խաչատուր ծառայ Աստուծոյ շինեցի գժամատունս և սալեցի զեկեղեցիս...»<sup>8</sup>:

**ԹՈՒՄԱՆՅԱՆ - Անցյալի պատմությունը լուսատու լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճամփեն անմոլոր գնալու համար... զեղեցիկ արվեստների մեջ առանձին կարևորություն է ունեցել միշտ ճարտարապետությունը... քարացած երաժշտությունը... մի անգամ ընդմիշտ քարացած, կանգնած, որ չի աղավաղվում ժամանակի հետ... որին վերապահված է առանձին կարևոր դեր:**

Գրողն իր անսքող հիացումն ու հպարտությունը սիրով բաժանում էր իր հյուրերին՝ Ն. Մառի, Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի, Լ. Շանթի, Լեոյի և բոլորի հետ: Նա մեծ բավականություն էր ցտանում, երբ հայրենի բնաշխարհով, նրա անկրկնելի հուշարձաններով հիանում էին նաև ուրիշները: Լեոն վկայում է. «1903 թվականին ես առաջին անգամ առիթ ունեցա ճանապարհորդելու Ալեքսանդրապոլի նորակառույց երկաթուղով և «Մշակի» մեջ խանդավառ սքանչացումով նկարագրեցի Լոռու ծորը: Բանից դուրս եկավ, որ ես այս փոքրիկ գործով շատ մեծ հաճույք եմ պատճառել Հովհաննես Թումանյանին: Սքանչանալ Լոռու բնությամբ, նշանակում էր սրտա-

**կից ընկեր լինել Հովհաննես Թումանյանին այն մեծ պաշտամունքի մեջ, որ նրա սրտում հրդեհած պահում էր Լոռու բնությունը»<sup>9</sup>:**

Բնության ձեռակերտ և անձեռակերտ գանձերի թումանյանական պաշտամունքը ոչ մի կապ չունեի տեղական, նեղ ազգային սնափառության հետ: Գրողը դրանք գնահատում և կարևորում էր որպես համամարդկային մշակութային կարևոր արժեքներ: Նա ուզում էր, որ բոլորը գան, տեսնեն, վայելեն հայրենի բնության հրաշալիքները, նրա ձեռակերտ ու անձեռակերտ հուշարձանները:

**ԹՈՒՄԱՆՅԱՆ - Սիրում, պաշտում եմ թե՛ Լեռնոնտովին, թե՛ Պուշկինին, մանավանդ՝ Լեռնոնտովին, բայց մեկ-մեկ էլ բարկությունս գալիս է դրանց վրա: Տո, տնաշեններ, ասում եմ, էդ որ էդքան սիրեցիք Կովկասն ու Ռազմավիրականը ու ձեր տաղանդավոր գրչով երգեցիք էդ գեղեցկությունները, ինչ կլինեն, որ մի ոտն առաջ անցնեիք, մեր երկիրը մտնեիք ու մեր գեղեցկություններն էլ տեսնեիք: Բա մեր Լոռու ծորը, Դևբեղը, Դվալն ու Մայմեխը, Դիլիջանի ծորն ու Սևանը պակաս գեղեցիկ է՞ն:**

Հայ ժողովրդի մշակութային հարստությունը կազմող անբարբառ, բայց խոսուն այդ կառույցները Լոռվա ճարտարապետական դպրոցի ինքնատիպության, զարգացման բարձր մակարդակի և հարատևման առավատչյան են, նրա պատմության բազմաբովանդակ և իմաստալից քարեղեն էջերը, որոնց ընթերցումը, վերծանումը և գալիք սերունդներին անխաթար փոխանցումը, ինչով այնքան մտահոգված էր Թումանյանը, այժմ էլ շատ կարևոր են և հրատապ: Ոգևորումի և ներշնչանքի անհատում աղբյուր են դրանք, հայ ճարտարապետության ազ-

գային ոգու և նկարագրի պահպանման, հորինվածքային ձևերի, հնարքների արարման և ստեղծագործական վերելքի համար:

1. **Գ. Կարախանյան**, Դեբեդի կամրջի շինարարական արձանագրությունը, «Լրաբեր հաս. գիտ.», 1979, N 5, էջ 113-114:
2. **Գ. Կարախանյան**, Դսեղի միջնադարյան ձիթհանը և նրա շինարարական արձանագրությունը, «ՊԲՀ», 1977, N 4, էջ 253-254:
3. Այդ ավանդությունն է հիմք տվել Ս. Փարաջանովին՝ ստեղծելու «Սուրամի ամրոցը» ֆիլմը:
4. Այսօր էլ արժեքավոր համալիրը գտնվում է անմխիթար վիճակում: 1939 թ. մասնակի նորոգումը, 1950 և 1970 թվականներին կատարված մաքրման աշխատանքները քիչ բանով բարեփոխեցին վիճակը. նույն սպառնալիքը, որ գավթի արևելյան պատի հատվածը կարող է այսօր-վաղը ծորը թափվել, այժմ էլ կա:
5. **Ս. Զալալյանց**, Ճանապարհորդությունի մեծն Հայաստան, գիրք Ա, Տփղիս, 1842, էջ 105:
6. **Կ. Դաֆադարյան**, Հաղթատ, Երևան., 1963, էջ 50, **Ս. Սաղունյան**, Գուգարքի մեմորիալ կոթողները, Երևան, 1980, էջ 9:
7. **Ս. Գ. Բարխուդարյան**, Դիտողություններ և նոր նյութեր Հին Հայաստանի ոռոգման գործի վերաբերյալ, «Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղագիտության պատմության», հ.1, Երևան, 1964, էջ 276-283, **Ս. Ա. Ավագյան**, Վիճակահարձանագրությունների հնչյունաբանություն (X-XIV դդ.), Երևան, 1973, էջ 18:
8. **Հ. Եղիազարյան**, Դսեղի Բարձրաքաջ Ս.Գրիգոր և Քառասնից մանկանց վանքերը և գյուղի մյուս առավել կարևոր հուշարձաններն ու դրանց վիճագիր արձանագրությունները, «Էջմիածին», 1971, մարտ, էջ 47:
9. **Լեո**, Հիշողություններ Հովհաննես Թումանյանի մասին, ԹԺ, Երևան., 1969, էջ 51-52:

Garnik Shakhkryan

# "THE DEVOTED QASHATAGH TEMPLE OF THE MAMIKONYANS", "THE DELICATE WONDER" AND OTHERS

(With supplements by Hovhannes Toumanyan)

## (Summary)

The architectural monuments in the surroundings of the village of Dsegh stand apart for the constructional, compositional and scenic role, they play. While examining the monuments we used the material left by Hovhannes Toumanyan, who was particularly interested in the study of the local lore heritage concerning the important architectural historical material.

According to their location the architectural monuments in Dsegh are divided into three groups: Qashatagh Sb. Grigor Monastery with adjoined constructions on the slope of the canyon of the River Martsajur; the churches, steles and khachkars in the village center and the Forty Children's Monastery (Karasnits Mankants Vank) on the slope of the gorge. They present the development and the high level of the original school of architecture in Lori -- the important pages of the history of the region. No wonder the Great poet was much concerned about their study, preservation and passing them to the future generation.

Ենթադրվում է, որ Գեղաքանի շրջանի Կերեն գյուղը գտնվում է Կապանից 8 կմ հարավ-արևելք, Կապան-Կովսական մայրուղու աջ կողմում, Ողջի գետի աջ ափին: Ըստ Ալեքսան Գեղամյանի՝ ներկայիս գյուղն, ամենայն հավանականությամբ, հանդնկնում է Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Սյունիք աշխարհի Կովսական գավառի Կերեն գյուղի հետ:

## ԱՐՏԱԿ ԳՆՈՒՆԻ

Պատմական զիջությունների թեկնածու  
Գ.ԱԳԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ԿԵՐԵՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Կերեն գյուղը գտնվում է Կապանից 8 կմ հարավ-արևելք, Կապան-Կովսական մայրուղու աջ կողմում, Ողջի գետի աջ ափին: Ըստ Ալեքսան Գեղամյանի՝ ներկայիս գյուղն, ամենայն հավանականությամբ, հանդնկնում է Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Սյունիք աշխարհի Կովսական գավառի Կերեն գյուղի հետ:

2003 թ. հոկտեմբերին բնակիչներ Մկրտիչ և Արթուր Թումանյաններն այստեղ հայտնաբերել էին բրոնզե դաշույններ, զարդեր, զրահի մասեր, խեցանոթների բեկորներ, որոնք Հայ կրթական միության նախագահ Ստեփան Նալբանդյանը հանձնել էր Բերձորի երկրագիտական թանգարան:

Հնավայրը գտնվում է գյուղից մոտ 0,5 կմ հարավ-արևմուտք: Դամբարանադաշտը մոտ 800մ ձգվում է ջրբաժանի երկայնքով՝ տարածվելով ճանապարհի աջ և ձախ կողմերում աճող երիտասարդ

անտառում՝ զբաղեցնելով նաև հարևան բլրի գագաթը (Աղ. 1, նկ. 1): Այդ ջրբաժանից 100-150 մ արևմուտք, զուգահեռաբար երկարում է ևս մեկ ջրբաժան, որտեղ նույնպես առկա են թաղումներ: Ջրբաժանի հարավային հատվածում պահպանվել են բնակատեղիի հետքեր:


Երրորդ դամբարանադաշտը (լիովին ավերված) գտնվում էր առաջին ջրբաժանից արևելք: Այստեղ հայտնաբերված են Ք.ա. VI-V դդ. բնորոշ խեցեղենի առանձին բեկորներ:

Եվս մեկ հնավայր տեղադրված է գյուղից 1 կմ արևելք, Ողջիի ձախ ափին, հյուսիսային ձորակի աջ լանջին: Նշմարվում են կացարանների հետքեր և քարարկղներ:

Տեղանքը կազմված է կրաքարային նստվածքներով և այն ծածկող կավային շերտով: Տեղ-տեղ կավաշերտը բացակայում է և կրաքարային նստվածքները դուրս են գալիս մակերես: Չո-

## Հնագիտություն

Աղյուսակ 1



Նկ. 1-19 պատահական գտածոներ:

րակներում առկա են փոքր հզորության գետային նստվածքներ: Դրանք ավելի երիտասարդ են և ծածկում են կրաքարային շերտերը: Կերենի դամբարանադաշտի հյուսիսային հատվածը զատվում է հիմնական դամբարանադաշտից ոչ խորը իջվածքով, որից բլրի գագաթը բարձր է մոտ 10 մ: Այն դեպի Ողջիի գետահովիտը կտրուկ իջնող կոնաձև բլուր է՝ արհեստականորեն հարթեցված գագաթով: Իր երկրաբանական կազմությամբ այս բլուրը հար և նման է դամբարանադաշտի հիմնական հատվածին, այն տարբերությամբ, որ այստեղ հողաշերտի հզորությունն ավելի մեծ է: Բլրի արևմտյան լանջը ծածկված է խիտ անտառով: Գետի ձախ ափն ունի նույն նկարագիրը՝ այն տարբերությամբ, որ այստեղ կրաքարը խիստ փոփոխված է՝ տեղ-տեղ բյուրեղացած արագոնիտիզացիայի հետևանքով:

2004-2005 թթ. ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արշավախումբը (հնագետ՝ Ա. Գնունի, երկրաբան՝ Գ. Խաչատրյան, տեղագրագետ՝ Կ. Մկրտչյան, ճարտարապետ՝ Գ. Միքայելյան) ուսումնասիրեց գյուղի մերձակայքի հնագիտական հուշարձանները: Աշխատանքների ընթացքում 1 դամբարանադաշտում քարտեզագրվեց 85 դամբարան, որոնց մեծ մասը մասնակի կամ ամբողջովին ավերված էր: Ուսումնասիրվեցին միայն ավերված դամբարանները: Հայտնաբերված և տեղացիներից հավաքած նյութերը վերակնգնվել են Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնում (վերականգնողներ՝ Ելենա Աթոյանց, Լիանա Ժամազորժյան, Արինա Գրիգորյան, Հ. Հակոբյան, գրչանկարները՝ Աշոտ Թումանյանի, Թ. Հմայակյանի) և մասամբ հանձնվել Բերձորի երկրագիտական թանգարանի:

**Դամբարանների կառուցվածքը:** Դամբարանները հիմնականում քարարկղներ են՝ կառուցված հիմնականում բազալտ, գրանոդիորիտային և դիորիտային քարատեսակներից, ինչպես նաև կրա-

քարերից: Կան նաև հիմնահողային դամբարաններ, որոնց պատերն ուղղահայաց փորված են բնահողի մեջ: Իր կառուցվածքով աչքի է ընկնում N 74 դամբարանը, որի երկայնական պատերի վերին շարքի քարերը մի փոքր առաջ են դրված՝ առաջացնելով կեղծ թաղ: Նման երևույթ վկայված է Ք.ա. I հազ. այլ հնավայրերում (Օշական, Կարմիր բլուր): Գրեթե բոլոր դամբարաններն էլ հատակագծում ուղղանկյուն են, բացառությամբ N 74 դամբարանի, որի հատակագիծը սեղանաձև է:


Դամբարանախցերի ուղղվածության մեջ որևէ օրինաչափություն չի դիտարկվում: Պահպանված կառույցների երկարությունը 140-ից (NN 25 և 20 դամբարաններ) 300սմ է (N 64 դամբարան), լայնությունը 50-ից (NN 25 և 20 դամբարաններ) 90 սմ (N 32 դամբարան): Որոշ դամբարաններ (N 34) ծածկված էին սալերով: Դամբարանների մեծամասնությունը զուրկ է արտաքին նշաններից, սակայն տարածքում նշմարվում են մի քանի դամբանաբլուրների հետքեր: Առանձնանում են բլրի գագաթի քարահողային լիցքով դամբանաբլուրները (NN 1 և 3 դամբարաններ):

Կողոպտված դամբարաններից հայտնաբերվել է նաև մարդաբանական նյութ (ընդամենը 14 մարդու կմախք, բնորոշումները՝ Ռ. Մկրտչյանի): Դամբարաններում թաղված են եղել մեկական ննջեցյալներ: Բացառություն են կազմում միայն N 34 դամբարանը, ուր հուղակավորված են երկու (25-38 տարեկան կին և 35-40 տարեկան տղամարդ) և N 45-ը, որտեղ թաղել են երեք մարդ (45-55 տարեկան և 35-ից բարձր տղամարդիկ և 25-35 տարեկան կին): Ննջեցյալների մեծ մասի տարիքը 35-55 տարեկան էր: N 54 դամբարանի միայնակ թաղումը 25-35 տարեկան տղամարդու էր, իսկ NN 34 և 45 դամբարաններում 25-35 տարեկան կանանց ոսկորները գտնվել են ավելի հասուն տղամարդկանց ոսկորների հետ:

N 54 դամբարանում հայտնաբերվել են մանր եղջերավոր անասունների ոսկորներ (բնորոշումը՝ Ն. Մանասերյանի):




1




0 2 4 6


Աղյուսակ 2




2




0 2 4 6 3




4



0 2 4 6 5




0 2 4 6





5

Նկ. 1-5 N 64 դամբարանի գույքը:



1

0 2 4 6



4


0 1 2 3



0 2 4 6




0 2 4 6



5



0 2 4 6




6

0 2 4 6

Աղյուսակ 3




2



0 2 4 6



3




0 2 4 6




Նկ. 1-6 N 64 դամբարանի գույքը:

Աղյուսակ 4



Նկ 1-4 N 31 դամբարանի գույքը, նկ. 5-6 N 54 դամբարանից գտնված սպառազինության իրերը, նկ. 7 պատահական գտնված դաշույն կենաց ծառի պատկերով:

Աղյուսակ 5



Նկ. 1-7 N 3 դամբարանից հայտնաբերված խեցեղեն, նկ. 8 N 74 դամբարանից ձանկավոր ոտքերով անոթ, նկ. 9-13 N 28 դամբարանից հայտնաբերված խեցեղեն:

Որոշ դամբարաններում հայտնաբերվել են ածխի մնացորդներ:

**N 1 դամբարան:** Խաթարված էր թմբի արևելյան հատվածը: Դամբարանումը հատակագծում ձվաձև էր՝ տրամագիծն արևմուտքից արևելք 8 մ էր, իսկ հյուսիսից հարավ՝ 6 մ, բարձրությունը՝ 1,4 մ: Քարային լիցքի վերին շերտը բաղկացած էր համեմատաբար մանր քարերից, իսկ ստորինը՝ ավելի մեծ: Համեմատաբար մեծ քարերով էր շարված նաև դամբարանի կենտրոնական հատվածը: Լիցքի քարերը հիմնականում բազալտ էին: Տեղ-տեղ կային գրանոդիորիտներ, դիորիտներ, փոփոխված կրաքարեր և մեկ կվարցիտ: Լիցքի երկրորդ շերտում որոշակի տոկոս էին կազմում գետաքարերը: Քարային լիցքի տակ բացվեց հողի շերտ, որի հզորությունը պեղավայրի տարբեր հատվածներում 20-50 սմ էր, կազմված՝ մոխրով և այրված կավի բեկորներով հագեցած կավահողից: Մոխրով առավել հագեցած էին կենտրոնական, հարավային և արևելյան հատվածները, իսկ հյուսիսային և արևմտյան հատվածներում մոխրաշերտը գրեթե բացակայում էր:

Հողաշերտի տակ դամբարանի հարավային մասի կենտրոնական հատվածում բացվեց ոչ մեծ քարերից շարված հարթակ՝ 1,30 x 1,10 չափերի, որի վրա կային խիստ այրված գետաքարեր: Հարթակը ծածկող և շրջապատող հողաշերտը հագեցած էր մոխրով և խիստ տափանցված: Հայտնաբերված խեցեղենը բացառապես բեկորային վիճակում էր, հաճախ՝ այրված: Հարավ-արևելյան հատվածում բացվեցին կրոնլեխի մնացորդներ<sup>3</sup>:

Պեղավայրի հարավ-արևմտյան հատվածում բացվեց 3,5 մ երկարությամբ քարաշար՝ ուղղված արևելքից արևմուտք, որն ավարտվում էր քարերից շարված 1,5 մ տրամագիծ ունեցող շրջանով: Շրջանի կենտրոնում տեղադրված էր բերանի վրա շրջված կարաս: Կարասի բերանը լայն էր, շուրթը՝ զանգվածեղ, կլոր, խրված մայր հողի մեջ: Կարասի մեջ կրակի ներգործության հետքեր կրող գետաքարեր էին, որոնց վրա լցված էին 30-40 սմ հզորու-

թյամբ մոխրաշերտ, խիստ այրված խեցանոթի բեկորներ: Մոխիրը լցվել էր կարասի մեջ դեռևս տաք վիճակում, որի ջերմությունից տատանումից կարասի շրթնամասը ճաքել էր: Մոխրի շերտը ծածկված էր քարերով, որոնց մեջ առանձնանում էր 30 x 40 սմ չափի սալ քարը: Այնուհետև հողաշերտ էր, որտեղ նույնպես հայտնաբերվեցին խեցեղենի առանձին բեկորներ, իսկ ավելի վերև լիցքի քարերն էին: Կարասի վերին հատվածը բացակայում էր՝ հավանաբար կոտրվել էր ծիսակատարության ժամանակ: Ընդհանուր առմամբ, կարասը պահպանված էր 70 սմ բարձրությամբ, իրանի տրամագիծը 120 սմ էր: Հայտնաբերված խեցեղենի վերլուծությունը թույլ է տալիս կառույցը թվագրել Ք.ա. VII-VI դդ.: Նշված կառույցի գործառույթը մինչև վերջ պարզված չէ: Այն կարող էր լինել թաղում, սակայն բացառված չէ, որ եղել է հետագայում կոնսերվացված պաշտամունքային հարթակ: Հոգուտ այդ տեսակետի է խոսում այն փաստը, որ կառույցն իշխող դիրք ուներ ոչ միայն հյուսիսային բլրում, այլև ողջ դամբարանադաշտում:

N 64 դամբարանն իր կառուցվածքով չէր տարբերվում ուղղանկյուն հատակագծերով այլ դամբարաններից: Ուղղված էր հարավից հյուսիս: Դամբարանի հյուսիսային (ավերված) հատվածում հայտնաբերվեց «արարողակարգային» ծիսական երեք գավաթ (Աղ.2, նկ. 2, 3), հաստափոր սափոր, եռանկյուն կանթով բաժակ, ինչպես նաև վատ թրծված աղաման (Աղ. 3, նկ. 2): Դամբարանի այս հատվածում հայտնաբերվեցին նաև այրված ոսկորներ, որոնց բեկորային վիճակի պատճառով հնարավոր չէ որոշել նրանց պատկանելիությունը: Դամբարանի կենտրոնական և հարավային հատվածները խաթարված չէին: Արևմտյան պատի կենտրոնական հատվածում դրված էր թրծակավե գոտևորված տղամարդու արձանիկ (Աղ.2, նկ. 1), որի աջ ձեռքում գավաթ էր: Պարզած ձեռքերը գրկում էին կեռնուր (Աղ. 2, նկ. 5): Աջ ձեռքին հաված էր ցլակերպ ռիտոն (Աղ.2, նկ. 1): Կեռնուսից արևելք տեղադրված էին

լայնաբերան քրեղան, միակցված թասեր և մի քանի սափոր (Աղ. 2, նկ. 4, Աղ. 3, նկ. 3, 5, 6): Գրեթե ողջ խեցեղենը զարդարված էր միանման նախշերով՝ բաղկացած կետային եռանկյուններից և սոյար պատկերներից: Դամբարանը թվագրվում է Ք.ա. VII-VI դդ.:

Հայտնաբերված մյուս նյութերը կարելի է բաժանել մի քանի խմբի<sup>4</sup>:

**Վաղ շրջանի նյութերը:** Այս խմբին, ամենայն հավանականությամբ, պատկանում է 2005 թ. պատահականորեն հայտնաբերված բրոնզե գոտին, որի եզրերը զարդարված են սեպածև զարդանախշերով: Գոտու վրա կետային եղանակով պատկերված են կեռախաչ, մարդու պատկեր, իսկ կենտրոնական հատվածում՝ մալթյան խաչ: Սեպածև զարդանախշերով մանր գոտիներ հայտնի են Կարմիր Բերդից (Ք.ա. I հազ. սկիզբ), Օծունից և Ստեփանավանից (Ք.ա. X-IX դդ.)<sup>5</sup>: Նույն վայրում հայտնաբերվել է նաև բրոնզե ճակատակալ: Ք.ա. II-I հազարամյակով է թվագրվում 2003 թ. պատահական գտնված հորիզոնական ակոսներով անոթը, որն իր զուգահեռներն ունի Տանձավերում (Աղ. 1, նկ. 5):

Ք.ա. II-I հազարամյակով է թվագրվում N 3 դամբարանը, որտեղ հայտնաբերվել են հորիզոնական ակոսներով գավեր և թասիկներ, ինչպես նաև սև և սև-փայլեցված թաղարներ: Հայտնաբերվել է նաև փոքրիկ գավաթ, որն իր զուգահեռներն ունի Տանձավերի նյութերում (Աղ. 5, նկ. 1-7)<sup>6</sup>: Դամբարանում գտնվել են նաև խողովակաձև ուլունքներ:

Նյութի գերակշռող մասը բնորոշ է Ք.ա. VII-V դդ.: Դամբարաններից հայտնաբերված և տեղի բնակիչներից հավաքված խեցեղենը ներկայացված է մի քանի տիպերով: Ա) Սափորներ՝ կարմիր, դեղնավուն, մոխրագույն և սև, լայն հատակով, գնդաձև կամ ձգվող իրանով, նեղ, շեփորաձև կամ գլանաձև վզով (Աղ. 1, նկ. 1-4, 6, 10, 11, 13, 18): Այս խմբի անոթներում հաստատագրված են իրանին թեք տեղադրված, երբեմն վերին հատվածում ներձկված, փոքրիկ աղեղնաձև, ինչպես նաև իրանը և շուրթը միաց-

նող, հատույթում կլոր, եռանկյուն, ոլորած կամ բազմանկյուն կանթեր (Աղ.1, նկ. 1, 3, 6, 10, 11, 13, 18, Աղ.2, նկ. 4, Աղ. 3, նկ. 6, Աղ. 4, նկ. 1, 3, աղ. 5, նկ. 9, 13): Մեկ դեպքում (N 74 դամբարան) առկա է ճեղքված կանթ: Առանձնանում է նաև վերին հատվածում տեղադրված երկու զուգահեռ ելուստով բռնակը: Առանձին ենթախումբ են կազմում ուռուցիկ իրանով կճուճները՝ գնդիկաձև (մեկ դեպքում խուլ՝ N 34 դամբարան) կամ ոլորված կանթերով, ինչպես նաև ձգվող իրանով երկկանթ կճուճը (N 63 դամբարան): Բ) Թաղարներ՝ մոխրագույն, կրեմագույն կամ կարմիր՝ լայն հատակով և թեք շուրթով (Աղ. 1, նկ. 14, 17, Աղ. 5, նկ. 11, 13): Աչքի է ընկնում անհամաչափ աղեղնաձև մեծ կանթով թաղարը (Աղ. 1, նկ. 19): Գ) Թասեր և քրեղաններ՝ սև և կարմիր, թեք կամ ձևավորված շուրթով (Աղ. 1, նկ. 9, Աղ. 4, նկ. 2): Այս խմբում առանձնանում են լայն հատակով, կորացող իրանով, հորիզոնական ունկաձև բռնակներով (N 23 դամբարան) անոթները: Դ) Փոքրիկ անոթների ձևերը (թաղարներ, սափորներ) հիմնականում կրկնում են համապատասխան մեծ անոթների ձևերը (Աղ.1, նկ. 9, Աղ. 4, նկ. 2): Ե) «Արարողակարգային» գավաթներ (Աղ. 2, նկ. 2, 3, N 64 դամբարան) և փոքրիկ բաժակ-խնկամաններ (2003 թ. պատահական գտածո, N 45 դամբարան, Աղ. 1, նկ. 12): Զ) Կարասներ՝ իրանի վերին հատվածը գնդաձև, ստորինը՝ թեք, օխրագույն, զանգվածեղ, կլոր շրթով (N 1 դամբարան): Է) Հալոցներ: Ը) Միակտված թասեր (N 64 դամբարան, Աղ. 3, նկ. 3): Թ) Կեռնուսներ՝ հաստափոր, օխրագույն կճուճ, որի իրանի վերին մասում գտնվում է շեփորաձև երկրորդ շուրթը (N 64 դամբարան, Աղ. 2, նկ. 5), օխրագույն սափոր՝ ուսին ևս մեկ գլանաձև վիզ՝ հարթ շրթով (N 74 դամբարան, Աղ. 5, նկ. 3): Ժ) Փոքրիկ թաղար՝ ճանկավոր երեք ոտքի վրա (Աղ. 5, նկ. 8): ԺԱ) Կենդանակերպ (ցլակերպ) անոթ (N 64 դամբարան, Աղ. 4, նկ. 4, Աղ. 6, նկ. 4): ԺԲ) Շերտափանաձև անոթ՝ խոյակերպ բռնակով (Աղ. 5, նկ. 3):

Կերենի խեցեղենում կան կենդանակերպ հետևյալ տարրերը. նախ՝ անոթի իրանն օղակող օձի

ռելիեֆ պատկերն է, որի պոչն ու զլուխը տեղադրված են սափորի բռնակին (N 31 դամբարան, Աղ. 4, նկ. 1) : Ի հայտ են եկել նաև խոյակերպ (N 23, 63 և 64 դամբարաններ, Աղ. 3, նկ. 5), ցլազլուխ և թռչնակերպ բռնակներ (Աղ. 1, նկ. 2): Հատկանշական է N 17 դամբարանից հայտնաբերված շերեփը՝ խոյակերպ բռնակով: Նմանատիպ անոթներ հայտնի են դեռևս Ք.ա. II հազ. կեսից (Սուլ) և Ք.ա. I հազ. Իրանում և Անդրկովկասում (Մինգեչաուր, Խոջալու, Խանլար, Սիալկ Բ, Հասանլու)<sup>7</sup>: Կենդանակերպ անոթները հազվադեպ չեն ինչպես Հայաստանում, այնպես էլ Անդրկովկասում և Իրանում (Խուրվին, Մինգեչաուր, Խրթանոց, Շիկահող, Տանձավեր, Ագարակ, Թրեյի և այլն)<sup>8</sup>:

Առավել հաճախ հանդիպող այլ զարդամոտիվներից են ռելիեֆ ելուստները, իրանին փորագրված գծերով կամ կետերով պատկերված եռանկյունիները, դրոշմված աստրալ պատկերները, ուղղահայաց և հորիզոնական ակոսները, կենաց ծառի պատկերները (Աղ. 1, նկ. 11, 15, Աղ. 2, նկ. 2-5): Առանձնացնենք փորագրված կրկնակի գծերով և խաչաքներին շրջանակներով ավարտվող պլատոնյան երեք խաչով զարդարված մոխրագույն սափորը (Աղ. 1, նկ. 3): Կրկնակի փորագրված գծերով պլատոնյան խաչերը, ինչպես շրջանակները հանդիպում են ուրարտական անոթներին՝ որպես ծավալն ընդգծող հիերոգլիֆ նշաններ<sup>9</sup>: Սակայն կերեցյան անոթի նշանները, անկասկած, զարդանախշ են: Մեկ այլ սափորի ուռուցիկ փորին դիտարկվում են թրծումից առաջ կատարված հորիզոնական փորագրված գծեր, որոնք նման են Կարմիր բլուրի բրոնզե անոթի վրա փորագրված հիերոգլիֆներից մեկին<sup>10</sup>:

Կերենի N 64 դամբարանից հայտնաբերված գոտևորված տղամարդու արծանիկը (Աղ. 2, նկ. 1) պատկանում է այսպես կոչված ավանդական-պայմանական տիպի ստեղծագործությունների թվին (Ք. Առաքելյանի բնորոշումը), որոնք բնութագրվում են հարթ դեմքով, ընդգծված ուռուցիկ ճակատով և քթով, խոր անցքերով կամ ճեղքված աչքերով և բե-

րանով<sup>11</sup>: Այս արծանի միակ զուգահեռը Կապանի թանգարանում պահպանվող արծանն է, սակայն պարզած ձեռքերով, գավաթ բռնած տղամարդկանց արծանները հայտնի են նաև Մարիլիում (Ք.ա. XI-X դդ.) և Լուրիստանում (Ք.ա. VIII-VII դդ.): Հատկանշական է, որ նմանատիպ պատկեր կա Թեիրանի թանգարանում պահպանվող մի կեռնոսի վրա (Ք.ա. IX-VIII դդ.)<sup>12</sup>:

Կերենի խեցեղենը բազմաթիվ զուգահեռներ ունի համաժամանակյա բազմաթիվ հուշարձաններում (Շիկահող, Նորաշեն, Աստղիբլուր, Ջրառատ, Մինգեչաուր, Յասիթ-թեփե, Սրթ-Չիչի և այլն)<sup>13</sup>: Հատկանշական է, որ որոշ անոթներում առկա է ուրարտական խեցեգործության ազդեցությունը (տափակ և աղեղնաձև կանթեր, իրանի և վզի ռելիեֆ անցումներ)<sup>14</sup>: Խեցեղենը զուգահեռներ ունի նաև իրանական աշխարհում: Գնդաձև իրանով և փոքր շրջանաձև կանթով անոթներ հանդիպել են Հասանլուի III Բ, Սիալկի Բ, Գիյանի I, Խուրվինի դամբարաններում: Դամբարանադաշտից հայտնաբերված «կեռնոս» տիպի անոթները զուգահեռներ ունեն ինչպես Հայաստանում, այնպես էլ Իրանում և Միջերկրականի ավազանում<sup>15</sup>: N 64 դամբարանից հայտնաբերված կեռնոսին առավել մոտ է Տանձավերի դամբարանադաշտից գտնված անոթը, ինչպես նաև Պերսուպոլսի կեռնոսը: Հատկանշական է, որ Տանձավերից գտնված անոթն ունի խոյակերպ բռնակ: Իրանական նյութը (Խուրվին) ակներև ցույց է տալիս կեռնոսկենդանակերպ քանդակ և կեռնոս-մարդակերպ քանդակ կապը<sup>16</sup>: Պատմականորեն դա համընկնում է մեդական դարաշրջանին<sup>17</sup>:

Սպառազինությունը ներկայացված է երեք կոթառավոր դաշույնով, որոնցից մեկը զարդարված է կենաց ծառի պատկերով (Աղ. 4, նկ. 5-7), նիզակի ծայրով (N 54 դամբարան, Աղ. 5, նկ. 4), ինչպես նաև երկաթյա նետասլաքով և տեգի բեկորներով (N 45 A դամբարան): Հայտնաբերվել են նաև զրահի մասեր:

Բրոնզե զարդերը ներկայացված են օղերով, լարից պատրաստված և հոծ ապարանջաններով

(Աղ. 4, նկ. 4), ծալված ծայրով մանյակով :

Դամբարանադաշտից հայտնաբերվել են բրոնզե ասեղներ (NN 31 և 34 դամբարաններ), ունելի (Աղ. 5, նկ. 7):

Կերենի դամբարանադաշտից գտնված մետաղյա առարկաները բազմաթիվ զուգահեռներ ունեն Ք. ա. VI-IV դդ. մի շարք հուշարձաններում:

Հայտնաբերվել են նաև ուլունքներ՝ սարդիոնից, փիրուզից, կորալից (երկրորդ ջրբաժանի N 1 դամբարան), կախիկներ՝ փոփոխված կրաքարից (առաջին ջրբաժանի N 27 և երկրորդ ջրբաժանի N 1 դամբարաններ): Ուշադրության են արժանի մածուկից պատրաստված պրիզմաձև և տակառաձև ուլունքները (N 20 դամբարան):

Այսպիսով, քննության առնելով Կերենի դամբարանադաշտի նյութերը, կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

1. Դամբարանադաշտը գոյատևել է Ք.ա. XI-IV դդ.:
2. Այն փաստը, որ Ք.ա. II հազ. վերջի - I հազ. սկզբի նյութեր հայտնաբերվել են միայն դամբարանադաշտի հյուսիսային բլրում, հիմք է տալիս ենթադրելու, որ այն դամբարանադաշտի հնագույն հատվածն է:
3. N 1 կենտրոնական կառույցի գոյությունը ենթադրում է, որ ամբողջ դամբարանադաշտն ընդունվում էր որպես միասնական համալիր:
4. Խեցեղենում ուրարտականին բնորոշ գծերի առկայությունը համադրելով տարածաշրջանի ուրարտական այլ նյութերի (Ֆիզուլու շրջան), ինչպես նաև ԼՂՀ Քաչաթաղի շրջանում ուրարտական արծանագրության հայտնաբերման փաստի հետ, կարելի է վկայակոչել որպես Վանի թագավորության մշակույթի թափանցումը նշված տարածաշրջան<sup>18</sup>:
5. Դամբարանից հայտնաբերված խեցեղենը (սափորներ, միակցված անոթներ, արարողակարգային գավաթներ) բազմաթիվ զուգահեռներ ունի

Անդրկովկասում, սակայն առավել մոտ՝ Սյունիքում և Արցախում: Միաժամանակ, խեցեղենի ձևերը (միակցված անոթներ) և հատկանիշները (ուռուցիկ իրան, լայն, հարթ հատակ, փոքրիկ, շրջանաձև կանթեր) բազմաթիվ զուգահեռներ ունեն իրանական նյութերում (Հասանլու, Սիալկ Բ)<sup>19</sup>: Այս ամենը թույլ է տալիս ենթադրել, որ Ք.ա. VI դ. Սյունիքի և Արցախի մշակույթը, զարգանալով տեղական հենքի վրա և կրելով հարևան Իրանի մշակույթի ազդեցությունը, ձևավորվել է որպես մշակույթի տեղային տիպ, որը բնորոշվում է ինչպես թաղման ծեսում, այնպես էլ նյութական մշակույթի առանձնահատկություններով:

1. Պեղումների նախնական տվյալները զեկուցվել են «Հին Հայաստանի մշակույթը» XIII հանրապետական գիտաժողովում՝ Ա. Գնունի, Գ. Խաչատրյան, Ս. Հմայակյան, Գ. Սիմոնյան, Դիտարկումներ Կերենի դամբարանադաշտի վերաբերյալ, Երևան., 2005, էջ. «Սահմանների մշակույթ», Երևան, 2006, XIV հանրապետական գիտաժողովում:

2. С. А. Есаян, А. А. Калантарян. Ошакан I, Е., 1988 с. 86, 92; А. А. Мартиросян. Город Тейшебаини. Ереван, 1961, с. 139-141. Օշականի նմանատիպ դամբարանախցերն իրենց չափերով շատ ավելի մեծ են, իսկ Կարմիր բլուրի դամբարանները հատակագծում օվալաձև են:

3. Ա. Գնունի, Գ. Խաչատրյան, Ս. Հմայակյան, Գ. Սիմոնյան, Դիտարկումներ Կերենի դամբարանադաշտի վերաբերյալ, աղ. 1/14:

4. Հնագիտական նյութի մեկնաբանության գործում անգնահատելի օժանդակություն են ցուցաբերել Գ. Սիմոնյանը, Գ. Ավետիսյանը, Ս. Եսայանը, Ժ. Խաչատրյանը, Ս. Հմայակյանը, Ֆ. Մուրադյանը, որոնց հեղինակները հայտնում են խորին շնորհակալություն:

5. S. A. Esayan. Gurtelbleche der alteren Eisenzeit in Armenies. Beitrage zur Allgemeinen und Vergleichenden Archaologie. Bd. 4. Munchen, 1985 s. 111-113, ab. 12 (38-40); С. Г. Дведжян. Лори-Берд I. Ереван., 1981, с. 51 таб. 18; Ս. Ա. Եսայան, Կատալոգ Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի, պրակ. II, Երևան., 1967, էջ 13-14, 46, աղ. XVI

(1):

6. **Օ. Մնկկյան.** Syunik during the Bronze and Iron Ages. Barrington, 2002, p. 50-51, pl. XXVII-XXVIII.

7. **Н. М. Погребова.** ф. железном веке. Москва., 1987, с. 88-89

8. **Н. М. Погребов**И Указ. соч., с. 96-99; Օ. Մնկկյան. Օր. cit., pl. LXXXIII (15), LXXXVI (38).

9. **Б. Б. Пиотровски**К Кармир-блур II. Ереван, 1952, с. 19, рис. 4

10. նույն տեղում, էջ 10, 04. 3

11. **Б. Н. Аракелян.** Очерки по истории искусства древней Армении. Ереван., 1976 с. 14-16

12. **Е. О. Negahban.** Notes on some objects from Marlik. Journal of Near Eastern Studies (այսուհետև՝ JNES), 1965, N 4, p. 317.

13. **Օ. Մնկկյան.** Օր. cit., p. 86, pl. LXXIX (15), LXXX (1-5) tab. LIX (8), LXX (9), LXXIV (9), LXXV (14), LXXVI (3,6), XC (15, 17, 18); **Ի.** Чарвацкытжын, Հայաստանի նյութական մշակույթը մ.թ.ա. VI-IV դդ., Երևան, 2003, էջ 34-35, աղ. 14 7, 18, 2); Древнейшие государства Кавказа и Средней Азии. сер. Археология СССР, Москва, 1985, таб. XIX 3; **Дж. А. Халилов, Г. М. Аслапов.** Археологические находки в Сырт-Чичи. Материальная Культура Азербайджана (далее-МКА), т. VII, Баку, 1973,с. 177, таб 1 (6); **С. М. Казиев.** Археологические раскопки в Мингечауре. МКА т. 1 Баку 1949, էջ 13-14 նկ.3; **Г. А. Тирацян.** Культура древней Армении. Ереван, 1988, с.

**Artak Gnuni, Gagik Khachatryan**

**EXCAVATIONS OF KEREN BURIAL GROUND**

**(Summary)**

The village of Keren in Qashatagh region of NKR is 8 km south-east from the city of Kapan on the right side of the highway Kapan -- Kovsakan, on the right bank of the river Vokhchi. Most possibly the present village was situated in the same place as the village of Keren of Kovsakan Gavar in Syunik ashkhar mentioned

36-40.

14. տես օր՝ **Г. Аветисян.** Бизайнская керамика из памятников Араратской долины. Ереван, 1992, p. 44

15. **Ա. Փիլիպոսյան,** Հայկական լեռնաշխարհը Մերձավոր Արևելքի պատմամշակութային փոխառնչությունների ոլորտում (մ.թ.ա. III-I հազարամյակներ), Պատմ. գիտ. դոկտ. ատենախոսության սեղմագիր, Երևան, 2004, էջ 19:

16. **Օ. Մնկկյան.** Օր. cit. 2002, p. 90, pl LXXXVI (28); **R. Girshman.** Iran. L., 1951, pl 74; **М. Погребова.** Указ. соч., с. 94-95; **E. Nergahan.** Օր. cit., p. 17

17. **R. Dayson.** Problems of protohistoric Iran as seen from Hasanlu. JNES, vol. XXIV, n. 3, p. 206, pl XXXVIII; **L. Vanden Berge.** Archeologie de l' Iran Ancien. Leiden 1966 p. 90, pl. 115 a; **R. Girshman.** Օր. cit., pl 2 (c).

18. **Հ. Միմոնյան, Ա. Գնունի,** Արցախի ազատագրված տարածքների հնագույն, նախաքրիստոնեական և միջնադարյան բնակավայրերի ուսումնասիրությունը 1993-1995 թթ.: ՀՀ-ում 1993-1995 թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված գիտաժողով, զեկուցումների թեզեր, Երևան., 1996, էջ 70, **Ա. Սովսիսյան,** Բերձորյան քարանձավի արձանագրությունները, **Ս. Շահինյան,** Հայաստանի քարանձավները գրքում, Երևան, 2005, էջ 108-112

19. **И. Карапетян.** Указ соч, с. 38; **Օ. Մնկկյան.** Օր. cit., pl LXXIX-LXXXVII; **Г. Аслапов, Р. Ваидов, Г. Ионэ.** Древний Мингечаур. Баку, 1959, таб. .XLI/2; **R. Dayson.** Օր. cit., p. 206, pl XXXVIII.

in the works of Stepanos Orbelian. The geological composition of the area is presented by the accumulation of limestone under a layer of alumina. In not very deep gorges one can trace river accumulations, which are rather young and overlap lime accumulations. The monument is situated 0.5 km south-east from the village. The burial ground extends for 800 m along the hydrant, occupying the upper part of a low hill north from the monument. There were also traces of other burials some 100-150 m west from the mentioned hydrant on the parallel mountain range. On the southern side ruins of settlements have preserved. A third burial ground (now entirely ruined) east from the hydrant was found. The unearthed material presented ceramics of the VI-V cc. BC.

Another burial ground is situated 1 km east from the village on the left bank of the river Vokhchi. Traces of constructions as well as partly ruined stone cases have been detected. On the request of Qashatagh authorities, a scientific research expedition of the Historical-Cultural Heritage Centre carried out excavations in the first burial ground. During the field work 85 burials were detected most of which were ruined. The main part of the findings dates by the VII-V cc. BC and has a lot of analogues both in Armenian Highlands and South Caucasus on one hand and Iran on the other. On the found items we can observe some impact of Urartian traditions in manufacturing pottery.

**Analyzing the found material we come to the following conclusions:**

1. The impact of the Urartian traditions in manufacturing pottery together with other artifacts (e. g. Urartian ceramics from Fizuli) as well as the Urartian inscription from Berdzor confirms the penetration of the culture of Van kingdom into this region.
2. Numerous parallels observed between the ceramics found here and the Iranian material make us believe, that in southern Syunik in the VII-V cc. BC local types of cultures formed, which developing on the home basis in Armenia, yet had a great influence on the cultures of Iran.

**ФЕЛИКС ТЕР-МАТИРОСЯН**  
кандидат исторических наук

## РАСКОПКИ КРЕПОСТИ ЭРЕБУНИ

Памятник Эребуни расположен на большом холме Арин-Берд у окраины города Еревана.

Первые археологические раскопки велись с 1951 г. по 1975 г. под руководством архитектора К. Л. Оганесяна. Исследование урартских клинописней послужило основой для представления данного памятника, как единого комплекса строений цитадели урартского города.<sup>1</sup> Ахеменидская ападана, милетские монеты и монета римского императора Августа явились основанием для заключения, что город существовал и в более позднее время. Было выдвинуто предположение, что Эребуни являлся центром 18 сатрапии.<sup>2</sup> В то же время вызывает сомнение несоответствие малых размеров памятника, всего более двух гектаров, по сравнению с упоминанием в письменных источниках о размещении здесь огромного гарнизона и наличии многочисленных хозяйственных пристройках, пока не обнаруженных раскопками.

Предполагалось, что вокруг крепости располагался урартский город, где размещалось население.<sup>3</sup>

В 1998 г. Эребунийская экспедиция Института археологии и этнографии НАН РА (рук. Ф. И. Тер-Матиросов), возобновила археологические исследования. Раскопки проводились студентами Ереванского Государственного Университета и Художественной Академии Еревана, организацией «Молодые паломники». Активное участие в работах принимали сотрудники музея „Эребуни,, (план раскопок).

Для уточнения предположения о территории города для раскопок был выбран малый холм. Ранее сотрудниками музея им. Пушкина здесь были проведены раскопки, однако результаты работ не опубликованы. Поэтому существовала острая необходимость определить характер и датировку комплексов южного малого холма Эребуни. Расположение малого холма прямо напра-

тив входа в крепость указывает на его стратегическую значимость при обороне крепости. Поэтому естественно было предполагать, что при постройке кварталов города в первую очередь должен был быть заселен малый холм. В его центральной части был заложен раскоп в 100 кв. м., непосредственно примыкавший к ранее раскопанным комплексам.

Вся территория раскопа и соседних с ним частей холма покрыта сверху слоем из мелких комков пережженной глины красного цвета. Раскопками открыта часть здания с 4-мя внутренними помещениями. Стены фундамента имеют двупанцирную кладку из груботесаных прямоугольных каменных блоков среднего и мелкого размеров и забутовку из мелких камней и глиняного раствора. Верхняя поверхность фундамента имеет выровненную плоскую поверхность, подготовленную для возведения стены из сырцового кирпича. Толщина внешних стен 140 см, внутренних стен — 120 см. Дверной проем имел ширину в 140 см и каменную вымостку пола. В комнате хозяйственного назначения открыты каменная вымостка пола размером 200 x 150 см и врытый в землю очаг П-образной формы. Обнаружены 2 караса, врытых в землю на 50 см. Один карас имеет диаметр в 90 см., другой в 65 см. Археологический материал представлен в основном мелкими черепками керамических сосудов. Преобладающее число фрагментов относится к сосудам черно-серого черепка с рельефно вдавленным орнаментом в виде волнообразных линий и поясков с семечкообразным орнаментом, характерным для керамики эпохи раннего железа. Наряду с ними найдены фрагменты урартских сосудов с полированным красным ангобом и сосуды коричневого черепка. Обнаружены фрагменты сосудов с метками мастеров. Найден маленький фрагмент бронзового пояса украшенного выступающими

шишечками. Исследования этих материалов позволяют уверенно отнести их к урартскому периоду.

На холме нет оборонительных сооружений, и он являлся жилым кварталом города. Наличие только одного культурного слоя небольшой толщины свидетельствует о кратковременном существовании жилого квартала из-за пожара, следы от которого видны на всей поверхности холма. Такие же следы имеются и на большом эребунийском холме. Здесь, в пережженном слое были найдены наконечники стрел скифского типа, что позволило датировать гибель крепости концом VII или началом VI вв. до н.э. По-видимому, одновременно с концом урартского периода прекратилась жизнь в крепости и в жилом квартале на холме.

Задачей сезона 1999 г. было исследование северной части ападаны с целью уточнения датировок. Для исследования фундамента ападаны между 12-ти колонным портиком, в коридоре севернее ападаны была заложена траншея шириной в 1,5 метра и длиной в 12 метров. При проведении траншеи под существующим сегодня уровнем земли были обнаружены еще три пола древних строений. Первый пол лежит непосредственно на уровне бетонной пешеходной дорожки. Пол представляет собой слой глины толщиной в 2-4 см, красного цвета и значительной прочности. Красный цвет глины и прочность пола позволяют предполагать, что он подвергся пожару. При вскрытии пола и непосредственно под ним были найдены три грубоотесанные базы из базальта, в форме усеченного конуса. Эти базы, несомненно, были от стоящих здесь в древности деревянных колонн. Верхний диаметр баз колон 55-58 см, нижний диаметр — 70 см, высота — около 50 см. Расстояние между базами 350 см. Они по своей форме отличаются от урартских баз. В 30

см от баз, под стенами портика, была раскрыта вымостка из больших каменных плит. Длина вымостки 10,5 м. Вымостка уходит под стены двенадцатиколонного портика. Это остановило дальнейшее раскрытие вымостки. Нижняя часть баз колонн укреплена в глинобитном полу находящимся на 40 см глубже вымостки из плит. Пол покрыт сверху мощным слоем пепла и также имеет красноватый цвет. Это свидетельствует о том, что данный период жизни был прерван пожаром. Под полом вымостки обнаружена часть стены из гладкотесанного каменного блока красного цвета еще одного строения. Проследить данное сооружение не представлялось возможным из-за малых размеров шурфа. На глубине 120 см был раскрыт третий глинобитный пол, который имел несколько слоев покрытия глины. Базы от строения с вымосткой по форме аналогичны туфовым базам ахеменидского времени из Армавира. При этом несомненно, что вымостка с колоннами древнее двенадцатиколонного портика. Проверочный раскоп в восточной части у наружной стены ападаны показал наличие культурного слоя уходящего от основания ападаны на глубину 120 см. Интересно также наличие баз колонн. Таким образом, возникла необходимость уточнения времени постройки двенадцатиколонного портика, который ранее датировался урартским периодом. В 2001 году были сделаны шурфы с противоположной южной стороны ападаны, у стен башневидного храма Халди. Один шурф располагался с восточной стороны, под строительной надписью урартского царя Аргишти I. Вторым шурфом был поставлен у юго-западного ризалита наружной стены храма. Выявилось, что в период раскопок 1950-1970 гг. исследователи не довели раскоп до основания стен храма, а углубились всего на 80-100 см. Проведенная шурфовка показала, что основание храма находится на 170 см

ниже строительной надписи. На этой глубине, под надписью и на южной стороне храма, на глубине 180 см от верхнего ряда камней, была открыта вымостка пола из каменных плит. Они неправильной формы, сделаны из туфа и имеют выглаженную верхнюю поверхность. Однако, судя по характеру настила, не исключено, что они лежат на насыпной земле и под ними есть и более древние конструкции. Выяснение этого вопроса будет проведено при дальнейших раскопках. В тоже время сейчас несомненно, что к урартскому храму Халди надо отнести только башнеобразное сооружение с ризалитами по углам и вмурованной в стену строительной надписью царя Аргишти I. Примыкающие к храму с севера постройки следует датировать более поздним периодом. Поздней пристройкой также надо считать центральный пилон из сырцового кирпича возведенный в центре храма. Керамический материал в шурфах не найден. (Рис.1)

Раскрытие в 1999-2004 гг. на северном склоне холма Эребуни всей толщины культурных пластов позволяет проследить очередность жизни на памятнике. Раскоп находится на расстоянии 40 м от реставрированных на вершине холма оборонительных каменных стен и на 20 м ниже их. Общая толщина культурного слоя приблизительно 4 метра. Длина раскопа поперек склона 10 м, и вдоль новооткрытой стены по склону 18 м.


В нижней части раскопа открыт материковый слой холма, представляющий собой глиняный слой красноватого цвета. Хотя наиболее древний период жизни на холме относится к эпохе палеолита, культурный слой этого времени пока не открыт. Обнаруженный на материковой почве самый нижний культурный слой равен 20-30 см. Слой характеризуется наличием большого числа остатков костей и фрагментов керамики черного черепка, с врезным или вдавленным ор-

наментом в виде поясков, волнистых линий и цепи черточек, характерной для эпохи раннего железа. Хорошо датируемые фрагменты керамики эпохи раннего железа вышли из слоя насыпной земли в 2003 г. Наиболее вероятно, что нижний слой образовался в результате сброса мусора в период бытования на вершине холма поселения эпохи железа.

Культурный слой урартского периода имеет наибольшую толщину в 220 см. Слой имеет несколько прослоек. В нижней части раскопа, перекрывая первый слой с древним насыпным мусором, идет слой из глины и мелкой гальки. Слой

имеет в верхней части толщину в 30 см. В нижней части раскопа слой сужается и прерывается. В верхней части раскопа под слоем глины и гальки открыт хорошо утрамбованный пол из глины, толщиной в 25 см. В основании пола заложены небольшие куски битого камня в смеси с глиной. Слой гальки и глины покрывает его на высоте от 2 до 15 см. Между слоем глины с галькой и полом найдена керамика, явно датируемая урартским временем.

Поверх них идет слой пепла и мелкого угля, насыщенного остатками разнообразного археологического материала, а также обломков строе-



ний, включая куски от сырцового кирпича и фрагментов обмазки стен. Этот слой хорошо датируется урартской керамикой красного полированного ангоба с клеймами.

Такое расположение слоев позволяет говорить о двух этапах жизни в урартский период. **Первый урартский этап** связан с глинобитным полом. Пол был основой для жилых и хозяйственных комплексов, построенных за пределами крепостных строений. Здесь на начальном этапе существования крепости Эребуни на склонах были созданы террасы шириной 25-30 метров с высотой перепада до 6 м.

В открытом раскопе к слою с полом относится обнаруженная здесь мастерская художника. Она размерами более чем 4 м в ширину и 10 м в длину. Однако, она полностью не раскопана и размеры могут оказаться еще большими. Там найдены: куски комков краски кристаллического кобальта, красной и желтой охры и куски мела, насыпь мелкого промытого песка-леса, комки чистой глины, громадное количество костей животных, сильно вываренных для получения клея. Здесь же были найдены фрагменты покрытия из глины со следами краски. Интересны фрагменты керамики красного ангоба с процарапанным рисунком. Уникален рисунок головы быка, переданный схематично, предельно лаконичной линией при наличии экспрессии в развороте головы в фас. Выделяется фрагмент керамики красного ангоба с сохранившейся частью выгравированного изображения рогов оленя. Найден также фрагмент дна сосуда с процарапанным рисунком пятиконечной звезды, размещенной между двух трехступенчатых выступов. Данный рисунок свидетельствует об обращении к божеству и, возможно, был принесен в дар богу. Здесь же был найден фрагмент в виде рога от небольшой статуэтки быка из бронзы. Судя по материалам, воз-

можно, в мастерской работали мастера различных профессий.

Особый интерес представляет находка здесь скола камня с иероглифической пометкой - 2 *те-руси*. Иероглифы сделаны аккуратно на хорошо выровненной поверхности камня мягкой породы, вероятно, фельзита. Следов других знаков перед иероглифом не имеется, кроме сбитой ямочки. Хотя она отличается по глубине вырезки от иероглифа, но не исключено, что означала 1 *акарки*. Специальное обозначение на камне могло быть лишь в случае, когда содержащийся в специальном помещении материал имел большую ценность. Возможно, что здесь находилось хранилище красок. В материалах этого слоя есть и другая уникальная находка - глиняная булла с антропоморфным изображением бога в сидящей позе, с длинной бородой и зубчатой короной. Туловище развернуто в правую сторону. Перед ним - столик со священным хлебом. Хотя булла датируется урартским периодом, но не является оттиском урартской печати. Скорее всего, она является оттиском печати какого-то соседнего с Урарту государства и свидетельствует о внешних контактах страны.

Обнаружение толстого слоя угля и пепла на сравнительно широком участке - 10 метров, говорит о причине пожара и разрушений, которые вероятно были до сооружения второй крепостной стены на склоне холма, то есть, после основания крепости царем Аргишти I. Представляет интерес, найденная в 2001 г. в этом слое железная стрела сравнительно большого размера, с вытянутой лепестковой, овальной в сечении формой, и черешком для крепления.

Относительная датировка конца первого этапа жизни памятника, наглядно свидетельствует о борьбе племен с урартским государством. Найденный материал позволяет также заострить

внимание на бытующем сейчас принципе деления керамики по ангобу: красный ангоб - урартская, керамика черного черепка - местная. При раскопках обнаружены многочисленные фрагменты керамических сосудов красного ангоба, в их числе образцы сосудов вишневого цвета с прекрасно полированной поверхностью, и фрагменты сосудов черного черепка хорошего качества. Найдены образцы со штампами мастерских, а также большое количество образцов с клеймом, на керамике красного ангоба, и черного черепка. Наиболее интересен рисунок клейма на керамике черного черепка - крылатого коня или возможно крылатого грифона с головкой лани без рогов. Найден фрагмент сосуда новой для урартской керамики формы из красного ангоба, имеющей аналоги среди сосудов эпохи раннего железа. Важно также отметить общность форм сосудов средних размеров (кувшинов и больших мисок) из красного ангоба и черного черепка. Имеется значительное количество фрагментов черного черепка больших сосудов, и отсутствуют фрагменты сосудов малых размеров. К керамике урартского периода, относится керамика, имеющая орнамент, выполненный в традициях эпохи железа.

Из бронзовых вещей интересны находки трех фибул со спинкой дугообразной формы, пластина в виде зубчатой шайбы, вероятно головки от иглы - пронизки, а также браслет.

**Второй этап** урартского времени соответствует периоду сооружения второй крепостной стены на склоне холма. На существующих планах крепости этой стены нет. Она расчищена на длину в 15 м. Раскрыт угол стены, позволивший определить технику строительства. Ширина стены 2,4 метра. Выложена из огромных груботесаных туфовых блоков, 1 м в длину и 0,8 м в высоту. Внутренняя часть стены, между двумя панцирями из каменных блоков, выложена из крупных бу-

лыжников, мелкой гальки и глиняного раствора. До возведения стены был настлан нивелирующий слой глины. Для укрепления склона, перед нижними камнями был настлан слой из глины и мелкой гальки. Причем они не на одной горизонтальной площадке, а террасообразно врыты в землю, по принципу построения фортификационных стен на скальном грунте. Для большего укрепления, на высоте 1,5 метра от нижнего ряда камней фундамента стены, на ширину в 1,5 м от края, был создан утрамбованный настил из глины с крупным песком. Стена имеет контрофорсы, которые выступают от стены на 60 см. Расстояние между ними 520 см. Угловой контрофорс имеет длину в 305 см, а на среднем отрезке стены - 205 см. Несомненно, что открытая каменная часть была основанием для сырцовой стены, которая, судя по ширине фундамента, имела высоту около 7 м. Стена не имеет смежного угла. Поэтому, наиболее вероятно, что это начало защитного прохода в виде коридора между двумя стенами. То есть этот отрезок стены защищал вход в крепость с северной стороны. Наиболее вероятно, что здесь спускалась дорога к речке, некогда протекавшей у подножья холма.

Интересна найденная впервые находка фрагмента расписной керамики от лепного сосуда верхнего урартского слоя. Роспись нанесена красной краской по коричневой поверхности черепка. Аналогичная керамика известна и в Каппадокии. Большой интерес представляет керамика не типичная для урартского периода, и условно названная "импортной". Она имеет светлозеленоватый черепок с наружной и внутренней сторон. Такой черепок характерен для керамики новоассирийского периода северных регионов Месопотамии. По свидетельству археолога Стефана Кроля, аналогичная керамика встречается и на урартских памятниках Ирана. Новинкой является

керамика тонкого черепка без лощения и с лощением, светлокоричневого цвета, а также керамика беловатого черепка с темной подложкой, что свидетельствует о контактах Урарту с Малой Азией. Однако, по нашим данным, пока в отчетах о раскопках урартских памятников нет сведений об образцах керамики не урартского производства.

Культурный слой ахеменидского периода имеет наибольшую толщину в 100-130 см. На вертикальной поверхности среза, слой выделяется двумя пластами коричневой глины с внутренней, более светлой прослойкой. На боковых плоскостях разреза раскопанной земли толщина слоя резко уменьшается в нижней точке до 15 см. В верхней части раскопа к этому слою относится также стена, открытая в 2003 г. на отдалении 4 метров от новооткрытой урартской оборонительной стены. Основание стены на 150 см возвышается над каменным верхом урартской фортификационной стены. Высота стены 80 см, длина открытой части 450 см. Стена выложена из колотых, удлиненных по форме камней средней величины. Верхний ряд стены выравнен. Это указывает на то, что она служила основанием для сырцовых стен.

Археологический материал ахеменидского периода, хотя значительно уступает по количеству и разнообразию урартскому, тем не менее, представляет значительный интерес. Культурный пласт насыщен фрагментами керамики. Для большинства керамики характерно сохранение урартских форм. Но поверхность сосудов при этом покрывается не ангобом, а красной краской. Характерно появление более темноокрашенных поясков на венчиках сосудов. Наряду с ними появляются новые формы. В основном они представлены фиалами коричневого черепка, керамикой неустойчивого коричнево-красного цвета с интенсивным лощением, а также керамикой чер-

ного черепка, с врезанным орнаментом, традиционным для эпохи железа.

Особый интерес представляет находка фрагмента буллы с двумя вдавлениями овальной формы и частично сохранившимися изображениями. На одном из них, над хвостом скорпиона, изображены ноги человека в длинном одеянии. На другом - ноги человека, сделавшего шаг вперед. Из металлических предметов интересно свинцовое ядро для пращи весом в 10 г. Оно найдено вместе с серьгами из бронзы. К этому времени относятся и две стрелы - образцы бронзовых двухперых стрел с центральной жилой и шипом на короткой втулке.

Привлекает внимание находка фрагмента мраморной статуи. Это полукруглый выступ с вдавлениями, вероятно, фрагмент головы.

Таким образом, можно заключить, что крепость Эребуни имела гораздо большие размеры в урартский период. В ахеменидский период новые сооружения представлены не двумя или тремя постройками, а зданиями, возведенными по всей территории памятника с использованием более древних урартских сооружений. Новое археологическое исследование показывает, что исследование урартского и ахеменидского периодов не завершено и требуются дальнейшие работы для восстановления полной картины жизни памятника в прошлом.

1. К. Л. Оганесян, Арин-Берд I, Ереван, 1962; С. И. Ходжаши

Н. С. Трухтанова, К. Л. Оганесян, Эребуни, Москва., 1979; К. Л. Оганесян, Крепость Эребуни, Ереван 1980.; У. Իւրաւելլաճ, Էրեբունի քերդ-քաղաքի լիւրարձը, Երևան. 1971:

2 Г. А. Тирация, Культура Древней Армении, Ереван, 1988, стр. 69.

Felix Ter-Martirosyan

## EXCAVATIONS IN EREBUNI

## (Summary)


The excavations in Erebuni Fortress have restarted since 1998. On the small hill opposite the entrance of the fortress were discovered residential and economic (household) complexes, which were constructed in the middle of the VII century BC and perished together with the fortress. There are no fortification walls. In the central part of the fort one can trace the succession of buildings up the area around the temple to god Khaldi. Only the tower-like building with the inscriptions about its construction by king Arghishti I belongs to the Urartian period. In the VI century BC north from the temple there was a construction with a platform paved with thin stone slabs and cone shaped bases along it. Later, most probably in the V century BC, it was re-covered with a portico of 12 columns, adjoined to the temple to god Khaldi. In the IV century BC east from the portico new, columned constructions, which changed the former into a 30-columned apadan, were built. On the Northern side of the hill, cultural layers have been discovered. The flint plate, found here, proves that the hill was occupied back in the Paleolithic period. A pre-Urartian layer of Early Iron Age was discovered. An economic complex of Urartian period presenting an artist's studio was also discovered. This layer lies under ash and ruins. Later a new Urartian defense wall was built here, which was destroyed, too. During Achemedian period new buildings were erected here. In all cultural layers there has been unearthed interesting archaeological material, among which there are bullas, a fragment of rock with hieroglyphs, Capadaukian ceramics and so on.

ԳԱՅԱՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ


Պարմական գիպությունների թեկնածու

ՄՈՒՐԱՔԼՈՒՐ ՆՆԱՎԱՅՐԸ

(ԱՆՏԻԿ ՇԵՐՏԻ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ԸՍՏ 1975, 1977 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ)



II



Մոխրաբլուր հնավայրը (նախկին՝ Քյուլ-թափա) գտնվում է Արմավիրի մարզում, Էջմիածին քաղաքից 4 կմ հարավ՝ Վերին Խաթունարխ տանող ճանապարհից արևմուտք, Քասախ գետի հին հունի ձախ ափին: Մոխրաբլուրը մոտ 10 մ բարձրության,

ավելի քան 3,5 հա տարածքով, ձվածիր, հարթ գագաթով արհեստական բլուր է:

Այն մասնակի հետազոտել են: 1927թ. Թ. Թորամանյանը, 1935 թ. Ե. Բայբուրջյանը 1945 թ. Ս. Սարգսյանը: Հնավայրի կանոնավոր հնագիտական ուսումնասիրությունը, 1970 թ., սկսել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և աղբյուրագիտության ամբիոնի արշավախումբը՝ Բ. Բ. Պիոտրովսկու ղեկավարությամբ: 1975 թ. աշխատանքները շարունակել է ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների պրոբլեմային լաբորատորիայի արշավախումբը Գրիգոր Արեշյանի ղեկավարությամբ: (Դ. Ե. Արեշյան, 1972, ռ. 253-258; Գ. Արեշյան, Հ. Սիմոնյան, Գ. Սարգսյան, Գ. Քոչարյան, Հ. Օհանյան, 1979, էջ 205-211): Պեղումները, որոշ ընդմիջումներով, տևել են շուրջ մեկ տասնամյակ:

Ուսումնասիրությունների թնթաքցում բացահայտվել են ավելի քան 9 մ ընդհանուր հզորությամբ հետևյալ մշակութային նստվածքները. - անտիկ դարաշրջանի՝ I և II շինարարական հորի-

զոններ (նույն տեղում՝ միջնադարյան թաղումներ), - հնագիտական գտածոներ չպարունակող՝ "ստերիլ" շերտ, - վաղ երկաթի դարաշրջանի ենթաշերտ, - վաղ բրոնզի դարաշրջանի՝ III - X I շինարարական հորիզոններ (Գ. Ե. Արեշյան, 1974, էջ 143-153):

Բլրի անտիկ շրջանի մշակութային նստվածքները՝ 1975, 1977 թ թ. պեղվել են 336 ք. մ տարածքով, կենտրոնական և արևմտյան տեղամասերում: Այստեղ բացահայտված I և II շինարարական հորիզոններն ունեն 1,80 մ ընդհանուր հզորություն:

Մակերեսի 0,20-0,30 մ հզորության I շինարարական հորիզոնում բացվել են.

- մոխրաշերտեր, կավակերտ հատակների հատվածներ, ջարդված աղյուսներ, քարի կույտեր, աղբահորեր՝ խեցանոթների բեկորների և ընտանի կենդանիների ոսկորների պարունակությամբ,
- միջնադարում կատարված, հիմնահողային և անմշակ քարերով եզերված թաղումներ (սրանցից մեկում, մեջքի վրա պառկած հանգուցյալի կրծքավանդակին՝ ծալված ձեռքերի մոտ կա երկաթե խաչ):

Հաջորդ՝ 1,5 մ հզորության II շինարարական հորիզոնի մոխրառատ միջավայրում բացվել են.


- երկշար քարե որմնախարսխի վրա՝ սվաղի հետքերով հում աղյուսե պատերի մնացորդներ (պահպանված չափերը՝ 0,45-0,60 x 0,60-0,70 մ), որոնք ուղղանկյուն հատակագծով շինությունների հատվածներ են, դրանց տոփանված կավե հատակների մեջ՝ կիսով չափ թաղված կարասներ և փորված ու խնամքով սվաղված տնտեսական հորեր՝ հացահատկի մնացորդներով (հորերի տր. 1,20-1,70 մ, խոր. 0,70-1,10 մ, սրանցից մեկի՝ տր. 1,25 մ, երկու կողմից կցված էին մեկական ավելի փոքր հոր՝ տր. 0,70 մ), (Սկար 1),

- կավակերտ հատակների՝ 0,50 մ տարբերությամբ երկու մակարդակ, որոնցից վերինի մեջ փորված հորը հատում է III շինարարական հորիզոնը,
- հում աղյուսե պատերի փլվածքներ, սվաղի բեկոր-

ներ, քարի կույտեր, փլված տանիքի այրված գերանների դաջվածքներ, ջարդոտված խեցանոթներ, կենցաղային քարե և մետաղե առարկաներ, ինչպես նաև նետասլաքներ՝ խրված հում աղյուսե պատի և փլվածքի մեջ:

Առաջին շինարարական հորիզոնից իջեցված - փորված հորերն ու միջնադարյան թաղումները վնասել էին երկրորդ շինարարական հորիզոնի շինությունները, խառնել երկու հորիզոնների նյութերը:

Մոխրաբլրի անտիկ շրջանի հնագիտական գտածոների\* գերակշիռ մասը կազմում է խեցեգործական արտադրանքը (Աղ. 1, Աղ. 2, Աղ. 3, 1-7, 10): Խեցանոթների տեսականին, ըստ հիմնական ձևերի (կարաս, կճուճ, ձճուճ, սափոր, տափաշիշ, տաշտ, ծորակավոր քրեղան, թաս-քրեղան, կիսագնդաձև գավաթ, ափսե, սկուտեղ, ճրագ) և հարդարանքի (միագույն, երկգույն, զուգակցված՝ փորագիր կամ ուռուցիկ գոտիներ, զունագարդ) աղբյուրում է անտիկ շրջանի հին հայկական խեցեղենին (հմտ. Արմավիր, Արտաշատ, Գառնի, Դվին) (Դ. Ա. Тирацян, 1988, ռ. 118, рис. 25, 26): Հավաքածուի զգալի մասն ամփոփվում է Ք. ա. II - Ք. հ. I դդ. ժամանակահատվածում: Խեցանոթների մի խումբը (զմրածև տափաշիշ, սեղմած գնդի ձև ունեցող երկկանթ սափոր, ձևավոր պսակով սաղր թաս-սկուտեղ, օղակավոր ոտք-նստուկով ափսեներ, թասեր, սկուտեղներ), աղբյուրվելով Արտաշատի II շինարարական շրջանի շերտում և դամբարանադաշտում հայտնաբերված՝ I - II դ դ. բվագրվող նման անոթներին (ժ. Դ. Խաչատրյան, 1981, էջ 110-115, 121-124, տախտ. XIII, 2,3,4, XIV, 1-7, XV, 1 և այլն), ակնհայտորեն դուրս է Ք.ա. I - Ք. հ. I դդ. ժամանակից (Աղ. 1, 9,10, Աղ. 2, 2,8,9): Խեցեգործական արհեստանոցի հետքեր կամ գործիքներ դեռևս չեն հայտնաբերվել: Խեցեղեն սպասքի որոշակի տեսականին (հատկապես բազմաքանակ խոհանոցային անոթները), հավանաբար, պատրաստվել է տնային պայմաններում, և թրծվել օդի հոսքը կարգավորող ակ ունեցող թոնիրներում



ԱՂ. 1

(տես՝ ալի խողովակ՝ Աղ. 3, 10): Մինչդեռ կարասներն իրենց քանակական բացարձակ առավելությամբ (գտնվել են հարյուրավոր բեկորներ), թերևս, պատրաստվել են զանգվածային արտադրություն ապահովող արհեստանոցներում: Այստեղ Արմավիրի հելլենիստական ժամանակի խեցեգործական արտադրանքին բնորոշ (ձև, զարդապատկեր, կարմիր-սև գույների համադրություն) սեղանի սպասքի ընտիր նմուշների՝ գունազարդ թասի ու կիսագն-


դաձն զավաթի առկայությունը (Աղ. 2, 3, 6) (Г. А. Тирациян, 1988, табл. XXXII, XXXVI, 1) վկայում է, որ Մոխրաբլուր բնակավայրը Արմավիր – Վարդգեսավան խմբի հուշարձանների առնչությունների ոլորտում է:

Երկաթամշակման խոտանն ու երկաթի խարամը, ինչպես նաև առօրյա գործածության կորաշեղք դանակները, աշխատանքային գործիքները, որոշ զինատեսակները (Աղ. 3, 11-13) փաստում են դարբնոց-արհեստանոցի գոյությունը: Այստեղ առկա են նաև ժամանակին հատկանշական քարակոփ սարք-հարմարանքներ՝ լծակավոր աղորիքներ, հավանգներ (Աղ. 3, 15, 16), ինչպես նաև թել մանելու թեշիկի կավե գլխիկներ, հանդերձանքի կոճակ-ճարմանդներ, ոսկրե հերակալ (Աղ. 3, 5-8):

Վերը ներկայացվածին ժամանակագրորեն համահունչ է նաև "փյունիկյան" ապակուց պատրաստված սրվակը (Աղ. 3, 9): Սա համալրում է Հայաստան ներմուծված, սիրիա-փյունիկյան արհեստանոցներում արտադրված, ուշ հելլենիստական շրջանի ալաբաստրոնների խումբը (հմմտ. Սիսիանի, Մեդրաձորի, Արտաշատի ալաբաստրոնները, ինչպես նաև պատմական Ուտիքի տարածքում՝ ներկայիս Մինգեչաուրում, հայտնաբերված՝ Բ. ա. I - Բ. հ. I դդ.

թվագրվող սրվակը) (Ж. Д. Хачатрян, 1975, с. 248-251; А. Б. Нуриев, 1976, табл. I, 2): Անուշահոտ յուղ պարունակող ալաբաստրոնի հետ, հավանաբար, բերվել է նաև արդուզարդի ձողիկ, որից պահպանվել է միայն սաղափե, ձևավոր բռնակը\*\* (Աղ. 3, 14):

Մոխրաբլուրի անտիկ շրջանի հնագիտական գտածոներն ըստ գործառույթի դասակարգվում են. -սեղանի և խոհանոցային առօրյա կենցաղային



ԱՂ. 2

գործածության սպասք (ափսե, զավաթ, սկուտեղ, քաս, քրեղան, սափոր), - գյուղատնտեսական մթերքներ վերամշակող տնտեսական խեցանոթներ (ծծում, տաշտ, ծորակավոր քրեղան), ինչպես նաև քարե սարք-հարմարանքներ(աղորիք, հավանգ)

- մթերք պահելու, ամբարելու տարաներ (կարաս, կճուճ)  
- կերակուր եփելու և կացարանը տաքացնելու թոնիրներ, շարժական կրակարաններ:

Այսպիսով, II շինարարական հորիզոնի պեղված միջավայրը (քարե որմնախարսխի, սվաղված, հում աղյուսե պատերի, կավակերտ հատակների, գերանածածկ տանիքների մնացորդների) և հայտնաբերված հնագիտական գտածոների բնույթը վկայում են, որ բլրի զագաթը՝ Բ.ա. II - Բ.հ. I դդ. կառուցապատված է եղել բնակելի տներով, որոնց բաղկացուցիչ մասը կազմել են ուղղանկյուն հատակագծով տնտեսական հարկաբաժիններն իրենց հորերով և կարասներով: Բլրի արևելյան լանջին հայտնաբերված, ժամանակաշրջանին բնորոշ սպիտակ ավազաքարից սյան տորածև խարիսխը թույլ է տալիս ենթադրել նաև այլ բնույթի շինությունների գոյությունը (Գ. Արեշյան, Գ. Սիմոնյան..., 1979, էջ 207, նկ. 2):

Հայտնի է, որ Երվանդունիների ժամանակ հիմնադրված Վարդգեսավանը, ընդարձակվել է Արտաշիսյանների գահակալության շրջանում "որտեղ և Արշակունի Տիգրան Միջինը (Տիգրան Բ Մեծը - Գ. Բ.) նստեցրեց իրեն գերիների կեսը, որ և վաճառաշատ քաղաքագյուղ դարձավ" (Մովսես Խորենացի, 1990, II, ԿԵ): Վարդգեսավանի ընդարձակմանն

ու համաբնակեցմանը զուգընթաց, բնականաբար, օրվա հրամայական էր դարձել շրջակա հողատարածքի առավել արդյունավետ օգտագործումը: Իրավամբ, Վարդգեսավանը, նաև Վաղարշապատը օղակող անտիկ շրջանի բնակավայրերի առկայությունը (Г. А. Тирациян, 1977, с. 91) հիմք է տալիս են-

քաղերելու, որ քաղաքայնացող վաճառաշահ ավանն սպասարկելու համար ձևավորվել էր գյուղատնտեսական գոտի: Աներկբա է, որ Վարդգեսավանի շրջակա հողատարածքի յուրացման հետ է առնչվել նաև սրա անմիջապես հարավում ընկած Վարդգեսավան - Արմավիր ճանապարհի վրա, Քասախ գետի ոռոգելի, բարեբեր հովտում՝ համաժամանակյա Մոխրաբլուր բնակավայրի բարգավաճումը: Հայտնաբերված նյութերը բավարար չեն բնակավայրի տնտեսական գործունեության մի որոշ, ամբողջական բնագավառներ բնութագրելու համար: Այսուհանդերձ, տարողունակ կարասների և հորերի առատությունը վկայում է տեղում մեծ քանակությամբ վերամշակված գյուղատնտեսական մթերքի ամբարումը: Հիրավի, ուրվագծվում է Մոխրաբլուր բնակավայրի դերը Վարդգեսավանը սպասարկող մերձակա գյուղատնտեսական գոտում՝ որպես շտեմարան, "համբարանոց" ուտելիքի համար":

Ք.ա. II - Ք.հ. I դդ. բարգավաճ Մոխրաբլուր բնակավայրում կյանքն ընդհատվել է մեր թվականության առաջին դարում՝ դաժան ռազմական արշավանքի հետևանքով (հմտ. II շինարարական հորիզոն - ավերված, հրկիզված տներ, ջարդոտված, մրապատ խեցանոթներ, պատերի փլվածքների մեջ խրված նետասլաքներ):

Սկզբնաղբյուրներից հայտնի է և պեղումներով հաստատված՝ Արտաշատը նվաճած հռոմեական զորավար Կորբուլոնի Ք.հ. 59 թ. իրականացրած ռազմական ծրագիրը (Գ. Քոչարյան, 1996, էջ 347-349): Դեպի Հայաստանի երկրորդ մայրաքաղաք Տիգրանակերտ իր ռազմարշավից առաջ, նա հիմնահատակ կործանում է ընդամենը մեկ տարի առաջ՝ 58-ին, իր կայազորների հսկողության տակ դրված երկրի քաղաքական կենտրոնի՝ Արարատյան հովտի ռազմական հենակետերը\*\*\*: Տվյալ տարածաշրջանում հատուկ ռազմավարական կարևորության Մեռքիդա-Կողքիսյան մայրուղում ընկած Վարդգեսավանը, անտարակույս, հռոմեական օկուպացիայի զորակայաններից մեկն է եղել (ինչպես ավելի ուշ, 114-

116 թթ.՝ Տրոյանոս կայսեր օրոք կամ II դ. 60-ականներին՝ կայսր Մարկոս Ավրելիոսի գահակալման տարիներին՝ երբ սրանք նվաճել են Հայաստանը (Ռ. Թորոսյան, Ա. Կրկյաշարյան, 1971, էջ 286-290, Գ. Քոչարյան, 1996, էջ 349-350): Հետևաբար, ավերվել է նաև Վարդգեսավանի հարևան Մոխրաբլրի բնակավայրը (հմտ. Արտաշատ - Դվին համաժամանակյա ավերված, հրկիզված շերտերը) (Գ. Քոչարյան, 1996, էջ 148-149):

Հնագիտական դիտարկումները բացահայտում են.

- II շինարարական հորիզոնի վրա շինությունների մնացորդներ (պատերի, հատակների հետքեր, աղբահորեր),


- Ք. հ. I - II դդ. թվագրվող խեցանոթներ (ընդ որում՝ երկու շինարարական հորիզոնների նյութերը խառնված պարագայում):

Այս տեղեկությունը, ծայրահեղորեն աղճատված առաջին շինարարական հորիզոնի և նյութերի սակավության պայմաններում, թեև հավաստում է Մոխրաբլրի անտիկ շրջանի բնակավայրի գոյության երկրորդ շրջափուլ, սակայն սա մանրամասնելու հնարավորություն չի ընձեռում: Այսուհանդերձ, նույն այս տեղեկատվությունը բավարար հիմք է տալիս ենթադրելու, որ երբ Վաղարշ I Արշակունին (117-140) փոխել է Վարդգեսավանի կարգավիճակը՝ "պատեց նրան պարսպով և ամուր պատվարով և կոչեց Վաղարշապատ" (Մովսես Խորենացի, 1990, II, 4ե), Մոխրաբլուր բնակավայրը վերստին ընդգրկվել է քաղաքի կենսապահովման ոլորտում:

Նավելված. Մոխրաբլուր հնավայրի I և II շինարարական հորիզոնների հնագիտական նյութը

խեցգործական արտադրանք. I շինարարական հորիզոն - 1, սափոր - կլորավուն շուրթ, գլանաձև վիզ, վրան՝ կանթի հետք [բերանի բացվածքի (այսուհետև՝ բբ.) տր. 4,0, վզի երկ. 7,5 սմ], կարմիր, փայլեցված, 2, ծորակավոր քրեղան - հարթ կտրված շուրթ, փքուն կողապատ, շրթից ցած՝ երեքնուկաձև պսակով ծորակ (բբ. տր. 27, ծորակի երկ. 4,0 սմ),

դարչնագույն, 3, երեքնուկաձև պսակով ծորակ - կարմիր, փայլեցված, 4, բաս - հաստ շուրթ, դուրս հակված կարճ կողապատ, փռված, տափակ նստուկ, դարչնագույն, 5, բաս-սկուտեղ - դուրս հակված հաստ շուրթ, ներս ճկված կարճ կողապատ, լայն, փռված նստուկ (բբ. տր. 35 սմ), մոխրագույն-սև, փայլեցված: II շինարարական հորիզոն 6, կարասներ - զանգվածոեղ, փռված շուրթ, ներճկված վիզ, փքուն իրան, տափակ նստուկ (բբ. տր. 35-50, նստուկի ընդ. 15-25, բարձր. 100-120 սմ) (Աղ. 1, 1,2), բաց՝ մոխրագույն, դեղնավուն, նարնջագույն, վարդագույն-կարմիր, փայլեցման հետքեր, շրթի, վզի կամ իրանի վրա՝ փորագիր կամ ուռուցիկ, հյուսածո բոլորագոտի 7, կճուճներ - կլորավուն, ծավված կամ հաստացող շուրթ, ներճկված վիզ, փքուն իրան, ուսամասին՝ մեկ կամ երկու կանթ (բբ. տր. 13-28 սմ), բաց վարդագույն, դեղնին, դարչնագույն, գորշ, մոխրագույն: ա) Կարմիր գույնի ուսամասին՝ թույլ փորագիր գծազարդ (Աղ. 1, 3), բ) գունազարդ, բաց դարչնագույն ուսամասին՝ կարմիր գույնի երկայնակի ժապավենների և եռանկյունիների գոտեզարդ (Աղ. 1, 4) 8, ձճուճներ - փքուն կողապատի բեկորներ, վրան՝ շրջանակով անցք-ծորակներ (բեկորների երկ. 25-27 սմ), կարմրադարչնագույն, 9, սափորներ . ա) երեքնուկաձև պսակով շուրթ, փքուն իրան, շրթից-ուսամաս ձգվող կանթ (բբ. տր. 8 սմ), մոխրագույն, փայլեցված (Աղ. 1, 6), բ) շեփորանման բերանի բացվածք, հաստ գլանաձև վիզ, վրան՝ կտրված կանթ (բբ. տր. 10



Աղ. 3

սմ), կարմրադարչնագույն, վզից ցած՝ ուռուցիկ բոլորագոտի (Աղ. 1, 7), գ) շեփորանման բերանի բացվածք, կլորավուն շուրթ, ներճկված վիզ, փքուն կողերին՝ մեկական կանթ (բբ. տր. 9,0 սմ), դարչնագույն, վերնամասը, կանթերը կարմիր փայլեցված (Աղ. 1,10) , 10, տափաշներ - փոքր բերանի բացվածք, կլորավուն շուրթ, կարճ, ներճկված վիզ, երկական, սկավառակաձև փքուն՝ կամ գնդաձև իրանի

հատվածներ (բբ. տր. 7-8 սմ), գունազարդ, բաց դեղին, դեղնակարմրավուն, նարնջագույնի վրա՝ վառ դարչնագույն, կարմիր համակենտրոն շրջանագծեր, ա) դարչնագույն իրանի մի երեսի վրա՝ շագանակագույն շրջանագծերի միջև, լայնակի, բեկյալ գծեր (Աղ. 1, 8), բ) գնդաձև իրանը՝ կարմիր-դարչնագույն (Աղ. 1, 9), 11, տաշտ - շեշտակի դուրս հակված, լայն շուրթ, ուղղահայաց կողապատ (շրթի լայն. 2,8, բեկորի երկ. 21 սմ), բաց շագանակագույն, փայլեցված, 12, ծորակավոր քրեղաններ - բերանի լայն բացվածք, փքուն իրան, տափակ նստուկ, շրթի տակ՝ երեքնուկաձև պսակով ծորակ, կամ շրթի հետ ձևավորված գլանաձև ծորակ (բբ. տր. 25-27, ծորակի երկ. 3-3,5 սմ), կարմիր, դարչնագույն, դարչնագույն-սև, մոխրագույն-սև (Աղ. 1, 5), 13, քրեղաններ - ներս հակված շուրթ, ուռուցիկ կողապատ, մեկի վրա՝ կեղծ կանթ (բբ. տր. 25-30 սմ), դեղնավուն, դարչնագույն, մոխրագույն, վերնամասի վրա՝ նեղ ակոսագծեր, ա) գունազարդ, դեղնավուն արտաքին մակերեսի վրա կարմիր գույնի վրձնահարվածներ, ներքինի վրա՝ բուսական զարդապատկեր (Աղ. 2, 4), 14, քաս-քրեղաններ - ներս հակված շուրթ, կորավուն կողեր, տափակ, հարթ նստուկ կամ օղակավոր ոտք-նստուկ (բբ. տր. 10-21, նստուկինը՝ 6-11, բարձր. 5-11 սմ), բաց դարչնագույն, շագանակագույն (Աղ. 2, 1, 2), 15, քասեր - ա) ներս հակված շուրթ, կլորավուն կողեր, ցածրադիր իրան, փռված, լայն, տափակ նստուկ (տր. 16, նստուկինը՝ 17, բարձր. 4,0 սմ), բաց դարչնագույն, բ) թեք կտրված շուրթ, լայնացող կողեր, տափակ նստուկ (բբ. տր. 18, նստուկինը՝ 7, բարձր. 4,5 սմ), գունազարդ, թանձր կարմիր գույնի (նստուկը դարչնագույն), ներսի մակերեսին՝ սև գույնի ձվածիր, տերևազարդ թևերով խաչ-զարդապատկեր, շրթնամասին՝ ներգծված ոճավորված տերևիկներ (Աղ. 2, 3), 16, քաս-ափսե - դուրս հակված, փռված, լայն պսակ, դեպի վեր լայնացող կողապատ, օղակավոր ոտք-նստուկ (բբ. տր.

27,5, նստուկինը՝ 9 սմ), կարմիր գույնի, ներսից, իրանից-պսակ՝ նեղ ակոսագիծ (Աղ. 2, 8), 17, քաս-գավաթներ - ներս հակված, նուրբ շուրթ, կիսագնդաձև կամ ձվաձև իրան, թեթևակի կամ ընդգծված տափակ նստուկ (բբ. տր. 12, բարձր. 8 սմ), ա) արտաքին մակերեսը՝ մուգ, ներքինը՝ բաց կարմիր, մոխրագույն (Աղ. 2, 7), բ) գունազարդ՝ կարմիր, փայլեցված, ներսից, շրթի տակ՝ սև գույնի ներգծված կիսաշրջաններ, նեղ շրջանագծեր (Աղ. 2, 6), 18, սկուտեղներ - ներս հակված, նուրբ շուրթ, կարճ, կորավուն կող, փռված, լայն հատակ, ցածրադիր իրան, օղակավոր ոտք-նստուկ (բբ. տր. 17-22, նստուկինը՝ 5, կողի բարձր. 1,2 սմ), բաց-մուգ դարչնագույն, հատակի վրա՝ գույզ համակենտրոն ակոսագիծ (Աղ. 2, 9) 19, ծրագներ - թասանման, ցածրադիր իրան, նեղացող քթիկ, տափակ նստուկ (բբ. տր. 8, բարձր. 2,5 սմ), դեղնավուն (Աղ. 3, 4), 20, աղամամ - ներս հակված շուրթ, թասանման, ցածրադիր իրան, տափակ նստուկ (բբ. տր. 5,5, բարձր. 2,5 սմ), բաց դարչնագույն, 21, խուփ - ուռուցիկ վերնամաս, սկավառաձև հիմք (տր. 30 սմ), կարմրադարչնագույն (Աղ. 3, 3), 22, խփի բռնակ - փոքր, շրջանաձև հիմք, լայնացող կողեր, վերին մասում՝ փոսիկ, դեղնագույն (Աղ. 3, 2), 23, շարժական կրակարաններ - ուղղահայաց հաստապատ կողեր, տափակ նստուկ (կողի բարձր. 4,0-8,0, հաստ. 2,5-4,5, նստուկի հաստ. 2,2-4,5 սմ), կարմրանարնջագույն (Աղ. 3, 1), 24, թոնիրներ - հաստապատ կողեր (բբ. տր. 50 սմ), 25, թոնրի ակի խողովակ - ծայրին՝ գույզ ուռուցիկ բոլորագոտի (բբ. տր. 15, երկ. 30 սմ), (Աղ. 3, 10), 26, թեշիկի գլխիկներ - միջանցիկ անցքով անվակ՝ երկու երեսն ուռուցիկ (տր. 4,0-5,0, հաստ. 3,0-4,0 սմ), (Աղ. 3, 5, 6), 27, կոճակ-ճարմանդ - հատած կոն՝ միջանցիկ անցքով (տր. 2,0, հաստ. 1,0 սմ), սև գույնի մակերեսի վրա՝ համակենտրոն, նեղ ակոսագծեր, փայլեցված (Աղ. 3, 7).

**Քարե առարկաներ.** I շինարարական հորի-

զոն, 28, սրոցաքար (կարծր, սպիտակ քարատեսակ) - քառակող հատված (երկ. 7,5, հաստ. 4,0 սմ). II շինարարական հորիզոն, 29, լծակավոր աղորիք (ծակոտկեն ործաքար) - վերին քարի հատված, վրան՝ երկայնակի ակոսառվակ, ծայրին՝ միջանցիկ անցքով փորվածք (24x20x7,0 սմ), (Աղ. 3, 15), 30, հավանագներ (ործաքար) - ա) կորավուն կողապատ, տափակ նստուկ (բարձր. 7,0 սմ), (Աղ. 3, 16), բ) կողային նիստի, տափակ նստուկի հատված (բարձր. 7,0 սմ):

**Սետաղե իրեր.** I շինարարական հորիզոն - փակամ (ոսկե) - ձուլածո, սնամեջ օղակ-փակամ՝ մանյակի կամ ապարանջանի (տր. 1,5 սմ), (Աղ. 3, 17): II շինարարական հորիզոն, 32, -դամակ (երկաթե) - կոր շեղք (երկ. 9,0, լայն. 3,0 սմ), (Աղ. 3, 11), 33, գործիք (երկաթե) - կացնանման, սեպածև (այլ իրերի տոն մնացորդներ, երկաթի խարամ), 34, տեգ (երկաթե) - ծայրապանակ՝ նման դափնու տերևի (երկ. 9,5 սմ), (Աղ. 3, 13), 35, նետասլաքներ (երկաթե) - ա) ձվածիր (երկ. 1,5 սմ), (Աղ. 3, 12), բ) եռանիստ (փշրվել է՝ գտնելու պահին):

**Ապակե իր.** II շինարարական հորիզոն, 36, սրվակ ("փյունիկյան" ապակի) - վզից-լայնացող իրան վերնամասի բեկոր՝ մուգ կանաչ, հարդարված սպիտակ և դեղին գույների ապակե թելերով (3,7x3,0 սմ), (Աղ. 3, 9):

**Ոսկրե իր.** II շինարարական հորիզոն, 37, հեթակալ - սրածայր ձող, սկավառականման գլխիկ (երկ. 6,0 սմ), (Աղ. 3, 8):

**Սաղափե ծովախեցի.** II շինարարական հորիզոն, 38, բռնակ - ոլորուն՝ վերին մասում միջանցիկ անցք (երկ. 5,0 սմ) (Աղ. 3, 14):

1. Г. Е. Аресян, Материалы из раскопок Мохраблугра 1970 года, ВЕУ, 1972, N 1; 4. Արեշյան, 7. Սիմոնյան, 9. Սարգսյան, 9. Քոչարյան, 7. Օհանյան, Հայագիտական կենտրոնի 1977-78 թթ. դաշտային հնագիտական աշխատանքները, ԲԵՂ, 1979, N 2:
  2. 9. Ե. Արեշյան, Մոխրաքլուր բնակավայրի ստորին շերտերի բնութագրման շուրջ, Հայագիտական հետազոտություններ, պր. Ա, Երևան, 1974:
  3. Г. А. Тирацян, Культура гревней Армении VI в. до н. э. - III в. н. э. (по археологическим данным), Ереван, 1988.
  4. Ժ. Ղ. Խաչատրյան, Արտաշատ II. Անտիկ դամբարանադաշտեր (1971-1977 թթ. պեղումները), Երևան, 1981:
  5. Ж. Д. Хачатрян, Стеклоделие в гревней Армении (II-I века до нашей эры), ИФЖ, 1975, N 1; А. Б. Нуриев, О некоторых античных сосудах найденных на территории Кавказской Албании, Материальная культура Азербайджана, VIII, Баку, 1976.
  6. Սովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1990:
  7. Г. А. Тирацян, К вопросу о градостроительной структуре и топографии гревнего Валаршапата, ИФЖ, 1977, N 2.
  8. 9. Քոչարյան, Անտիկ Դվինը Արտաշատի պաշտպանական համակարգում, Հանդես ամսօրեայ, 1996, թիւ 1-12:
  9. Ռ. Թորոսյան, Ս. Կրկյաշարյան, Հնագիտական նորություններ Էջմիածնից, ՊԲՀ, 1971, N 4:
- \* Մանրամասն նկարագրությունը տես՝ կից հավելվածում:  
 \*\* Ուշագրավ է մշակված սաղափե ծովախեցի-արդուզարդի առարկաների առկայությունը՝ Սերժավոր Արևելքից ներմուծված անուշահոտ յուղերի ապակե սրվակների հետ , Գառնիի, Վերին Արտաշատի անտիկ շրջանի թաղումների գույքի կազմում(տես՝ 9. Քոչարյան, Դվինը անտիկ դարաշրջանում, Երևան, 1991, էջ 72-73):  
 \*\*\* Քանզի հռոմեական գործի հեռանալուց հետո՝ Տրդատ Ա Արշակունին, համալրված պարթևական ուժերով, ամեն պահ կարող էր հայտնվել և վերանվաճել դրանք:

Gayane Kocharyan

### MOKHRABLOUR SETTLEMENT

(The characteristics of the ancient layer due to 1975, 1977 excavation results)

(Summary)

Mokhrablour settlement is located in Armavir region, 4 km to the south from Echmiadzin, on the left bank of the old dry bed of the Kasakh river. Mokhrablour is an oval, smooth-top artificial hill with about 10 m high, covering an area of more than 3,5 ha. The excavations in 1970-1980 have revealed 11 building horizons of 9 m thickness: the upper I - II horizons belong to the II BC - II AD millennia, the III - XI horizons to Early Bronze Age, i.e. IV - III millennia. The building ruins, pottery, metal and stone artifacts have been unearthed in the I and II building horizons at 1,80 m depth. Stratigraphic observation and comparative analysis of these findings outline the role of Ancient Mokhrablour. This settlement was an agricultural food barn in township economic zone of ancient Vardgesavan-Vagharshapat.

Մոխրաբլուրի բնակավայրը գտնվում է Արմավիրի մարզում, Էջմիածինից 4 կմ հարավ, Կասախ գետի հին ցամաքի ձախակողմյան կողմում: Մոխրաբլուրը օվալ, շրջաձուլված արհեստական բլուր է, որի բարձրությունը մոտ 10 մ է, ընդհանուր մակերեսը՝ 3,5 հա: 1970-1980 թթ. ընթացքում բացահայտվել են 11 շինարարական հորիզոններ, որոնց ընդհանուր հաստությունը կազմում է 9 մ: Առաջին և երկրորդ հորիզոնները պատկանում են II դարի առաջին հազարամյակին, իսկ մնացած հորիզոնները՝ IV-III հազարամյակի սկզբին: Մոխրաբլուրից հայտնաբերվել են շինարարական մնացորդներ, սերամիկա, մետաղական և քարե առարկաներ: Այս բնակավայրի դերը պարզապես անհայտ է: Մոխրաբլուրը հնագույն Վարդգեսավան-Վաղարշապատի տեղական տնտեսական գոտու արհեստական սնունդային պահուստային կայան էր:

### ՆՈՐԱ ԵՆԳԻՐԱՐՅԱՆ

## ՉՈՐԱԳՅՈՒՂԻ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՄՐՈՎ ԴԱՄԱՐԱՆԸ

Սևանի ավազանից հայտնի ուրարտական նյութերը 1987 թ. համալրվեցին Չորագյուղի (նախկին Մարտունու շրջան) գերեզմանոցում պատահական բացված դամբարանի նմուշներով: Թանգարան են հանձնվել մի բեկորատված սուր (նկ. 1), 17 երկաթե նետասլաք (նկ. 2), մի բրոնզե օղ (նկ. 3), եզրին միջանցիկ անցքերով թիթեղ (նկ. 4):

Նյութերից ուշագրավը շրջանակավոր դաստակով սուրն է, որը դամբարանում էր դրվել փայտե պատյանով: Միաձույլ երկաթյա սրի առանձնահատկությունը դաստակի կառուցվածքն է: Այն եզերված է բրոնզե մատնեքավոր շրջանակով, որը շարունակվելով գոտևորում է նաև շեղբի վերին մասը՝ չմիանալով կենտրոնում: Շրջանակի մեջ ազուցված է եղել դաստակի ոսկրե կամ փայտե ներդիրը: Հայտնի են նաև արծաթե շրջանակներով նմանատիպ սրեր (R. Wartke, 1991, p. 322-331, fig. 5, 6) և ընծայական օրինակներ, որոնց երկարությունը հասնում է 1.20-1.60 սմ (Urartu 2004, p. 224-225): Մատնեքավոր եզրակալով սրեր հայտնի են նաև Կարմիր բլուրից, պատահական երկու օրինակ՝ Արևմտյան Հայաստանից, Վրաստանից՝ Սամբավրոյից (B. Piotrovskiy, 1950, p. 19; B. Piotrovskiy, 1959, p. 25; M.

Pogrebova, 1984, p. 12, 13; Ա. Փիլիպոսյան, 1999, նկ. 15-21; A. Каландадзе, 1982, N 759, 762): Ավելի տարածված են դաստակի ուղիղ (ոչ մատնեքավոր) եզրաշերտ կամ կենտրոնում բրոնզե օղով ամրացած օրինակները, որոնց եզրակալները մասամբ կամ ամբողջությամբ գոտևորում են շեղբի վերին մասը: Նման սրեր հայտնաբերվել են Կարմիր-բլուրից, Նորատուսից, Անիից, Շիրակավանից, Երևանի բիայնական դամբարանից, Մուսիերիից, Վրաստանում՝ Սամբավրոյից, Սազարեջոյից, Գանդիադիից, Սատավեից, Ադրբեջանում՝ Մինգեչաուրից, Ղազախից (B. Piotrovskiy, 1959 a, c. 177, p. 6, B. Piotrovskiy, 1970, N 51, 52, A. Мартиросян, 1964, p. 82/8, Ե. Մուշեղյան, 1982, N 1470, աղ. XXXVI/4, Ռ. Թորոսյան և ուրիշ., 2002, նկ. 16, Ա. Եսայան և ուրիշ. 1995, աղ. VII/2, J. De Morgan, 1889, fig. 42, Ա. Փիլիպոսյան, 1999, աղ. 5, նկ. 6-14, աղ. 17, նկ. 9-11, P. Абрамашвили, 1961, таб. XI/2, М. Бадриашвили, 1953, таб. 1, p. 4, Н. Мамаиашвили, 1988, c. 112, таб. XXXIX, p. 97; К. Кахиани и др. 1985, XXX; А. Апакидзе и др., 1985, c. 15; A. Каландадзе, 1982, N, 791, М. Погребова, 1984, таб. I, 5, 6, 8-10, 14-21, С. Казиев, 1949,

1. Նյութերը էրեբունի թանգարան է հանձնել Ս. Սաղումյանը: Դամբարանը ավերվել է, նյութերի հետ ուղարկված նամակում նշված է. «հայտնաբերվել է 1,5 մ խորությունում, կմախքը լավ պահպանված ատամներով էր, աջ կողմին դրված էր սուրը»:




рис. 17):

Քննարկվող սրերն ունեցել են 45-70 սմ երկարություն, իսկ դաստակներն ավարտվել են կոնաձև, զնդաձև կամ ուղիղ զլխիկներով, որը մեր օրինակում բացակայում է: Չորագյուղի սրի պատյանից հատվածաբար պահպանվել են փայտը և այն ամրացնող երկաթե կիսակլոր եզրակալները: Նման սրերի փայտե պատյանների մնացորդներ հայտնի են Սամբավոյից (թիվ 38 դամբարան) և Մինգեչաուրից (Մ. Սոգրեբովա, 1984, սրբ. 54, Օ. Դանիելյան, 1965, սրբ. 105): Պատյանը ստորին մասում ամրացվել էր բրոնզե բարակ թիթեղ՝ ծալելու եղանակով պատրաստված ուղղանկյունաձև ծայրակալով: Ծայրակալի մակերեսը հարդարված է հորիզոնական ակոսներով, որոնցից մեկը կազմված է իրար վրա դրված թիթեղի ծայրերով: Ծայրակալների այս տեսակը ավելի վաղ հուշարձաններում հայտնի չէ: Այսպիսի ծայրակալներ հայտնաբերվել են միայն VIII-VI դդ. ուրարտական հուշարձաններից՝ Էրեբունուց, Կարմիր բլուրից, Իգդիրից, Երևանի և Եղեգնաձորի բիայնական դամբարաններից, Նորատուսից (Էրեբունի թանգարան, գույք 13/102; Բ. Սոտրովսկի, 1950, սրբ. 19, Ս. Եսայան, 1964, աղ. XI/12, Ս. Եսայան և ուրիշ., 1995, աղ. XII/1, Շ. Էսայան, Օ. Խնիկյան, 1990, տաճ. I/18, Բ. Կոփտին, 1944, տաճ. IV): Ծայրակալներ ունեն նաև Վրաստանից և Ադրբեջանից հայտնաբերված համաժամանակյա սրերը (Մ. Սոգրեբովա, 1984, սրբ. 55, Օ. Դանիելյան, 1965, սրբ. 105):

Ուսումնասիրողները սրերի այս տեսակն անվանում են ուրարտական (Բ. Կոփտին, 1944, սրբ. 53-54, Բ. Սոտրովսկի, 1959 a, սրբ. 177, Մ. Սոգրեբովա, 1967, սրբ. 137), քանի որ Անդրկովկասում այն տարածվում է ուրարտական նվաճումներից հետո: Ըստ Բ. Կուփտինի այդպիսի սուր է կրում Վանից հայտնաբերված զինվորականի արձանը (Բ. Կոփտին, 1944, սրբ. 55): Հավանաբար նմանատիպ սրերն են կրում Վերին Անձալից հայտնաբերված ընծայական վահանի վրա պատկերված աստ-

վածները և ոսկե մեդալիոնի վրայի զինվորականն ու աստվածությունը (Օ. Բելլի, 1999, fig 17; Ի. Կելներ, 1991, fig. 4): Ձենքի այդ տեսակը մ.թ.ա. IX դարից հայտնի է Հյուսիսային Սիրիայում և Ասորեստանում (Մ. Սոգրեբովա, 1967, սրբ. 51): Ուրարտական պետության սկզբնական շրջանում ուրարտացիների զինատեսակները նման էին Փոքր Ասիայի և Հյուսիսային Սիրիայի ուշ խեթական պետությունների սպառազինությանը (Շ. Բազիևա, 1953, սրբ. 27): Կարծիքներ կան Անդրկովկասում սրերի այս տեսակի տեղական արտադրության մասին (Օ. Դանիելյան, 1965, սրբ. 106): Ուսումնասիրելով հայտնաբերված սրերի դամբարանները Մ. Սոգրեբովան եզրակացնում է, որ Անդրկովկասում դրանք հայտնի են մ.թ.ա. VIII դ. վերջից և լայն տարածում են ստանում մ.թ.ա. VII-VI դդ.:

Հայտնաբերված հաջորդ զինատեսակը երկաթե, տերևաձև, կլոր պոչուկով, իրանի և պոչուկի միացման մասում կլոր խնձորակով, իրար կպած նետասլաքների խումբն է: Նետասլաքները դամբարան են դրել բրոնզե կապարձով: Երկաթե նետասլաքները քայքայվելով՝ քայքայել են նաև կապարձը: Նման երևույթ հայտնի է Կարմիր բլուրից, որտեղ N 36 սենյակում բացվել է երկաթե նետասլաքներով լցված բրոնզե 5 քայքայված կապարձ (Բ. Սոտրովսկի, 1955, սրբ. 39, Բ. Սոտրովսկի, 1969, fig. 82): Հայտնի են նաև այս նետասլաքների բրոնզե օրինակները, որոնցից մեկը կրում է Արգիշտի Ա-ի նվիրատվական արձանագրությունը (Բ. Սոտրովսկի, 1955, սրբ. 29): Ինչպես սրերը, այնպես էլ նետասլաքների այս տեսակը Անդրկովկասում տարածել են ուրարտացիները: Դվինը կործանող ուրարտացիների նետասլաքներից մեկն ամրացել մնացել էր կարասի վրա (Կ. Կոստանյան, 1977, տաճ. XVIII/2, սրբ. 32/2): Նետասլաքների այս տեսակը հայտնի է ուրարտական գրեթե բոլոր հուշարձաններում (Էրեբունի, Արգիշտիիսիսիլի, Երևանի և Եղեգնաձորի բիայնական դամբարաններ, Արտաշատ, Իգդիր, Ալթին-թեփե, Թոփրակ-կալե, Կայել-դերե,

Չառաջանալի, Տուշպա, Այանիս և այլն): Սևանի ավազանում դրանք հայտնաբերվել են Կարճադրյուրում, Լճաշենում (ՀՊՊԹ, գույք 2565/290,308; 2301/410, 2489/160): Զինատեսակը գոյատևել է Վանի թագավորության անկումից հետո էլ: Նման նետասլաքներ հայտնի են Նորաշենի ամրոցից (մ.թ.ա. VI-V դդ.), Արտաշատի 1 և 2 բլուրներից (մ.թ.ա. II - մ.թ. II դդ.), հելլենիստական Արմավիրից, Դվինի վաղ միջնադարյան շերտից (**Ի. Կարապետյան**, 1974, էջ 287, աղ. III/20, 21; **ժ. Խաչատրյան**, 1978, էջ 65, **Ա. Քալանթարյան**, 1970, տախտակ XIX/1; **Կ. Ղաֆադարյան, Ա. Քալանթարյան**, 2002, նկ. 27/9,12,19):

Հավաքածուի հաջորդ երկու իրերը կապարճի մասեր են: Մարդու մարմնի հետ շփվող կապարճի մասերը եղել են կաշվից: Պահպանված բեկորը եզրահատվածի այն մասն է, որին ամրացվել է կաշին: Իսկ բրոնզե օղը կարող է պատկանել և՛ կապարճին և՛ գոտուն:

Ավերված այս դամբարանի նյութերի քննությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ թաղումը կատարվել է մ.թ.ա. VII-VI դդ. և իրերը վերագրվում են Վանի թագավորության մշակույթին:

**Գրականություն**

1. **Ա. Եսայան**, 1964 - Կատալոգ Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի, I, Երևան:
2. **Ա. Եսայան, Լ. Բիյազով, Ա. Գնախյան, Ա. Կանեցյան**, 1995 - Երևանի բիայնական դամբարանը, Հայաստանի հնագիտական հուշարձաններ, N 3, Երևան:
3. **Ռ. Թորոսյան, Օ. Խնկիկյան, Լ. Պետրոսյան**, 2002 - Հին Շիրակավան, Հնագիտական պեղումները Հայաստանում, N 23, Երևան:
4. **ժ. Խաչատրյան**, 1978 - Արտաշատի VII բլրի 1973-1975 թթ. պեղումների արդյունքները, Լրաբեր հասարակական գիտությունների, 1978, N 8, էջ 55-72:
5. **Ի. Կարապետյան** 1974 - Նորաշենի վաղ հայկա-

- կան ամրոցը, ՊԲՀ, 1974, N 2, էջ 281-290:
6. **Կ. Ղաֆադարյան, Ա. Քալանթարյան**, 2002 - Դվին II, Հնագիտական պեղումները Հայաստանում, N 20, Երևան:
7. **Ե. Մուշեղյան**, 1982 - Անի քաղաքի պեղումներից հայտնաբերված առարկաները, Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների, պրակ II, Երևան:
8. **Ա. Փիլիպոսյան**, 1999 - Հին Արևելքի շրջանակավոր դաստակով դաշույններն ու սրերը, Հայաստանի հնագիտական հուշարձաններ 17, Երևան:
9. **Ա. Քալանթարյան**, 1970 - Դվինի նյութական մշակույթը IV-VIII դդ., Հայաստանի հնագիտական հուշարձաններ, հ. V, Երևան:
10. **Ք. Աբրամիշվիլի**, 1961 - К вопросу об освоении железа на территории восточной Грузии (*на груз. яз. резюме на рус. яз.*), Вестник государственного музея Грузии им. акад. С. Н. Джанашия, т. XXII - В, 1961, стр. 291-328, табл. I - XX, XI/2.
11. **Ա. Մ. Ապակիզե, Վ. Վ. Николоишвили, Գ. Դ. Գուրնաշվիլի, Գ. Ն. Манджгаладзе, Մ. Ս. Դзnelадзе, Վ. Գ. Տадրадзе, Ք. Վ. Դавшанидзе, Ն. Վ. Գլонти**, 1985 - Археологические Раскопки в Мцхета и ее округе, Полевые археологические исследования в 1982 году, Тбилиси, стр. 44-46.
12. **Տ. Բациева**, 1953 - Борьба между Ассирией и Урарту за Сирию, ВДИ, 1953, N 2, стр. 17-36.
13. **Մ. Բадриашվիլի**, 1953 - Археологические памятники из Сатовле, Вестник Гос. музея Грузии, XVII - Б, Тбилиси, стр. 235-241.
կույտ կա, որին բնակիչները Նուսշիրվանի պալատ են անվանում: Բազմաթիվ եկեղեցական շինություններ, մինարեթներ, բաղնիքներ ու մեկ մզկիթ լրացնում են այս քաղաքի հուշարձանների խումբը, և դրանք բոլորն էլ կրում են լավ պահպանված հայերեն արձանագրություններ: Արփաչայ գետի ափերին, որի ոլոր-մոլոր հոսքն արևելյան մասում բազմաթիվ գեղեցիկ վերուվարություններ է առաջացնում, կրոնական ու պաշտպանական շինություններ են, որոնք խնամքով ու խելացիորեն հարդարված և ինքնատիպ զարդաքանդակներով են պատված: Ցավալի է հունական ճաշակով ու նրբությամբ կառուցված այս հուշարձաններում տեսնել մի ժողովրդի, որը մեր օրերում կորցրել է արվեստի իր ողջ զգացողությունը, առանց իր նախնիներից մի որևէ հետք

պահպանելու: Երկու հովտի միացման վայրում, գետի մեջ, ապառաժ է բարձրանում, որը թերակղզու է նմանվում: Դրա կողքերը ծածկված են հրաբխային լավայի ասեղներով, որոնք կարծես տաճարի գմբեթը շրջապատող փոքր զանգակատներ լինեն: Ապառաժի գագաթին, ամենամանատչելի մասում, ուր նախկինում բարձրացել են ժայռի մեջ խնամքով փորված աստիճաններով, մի մատուռ կա, որի ավերակ գավիթը Կովկասյան լանջերից մոլեգնորեն իջնող և Արփաչայի հովիտներում մռնչոցով մարող ամպրոպներին է հանձնում իր ինտերյերը:

**ՏԱՃԱՐԸ**

Անիի տաճարի հատակագիծը կազմված է խաչաձև կտրված նավերից, որոնց մեջտեղում գմբեթն




Անի, պարիսպ


է: Երկարությունը 32 մ է, լայնությունը՝ 20 մ, որը չի անցնում մեր քաղաքների ամենափոքր եկեղեցիների չափերից: Գմբեթը պահում են չորս մույթ, որոնք բարձրանում են մինչև կամարի հենահիմքը և կազմում եռաստիճան սլաքածև կամար: Ստորին կողմերի նավերը բաժանող կողային կամարներն ունեն մեծ մույթերից կիսով չափ մեկուսացված իրենց հենահիմքը: Հաստահեծան աղեղներն ընկնում են միմյանց կապված մույթերի վրա, որոնք հանգչում են մեծ մույթերի ելուստների ու կծկումների վրա:

Գլխավոր խորանը կիսաշրջան է, և ունի երկու զույգ սյունով բաժանված որմնախորշեր: Այն եղել է մեջտեղում, ինչպես ընդունված է հայկական եկեղեցիներում՝ ծիսակատարությունների համար: Կիսաշրջանի մի եզրից մյուսը եղել է փայտե մի շին-

վածք, որը հույները Kanghelon /բազրիք/ են անվանում: Այստեղ եղել են վարագույրներ ու գորգեր, որոնց մասին այնքան հաճախ հիշատակվում է: Խորանի /amphithetre/ աջ և ձախ կողմերում ավանդատներ են, որոնցից մեկում ավետարաններ են պահվել, մյուսում՝ սրբազան անոթներ: Ահա թե ինչպիսի պարզ հատակագիծ ունի այս շինությունը: Սա ունեցել է նաև որմնանկարներ, որոնք ժամանակի ընթացքում քայքայվել են: Մնացել են 12 առաքյալների գրեթե ջնջված դեմքերը: Եկեղեցու ինտերյերն ամբողջովին ծածկված է եղել մարմարով, որը հետգհետեթ քափվել է: Գմբեթի վելարն (թմբուկը) ավերված է: Դրա բեկորներն այսօր հավաքված են եկեղեցու: Գմբեթի արտաքին զարդարանքի մեծ մասը և ծածկի ոճը նման են հարևան եկեղեցու գմբեթի ոճին, որը



Անի: Մայր տաճարը



Անի: Մայր տաճարի վերազմությունը

դեռս անվթար է:

Մարմարե երեսապատը թափվելու հետևանքով բացվել է քարը, որով շարված են մույթերը: Դա հրաբխային փափուկ տուֆ է, որն ունի օդում կարծրանալու հատկություն և փոխնիփոխ դեղին ու սև գույներ: Շարվածքը Իտալիայի XIII դ. որոշ կառույց-

ներ է հիշեցնում: Բազմագույն գոտու ձևը շատ տարածված է Սիրիայի և Եգիպտոսի մահմեդականների արվեստում: Կահիրեում մզկիթների վրա այժմ էլ կարմիր կավահողով հորիզոնական գոտիներ են նկարում: Բայց Արևելքի մյուս քաղաքներում այս գոտիներն արվում են բազմագույն քարերով: Այս կի-



Անի: Եկեղեցու ավերակներ

սավեր նավը մտնելով՝ տխրության զգացում են ապրում, որ ներշնչում են քարերի մերկությունն ու գծերի խստությունը: Կողմնային նավերը լայն չեն, ինչն ավելի է շեշտում մույթերի հաստությունը:

Անցյալում, երբ գավիթը եղել է ամբողջական, որմնանկարները կենդանացրել են այս բարձր պատերը, իսկ նավի մեջ թափանցող աղոտ լույսը պետք է որ տաճարի ներսին մեղամաղձոտ ու խիստ տեսք տար, որը ներդաշնակում է այնտեղ այցելող մարդկանց ծանրախոհ բնավորության հետ: Յուրաքանչյուր ոք, ով ծանոթ է Եվրոպայի միջին դարերի արվեստին, այս շինությունը կընդունի որպես XIII դ. գործ: Եվ իսկապես, այն կրում է XIII դ. դրոշմ: Սակայն գլխավոր մուտքին գրված արձանագրությունը

հայտնում է, որ այն ավելի հին է, և որ սլաքածև կամարը կիրառվել է Հայաստանում դեռ այն ժամանակ, երբ Եվրոպայում միայն հռոմեական ոճն է կիրառվել:

Եկեղեցու ճակատը, որը շատ պարզ կառուցվածք ունի և զարդարված է մեծ խնամքով, հետաքրքիր տեսք ունի, կարծես միջին դարերի գերմանական ճարտարապետության ոճի է: Հեշտ է բացատրել, թե ինչու ամբողջ գավառում հայ ճարտարապետությանը հատուկ կոնաձև, վեղարածև գմբեթով եկեղեցիներ են հանդիպում: Երբ մահմեդականները գրավում են Անին, մեծ թվով քաղաքացիներ թողնում են քաղաքը: Սակայն նրանք չէին կարող գնալ դեպի Պարսկաստան, որտեղ նրանց թշնամաբար կընդունեին: Բյուզանդիայի հույները ևս պարսիկների նման

թշնամարար են տրամադրված եղել, ուստի նրանք ուղղվում էին դեպի Վրաստան, այնուհետև տարածվում Մոլդավիայով մինչև Լեհաստան, որտեղ հիմնում են հաստատություններ: Բոլոր այս երկրները տգիտության մեջ են եղել, և ընդունել են նոր եկածների բերած գիտելիքները: Թեև կրոնական ոգին հայերի մեջ եղել է իշխողը, այնուամենայնիվ, նրանք շատ երկչուտ են գտնվել որպեսզի փորձեին, տարածել իրենց շնորհքն ու գիտելիքները: Նորասկիզբ քրիստոնեությունը նրանց արվեստից վերցրել է այն ամենը, ինչ կարող էր, բայց հավատարիմ է մնացել հունական եկեղեցուն: Ճարտարապետության այս ոճը հետզհետև դեպի հյուսիս է թափանցել: Նրանցից է՝ այդ հայերից, որ ռուսները վերցրել են իրենց առաջին գիտելիքները:

Եկեղեցու ճակատը ներդաշնակվում է հատակագծի պարզության հետ, և չկա ոչ մի ավելորդ զարդարանք: Թեթև ոճի սյուները կրում են կիսաշրջանաձև կամարներ, որոնք մի փոքր բարձրացված են գագաթում: Կենտրոնական կամարն, ընդհակառակը, աղեղնաձև է: Պատուհանի աջ և ձախ կողմերի երկու վահանակները ներկայացնում են խաչի մի պատկեր, որի մեջտեղը հարդարված է ծաղկաթերթերով շրջապատված վեցանկյուն աստղով: Երեք նավերի բաժանումները դրսից արտահայտված են որմնախորշերով /ճակտոնով/, որը կապվում է պատուհանի շրջանակի ներքին միջնորմի հետ: Այս հնարքը միջին դարերում հաճախ է օգտագործվել Եվրոպայում, և դա ամենապարզն ու ամենատրամաբանականն է:

Պսակը կազմված է ցայտուն, ծեփածո քանդակներից, որոնք միմյանցից բավականին հեռու են և զատված են հյուսքազարդերով: Ճակատի վրա երևում է մեկ ուրիշ բարձրաքանդակ, որի կենտրոնում, ճոխ քանդակված շրջանակի մեջ, լատինական խաչ կա: Այս պատկերը, հաճախ փոփոխական զարդերով, կրկնվում է դռների և արտաքին պատերի վրա: Միայն Անիում չէ, որ այս երևույթն ընդունված է եղել, այլ Հայաստանի բոլոր՝ քաղաքներում: Իբն-

Ալաթիրն իր ժամանակագրություններում հաճախ է հիշատակել այս յուրահատկությունը, իսկ Մաթիան-Նեշեն, այն մասին, որ քաղաքը շրջապատված է եղել մեծ քարերից կառուցված պարսպով, որը հարդարվել է երկաթե ու կապարե խաչերով: Անիի մոտակա քարհանքերը հարուստ են բազմաթիվ նյութերով, ուստի խաչերը պատրաստել են դեղին ու սև խճաքարերից: Եկեղեցու ճակատը նույնպես բազմերանգ է, բայց հայտնի չէ, թե ինչով է առաջնորդվել շինարարը, որ դեղին ու սև քարերն անկանոն ձևով է շարել շինության ճակատին: Հարուստ քարհանքերից վերցրել են եկեղեցուն անհրաժեշտ բոլոր նյութերը:

Երեք պատուհան լուսավորում են եկեղեցու նավը: Մեջտեղի պատուհանը քառանկյուն է, շրջափակված լայն շրջանակով: Կողքի երկու պատուհաններն այնքան նեղ են, որ հազիվ են լուսավորում մոտակա տարածությունները: Մուտքի աջակողմյան ճակատին դեռևս կարդացվում է հայերեն մի արձանագրություն: Գրաբար հայերենն այսօր անծանոթ է ազգին, ուստի միայն ուսյալ մարդիկ են այն գործածում: Նրանք դժվարությամբ վերծանեցին անցյալի այս հին վկայությունը: Մեր թարգմանիչը, որ հայ էր, հասավ այն բանին, որ կարողացավ դրանց մեծ մասը կրկնօրինակել: Բայց Անիի արձանագրությունները շուտով ամբողջությամբ կիրատարակի Բորեն: Այս աշխատանքը կլրացնեն Սեն Մարտենի հետազոտությունները, որոնք վերաբերում են դեռևս քիչ հայտնի այս գավառներին: Ըստ այդ արձանագրության՝ Անիի տաճարը կառուցել է Սմբատի հաջորդի՝ Գագիկ Ա-ի կինը՝ թագուհի Կատրամինեն: Շինության հիմքը նա դրել է 469 թ.: հայկական թվագրությամբ, որը համընկնում է մ. թ. 1010 թ.: Այս փաստաթղթից հետևում է, որ այն ժամանակ, երբ սլաքաձև կամարը բոլորովին չի կիրառվել Եվրոպայում, դրանով հուշարձաններ են կառուցվել Հայաստանի կենտրոնում: Դիարբեքիրում կա շատ նշանավոր մի հուշարձան, որն այսօր մզկիթի է վերածված. դա նույնպես սլաքաձև կամարներով է կառուցված: Հայերն այս

շինությունն անվանում են Տիգրանի Պալատ, և ոչինչ ու ոչ ոք չի ժխտում, որ այն եղել է այդ իշխանի բնակարանը: Պալատը մշակված է հռոմեական ոճով, կորնթական խոյակներով, սրբատաշ սյուներով: Ուրբազարդերն ու պսակներն արված են IV դ. հռոմեական արվեստի սկզբունքով: Այս գավառների ճարտարապետությունում օգտագործված է սլաքաձև կամարը:

Մադաինի Խոսրովի պալատը III դ. հուշարձան է, որի հսկայական դուռն ունի սլաքաձև կամար: Դժվար է ճշգրտորեն որոշել, թե սլաքաձև կամարը երբ է առաջին անգամ կիրառվել: Մինչև այժմ այս հարցը պատասխան չունի, բայց այն, որ այդ կամարն արևելյան հնարք է, ստույգ է, քանի որ Միջագետքում այն կիրառվել է շատ վաղուց, երբ դեռ Եվրոպայում դրա մասին գաղափար չունեին:

Ինչ վերաբերում է կամարին, ապա այն այնքան հազվագյուտ է արևմուտքում, որ դրա արևելյան ծագումն անժխտելի է: Անշուշտ, այն մեր գավառներն են բերել մավրիտանացիները: Արևելյան հուշարձաններում այդ կամարը հայտնվել է Մուհամեդի ծննդից շատ առաջ: Տեկորի հայկական եկեղեցին նույնպես նմանօրինակ կամարներ ունի, որոնց գագաթի կորագիծը կամ, ավելի շուտ՝ բարձրացումը կամարի հենքից վեր, ավելի պարզ է արտահայտված, քան Անիի եկեղեցուն: Այն կրում է 1164 թվագրությունը:

Անիի մայր տաճարի կողային ճակատը մշակված է գլխավոր ճակատի ոճով: Պատուհանի ճակտոնը, ճակատի նման, լուսավորված է կամարաձև պատուհանով, որի տակ կա աղեղնաձև կամարով թարավոր կամ շրջանակ: Այս շրջանակը փոքր ցցվածքով է և առանձնահատուկ շարվածք չունի: Դռան աջ և ձախ կողմերում կա երկու շատ երկար որմնախորշ կամ ավելի շուտ՝ փող, որոնք համընկնում են որմնամույթերի մեջ գտնվող փորվածքներին: Նույն հարդարանքը կա նաև եկեղեցու ետին ճակատին, բայց այստեղ այն ավելի հիմնավորված է նրանով, որ բեմի խորանը առանձնացնում է կողմ-

նային երկու ավանդատնից: Այս միտումը բնորոշ է Անիի ճարտարապետությանը: Դա նկատվում է նաև մյուս եկեղեցուն, որն ավելի լավ է պահպանված, քան տաճարը, սակայն նույն հռչակը չունի հայերի շրջանում: Այս ավերակներում չեն նկատվում ոչ սանդուղքի հետքեր և ոչ էլ թաղման համար նախատեսված ներքնատներ: Հայաստանում ընդունված է եղել հանգուցյալներին թաղել եկեղեցիներում: Վարդանի «Աշխարհագրությունում» կարդում ենք. «Գրիգոր Լուսավորչի մարմինը Կ. Պոլսից բերվեց և դրվեց եկեղեցու չորս սյուների տակ, հորի մեջ»: Նույն հեղինակը հիշատակում է եկեղեցիներում ու վանքերում եղած մեծ թվով մասունքներ ու գերեզմաններ: Ուշագրավ է նաև բնական շինարարական նյութերի վարպետ օգտագործումը: Տանիքները շինված են այնպիսի արվեստով, ինչպիսին ունեն հին արվեստի ամենագեղեցիկ հուշարձանները: Տուֆակերտ լայն սալիկների եզրերն ուղիղ անկյուններում վեր են բարձրացրած, ինչպես անտիկ տաճարների մարմարյա սալիկները: Մեկը մյուսի հանդեպ հարմարեցված երկու եզրը ծածկված են երդիկով: Այս ամենը կրում է որմնածածկ մի կամար: Շինության կառուցման համար փայտ բոլորովին չի կիրառվել, քանի որ այն քիչ է եղել գավառում: 500-600 տարուց ի վեր Անիի շինությունները լքված են, բայց դրանք քիչ են վնասվել ժամանակի ավերիչ ազդեցությունից: Չեն օգտագործել նաև կիրը, որը, դարձյալ քիչ է եղել հրաբխային այդ վայրերում: Բազմագույն ու տարբեր ամրության տուֆատեսակները տաշել են, քանդակել ու դարձրել պարիսպներ, խոյակներ, սյուներ ու կամարներ:

Տաճարի կառուցման ժամանակ Անի քաղաքի աստղը դժգունել է. քաղաքն ընկել է բյուզանդական իշխանների տիրապետության տակ, որոնք արդեն տիրել էին Կարսն ու Երզնկան: Գետի ափի եկեղեցին նախատեսված է եղել հունական ծիսակատարությունների համար, քանի որ մուտքի մոտ ավելացրել են սյունակերտ մի սրահ կամ նախագավիթ, ինչն ընդունված է եղել կառուցել այս դավանանքի եկեղեցի-

ների առջև: 1166 թ. Անին գրավել են վրացիները, ապա, նույն տարում, այն պաշարել է Վան լճի ափին տեղադրված Կրելաթ քաղաքի թագավորը: Քաղաքում իրենց բնույթով դեռևս մեզ անձանոթ հուշարձաններ կան: Վրացիների թագավոր Գևորգ Անին ավելի լավ հսկելու համար հաստատվում է այդտեղ: Այդ ժամանակ է, որ նրա վրա հարձակվում է սելջուկ սուլթանը: Նա երկարատև ու սարսափելի պաշարման մեջ է պահում Անին, բայց ձգձգվող պատերազմներից հոգնած՝ հաշտություն է կնքում և Անին զիջում որպես երաշխիք /1161 թ./:

Միայն Անիի դժբախտությունները չեն, որ այն ժամանակ ողբացել են հայերը: Սելջուկներն ավերել են ամբողջ երկիրը: Նրանք պաշարել են Արծն քաղաքը և, չնայած բնակիչների հերոսական պաշտպանությանը, գրավել և ավերել են այն: Բյուզանդական կայսրը չի օգնել Արծնի բնակիչներին, ավելին՝ օգտ-

վելով առիթից, Հայաստանի դժբախտ վիճակից, նա այս գավառները հափշտակել է Բագրատունիներից: Արծնից հափշտակած ավարը պակաս չի եղել Տուվնից վերցրածից, քանի որ, ըստ Մաթևոս Եղեսիացու՝ Արծնն ունեցել է 800 եկեղեցի: Նվաճող Իբրահիմը 800 ուղտ է բերում՝ եպիսկոպոսի գանձը տեղափոխելու համար: Իսկ ամբողջ ավարը բեռնվում է 10000 սայլի վրա:

Այս ժամանակներից սկսած՝ մահմեդական լծի տակ ընկած հայ ժողովուրդը հետզհետե սկսում է ցրվել աշխարհով մեկ: Արվեստների զարգացումն ընդհատվում է և հայկական ոճը տարածվում է իսլամիզմի հուշարձաններում:


...Մենք այնքան էինք հիանում Անիի ավերակներով, նրա մաքուր ու առողջարար օդով, զեղեցիկ ու մեղամաղծոտ բնությամբ, որ չէինք էլ մտածում մեկնելու մասին:

**Ֆրանսերենից թարգմանեց  
Սուսաննա Բոչոյանը**

ԳԱՎԻԹ ՔԵՐԹՄԵՆՋՅԱՆ

**Թ. ԹՈՐԱՄԱՆՅԱՆԻ ԳՆԱՀԱՏԱՆՔԸ  
ՄԵԾԵՐԻ ՆՈՒՇԵՐՈՒՄ**

Հայկական պատմական ճարտարապետության գիտական հետազոտման հիմնադիր Թորոս Թորամանյանի գիտաստեղծագործական ժառանգության ուսումնասիրության մատենաշարը հարստացավ ևս երկու կարևոր աշխատությունով. «Թորոս Թորամանյան – կյանքն ու գործը» և «Ժամանակակիցները Թորոս Թորամանյանի մասին»: Երկու գիրքն էլ հրատարակվել են Երևանում, 2005 թ.: Առաջինի հեղինակն է պատմաճարտարապետական հուշարձանների վերականգնման և հետազոտման մասնագետ, ճարտարապետության թեկնածու Նուբար Պապուխյանը, իսկ երկրորդ գրքի ստեղծմանը նրան հեղինակցել են ճարտարապետներ Միքայել Մազմանյանն ու Գառնիկ Թորամանյանը: Աշխատությունների հրատարակությունը հովանավորել է թորամանյանագետ, Նուբարի որդի՝ Սիմոն Պապուխյանը:



ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

Ն. Պապուխյանը հայագիտական շրջաններին հայտնի է «Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը» (Երևան, 1972) աշխատությամբ: Նա տարիներ շարունակ մինչև 1995 թ. ԱՄՆ փոխադրվելը և այնտեղ՝ մինչև 2001 թ. կյանքին հրաժեշտ տալը, նվիրաբար կազմել և ծանոթագրել է Թորոս Թորամանյանի մեծածավալ, եռահատոր երկերի գիտական ժողովածուն:

«Թորոս Թորամանյան – կյանքն ու գործը» 108 էջ ծավալով գրքույկը թարմություն է բերում գիտնականի գործունեության գնահատանքին, որոշ լրացումներ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Հարությունյանի մեծածավալ «Թորոս Թորամանյան» մենագրությանը: Եթե վերջինս հիմնականում քննարկում, վերլուծում և գնահատում է Թ. Թորամանյանի գիտաստեղծագործական ժառանգությունը, ապա Ն. Պապուխյանի աշխատությունը ներկայացնում է

գիտնականի կյանքն ու գործունեությունը: Գրքույկը կենսագրական ենթատեքստով շարադրված գիտական հոդվածների մի փունջ է, որ պարբերացում է գիտնականի անցած ուղին և ներկայացնում նրա գիտական խառնվածքն ու մասնագիտական հատկանիշները: Աշխատությունը կազմված է երեք հիմնական գլխից, որոնք հաջորդաբար վերաբերում են գիտնականի գործունեության նախախորհրդային, ապա խորհրդային շրջաններին և գիտական հայտնագործություններին:

Առաջին գլխում մեկնաբանվել են ականավոր գիտնականի Շապին Գարահիսարում և Կ. Պոլսում անցած «Մանկության, պատանեկության և ուսանողական տարիները», հայերի նկատմամբ օսմանյան կայսրությունում հալածանքներին և «Վտարանդի» կյանքը, հանգրվանումը «Հայրենի ավերակներում» և այդտեղ նրա մկրտությունը՝ «Թորամանյանն Անիի ինստիտուտի լավագույն գիտաշխատակից»: Ներկայացվել են գիտնականի այդ ժամանակահատվածում կատարած գործերը՝ «Թորամանյանը և Էջմիածնի Մայր տաճարի վերանորոգման խնդիրները», հայկական ճարտարապետության «Հարաբերությունները գերմանացի և ավստրիացի գիտնականների հետ», «Դեպքեր, դեմքեր և իրադարձություններ կապված Ալեքսանդրապոլում Թորամանյանի՝ 1903-1921 թթ. գործունեության հետ» և այլն:

Երկրորդ գլխից՝ «Աշխատանքային պայմանները և պաշտոնները», «Հետազոտական և գիտագործական աշխատանքները», «Թորամանյանը նախագծող ճարտարապետ», «Հարաբերություններ Փարիզի գիտնականների հետ», «Անձնական կյանքը և հասարակական դիրքը» մասերով տալիս է Թ. Թորամանյանի կյանքի դրվագներն ու հանգամանքները:

Երրորդ գլխում, վերլուծելով գիտնականի ժառանգությունը, Ն. Պապուխյանն ի մի է բերում Թորամանյանի ներդրումները հայկական ճարտարապետության ուսումնասիրության գործում՝ հայկա-


կան հուշարձանների հավաքագրումը, դրանց համակարգումն ու պատմական պարբերացումը, զարգացման ժամանակաշրջանների բնութագրումը, միջնադարյան տաճարների զմբեթավորումը և, հիմնականում Անիի օրինակով, հայկական քաղաքաշինության հիմնահարցերի բարձրացումը:

Աշխատությունը հրատարակվել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության «Պատմա-շակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊԱԿի համատեղ աշխատասիրությամբ՝ Կորյուն Ղաֆադարյանի խմբագրությամբ:

Երկրորդ՝ «Ժամանակակիցները Թորոս Թորամանյանի մասին» 463 էջանոց գրքի պատասխանատու խմբագիրը պրոֆեսոր Մուրադ Հասարթյանն է: Առաջաբանն ու ծանոթագրությունները գրել է Ն. Պապուխյանը: Փաստորեն, այս աշխատությունն ավելի շուտ է գրվել, քան «Թորոս Թորամանյան – կյանքն ու գործը» ուսումնասիրությունը: Գիրքն այսօր մեծ կարևորություն ունի ավելի հանգամանալի ներկայացնելու մեծագույն ճարտարապետի գործունեությունն ու գիտաստեղծագործական ժառանգությունը: Եթե Ն. Պապուխյանի «Թորոս Թորամանյան – կյանքն ու գործը» աշխատությունը հայոց երախտավորի երկերի ժողովածուի համար նախաբան կարող է ծառայել, ապա «Ժամանակակիցները Թորոս Թորամանյանի մասին» գիրքը՝ երկերը պարզաբանող հավելված է: «Թ. Թորամանյանի կյանքի, գործունեության և անձի մասին շատերն են արտահայտվել ու կշարունակեն անդրադառնալ, - գրում է Ն. Պապուխյանը, - որովհետև ամուր և անսասան են ճարտարապետական գիտության համար նրա ստեղծած հիմքը, նրա մատուցած ծառայությունները»: Անշուշտ, թորամանյանագիտության համար շատ արժեքավոր են Թորամանյանի ժամանակակիցների հուշերը, կարծիքները և տպավորությունները, որ ցրված են եղել ժամանակի մամուլում, հաճախ՝ նույնիսկ անտիպ, այժմ ի մի են բերվել այս գրքում: Արդարև, առանց դրանց հնարավոր չէր ամբողջացնել

գիտնականի բացառիկ կերպարը: Այս կերպարի բացահայտման նպատակն է ժամանակին (1936 թ.) ունեցել հայ ճարտարապետության երախտավորներից Մ. Մազմանյանը: Գործն սկսվել է, սակայն հեղինակի աքսորման պատճառով այն ընդհատվել է և մնացել է կիսատ: Ն. Պապուխյանի վկայությամբ Թ. Թորամանյանի երկերի նոր, ակադեմիական հրատարակությունը նախածեռնելիս ինքը հայտնաբերել է բազմաթիվ նյութեր, որոնք ամբողջացնում են Մ. Մազմանյանի հավաքածուն: Արդարև, գիրքը բովանդակում է Թ. Թորամանյանի մասին 74 մեծ ու փոքր հաղորդում, որոնցից՝ քսանը տպագրվում է առաջին անգամ: Աշխատությունում Թորոս Վարպետի (այսպես են հաճախ անվանել գիտնականին) կյանքը ներկայացվել է հենց նրա «Իմ կենսագրությունը» վերնագրով: Թ. Թորամանյան ճարտարապետ-հետազոտողը գնահատվել է Անիի հնագիտական պեղումների շեկավար, մեծանուն արևելագետ Նիկոլայոս Մառի «Թորամանյանի մասին» և «Ձեկույց նկարիչ-ճարտարապետ Թորոս Թորամանյանի կազմած «Անի» հնագիտական ալբոմի մասին» վերնագրերը կրող զեկույցներով: Գիտնականի գործունեությանը, «Անահիտ» հանդեսում և այլ թերթերում, բազմիցս անդրադարձել է գրող, արվեստաբան, հասարակական գործիչ Արշակ Չոպանյանը: Դրանցից գրքում ներգրավվել են միայն երկու հոդված: Գիտնականի, հայրենասերի, աշխատասերի և իրատեսի


1. Աշխատությունում բազմաթիվ են նոր հրատարակվող նյութերը, որոնք Ն. Պապուխյանը ներկայացրել է գրքի վերջում գետնից հանված: Դրանք են՝ Թ. Թորամանյանի «Իմ կենսագրությունը», Գառնիկ Թորամանյանի «Մահ Թորոս Թորամանյանի» և «Հուշեր հոր մասին», Գառնիկ Հյուսիսյանի՝ «Հուշեր Թորամանյանի մասին», Կարո Մայրանի՝ «Անմահ անուն», Արշակիր Կարինյանի «Թորամանյանը», Քերուզ Չափյանի՝ «Հուշերիս էջերեն», Մարտիրոս Սարյանի՝ «Մեծ արվեստագետը», Ատրպետի՝ «Մեծ ճարտարապետը», Հովսեփ Օրբելու՝ «Չուբինովի և Թորամանյանի վեճը», Դերենիկ Դեմիրճյանի՝ «Թորոս Թորամանյան», Սիրանուշ Մինասյանի՝ «Հոր մասին», Նազիկ Թորամանյանի՝ «Հուշագրական նոթեր», Վարդգես Թափկյանի՝ «Հանդիպում մեծ ճարտարապետ Թորոս Թորամանյանի հետ», Գրիգոր Չուբարի՝ «Գիտնական ճարտարապետը», Հովհաննես Խալվախյանի՝ «Հին հայկական ճարտարապետության առաջին ուսումնասիրողը», Գևորգ Մուշեղյանի՝ «Հուշեր Թորոս Թորամանյանի մասին», Արդվարդ Կանայանի՝ «Մեծ գիտնորկանը», Կոնստանտին Հովհաննիսյանի՝ «Մեծ վարպետը», Սեդրակ Բարխուդարյանի՝ «Թ. Թորամանյանը որպես բանասեր ու հնագետ», Առֆի Եսայանի՝ «Թորամանյան» հուշագրությունները:



կերպարն ազգագրագետ, ծագումով Շապին Գարահիսարցի Գառնիկ Հյուսիսյանի հուշերում արտահայտվում է ներքին գորուով: Բաբկեն Եպիսկոպոսը իր հոդվածում գրում է՝ «Կիրավիրեն սիրելի ազգիս»

ուշադրությունը թորամանյանի վրա, այս նոր Տրդատ ճարտարապետի վրա»: Կ. Պոլսի Պալանների ճարտարապետական գերդաստանի շառավիղներից ճարտարապետ Կարո Պալանը թորամանյանին որակում է որպես «Ամմահ անուն»: «Գեղավեստասեր» ծածկանունով մի հեղինակ թորամանյանի նախագծային գործունեությունն այն ժամանակի Բուլղարիայի կրթության նախարարի լեզվով բնութագրում է. «Հայոց երկրի գաղտնիքը... հայ ճարտարապետության Արարատը»: Հայկ Հաճոյանի և Վարազդատ Հարությունյանի նամակագրության ձևով ներկայացված «Թորոս թորամանյանը Բուլղարիայում» հոդվածը թորամանյանի նախագծած և կառուցած 6 շենքի մասին է, որոնք դասելի են հայ ճարտարապետների XIX-XX դդ. հաջողված գործերի շարքին: Լեոն, «Ամիում» վերնագիրը կրող և հինգ մասով հուշագրությունում, հաճախ է անդրադառնում Թ. Թորամանյանի գործունեությանը: Ուշագրավ է անվանի պատմաբանի՝ ճարտարապետի մասին հետևյալ արտահայտությունը. «Տեսնենք այնուհետև որ մասնագետ հայը կերթա ամիսներով (եթե ոչ տարիներով) բնակություն հաստատելու կարիճների և օձերի մեջ՝ վառված իր նախնիների կուլտուրական հանճարի փշրանքները մահից ազատելու տենչանքով...»: Նա մեջ բերում է Ն. Մառի խոսքերը՝ «ճարտարապետական հուշարձանների լեզվից պետք է սպասել այն լույսը, որ պիտի գա պարզելու հնության շատ հարցեր: Եվ այդ հուշարձանների լեզվի առաջին ուսուցիչը ճարտարապետ թորամանյանն է»:

Անհերքելի իրողությունն է, որ եթե թորամանյանը չլիներ, Ն. Մառը իր ներս չարձուներ չէր լինի, չէին լինի Յո. Ստրժիգով.՝ ու «Հայկական ճարտարապետությունը և եւ ի յւ ն» և Յո. Պալտրուշայիսի մեծ կարևորությամբ աշխատությունները: Թ. Թորամանյանը կորստից փրկել է մի ամբողջ քաղաք, վերկազմել ու իրական պատկերով ներկայացրել հայկական ճարտարապետության համամարդկային նշանակության նվաճումներից մեկը՝ Զվարթնոցը ու դրանք նվիրել մշակույթի բազմին: Յ. Ստր-



ժիգովսկին եզրակացնում է՝ «Թ. Թորամանյանի գործունեությունն ստիպեց նոր մոտեցում ցուցաբերել համաշխարհային միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրությանը»: Անիում թորամանյանի հետ աշխատակցած Արամ Վրույրի խոսքերով՝ «Իսկ ԱՄԻ՞Ն... ԱՄԻ՞Ն Նրա (Թորամանյանի) համար ապրող, շնչող իրականություն էր: ԱՄԻ՞Ն անցյալը նրա աչքում կենդանի ներկա էր. Օա տեսնում էր անցած իրերը, դեպքերը, պատկերները»: Մեկը մյուսից ավելի արժեքավոր են գրքում բերված նյութերը և դրանցում հատկապես հնչել են Ավետիք Իսահակյանի և սիրով հագեցված հուշը, ուր գրողը նշել է՝ «Իսկ ԱՄԻ՞Ն և ուրիշ ավերակների մոտ և հեռու գյուղերում կարծում էին, թե «ճարտարապետ» հատուկ անուն է: Եղել են դեպքեր, որ գյուղերում նորածին-

ների անունը ճարտարապետ են դրել»: Վրոնի վարպետ Մարտիրոս Սարյանը թորամանյանի կերպարը ներկայացնում է՝ «Մի անհատ էր, այլ կառուցվածք՝ ժայռակտոր», Գարեգին Լևոնյանի խոսքերով՝ «Նորությունը Թորոս թորամանյանի ասածների մեջ էր, և այդ նորությունները չէին կարող ուշադրության չառնվել մինչև իսկ մայրաքաղաքների գիտական կաճառների կողմից»: Ամենայն հայոց բանաստեղծը՝ Հ. Թումանյանը, թորամանյանի գործը դիտում է որպես՝ «Այո, դրանք բնդանոթներ են, հայկական բնդանոթներ, և բնդանոթներից ամենազմիվն ու ամենաուժեղը, որ երբևիցե հնարել է մարդը. դրանք իրենց հետ տանում են հայ ժողովրդի ստեղծագործական հանճարն ու կարողությունը և գնում են հայերի համար նվաճելու լուսավոր ազգերի սերն ու համակրությունը, հարգանքն ու հիացումը»: Հայ ժողովրդի մեկ այլ նվիրյալ Նիկողայոս Բուրիայանի խոսքերով՝ «(Թորամանյանը) ցույց տվեց, թե ինչպես պետք է աշխատել»: Դերենիկ Դեմիրճյանի ասելով՝ «Նրա հասարակ երևույթի տակից նկատվում էին հարուստ ու վեհ գիտելիքներ»: Ստեփան Թորյանի տպավորությամբ՝ «Թորամանյանը... Կարծես դարեր ապրած մարդ էր. դարեր տեսած ու դարերի փորձով լեցված՝ դարձել էր սակավախոս ու խոհուն»:

Հարուստ է գրքում հավաքված նյութը և օգտավետ: Արժեքավոր են բազմաթիվ գործիչների և գիտնականների կշռադատված գնահատականները: Այդտեղ են՝ Ֆրեդերիկ Մակլերը, Նիկողիմ Կոնդակովը, Ատրպետը, Կ. Լեոնտևը, Գրիգորիս Պալաքյանը, Լևոն Լիսիցյանը, Յոզեֆ Ստրժիգովսկին, Շառլ Դիլը, Երվանդ Տեր-Մինասյանը, Ասլան Շահնազարյանը, Զապել Եսայանը, Արա Սարգսյանը, Յուրգիս Բալթրուշայիսը, Ալեքսեյ Շչուսևը և շատ ուրիշներ:

Ուշադրության են արժանի Մարկ Գրիգորյանի՝ Թ. Թորամանյանի մասին ճարտարապետական արժեքավոր վերլուծություններ բովանդակող հուշերը: Նա ներկայացնում է Թամանյան-Թորամանյան համագործակցության նշանակությունը, հատկապես

Երևանի «Ժողտան»՝ Օպերայի և Բալետի ակադեմիական թատրոնի ստեղծագործման մեջ:

Վարպետի խոստովանությամբ՝ «(Թորամանյանի չափագրությունները)... Ես օգտագործեցի Մատենադարանի շենքի ճակատի լուծման համար»: Նույն և թորամանյանական այլ սխրանքներ նշում են նաև Միքայել Մազմանյանը, Կարո Ղաֆադարյանը, Մորուս Հասրաթյանը, Սեդրակ Բարխուդարյանը, Վարազդատ Հարությունյանը, Հովհաննես Խալփախյանը, Ռուբեն Զարյանը, Կոստանտին Հովհաննիսյանը, Գևորգ Մուշեղյանը և շատ ուրիշներ, ովքեր գիտական աշխարհի մտան թորամանյանով ոգևորված ու թորամանյանական սրտով և կերտեցին մեր արվեստաբանության ներկան՝ գիտնականի երագած հայկական ճարտարապետության ուսումնասիրության պողոտան: Եշմարիտ է ճարտարապետ Վարդան Հովաննիսյանի արտահայտությունը՝ «Թորամանյանը մեր ճարտարապետության Կոմիտասն է»:

Իրոք, մեծությունները և մեծերը ձևավորվում են կյանքի հորձանքում, նրանց ստեղծած գործերը կյանքի, քաղաքակրթության անփոխարինելի և անհերքելի ներդրումներ են, մեծագույն արժեքներ:

Այդպիսին է Թ. Թորամանյանի ժառանգությունը: Հայ մտավորականների ընտրանիի՝ Միքայել Մազմանյանի, Գառնիկ Թորամանյանի, Կարո Ղաֆադարյանի և այլոց ջանքերով «Նյութեր Հայ ճարտարապետության» (Երևան, 1942 և 1948) երկհատորյակի հրատարակումը գիտական մեծ ալիք է առաջացրել, որի արտահայտություններից և արձագանքներից է նաև Ն. Պապուխյանի ու հեղինակային խմբի այս աշխատությունը: Գրքերում պատկերված է XX դարի առաջին տասնամյակների մտավորականության հայացքների բյուրեղացման գործընթացը, որը հիմք ծառայեց հայկական մշակույթի հետագա վերելքի համար:

Թ. Թորամանյանի կյանքի, գործունեության և աշխատությունների ծալքերում կան բազմաթիվ հարցերի պատասխաններ: Ահա թե ինչու այսօր

հույժ ցանկալի է և մեծ կարևորություն ունի գիտնականի երկերի ամբողջական հրատարակությունը,

որը պատրաստել է Ն. Պապուխյանը, և որը, սակայն, տարիներ շարունակ մնում է անտիպ:

**Դավիթ Բերթմենջյան**  
Դոկտոր, պրոֆեսոր

*David Kertmenjian*

### THE APPRECIATION OF THE SCIENTIST'S MERITS

(Summary)

The study of the merits of the founder of Armenian historic architecture Toros Toramanyan has been recently enriched by two more books, "Toros Toramanyan: Life and Activities" and "Contemporaries about Toros Toramanyan". Both books are published in Yerevan in 2005. The author of the first book is the renowned scientist and expert in restoration Noubar Papoukhyan. The next book is compiled by Noubar Papoukhyan together with two other architects Michael Mazmanyan and Garnik Toramanyan. The presented article is a critical appreciation of the above mentioned books. The first study consists of three chapters successively entitled: "The Works and Activities of Toros Toramanyan in Pre-Soviet Period, in the Soviet Period and the Discoveries Made by the Scientist." The book "Contemporaries about Toros Toramanyan" is an outstanding collection of 74 articles written by different scholars of culture of the XIX-XX cc. Twenty articles of 74 have been published for the first time. All the articles state the intellectual conditions of the era, at the same time they illustrate the scientific image of Toros Toramanyan and his attitudes in the field of the history of architecture.

### ՆՈՐ ԳԻՐՔ

Հրատարակվել է Աշոտ Հայկազունու (Աշոտ Հայկազի Գրիգորյան) «խորհրդանշանային մտածողությունը հայ ճարտարապետությունում» մենագրությունը:

Գրքում արծարծվում են հայկական ճարտարապետությունում կիրառված խորհրդակիր մտածողության արդյունք հանդիսացող խորհրդակիր պատկերների զարգացման և պահպանման խնդիրները՝ բնակելի, պաշտամունքային, քաղաքաշինական և մեմորիալ կառույցների հորինվածքների օրինակներով: Քննության է առնվել հնագույն շրջանից ի վեր Հայկական լեռնաշխարհում ավանդաբար զարգացած խորհրդապաշտական մտածողության ազդեցությունը հայ ճարտարապետական մտքի վրա:



### NEW EDITION


Summary

Ashot Haykazuni's (Ashot Haykaz Grigorian) new book "Symbolic Mentality in the Armenian Architecture" has been published recently.

The book describes the ways of the symbolic approach, the development and preservation of the emblematic images in the Armenian architecture according to the outlays of residential houses, worship, memorial and urban constructions. The book explains the impact of the traditionally developed symbolic mentality on the Armenian architecture though hundreds of centuries.

### Մեր երախարավորները

## ՊՐՈՖԵՍՈՐ ՆՏ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ ՄՈՒՐԱԴ ՆԱՍՐԱԹՅԱՆ



Ճարտարապետության դոկտոր պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Մարգարի Հասրաթյանը հայկական ճարտարապետության ուսումնասիրության դասական թորամանյանական դպրոցի ներկայացուցիչներից է: Նրա գործերը մասնագիտական եղանակ ստեղծող արժեքներ են, որոնք միջավայրաստեղծ նշանակություն ունեցան հայկական ճարտարապետության ճանաչողության խորացման և ծավալման գործընթացներում: 70-ամյա մասնագետի գործունեությունը բազմաբովանդակ է, նրա վաստակի վերլուծությունը՝ անչափ կարևոր:

Փայլուն ընդունակություններով օժտված Մ.Հասրաթյանը ձեռք բերելով միջնակարգ և մասնագիտական կրթություն, 1958-64 թթ. որպես նախագծող ճարտարապետ աշխատել է «Երևաննախագիծ» ինստիտուտում: Նրա մասնագիտական

բազմակողմանի ունակությունները դրսևորվում են գիտական առաջին իսկ քայլերից: 1964 թ. աշխատում է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում նախ որպես գիտաշխատող, ապա՝ 1988 թ. առ այսօր ճարտարապետական ուսումնասիրությունների բաժնի ղեկավար: Հիշարժան է Մ. Հասրաթյանի գործունեությունը Հայաստանի ճարտարապետների միությունում, որտեղ 1964 - 1974 թթ. եղել է վարչության անդամ և պատմության սեկցիայի նախագահ: 1965 թ. մինչև օրս ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ է, 1971 - 76 թթ.՝ գիտական քարտուղար և 1979 - 85 թթ.՝ Հուշարձանների համահավաքի բաժնի վարիչ: 1980 թ. մինչև այսօր նա Հայաստանի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության (այսօր՝ գործակալություն) գիտական խորհրդի անդամ է, 1982 թ. սկսյալ գոր-

ծուն մասնակցություն ունի Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության հանրապետական խորհրդի նախագահության կազմում: 1993 թ. Մ. Հասրաթյանը արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի և համագործակցության հայկական միության «Հայաստան-Ֆրանսիա» ընկերության վարչության կազմում է, իսկ 1998 թ. Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանին կից գիտական աստիճանաշնորհման մասնագիտական խորհրդի անդամ: Նա 1999 թ. Հայկական հանրագիտարանի գիտախմբագրական և 2001 թ. Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց դպրատան գիտական խորհուրդների անդամ է: 2002 թ. ներգրավվել է «Հայ արվեստ» ամսագրի խմբագրական և 2003 թ. մասնակցություն ունի ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի գիտական խորհրդների մեջ: Մ. Հասրաթյանը միշտ գործուն դեր է ունեցել Հայ արվեստի ուսումնասիրությանը նվիրված միջազգային գիտաժողովների կազմակերպական աշխատանքներում:

Կրթության ասպարեզում Մ. Հասրաթյանի ուղին ճարտարապետության տեսության և պատմության, հուշարձանների պահպանության ու վերականգման բնագավառն է: 1994 թ. դասավանդում է Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիայում, 1999 թ.՝ Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում վարում է հայկական ճարտարապետության պատմության դասընթացները: Հայկական ճարտարապետության առաջավոր մասնագետը 2000 թ. հրավիրվել է Սորբոնի համալսարան՝ դասախոսելու «Հայկական միջնադարյան ճարտարապետություն» դասընթացը: 2001 թ. դասավանդում է նաև Երևանի պետական համալսարանում: 2003 թ. բեղուն գործունեության համար արժանացել է պրոֆեսորի գիտական կոչման, իսկ 2006 թ. նշանավորվել է գիտնականի կյանքում ՀՀ ԳԱԱ թղթակից անդամի կոչման շնորհմամբ:

Մ. Հասրաթյանի ստեղծագործական գործունեությունն սկսվել է բնակելի, հասարակական շենքերի և ավանների նախագծումից: Առաջին գիտահետազոտական գործերը վերաբերում են հայկական արդի ճարտարապետության ոլորտին: Նրա նախասիրություններն աստիճանաբար երանգափոխվել են դեպի միջնադարյան ճարտարապետության կոթողների ուսումնասիրությունը, որն իրականացրել է մասնագիտական ծանրակշիռ մեկնաբանություններով: 1960-ական թվականների կեսին հրատարակված նրա «Երևանի նոր դիմագծերից մեկը», «Երևանի վաղը», «Երևանի նորածն փողոցները», «Երևանը երեկ, այսօր և վաղը» հոդվածներն՝ իրենց շարունակությունն են ունեցել Մոսկվայում 1968 թ. հրատարակված «Երևան» աշխատությունում (համահեղինակներ՝ Վ. Հարությունյան և Ա. Մելիքյան), ինչպես նաև ավելի ուշ՝ նույն հեղինակային խմբով հրատարակած «խորհրդային Հայաստանի ճարտարապետությունը» (Մոսկվա, 1972 թ) գրքում:

1969 թ. շրջադարձային տարի էր Մ. Հասրաթյանի գիտական գործունեությունում: Նա ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում պաշտպանել է «Սյունիքի ժե-ժԸ դարերի ճարտարապետական համալիրները» խորագիրը կրող թեկնածուական ատենախոսությունը, որը որպես մենագրություն, 1973 թ. լույս է տեսել Երևանում: Մ. Հասրաթյանի այս աշխատությունը թարմություն էր հաղորդում մինչ այդ հրատարակված հայկական ճարտարապետության պատմության հայտնի աշխատություններին, ինչպիսիք են Նիկոլայ Տոկարսկու, Վարազդատ Հարությունյանի և Սամվել Սաֆարյանի, Անատոլի Յակոբսոնի և ուրիշների գրքերը, ակադեմիական «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության» հատորը, իտալական հեղինակային խմբի «Միջնադարյան Հայաստանի ճարտարապետությունը» աշխատությունը և այլն: Ինչպես նշում է Վ. Հարությունյանը՝ «Դրանով առաջին անգամ գիտական շրջանառության մեջ մտցվեց մինչ այդ անհայտ այնպիսի հուշարձանախմբեր, ինչպիսիք են Սյունիքի՝ Սյունյաց Մեծ ա-

նապատը, Հալիծորի բերդը, Տաթևի Մեծ անապատը, Շատինի վանքը, Շինուհայրի Կուսանաց վանքը (Հարանց, Բեխի անապատները) և այլն»<sup>3</sup>: Աշխատությունում հեղինակը, ի տարբերություն հայագիտության հայտնի երախտավոր Համազասպ Ոսկյանի, մասնագիտորեն մեկնաբանում է «Վանք» և «Անապատ» կրոնական հաստատությունների միջև եղած ֆունկցիոնալ տարբերություններն ու անդրադարձնում դրանք վերոհիշյալ վանական համալիրների կառուցապատման վերլուծական մեկնաբանություններում:

Մ. Հասրաթյանի դոկտորական ատենախոսությունը նույնպես խորացնում էր և ընդհանրացնում հայկական ճարտարապետության ուշ միջնադարյան ժամանակաշրջանի հետազոտումը: «Հայկական ճարտարապետությունը ԺԵ-ԺԹ դարի սկիզբները» խորագիրը կրող այդ աշխատությունում (սեղմագիրը՝ Երևան, 1993 թ.) հեղինակը, հիմք ընդունելով իր և այլ հետազոտողների նոր լույս ընծայված նյութերը, եզրահանգում է, որ ուշ միջնադարը հայկական ճարտարապետության զարգացման օրգանական փուլերից մեկն է: Չնայած Հայաստանը չի արձագանքել համաշխարհային վերածննդի, Բարոկկոյի վերելքներին, այդուհանդերձ երկրում եղել է տոհմիկ ճարտարապետության վերընթաց, որով կամրջվել են հայկական ճարտարապետական արվեստի միջնադարյան և նոր ժամանակների ստեղծագործական որոնումները: Ատենախոսությունում հեղինակը կիզակետում է վերցնում մի շարք բնակավայրերի ու տարածքների (Երևան, Վաղարշապատ, Ջուղա, Ագուլիս, Վան, Կարին, Բաղեշ, Սեբաստիա, Նախիջևան, Ղարաբաղ) բազմաթիվ ապարանքները, վանք-ամրոցները, վանքային համալիրները, կոմունալ-կենցաղային շենքերը, ինժեներական կառույցները, մեմորիալները:

Մ. Հասրաթյանի գիտաստեղծագործական ժառանգությունը հնարավոր է համակարգել երեք խմբի: Առաջին խմբում ընդգրկվում են հայկական ճարտարապետության համընդհանուր պատմու-

թյան, տարածաշրջանային և զարգացման փուլերի հետազոտությունները: Երկրորդ խմբի աշխատությունները վերաբերում են վանքային համալիրների և առանձին հուշարձանների տիպաբանական, հորինվածքային և շինարվեստի բազմաբովանդակ վերլուծություններին: Երրորդ խմբում ներգրավվում են հայկական ճարտարապետության հետ առնչվող ստեղծագործական կենսագրությունները, ուղեցույցները, գրախոսությունները, ընդդիմախոսություններն ու մասնագիտական այլ գործերը: Նշվածները միասնաբար կազմում են՝ 13 գիրք, 20-ից ավելի բրոշյուր և ուղեցույց, հեղինակավոր ամսագրերում և հանդեսներում հրատարակված 120-ից ավելի գիտական հոդված, բազմաթիվ գիտական զեկուցումների թեզեր և թերթերում հրատարակված հոդվածներ, 150-ից ավելի հանրագիտարանային տեղեկատվական նյութ և այլն:

**Ա / Մ. Հասրաթյանի՝ հայկական ճարտարապետության համընդհանուր պատմությանը վերաբերող աշխատությունները** ակնարկային կարգի են:

Դրանց կարևորագույններից են՝ ֆրանսերեն ու ռուսերեն լեզուներով հրատարակված «Ուրվագծեր հայկական ճարտարապետության պատմության» (Մոսկվա, 1985 թ.)<sup>4</sup> և հայերեն ու անգլերեն լույս տեսած «Հայկական Բրիտանիկական ճարտարապետության 1700 տարին» (Երևան, 2001 թ.) շքեղ գրքերը: Նշված գրքերում և մյուս աշխատություններում հեղինակը ձգտել է համակողմանի լրացնել հայկական ճարտարապետության այս կամ այն տեսակետները: Տվյալ հանգամանքը բացահայտորեն երևում է նրա զանազան հրատարակություններում, որոնցից հատկապես կարևոր են «Հայկական ճարտարապետության ուսումնասիրությունը Ֆրանսիայում»<sup>5</sup>, «Հայ միջնադարյան ճարտարապետության հիմնահարցերը «Բազմավեպի» էջերում»<sup>6</sup>, «Հայ միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրության ձեռքբերումները, ներկա վիճակը և անելիքները»<sup>7</sup>, «Հայկական ճարտարապետության ուսումնասիրու-

թյունը Իտալիայում»<sup>8</sup> և այլն:

Հիշարժան է, որ 1980-1990 թթ. հրատարակվեցին հայկական ճարտարապետության համընդհանուր պատմության վեց կարևոր աշխատություններ, այդ թվում՝ Ստեփան Մնացականյանի, Նոնա Ատեփանյանի և Բուրխարդ Բրենտջեսի «Հայկական ճարտարապետություն» գերմաներեն գիրքը, Պատրիկ Տոնապետյանի և Ժան Միշել Թիերրիի «Հայկական արվեստներ» խորագիրը կրող ծավալուն ֆրանսերեն աշխատությունը, Վ. Հարությունյանի հիմնարար՝ ռուսերեն լեզվով լույս ընծայված «Հայ ժողովրդի քարե տարեգրությունը», Մ. Հասրաթյանի «Ուրվագծեր հայկական ճարտարապետության պատմության» գիրքը, Պաուլո Կունեոյի և հեղինակային խմբի (այդ թվում և Մ.Հասրաթյանը) «Հայկական ճարտարապետություն» իտալերեն երկհատորյակը և Վազգեն Բարսեղյանի նախածեռնությամբ Նյու Յորքում հրատարակված «Հայկական ճարտարապետություն» Միկրոֆիշերի հինգհատորյա անգլերեն ժողովածուն: Եթե այդ աշխատությունների արտասահմանյան հրատարակություններում հնարավորին չափով արտացոլված են Արևմտյան Հայաստանի նորահայտ նյութերը, ապա՝ հայաստանյան հրատարակություններում համակարգվել են մինչ այդ եղած և նորահայտ նյութերը: Այդպիսիք են Վ. Հարությունյանի 1992 թ. լույս տեսած «Հայկական ճարտարապետության պատմություն» դասագիրքը, Ստ. Մնացականյան, Կոնստանտին Գովհաննիսյան և Ալեքսանդր Սահինյան հեղինակային խմբի «Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի ճարտարապետության պատմության» աշխատությունները: Հայկական ճարտարապետության ուսումնասիրության տվյալ գործընթացում Մ. Հասրաթյանն իր աշխատությունում ոչ միայն քննականորեն ընդգրկել է Հայաստանյան և օտարերկրյա հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող մասնագետների նորահայտ նյութերը (ինչպես՝ Սորադիի Սք. Էջմիածին, Արագած, Աղբակի Սք. Բարդուղիմեոս, Վասպուրականի Գանձակի Սք. Թով-

մաս), այլ նաև նորամուծություններ է կատարել հայկական ճարտարապետության պատմության հուշարձանների ընդունված ընտրանիում: Նա իր երկու աշխատություններում էլ փորձել է հարստացնել վաղ ու զարգացած միջնադարի նյութերը (Բայբուրդի միանավ եկեղեցի, Մոխրենիս, Բարձրյալ Խաչ մատուռ - դամբարան, Տավուշի Մորո Ձորո վանքի եկեղեցի) և ԺԵ-ԺԸ դարերի հայկական գաղթօջախների հուշարձանների տվյալները (Ղրիմի Միքայել-Գաբրիել, Թիֆլիսի Սք.Կարապետ եկեղեցիներ և այլք), ներառելով մինչև արդի՝ խորհրդահայ ճարտարապետության նվաճումները:

Հայկական ճարտարապետության պատմության խնդիրներով են պայմանավորված նաև Մ. Հասրաթյանի առանձին ժամանակաշրջանների և տարածքների ուսումնասիրությանը վերաբերող աշխատությունները: Այս առումով կարևոր ներդրում է գիտնականի անգլերեն և ռուսերեն լեզուներով լույս ընծայված «Վաղ քրիստոնեական հայկական ճարտարապետություն» (Մոսկվա, 2000 թ.) մենագրությունը: Այստեղ առաջին անգամ ներկայացվում են ժամանակաշրջանի համարյա բոլոր հուշարձաններն իրենց ընդգրկուն դասակարգմամբ, լուսանկարներով ու գրաֆիկական նյութերով: Փաստորեն, աշխատությունում վաղ միջնադարյան հուշարձանների դասակարգումը կատարվել է ոչ թե աղյուսակային կարգով, այլ դրանց՝ ծավալատարածական ձևերի աստիճանական կազմավորման հերթականությամբ գրքում ընդգրկելու եղանակով:

**Բ. / Մ. Հասրաթյանի ներդրումը մեծ է ուշ միջնադարյան հուշարձանների հետազոտման բնագավառում:**

Ուշ միջնադարյան ուսումնասիրությունների բնագավառում կարևոր ներդրում են վերևում ներկայացված ատենախոսությունները և «Հայաստանի ճարտարապետությունը 15-18-րդ դարերում»<sup>9</sup>, «Ուշ միջնադարի հայկական ճարտարապետության առանձնահատկությունները»<sup>10</sup>, «Արցախի ճարտարապետությունն ուշ միջնադարում» և «Արտագի

սք.Թադեի վանքի ճարտարապետությունը» հողվածները<sup>11</sup>: Սրանց պետք է հավելել «Վաղ միջնադարի հայ ճարտարապետները» կարևոր ուսումնասիրությունը: Ինչպես գրում է հեղինակը՝ «Միջնադարյան հայ ճարտարապետներին, քանդակագործներին («կազմողներ»), քարագործ վարպետներին, արձանագրություններ փորագրողներին («գրիչներ») երևան բերելու խնդրին նվիրված ամենախոր և ընդարձակ ուսումնասիրությունը կատարել է Սեդրակ Բարխուդարյանը, որին պարտական ենք բազմաթիվ տաղանդավոր արվեստագետների անունները մոռացությունից փրկելու համար: Այդ մեծագործության մեջ ի մի են բերված մոտ յոթ տասնյակ ճարտարապետի և 140 քանդակագործի անուններ» (էջ 118): Պետք է ասել, որ նվազ որոնումներ չի կատարել է նաև Մ. Հասրաթյանը: Հայտնի է, որ դարերի և երկրների մշակույթներում և ժամանակաշրջաններում ճարտարապետի մասնագիտությունը կոչվել է տարբեր անուններով, ինչպես՝ արկիտեկտոն, արկիտեկտուս, մեքանիկոյ, մաստեր, երկրաչափ, կառուցող և այլն<sup>12</sup>: Այս առումով բացառություն չէ նաև հայոց պատմությունը: Իրականում զանազան վիճակներում արձանագրություններում, մատենագրական և հիշատակարանային տեղեկություններում ճարտարապետի փոխարեն կիրառվել են նաև հետևյալ բառերը՝ որմնադիր, քարտաշ, քարգործ, գաղատոս, արվեստավոր, վարդապետ-վարդապետ-վարպետ, ուստա, մեյմար, խալֆա և այլ բառեր: Մ. Հասրաթյանը, ըստ վաղ միջնադարյան աղբյուրների, այս անվանումներին ավելացնում է նաև «շինող» կոչումը: Սա ոչ միայն օժանդակում է հարստացնել միջնադարյան ճարտարապետների անվանացանկը, այլև հստակություն է մտցնում հայկական տաճարաշինության, վիճագործության, մատենագրական ու այլ աղբյուրներում եղած ձևաբանական հարցերի մեկնաբանության գործընթացներում: Ինչպես հողվածում նշում է հեղինակը՝ «ճարտարապետ»-ը, որպես մասնագիտության անվանում, պատմական աղբյուրներում ի հայտ է եկել միայն 10-րդ դարից սկսյալ: Մինչ

այդ, ճարտարապետ բառի փոխարեն օգտագործվել են վերևում նշված անվանումները, այդ թվում և «շինող» բառը: Այս նորույթն ավելի հիմնավոր ներկայացված է Հռոմում 1988 թ. հրատարակված «Հայկական ճարտարապետություն» կոթողային աշխատության հեղինակի շարադրած մասում<sup>13</sup>:

Պատմական Հայաստանի տարածքների ուսումնասիրություններում Մ. Հասրաթյանը հիմնականում կենտրոնացել է Սյունիքի և Արցախի նահանգների նյութերի վրա: Փաստորեն հեղինակի ատենախոսությունների թեմաները, որոշ հավելումներով, շարունակվում են զանազան մեծագործություններում, որոնցից հատկապես կարևոր են ռուսերեն լեզվով լույս ընծայված՝ «Սյունիքի ճարտարապետական համալիրները ԺԷ-ԺԸ դարերում»<sup>14</sup>, «Սյունիքի ճարտարապետության դպրոցը ԺԷ-ԺԸ դարերում»<sup>15</sup>, «Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը՝ փաստեր և խեղաթյուրումներ»<sup>16</sup> և Արցախի թեմայով հայերեն հրատարակված՝ «Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը և նրա առանձնահատկությունները»<sup>17</sup>, «Արցախի հուշարձանները»<sup>18</sup>, «Արցախի ճարտարապետական դպրոցի բնորոշ գծերը»<sup>19</sup> գործերը: Ավելացնենք, որ բացի Սյունիքից ու Արցախից, հրատարակությունների այս փնջում կան նաև Վասպուրականին, Տաշիրի, Արագածոտնին վերաբերող մի քանի նյութեր ևս, որոնց մասին խոսվում է «Վասպուրականի ուշ միջնադարյան ճարտարապետական դպրոցը»<sup>20</sup>, «Տաշիրի սրահավոր միանավ հուշարձանները»<sup>21</sup>, «Արագածոտնի մարզի վաղ քրիստոնեական եկեղեցիների տեղը և դերը հայկական ազգային ճարտարապետության ձևավորման գործում»<sup>22</sup> և այլ հողվածներում:

Եթե վերջինները վաղ միջնադարյան հուշարձանների հետազոտության արդյունք են, ապա Արցախյան ուսումնասիրությունները ոչ միայն շարունակում են Սյունիքի ուշ միջնադարյան և ապա վաղ միջնադարյան հուշարձանների խնդիրների քննությունը, այլև խորանում են հայկական ճարտարապետության միջնադարյան դպրոցներին մասնատարած հայկական տոհմիկ դպրոցի տեսապատմական հարցում, որ 1992 թ. հրատարակվել է նաև որպես մեծագործություն: Այդ աշխատությունում հեղինակն արցախյան դպրոցի վերլուծությունը կատարում է ոչ թե հոինվածքի տեսության ծավալատարածական խնդիրների մեթոդական վերլուծության հաջորդականությամբ, այլ փաստական նյութի տիպաբանական մեկնաբանությամբ, ինչպես դա արել են Ստ. Մնացականյանը՝ Սյունիքի և Պ. Կունեոն՝ Անիի դպրոցներին նվիրված աշխատություններում: Մ. Հասրաթյանը հստակորեն ապացուցում է, որ Արցախի հայկական հուշարձանների խեղաթյուրման աղբյուրներին փորձերը գիտականորեն սնանկ են: Այդ հուշարձանների հայկական ժառանգորդական կապը ներկայացնելու համար նա սկզբում ուսումնասիրում է տարածքի վաղ քրիստոնեական հուշարձանները: Առաջին հուշարձանը՝ Ամարասի կրիպտորիան կամ Գրիգորիսի մեմորիալն է, որ հեղինակը վարպետությամբ համեմատության մեջ է դնում հայկական Դ - Ե դարերի այլ զուգահեռների հետ և ապացուցում կառույցի հայկական ճարտարապետության անքակտելի մասը լինելու հանգամանքը: Նույն նպատակով է նաև Արցախի մյուս՝ Մոխրեմիսի և Վանքասարի վաղ միջնադարյան եկեղեցիների ներգրավումը ուսումնասիրության մեջ: Ինչպես դիպուկ նկատում է գիտնականը՝ «Հայաստանի ավատատիրական մասնատվածությունը ԹԺԱ դարերում նպաստեց երկրում առանձին ճարտարապետական դպրոցների ստեղծմանը: Թեպետև հայկական ճարտարապետությունն ամբողջովին վերցրած այդ ժամանակաշրջանում խարսխվում էր է դարի շինարվեստի վրա, այնուամենայնիվ, նոր ձևերի որոնումների հետ, երկրի առանձին շրջանների ճարտարապետությունում կարելի է առանձնացնել այդպիսի մի քանի ստեղծագործական դպրոցներ» (էջ 30): Դրանք են՝ Անիի, Սյունիքի, Վանա լճի ավազանի, Լոռու, Կարինի և այլ տարածքների, դրանց թվում և Արցախի ճարտարապետության դպ-

րոցը: Մ. Հասրաթյանը Արցախի ճարտարապետության դպրոցի ստեղծման առիթով հետազոտում է տարածքի կարևորագույն վանքերը և խաչենի իշխանական դղյակները: Նա հետազոտման հետաքրքիր մեթոդ է կիրառում ընդգծելու համալիրների հայ ազգային ճարտարապետության հետ ունեցած ընդհանրությունը. հուշարձանների ճարտարապետական հորինվածքի մեկնաբանությունը կատարում է ուրվագծից մինչև ներքին ու արտաքին տարածությունների, ծավալի և ճակատային հարթությունների բնութագրումը: Մ. Հասրաթյանը հիմնական շեշտը դնում է տարածքին բնորոշ արվեստների համադրման (հարթության ու ծավալի թեմատիկ քանդակով ու զարդերով մշակման) միջոցով ճարտարապետական տարածության ստեղծման գործոնի վրա: Հեղինակի գիտելիքները մեծ են վանքային համալիրների շենքերի տիպագոյացման առանձնահատկությունների բնութագրման գործում, նա զգում է յուրաքանչյուր նրբերանգ, որ բնորոշ է Արցախի դպրոցին: Միանավ բազիլիկ և գմբեթավոր դահլիճ եկեղեցական տիպերի կապակցությամբ նա նշում է. «Գմբեթավոր դահլիճի միայն մեկ զույգ մույթով (արևելյան մույթերը համատեղված խորանի կամարի անկյունների հետ) ենթատիպի հետևողական զարգացում են, որոնք միջանկյալ դեր են խաղում Հայաստանի վաղ միջնադարի դասական գմբեթավոր դահլիճներից (Ձովունի, Պողոնի, Արուն, Դոմաշեն) դեպի ներքուստ խաչածեղ, չորս անկյուններում ավանդատներով, արտաքուստ ուղղանկյուն եկեղեցիների (ներգծված խաչ, Ազատ խաչ) նոր հորինվածքին անցման գործում» (էջ 90-91): Նշվածների հետագայում ձևավորված կարևորագույն ներկայացուցիչներն են Գանձասարի և Դադիվանքի գլխավոր եկեղեցիները, որոնք, ստեղծվելով Ժ դարում, լայն աղղեցություն ունեցան հատկապես ԺԳ դարում, ինչպես Արցախում, այնպես էլ Այրարատում: Եկեղեցական այս նոր տիպը իր հատկագծային տարածական լուծումով, համաչափություններով ավելի մոտ է կենտրոնագմբեթ եկեղեցիներին, ու արդեն դժվար է նկատել

նրա կապը գմբեթավոր դահլիճների հետ: Հայկական ճարտարապետության հետ ունեցած նշված ընդհանրությունների հետ Արցախի դպրոցն ունի նաև որոշ յուրահատկություններ, որոնցից հատկապես տիպական են թաղածածկ դահլիճները, ներսից ուղղանկյուն խորանով եկեղեցիները, խորանը դահլիճի հետ միասնական թաղով ծածկված հորինվածքները և այլն:

**Գիտնականի ներդրումը մեծ է նաև Հայկական պատմաճարտարապետական հուշարձանների փաստագրման և արվեստաբանական վերլուծության բնագավառում:**

Ուսումնասիրությունների այս ճյուղը լրացնում է Մ. Հասրաթյանի ճարտարապետության պատմության հետազոտման հետ առնչվող նյութերը: Այստեղ ընդգրկված մի շարք բնակավայրերի, վանքային համալիրների և հուշարձանների մեկնաբանությունները նպաստում են պատմատեսական զանազան խնդիրների լուծմանը: Բնակավայրերի ուսումնասիրություններում Երևանին հաջորդում են Մեղրին՝ իր ամրոցով և քաղաքային ու շրջակա հուշարձաններով, Թիֆլիսը՝ հայկական հուշարձաններով, Հին Ջուղան՝ խաչքարային արվեստով, Նոր Ջուղան՝ իր յուրօրինակ եկեղեցիներով, Անի քաղաքն՝ իր Մայր տաճարով:

Վանքային համալիրների ուսումնասիրությունը Մ. Հասրաթյանի տարերքն է: Փաստորեն նրա երկու ատենախոսությունների հիմնական առանցքը վանքային համալիրների վերլուծությունն է: Բազմաթիվ վանքային համալիրների փաստագրումն ու արվեստաբանական վերլուծությունը կատարվել են ազատ և արտահայտիչ: Հատկապես շահեկան է այդ համալիրների ուսումնասիրության հրապարակումը հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն լեզուներով: Ընդգծելի է Մ. Հասրաթյանի մասնակցությունը Իտալիայում հրատարակված «Հայ ճարտարապետության վավերագրեր» մատենաշարում. այդ թվում են «Կեչառիս» (1982 թ., համահեղինակ՝ Ադրիանո Ալպագո Նովելլո), «Գանձասար» (1987թ., համահե-

ղինակ՝ Բագրատ Ուլուբաբյան), «Նորավանք» (1995թ., համահեղինակներ՝ Ա. Ա. Նովելլո և Յ. Իենի) պրակները: Սրանք նորացված բովանդակությամբ հետագայում վերահրատարակվել են ու առաջացրել հայկական ճարտարապետության նկատմամբ համապատասխան հետաքրքրություն: Հեղինակի գրչին են պատկանում նաև վանական համալիրների մի շարք այլ ուսումնասիրություններ և, որոնցից հատկապես կարևոր են հետևյալ հրատարակությունները՝ Սաղմոսավանք (Երևան, 2002թ., համահեղինակներ՝ Գեղամ Գևոնյան, Արմեն Հախնազարյան), Տաթևի Մեծ ամապատ, Աստապատի Սբ. Ստեփանոս, Ամարաս, Դաղիվանք, Մարտիրոսավանք, Մուղնու Սբ. Գևորգ, Խաղավանք-Խաթրավանք, Գոչավանք, Բռի եղցի, Եղիշե Առաքյալ, Օխտը եղցի, Կարմիր, Ծարի Սբ. Աստվածածին վանքեր, Հակոբավանք, Հյուրեկավանք, Կոշի և Կիչանի անապատների համալիրներ, եկեղեցական ճարտարապետության զանազան խնդիրներին նվիրված հետևյալ հոդվածները՝ «Հայ ճարտարապետության և քանդակագործության նորահայտ հուշարձաններ Նորավանքում», «Նորավանքի վանական համալիրի ճարտարապետությունը և պատկերաբանականները», «Շիրակի վաղ միջնադարյան ճարտարապետական անսամբլները», «Հայոց դարձի նախասկիզբ սրբավայր Խոր Վիրապի վանքը», «Սբ. Վարդանին և Սբ. Վարդանանց նվիրված վանքերը և եկեղեցիները»<sup>23</sup> և այլն:

Բացառիկ արժեք ունեն հեղինակի հայկական ճարտարապետության հուշարձանների փաստագրաչափագրական ուսումնասիրությունները: Դրանցից հայկական միջնադարյան եկեղեցաշինության վերաբերյալ մի շարք հրապարակումների շարքում կարևոր են հաջորդաբար թվարկվող հոդվածները՝ «Դղմաշենի 7-րդ դարի գմբեթավոր դահլիճ եկեղեցին», «Արգինայի տաճարի հատակագծի վերակազմությունը», «Սարակապի կենտրոնագմբեթ եկեղեցին», «Մոխրենիսի քառակոնք եկեղեցին», «Էջմիածնի Շողակաթ եկեղեցու թվագրման հարցի

լուրջը», «Տեկորի Սբ. Սարգիս վկայարանը», «Էջմիածնի Մայր տաճարի ճարտարապետությունը Դավար Փարպեցու օրոք», «Էջմիածնի Հռիփսիմեի եկեղեցին», «Ծփնիի կենտրոնագմբեթ եկեղեցին», «Օշականի Սբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին», «Սուրբ Թարգմանչաց նվիրված եկեղեցիները և վանքերը»<sup>24</sup>: Ուսումնասիրությունների այս խմբում քննություն կա նաև ամրաշինական և ինժեներական մի քանի կառույցների մասին, որոնցից կարևորագույններն են Մեղրու, Հալիձորի բերդերը, Կախենիի ամրոցը, Եվանիձորի ջրանցույցը<sup>25</sup> և այլն:

**Կարևոր են գիտնականի տիպաբանական հետազոտությունները,**

որոնք զգալի ներդրում են քրիստոնեական ճարտարապետության ուսումնասիրության ժառանգությունում, դրանցից կարևորներն արտացոլվել են միջազգային մամուլում: Այդ թվում են «Պաշտամունքային շենքերի տիպաբանությունը հայկական ուշ միջնադարյան ճարտարապետությունում», «Դղմաշենի է դարի գմբեթավոր դահլիճ եկեղեցին և նման հուշարձանները վաղ միջնադարյան Հայաստանում», «Վաղ միջնադարյան Հայաստանի արտաքին սրահով միանալ եկեղեցիները», «Հայաստանի ներքուստ ուղղանկյուն խորանով եկեղեցիների ճարտարապետությունը», «Սյունիքի ժե-ժե դարերի վանք-ամրոցները», «Արտաքուստ շեշտված աբսիդով միանալ բազիլիկները», «Հայաստանի երկմույթ գմբեթավոր եկեղեցիների ճարտարապետությունը», «Հայկական վաղ քրիստոնեական եզակի երկգմբեթ տաճարը», «Հայկական երկխորան եկեղեցիներ»<sup>26</sup>:

**Գիտնականը կարևորում է նաև շինարվեստի և ծավալատարածական հորինվածքի խնդիրների վերլուծությունը:**

Ուշ միջնադարյան հուշարձանների թագմակողմանի ուսումնասիրության մեջ Մ. Հասրաթյանը հանգամանալի անդրադառնում է նաև ժամանակաշրջանի շինարվեստին: Դա ամփոփվել է «Հայաստանում ուշ միջնադարում շինարարական գոր-

ծի կազմակերպումը» վերնագիրը կրող կարևոր հոդվածում<sup>27</sup>: Փաստորեն, ի տարբերություն մյուս ժամանակաշրջանների, «Ուշ միջնադարյան Հայաստանի շինարարական արվեստը, ինչպես հարկն է, չի ուսումնասիրված» (էջ 205): Հեղինակն այստեղ մանրամասնորեն անդրադառնում է ժամանակաշրջանի շինարարական գործի կազմակերպմանը՝ ներկայացնելով շենքի կառուցման թույլատվությունն ու ֆինանսավորման եղանակները, տիպարային, պատճենային մոդուլացված նախագծման մեթոդները, շենքի նշահարումը և այդ գործում կիրառված չափման միավորները, աշխատանքային խմբերի կազմումը, վերակացուական հսկողությունը և շինանյութի հայթայթումը, վճարումների կատարման կարգը և աշխատանքային փուլավորումը, եկեղեցու օժույթը և այլն: Սույն հոդվածը մատենագրական, վիճակագրական և հիշատակարանային տվյալների մեթոդական օգտագործման դասական օրինակ է:

Ուշ միջնադարյան հայկական հուշարձանների հորինվածքային խնդիրները ամփոփվել են Մ. Հասրաթյանի «Հայաստանի ուշ միջնադարի եկեղեցական ճարտարապետության զեղարվեստական արտահայտչամիջոցները» զեկուցման դրույթներում<sup>28</sup>: Այս առումով կարևոր են հետևյալ երկու հոդվածները՝ «Ուշ միջնադարի հայկական ճարտարապետության զարգացման օրինաչափությունները»<sup>29</sup>, «Հայկական ճարտարապետությունը և պատմաաշխարհագրական ու դեմոգրաֆիկ գործոնները»<sup>30</sup>: Այստեղ պետք է հավելել գիտնականի ճարտարապետական դետալին վերաբերող աշխատությունները՝ «Գմբեթը . Դ-Ե դարերի հայկական ճարտարապետության մեջ»<sup>31</sup>, «Հայաստանի ուշ միջնադարյան որմնանկարչությունը»<sup>32</sup> և այլն:

**Մ. Հասրաթյանի պատմատեսական բնույթի ուսումնասիրություններում**

գերակշռող խնդիրը հայ-վրացական, հայ-բյուզանդական և հայ-պարսկական փոխազդեցություններն են ու վաղ քրիստոնեական և ուշ միջնադարյան ժամանակաշրջաններ-

րի հուշարձանների հետազոտումը: Այս բովանդակության աշխատություններից կարևոր են հետևյալները՝ «Հայկական և վրացական ուղղանկյուն խորանով եկեղեցիները», «Հայկական և վրացական վաղ միջնադարյան արտաքին սրահով հորինվածքները», «Պարսկական ազդեցությունը ԺԷ-ԺԸ դարերի հայկական ճարտարապետությունում», «Հայ-բյուզանդական ճարտարապետական առնչությունները վաղ միջնադարում», «Հայաստանի և հարևան երկրների ճարտարապետական առնչությունները վաղ միջնադարում»<sup>33</sup>:

**Գ/ Հանրագիտարանային հոդվածները, ստեղծագործական կենսագրությունները, գրախոսությունները, ընդդիմախոսությունները, ուղեգույցները և մասնագիտական խմբագրումները** Մ. Հասրաթյանի գործունեության կարևոր ոլորտներից են: Բազմաթիվ են հանրագիտարաններում հայկական հուշարձանների մասին նրա կատարած փաստագրական տեղեկատվությունները: Հեղինակի՝ ֆրանսերեն լեզվի հստակ տիրապետումը մեծ նշանակություն ունեցավ Արևմտյան Հայաստանի հուշարձանների մասին Ժ. Մ. Թիերրի փաստագրությունների հայացման գործում: Ուշագրավ են Մ. Հասրաթյանի կենսագրական հոդվածները հայկական ճարտարապետության նշանավոր գործիչների մասին: Հատկապես նշելի է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանին նվիրված մասնագիտական հետաքրքիր վերլուծություններով հարուստ գրքույկը (Երևան, 1989 թ.) և այլ բազմաթիվ հոդվածները<sup>34</sup>: Բովանդակալի է Արմեն Զարյանին, Շմավոն Ազատյանին, Պ. Կունեոյին և Ա. Ա. Նովելլոյին և այլոց նվիրված հոդվածաշարը<sup>35</sup>: Մեծ է գիտնականի ավանդը ճարտարապետական հրատարակությունների մասնագիտական խմբագրության, գրախոսությունների ու ատենախոսությունների ընդդիմախոսման ասպարեզներում: Դրանցում նա սկզբունքային է: Գիտնականն անմնացորդ նվիրումով մասնակցում

է մասնագետների նոր սերնդի պատրաստման գործին:

Այսօր վաստակաշատ գիտնականը լի է իր հետագա ծրագրերը իրականացնելու մեծ կորովով ու եռանդով:

1. Այս և այլ կենսագրական տեղեկությունները բաղկի են ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հրատարակած «Մուրադ Հասրաթյան» կենսամատենագրությունից, Երևան, 2005:
2. Նշված հոդվածների համահեղինակն է ճարտարապետ Արսեն Սելիքյանը, հաջորդաբար տես «Գիտություն և տեխնիկա», 1965, Թ-1, էջ 1-6. 1966, Թ-2, էջ 27-31. 1967, N5, էջ 33-39. 1968, N7, էջ 35-39 և N8, էջ 19-25 և N9, էջ 16-22:
3. *Վարազդատ Հարությունյան*, Արվեստակից ժամանակակիցներս, Երևան, 2001, էջ 381:
4. Աշխատությունը բաղկացուցիչ հատորն է «Հայկական արվեստներ» գրքի:
5. «Հայ-ֆրանսիական պատմամշակութային առնչությունները», ժողովածու, Երևան, 1997, էջ 55-60:
6. «Բազմավեպ», 2001, N1-2, էջ 201-211:
7. «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները», ժողովածու, Երևան, 2004, էջ 474-478:
8. «Վենետիկյան ընթերցումներ» միջազգային գիտաժողով նվիրված հայ-իտալական պատմամշակութային առնչությունների, Երևան, 2005 թ.:
9. «Հայ ժողովրդի պատմություն», հատոր 4, Երևան, 1972, էջ 593-607:
10. «Հուշարձան», տարեգիրք Ա. Երևան, 1987, էջ 87-95:
11. «Հայաստանի արդյունաբերություն, շինարարություն և ճարտարապետություն» այսուհետև՝ «ՀԱՇԵ», "Архитектура, строительство и промышленность Армении" - այսուհետև՝ (A&PA) հայերեն և ռուսերեն տարբերակների NN 11-12: Արտագի վանքի համար տես՝ «Արտագի սր. Թաղի վանքի ճարտարապետությունը», Հուշարձան տարեգիրք-գ, Երևան, 2005, էջ 11-25:
12. The Oxford Companion to Art, edited by Harold

- (Osborne, Oxford, 2000, pp. 67-70
13. Տես՝ *Murad Hasratyan*, "Gli Architetti Armeni", "Architettura Armena", Roma, 1988, pp. 59-71.
  14. "Арменоведение в СССР. Вопросы археологии, этнографии и архитектуры", Ереван, Изд-во АН Арм. ССР, 1976, N 4 (11), с. 39-46.
  15. "Архитектурное наследство", Москва, 1979, N 77, с. 122-131.
  16. «Լրաբեր հաս. գիտ.», 1989, N 9, p.3-15, տես նույնը "К освещению проблем истории культуры Кавказской Азии и восточных провинций Армении", Ереван, 1991, p. 467-469, նույնը ընդարձակ տարբերակով հրատարակվել է հայերեն, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1992, էջ 158:
  17. «Հուշարձան», տարեգիրք Բ, Երևան, 1993, N 2, էջ 160-169:
  18. «ՀԱՇԵ», Երևան, 1990, N 1, էջ 31-42 (նույնը՝ ռուսերեն նույն թվի և համարի (A&PA)-ում):
  19. «ՀԱՇԵ», 1990, N 10, էջ 51-56 (նույնը՝ ռուսերեն նույն թվի և համարի (A&PA)-ում):
  20. «Մաշտոցյան Ե ընթերցումներ», Օշական 2003, էջ 66-67:
  21. «Լրաբեր հաս.գիտ.», 1974, N3 էջ 15, 41-56), նույնը ֆրանսերեն՝ «Les eglises a nef unique avec portique de Tashir et les monuments similaires du Haut Moyen Age d'Armenie», Revue des Etudes Armenien" այսուհետև՝ (REArm), N 12, Paris, 1977, pp. 216-242.
  22. «Արագածոտնի հոգևոր և մշակութային ժառանգությունը գիտաժողովի դրույթներ», Օշական, 2003, էջ 19-20:
  23. Նշված վանքային համալիրների մասին հաջորդաբար տես՝ «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, N 1, էջ 254-267: «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1975, N 1, էջ 126-138: «Լրաբեր հաս.գիտ.», 1975, N 5, էջ 35-52: «Հայկազյան հայագիտական հանդես», Բեյրութ, 1980, N 8, էջ 7-54 (համահեղինակ Բ. Ուլուբաբյան), նույնը նաև՝ «Գիտություն և տեխնիկա», 1981, N 9, էջ 21-26, նույնը ռուսերեն (A&PA), 1990, N 3-4, էջ 45-60: "Международный симпозиум: проблемы методики и реставрации пещерных комплексов", тезисы докладов, Ереван, 1982, N 4-5 (համահեղինակ՝ Թ. Գևորգյան), «Հայկական արվեստ», Երևան, 1984, h. 2, էջ 36-45: «Հայկազյան հայագիտական հանդես», N 10, Բեյրութ, 1984, էջ 21-50 (համահեղինակ՝ Բ. Ու-

- լուբաբյան), նույնը նաև՝ «ՀԱՇԵ» և (A&PA), 1990, N 6: «Լրաբեր հաս.գիտ.», 1984, N 8, էջ 57-68: «Նորավանք» ժողովածու, էջ-միածին-Սոնրեալ, 1999, էջ 28-50: «Հիրակի պատմամշակութային ժառանգությունը», Հանրապետական երկրորդ գիտաժողով, գեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996, էջ 35-36: «Հայոց սրբերը և սրբավայրերը» (ժողովածու), Երևան, 2001, էջ 183-191: «Ավարայրի խորհուրդը», ժողովածու, Երևան, 2003, էջ 146-159:
24. Նշված հուշարձանների մասին տես՝ «Հայկական ճարտարապետության պատմություն վեց հատորով», հ. 2, Երևան, 2002, էջ 104-116, 116-136, 285-288: «Դոմաշենի 7-րդ դարի գմբեթավոր դահլիճը», «Բանբեր Երևանի համալսարանի», 1972, N 1, էջ 164-269: «Արգինայի տաճարի վերակազմությունը», «Գիտություն և տեխնիկա», 1974, N 6 էջ 14-18: Նույնը՝ «Արգինայի Կարողիկեն», «Հանդես անսորյա», Վիեննա, 1977, N 1-12, էջ 205-215. L'eglise a coupole centrale Surb Astuacacin de Saracap, REArm, N XV, Paris, 1978-79, p.197-201: «Սարակապի կենտրոնագմբեթ հուշարձանը», «Լրաբեր հաս.գիտ.», 1978, N 1, էջ 61-65: La tetraconque a niches d'angle de Moxrenis, REArm, tome XXI, Paris, 1988-1989.նույնի մասին՝ «Հայ արվեստին նվիրված հանրապետական VII կոնֆերանս: Ձեկուցումների թեզիսներ», Երևան, 1995, էջ 30-31: «Սուրբ Սարգիս» (ժողովածու), Երևան, 2002, էջ 43-52: «Պատմաբանասիրական-հանդես», 2003, N-2, էջ 166-271, Հոփսիսի տաճարի մասին Յուկոհամա, 2005: «Ծիփնի եկեղեցին», Հիրակի գիտաժողով, 2004. «Մաշտոցյան Գ ընթերցումներ: «Օշականի Սր. Մաշտոցի եկեղեցին»: Ձեկուցումների հիմնադրույթներ, Օշական, 2001, էջ 22-23: «Թարգմանչաց եկեղեցիները», «Մաշտոցյան Դ ընթերցումներ: Ձեկուցումների հիմնադրույթներ», Օշական, 2002, էջ 37-38 :
  25. Նշված հուշարձանների մասին տես՝ Սեդրու բերդը «Լրաբեր հաս.գիտ.», Երևան, 1968, N 1, էջ 109-115, Հալիձորի բերդը, «Գիտություն և տեխնիկա», 1968, N 12, էջ 14-16, Հալիձորի բերդը, «Հայկազյան հայագիտական հանդես», N 3, Բեյրութ, 1972, էջ 139-149, Крепость Кахени, "II Межреспубликанская научная конференция по проблемам искусства Армении и Грузии. Тезисы докладов", Ереван, 1981, p.12-13, Շվանիձորի ջրանցույցը, «Հայկական արվեստ», h.1, Երևան, 1974, էջ 14-18 :
  26. Նշված հոդվածների մասին տես՝ "Типология культовых сооружений в армянской архитектуре позднего средневековья", Сборник "Архитектура мира", выпуск I, Москва, 1992, с. 84-86."La salle a coupole du VIIe siecle de

Dedmachene et les monuments similaires du Haut Moyen Age en Armenie", REArm, N 10, Paris, 1973 -74, p. 233-245. "Les eglises a nef unique avec portique de l'Armenie paleochretienne", "Atti del Primo simposio internazionale de arte Armena - 1975", Venezia, 1978, pp. 227-236, նույնը՝ "Armenian Studies in Memoriam Haig Berberian", Lisbonne, 1986, pp. 307-322, "Раннесредневековые зальные церкви Армении с выступающей наружу абсидой", Гос. Музей искусства народов Востока, "Научные сообщения", Выпуск X, Москва, 1978, с. 109-114, նույնը հայերեն՝ «Արտաքուստ շեշտված արսիդով միանավ բազիլիկները»: «Արտաքին սրահով միանավ բազիլիկները», «Լրաբեր հաս. գիտ.», 1975, N 5 էջ 27-41. "L'architecture des eglises armenienne avec un sanctuaire rectangulaire a l'interieur", "Bazmavep", N 1-2, Venise, 1982, p. 181-188. «Հայկական ճարտարապետության պատմությունը վեց հատորով», հ. 2, Երևան, 2002, էջ 104-116: Սյունիքի 17-18-րդ դարերի վանք-ամրոցները, «Լրաբեր հաս.գիտ.», 1969, N 2, էջ 77-82. Հայաստանի երկմույթ գմբեթավոր եկեղեցիների ճարտարապետությունը, «Քրիստոնեական Հայաստանի արվեստը: Միջազգային գիտաժողով: Ձեկուցումների թեզեր», Երևան, 2001, էջ 28-29, Հայկական վաղ քրիստոնեական եզակի երկգմբեթ տաճարը: Օշական, 2003: Հայկական երկխորան եկեղեցիներ, Լ.Հախվերդյան, գիտաժողով, Երևան, 2004:

27. Հայկազյան Հայագիտական հանդեսում հրատարակված (Բեյրութ, 1997, հատոր ԺԷ, էջ 205-218):

28. Տես «Քրիստոնեական Հայաստանը քաղաքակրթությունների խաչմերուկ: Ձեկուցումների դրույթներ», Երևան, 2001, էջ 52-53:

29. **Թ. Թորամանյանի** ծննդյան 120-ամյակին նվիրված հանրապետական կոնֆերանս, զեկուցումների թեզիսներ:

30. «Պատմա-բանասիրական հանդես», 1996, N 1-2, էջ 169-178, նույնը ֆրանսերեն՝ L'architecture armenienne et les facteurs historico-geographiques et demographique, "Bazmavep", Venezia, 2002, pp. 220-234.

31. "Atti del, Quinto Simposio Internazionale di arte Armena", Venezia, 1991, pp. 197-213.

32. Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի տարեգիրք, Երևան, 2004, էջ 38-39 :

33. Եզված հողվածների մասին հաջորդաբար տես Թբիլիսի, 1977, յուրաքանչյուրը 16 էջ, ռուսերեն և ֆրանսերեն, բրոշյուր: Թբիլիսի, 1983, յուրաքանչյուրը 14 էջ, ռուսերեն, ֆրանսերեն, բրոշյուր: "Der Kaukasus in der Deutschen Wissenschaftlichen Literatur", Halle, 1982, pp. 26-40. «Պատմա-բանասիրական հանդես», 1993, N 1-2 , էջ 115-121: Նույնը ֆրանսերեն Affinites architecturales armeno-byzantines au Haut Moyen Age, "Byzantina Sorbonensa-12", Paris, 1996, pp.113-118. «Հայաստանը և Քրիստոնեյա Արևելքը: Միջազգային գիտաժողով: Ձեկուցումների դրույթներ», Երևան, 1998, էջ 20-21:

34. Այդ կապակցությամբ տես՝ Վարազդատ Հարությունյան (ծննդյան 80-ամյակի առթիվ), «ՀԱՇՇ», 1989, N 8, էջ 37-39 (նույնը՝ ռուսերեն՝ նույն թվի և համարի «ԸձԼԸ»-ում) , Հայ ճարտարապետության պատմության նախապետը (Վ. Հարությունյանի ծննդյան 90 - ամյակի առթիվ), «Տեղեկագիր Հայաստանի շինարարների», Երևան, 1999, N 11-12: Հեղինակի մասին (ծննդյան 90-ամյակի առթիվ), Վ.Հարությունյան, «Վասն հարատևման», Երևան, 2000, էջ 3-7:

35. Հողվածների մասին տես՝ «Վասն հիշատակի և արժեքավորման» ժողովածու, Երևան, 1999, էջ 48-50,61-63, 64-65:

**Դավիթ Բերթմենյան**  
**դոկտոր, պրոֆեսոր**

David Kertmenjian


**HIGH PROFESSIONAL QUALITY**

**(SUMMARY)**

Doctor of Science, Professor of Architecture Murat Hasrathyan is a renowned scholar of Armenian Architecture. His works have important indication for the research and study of the trend of the last decades. The article analytically represents the prosperous research, teaching and public activities held by the scientist in their highlights. Professor Hasratyan published 13 books, more than 20 brochures, 120 scientific important articles, delivered hundreds of lectures in professional sessions and about 150 correspondences in many Encyclopedias. All his works are classified in three major groups including: History of Armenian architecture issues, historical and theoretical studies corresponding Building types, Composition and Construction technique details. The most appreciated contributions of the scientist are related to the following monographies: "The Monastic Ensembles of Syunik Region from the XV-XVII cc." ( Yerevan, 1973); "An Essay on Armenian Architecture" (Moscow, 1985); "The Medieval School in Architecture of Artsakh (Gharabagh) region"(Yerevan, 1992); "Highlights of Armenian Architecture from the XV to the beginning of the XIX cc." (Doctor of Science paper, 1993); "Armenian Early Christian Architecture" (Moscow, 2000); "The 1700-th Anniversary of Armenian Christian Architecture" (Yerevan, 2001) and many other monographers published in Armenian, Russian, French and English languages.



### Պաուլո Կունեն (1936-1995)



Միջնադարյան Հայաստանի ճարտարապետությունը հետազոտող օտարազգի բազմաթիվ մասնագետներից առանձնանում է մի բացառիկ անձնավորություն՝ իտալացի գիտնական, պրոֆեսոր Պաուլո Կունենոն, որն իր գիտակից կյանքը, մինչև իր վաղաժամ մահը, անմնացորդ նվիրեց հայ մշակույթի ուսումնասիրությանը և դրա նվաճումների տարածմանն աշխարհում: Նա կատարեց մեր չափանիշներով մի ամբողջ գիտահետազոտական հաստատության աշխատանք՝ խորապես, մասնագիտական շատ բարձր մակարդակով: Դրա վկայությունն են Պաուլո Կունենոյի մենագրությունները, տասնյակ հոդվածներ, հեղինակավոր միջազգային գիտաժողովներում նրա զեկուցումները՝ նվիրված Հայաստանի շինարարական արվեստին ու ճարտարապետական հուշարձաններին:

Պաուլո Կունենոն ծնվել է 1936 թ. փետրվարի 11-ին Հռոմում: 1962 թ. ավարտելով Հռոմի համալ-

սարանի ճարտարապետության ֆակուլտետը, նա նախագծային գործնական աշխատանքը (հիմնականում՝ քաղաքաշինության բնագավառում) զուգակցում է պատմական հուշարձանների ուսումնասիրության և վերականգնման հարցերին, ապա անցնում կրթական աշխատանքի՝ դասախոսելով Հռոմի (1971-1987 թթ.) և Աբվիլայի (1987-1995 թթ.) համալսարաններում: ճարտարապետության պատմության գծով 1971 թ. պաշտպանելով ատենախոսություն՝ ստանում է գիտության դոկտորի աստիճան, իսկ 1987 թ. նաև պրոֆեսորի կոչում:

Հայ միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրությամբ Պաուլո Կունենոն սկսել է զբաղվել 1965 թ., երբ իր գործընկեր Թոմազո Բրեչա Ֆրատադոկիի հետ մասնակցել է գիտարշավի Արևմտյան Հայաստանում և տեսել իրեն անձանոթ մի հրաշք մշակույթ՝ Անիի, Աղթամարի, Մրենի, Կարսի հուշարձանները՝ քրիստոնեական ճարտարապետության

գլուխգործոցները:

1965 թ. Պաուլո Կունենոն Հռոմի համալսարանին կից կազմակերպում է «Հայ ճարտարապետության ուսումնասիրության կենտրոն», որի անփոփոխ ղեկավարն է եղել շուրջ երեսուն տարի: 1966 թ. Պաուլո Կունենոն և նրա գործընկերները կապ են հաստատում Հայաստանի մասնագետների հետ: Նույն տարում ԳՍՄՀ գիտությունների ակադեմիայի հրավերով այցելում է Խորհրդային Հայաստան: Սկսվում է հայ և իտալացի գիտնականների համագործակցության մի արտակարգ բեղմնավոր շրջան, որը փայլուն արդյունքներ է տալիս:

Պաուլո Կունենոյի գլխավորությամբ իտալացի արվեստաբանները հետագա տարիներին բազմիցս գիտարշավներ են կազմակերպում ինչպես Արևմտյան Հայաստան (1967, 1969-70-71 թթ.), այնպես էլ Խորհրդային Հայաստան (1968, 1972, 1978, 1987, 1987 թթ.)՝ տեղում անձամբ ուսումնասիրելով ճարտարապետական գրեթե բոլոր արժեքավոր հուշարձանները և համալիրները, որը մեծապես նպաստեց օրյեկտիվ և ճիշտ մեկնաբանելու ու գնահատելու հայկական միջնադարյան շինարարական արվեստի նվաճումները (ի տարբերություն արևմտյան որոշ մասնագետների, որոնք գրում են հայ ճարտարապետության մասին՝ առանց նույնիսկ միջնադարյան Հայաստանի հուշարձանները տեսնելու և դրանք ներկայացնում են որպես բյուզանդական):

Իտալացի մասնագետների հետ համագործակցությունը բավական օգտակար է եղել նաև Հայաստանի գիտնականների համար: Բացվել են նոր հնարավորություններ, նոր հեռանկարներ: Զրկված լինելով տեղում լինելու և ուսումնասիրելու թուրքիայի այժմյան տարածքի հայ ճարտարապետության կոթողները, Հայաստանի մասնագետներն օգտվել են Կունենոյի և նրա ընկերների տրամադրած նյութերից, բարձրորակ լուսանկարներից և չափագրություններից: Այդ համագործակցությունը մեծ խթան է լինում հայ ճարտարապետության ուսումնասիրության գործում, որի արդյունքում ծնվել են իտալացի

և հայ գիտնականների բազմաթիվ նոր աշխատություններ: Հայ մշակույթի և ճարտարապետության բնագավառում նոր փուլ են հանդիսացել հայ արվեստին նվիրված միջազգային գիտաժողովները, որոնք մեկընդմեջ կազմակերպվում էին Իտալիայում և Հայաստանում: Այդ գիտաժողովների կազմակերպման գործում մեծ էր Պաուլո Կունենոյի դերը:

Երեք տասնամյակում Պաուլո Կունենոն դարձավ Արևմուտքի՝ միջնադարյան հայ ճարտարապետության պատմության ամենահեղինակավոր մասնագետը, որից ընդօրինակելու շատ կարիք ունեն Հայաստանի գիտնականները: Նա անձամբ ուսումնասիրել է Արևմտյան և Խորհրդային Հայաստանի հուշարձանները. այն, ինչի հնարավորությունը չենք ունեցել հայ գիտնականներս: Եղել և տեղում ծանոթացել է պատմական Հայաստանին հարևան երկրների՝ Սիրիայի, Վրաստանի, Կապադովկիայի, ինչպես և Բալկաններից մինչև Փոքր Ասիա սփռված բյուզանդական ճարտարապետական հուշարձաններին, առանց որոնց չի կարելի ստեղծել հայ ճարտարապետության գիտական, ճշգրիտ և, որ կարևոր է, ճշմարտացի պատմությունը: Կունենոն առաջին արևմտյան գիտնականն է (և ընդհանրապես առաջին օտարերկրացին), որ խորհրդային կարգերի ժամանակ՝ 1968 թ., Թոմազո Բրեչա Ֆրատադոկիի հետ, Հայաստանի ԳԱ արվեստի ինստիտուտի աշխատակիցների ուղեկցությամբ եղավ Արցախում:

Պաուլո Կունենոյի մենագրությունը՝ վերնագրված «Միջնադարյան Հայաստանի Անիի ճարտարապետության դպրոցը» (Հռոմ, 1977), այս թեմայով գրված ամենալուրջ և ամենախոր գիտական գործն է: Դրան նախորդել էր իր ուսումնասիրած՝ Վասպուրականի V դ. միանավ բազիլիկների և Հոգեացվանքի համալիրին նվիրված մենագրությունը (իտալերեն և անգլերեն, Հռոմ, 1973): Կունենոն համահեղինակ է «Անի» (Միլան, 1984) և «Ղարաբաղ» (Միլան, 1988) գրքերի:

Հայագիտության այս երախտավորի քսանհինգամյա հետազոտությունների պսակը դարձավ

«Հայկական ճարտարապետությունը IV-XIX դարերում» մոտ հազար էջանոց, երկհատոր կոթողային աշխատությունը (Հռոմ, 1988): Առաջին հատորում ներկայացված են հայկական ճարտարապետական բոլոր հուշարձանները՝ խմբավորված տարածքային սկզբունքով (ԽՍՀՄ, Թուրքիա, Իրան), հանրագիտարանային եղանակով, ուղեկից գծագրերով և լուսանկարներով: Այդ հատորում, փաստորեն, տրված է հայ ազգային ճարտարապետության համապատկերն ամենալայն ընդգրկումով: Երկրորդ հատորը նվիրված է վերլուծական ուսումնասիրություններին: Այստեղ համեմատական աղյուսակներով, տիպաբանորեն և ժամանակագրական ենթաբաժանումներով դասակարգված են հայկական բոլոր հուշարձանները, դրանց կառուցվածքային ձևերը, հարդարանքի տարրերը, կազմված է համապարփակ մատենագրություն:

Հիմնարար այս աշխատանքի համար Պաոլո Կունեոն արժանացել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի՝ Թորոս Թորամանյանի անվան մրցանակի, որը հանդիսավորությամբ նիան է հանձնվել 1980 թ. մայիսին՝ Ջվարթնոցում: Իսկ հայ արվեստի պատմությանը նվիրված իր երեսնամյա արգասավոր գիտական աշխատանքի և այս բնագավառում ներդրած հսկայական ավանդի գնահատմամբ Պաոլո Կունեոն 1994 թ. ընտրվել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ:

Պաոլո Կունեոն մահացել է 1995 թ. օգոստոսի 31-ին՝ կյանքի 59-րդ տարում՝ գիտնականի համար ուժերի ծաղկման հասակում, երբ կուտակված էր մեծ փորձ և գիտելիքներ ու հստակ էին ապագա անելիքները: Նա հանկարծամահ է եղել իր հիմնադրած «Հայկական ճարտարապետության ուսումնասիրության կենտրոնում», գրասեղանի առջև, զրիչը ձեռքին: Նրա մահը մեծ կորուստ էր հայ արվեստաբանության համար: Անկատար մնացին շատ ծրագրեր և անելիքներ: Սակայն Պաոլո Կունեոյի թողած գիտական ժառանգությունն այնպիսին է, որ նա իր արժանի տեղն ունի հայագիտության երախտավոր-

ների շարքում:

**Պաոլո Կունեոյի՝ հայ ճարտարապետությանը նվիրված աշխատությունների ցանկը**

1. *La basilique de Tsitsernakavank (Cicernakavank) dans le Karabagh*, "REArm" (Revue des Etudes Armeniennes), IV, Paris, 1967, p. 203-216.
2. *L'Armenia terra di mille antiche civiltà*, "Realta sovietica", Roma, 1968, N 182, p. 35-46.
3. *Architettura medievale armena*, Roma, 1968. – 228 p. (համահեղինակներ՝ Ֆերնանդո դի Սաֆֆեի, Ֆերման Վահրամյան, Թոմասո Բրեչչա Ֆրատտոլի, Էնրիկո Կոստա).
4. *L'eglise de S. Etchmiadzine à Soradir*, "REArm", V, Paris, 1968, p. 91-108.
5. *Les modeles en pierre de l'architecture armenienne*, "REArm", VI, 1969, p. 201-232.
6. *Սորադի (Պատմագրական)*, «Վարագ», Բեյրութ, 1969, N 67, էջ 159-169:
7. *Les ruines de la ville d'Ani, capitale armenienne et metropole cosmopolite du Moyen Age en Orient*, Monumentum", N 5, London, 1970, p. 48-72.
8. *Վաղ միջնադարի երկու նորահայտ բազիլիկաներ Վասպուրականում*, *Две новые базилики раннего средневековья в Васпуракане*, «Թորոս Թորամանյանի հիշատակին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ», Երևան, 1971, էջ 10-11, 29:
9. *Վաղ միջնադարի երկու նորահայտ բազիլիկաներ Վասպուրականում*, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, N 3, էջ 187-194:
10. *Arquitectura Armenica do Secolo IV ao XVIII*, Catalogo, Lisbon, 1973. – 60 p. (համահեղինակներ՝ Ադրիանո Ալպագո Նովելլո, Արմեն Մանուկյան):
11. *Le basiliche paleocristiane armene*, "Atti del XX Corso di Cultura sull'Arte Ravennate e Bizantina", Ravenna, 1973, p. 217-239.
12. *Le chiese paleocristiane armene a pianta centrale*, "Atti del

- XX Corso di Cultura sull'Arte Ravennate e Bizantina", Ravenna, 1973, p. 241-262..
13. *The Basilicae of Tux, Xncorgin, Pasvack, Hogeacvank*, "Studies on medieval armenian architecture, IV", Roma, 1973. – 138 p.
14. *L'architettura della scuola regionale di Ani nell'Armenia medievale*, Roma, 1977.
15. *Le scuole regionali nell'architettura armena*, „Atti del Primo Simposio Internazionale di Arte Armena, Bergamo-1975“, Venezia, 1978, p. 89-127.
16. *О средневековом армянском градостроительстве*, "II международный симпозиум по армянскому искусству", Ереван, 1978 – 20 с.
17. *Au sujet de l'urbanisme medieval armenien*, "II International Symposium on Armenian Art", Yerevan, 1978. – 11 p.
18. *L'architecture monumentale du Chirak*, "Archeologia", N 126, Paris, 1979, pp. 34-41.
19. *L'architettura armena nei secoli IX-XIII*, "Ricerca sull'architettura armena, № 20, Corso di cultura armena I", Milano, 1979, p. 109-118.
20. *Theory and principles of architectural restoration with reference to historical monuments in Armenia*, "Third International Symposium on Armenia Art. Summers of the Papers", Venezia, 1981, p. 105-106.
21. *Au sujet de l'urbanisme medieval armenien*, "II International Symposium on Armenian Art, Yerevan – 1978. Collection of reports. Volume I", Yerevan 1981, p. 57-72.
22. *Principi e problemi di salvaguardia e restauro del patrimonio storico – architettonico dell'Armenia*, "Atti del Terzo Simposio Internazionale di Arte Armena, Milano-Vicenza-Venezia, 1981", Venezia, 1984, p. 19-27.
23. *Documents of Armenian Architecture. 12. Ani*, Milan, 1984. – 104 p. (համահեղինակներ՝ Ա. Ջարյան, Գ. Ուլուհոջյան, Ս. Թիկրի, ժ. Ս. Թիկրի):
24. *Etude sur la topographie et l'iconographie historique de la ville de Van (Anatolie Orientale)*, "Etudes armeniennes – Armenian Studies in Memoriam H. Berberian", Lisboa, 1985, p.

- 125-184.
25. *Nota sullo stato di conservazione del patrimonio storico-artistico dell'Armenia storica*, "Atti del Quinto Simposio Internazionale di Arte Armena, Milano-Bologna-Firenze, 1988", Venezia, 1991, p. 119-145.
26. *Architettura armena dal quarto al diciannovesimo secolo*, Roma, 1988. – 928 p.
27. *Documents of Armenian Architecture. 19. Gharabagh*, Milano, 1988. – 110 p. (համահեղինակներ՝ Մարիա Աղելադե Լալա Կոմենեո, Սեդրակ Մանուկյան)
- 28-29. *Armenia, architettura. Ani*, "Enciclopedia dell'Arte Medievale", vol. I, Roma, 1991, p. 478-486, 784-787.
30. *Le Couvent de Marmachene et l'école architecturale d'Ani*, "REArm", (In Memoriam Sirarpie Der Nersessian), XXI, Paris, 1989-1990, p. 419-471.
31. *Le citta di Erevan e le sue moschee del periodo persiano*. "L'arco di fango cherubo la luce alle stelle. Studi in onore di Eugenio Galdieri", Roma, 1995, p. 73-88.
32. *The Emerning of Regional Architectural School in Feudal Armenia (10<sup>th</sup> to the 13<sup>th</sup> c.)*. *The example of Haghbat*, "19 Bericht des Institutes fur Hochbautechnik, Zurich ETH", Zurich, 1996, p. 185-190.
33. Halbat, "Enciclopedia dell'Arte Medievale", vol. 7, Roma, 1996, p. 175- 178.

**Միջազգային գիտաժողովների զեկուցումներ (անտիպ)**

1. *L'architecture armenienne du XV au XIX siecle*. "The Fourth International Symposium on Armenian Art", Yerevan, 1985.
2. *The Archaeological Site of Ani: its Scientific Exploration and Conservation from Past to Future*. "Ani Millennium Symposium", New York, 1989.
3. *The Armenian Monastery of Marmashen. A Historic and Archaeological Analysis*, "V Biennial Conference of the Association Internationale des Etudes Armeniennes", Bologna, 1990.

**Սուրադ Հասրաթյան,**  
Դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

**Murad Hasratian**

*Doctor, Professor, Correspondent-member  
of the Academy of Sciences of RA*

**PAOLO KUNEO (1936 - 1995)**

**(Summary)**

The bibliographical outline is devoted to the great Italian scientist Paolo Kuneo's 70th anniversary of birth. The scientist is highly valued and appreciated in the scientific spheres all over the world. The outline depicts the life, scientific activity and the outstanding services to Armenian culture. In the end, the list of Kuneo's works devoted to Armenian architecture is presented.

**ԱՆԱՏՈՒԻ ՅԱԿՈԲՍՈՆ (1906-1984)**



Հայկական միջնադարյան ճարտարապետության և համընդհանուր միջնադարի ուսումնասիրության երախտավորներից մեկը՝ Անատոլի Լեոպոլդովիչ Յակոբսոնը, ծնվել է 1906 թ. օգոստոսի 22-ին Սանկտ-Պետերբուրգի մարզի Լուգանսկ քաղաքում: Միջնակարգ կրթությունն ստացել է Մոսկվայում: Այնուհետև ընդունվել և 1929 թ., հնագետ մասնագիտությամբ, ավարտել է Լենինգրադի պետական համալսարանի լեզվագիտության և նյութական մշակույթի պատմության ֆակուլտետը: Նույն տարում ընդգրկվել է Գոլսեփ Օրբելու խմբում և ժամանել Հայաստան՝ ծանոթանալու հայկական միջնադարյան մշակույթին: Համալսարանն ավարտելուց անմիջապես հետո՝ 1930 թ., որպես կրտսեր և ապա՝ ավագ գիտաշխատողի պաշտոնով աշխատել է Լենինգրադի նյութական կուլտուրայի պատմության պետական ակադեմիայի հնագիտության բաժնում: 1936 թ.

Հ. Օրբելու ղեկավարությամբ մասնագիտացել է հայկական միջնադարյան արվեստի և ճարտարապետության բնագավառում: 1936 թ. Հ. Օրբելու խմբում կրկին եկել է Հայաստան և մասնակցել Ամբերդի պեղումներին: 1941 թ. պաշտպանել է գիտական թեզ և ստացել պատմական գիտությունների թեկնածուի աստիճան: 1946-47 թթ. հայկական հուշարձանների փաստագրման նպատակով կրկին եղել է Հայաստանում՝ չափազերել, ուսումնասիրել և հայկական պատմաճարտարապետական մի շարք հուշարձաններ ու համալիրներ: Դրանք հետագայում ընդգրկել է իր ուսումնասիրություններում “Очерки истории зодчества Армении V-XVII веков” գրքում (Ленинград, 1950) և Տեղերի (1946 թ.), Տաթևի (1947 թ.), Խորակերտի (1951 թ.), Հաղարծինի, Սաղմոսավանքի, Նոր Գետիկի (1952 թ.), Գանձասարի (1960 թ.) վանքերի, Ոսկեպարի (1948 թ.), Մշկավանքի (1951 թ.), Բյուրա-

քի (1951 թ.), Բյուրականի (1971 թ.), Բայսըզի (1985 թ.) տաճարների մասին հրապարակած հոդվածներում: 1961 թ. «Միջնադարյան Խերսոնես» ատենախոսությամբ Ա. Յակոբսոնն արժանացել է պատմական գիտությունների դոկտորի աստիճանի:

Ա. Յակոբսոնը միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրության ճանաչված գիտակներից է: Նրա գիտատեղծագործական ժառանգությունը համեմատելի է Ալբերտ Գաբրիելի, Ռիխարդ Կրաուտհայմերի, Քրիզ Ուիլլի, Կիրիլ Մանգոյի, Դավիդ Թալբոտ Ռայսի, Ջոն Յոզի և XX դ. հայտնի այլ մասնագետների գործունեության հետ: Ա. Յակոբսոնի գիտական ներդրումները պատկանում են միջնադարյան համընդհանուր ճարտարապետության բնագավառին: Մասնագիտական որոնումները նրան անմիջականորեն կապում են հայկական միջնադարյան ճարտարապետության հետ: Նա իր հետազոտությունները կառուցել է բազմաթիվ գիտական նյութերի հիման վրա, մասնակցել է մի շարք պեղումների՝ Սև ծովի հյուսիսային ափերին (Խերսոնես), Հայաստանում (Ամբերդ) և Ադրբեջանում (Օրեն Կալա): Հավաքած նյութը նա վարպետորեն, համեմատական զուգահեռներով դասակարգողական ուսումնասիրության մեջ է դրել ողջ միջնադարյան ճարտարապետության համատեքստում:

Ա. Յակոբսոնի գիտական ուղղվածությունը դեպի բյուզանդական ճարտարապետությունը՝ զուգահեռաբար խորանում է «Ղրիմի միջնադարյան ճարտարապետության պատմությունից», «Հայկական միջնադարյան ճարտարապետության պատմությունից» խորագրերը կրող հոդվածաշարերի թեմատիկայում: Հենց վերջիններիս մոտիվներով էլ նա ներկայացնում է հայկական և ղրիմյան քաղաքացիական ճարտարապետության որոշ շենքերի նմա-

նությունները<sup>2</sup> և Ղրիմի հայկական գաղթավայրի ճարտարապետական ժառանգությունը<sup>3</sup>: Փաստորեն, Ա. Յակոբսոնը 1930-ական թթ. կեսին Ղրիմի հուշարձանների հետազոտումներից հետո անցնում է հայկական ճարտարապետության բնագավառ:

1960-70-ական թթ. նրա հետաքրքրություններում գերակշռում են միջնադարյան ճարտարապետության տարբեր մշակույթների փոխառնչությունների խնդիրները, աշխարհագրական սահմաններ ունենալով Բյուզանդիայի կենտրոնական տարածքներ, Հունաստանը, Փոքր Ասիան, Սիրիան, Միջագետքը, հարավսլավոնական երկրները, Ռուսաստանը, Անդրկովկասը, Միջին Ասիան: Այստեղ նրա համար առանցքային է հայկական ճարտարապետությունը, որ հստակորեն ընդգծվում է հետևյալ հոդվածներում. «Բուլղարական վաղ միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրության շուրջ (հայկական զուգահեռներ)» (1968 թ.) և «Մեսենրիի ԺԳ-ԺԴ դարերի ճարտարապետության մի քանի օրինակափական հատկանիշների մասին (1976 թ.), «Հայկական և վրացական միջնադարյան ճարտարապետության փոխառնչությունները և փոխազդեցությունները» (1970 թ.), «Հայկական և բյուզանդական վաղ միջնադարյան ճարտարապետության փոխազդեցությունները» (1973 թ.), «Հայաստան և Սիրիա՝ ճարտարապետական համեմատություններ» (1976 թ.), «Կովկասյան Աղվանքի և Հայաստանի ճարտարապետական առնչությունները» (1977 թ.), «Հայկական միջնադարյան ճարտարապետության թեմաների սելջուկյան արձագանքները» (1983 թ.) և այլն: Հայկական և միջնադարյան ճարտարապետության մյուս մշակույթների փոխազդեցության խնդիրը Ա. Յակոբսոնի հետ կիսում է ակադեմիկոս Վ. Հարությունյանը, որը գիտնականին նվիրված իր հոդվա-

ծում գրում է. «Նշելով Սիրիայի և Հայաստանի վաղ միջնադարյան ճարտարապետության ընդհանրությունները, Ա. Յակոբսոնը դրանց պատճառները բացատրում է բնական պայմանների, նույն շինանյութի (տուֆ, բազալտ, կրաքար), դրանց օգտագործման տեխնիկական միջոցների և կառուցումներ կատարելու սոցիալական պայմանների ընդհանրությամբ»: Հայ-վրացական միջնադարյան ճարտարապետության փոխազդեցությունների մեկնաբանումը Վ. Հարությունյանը կատարում է հենց Ա. Յակոբսոնի խոսքերով. «Մենք խոսում ենք վաղ միջնադարյան հայկական և վրացական ճարտարապետության ընդհանրության, սակայն ոչ ամենևին նրանց լիովին համընկման և առանձնահատկությունների բացակայության մասին: Գոյություն են ունեցել նաև ճարտարապետական այնպիսի հորինվածքներ, որոնք ընդունված են եղել վրացի ճարտարապետների, սակայն չգիտես ինչու՝ մերժված հայ ճարտարապետների կողմից» (որպես օրինակ նշում է Նինոծմինդայի թագմախորան-բազմախորշ տաճարի օրինակը): Ընդհակառակը, - շարունակում է նա, - կարելի է նշել հորինվածքներ, որոնք հայտնի են Հայաստանում, բայց անհայտ՝ Վրաստանում» (նշում է Դվինի Ար. Գրիգոր և Թալինի եռաբսիդ գմբեթավոր բազիլիկները): Այնուհետ Ա. Յակոբսոնը եզրակացնում է. «Երկու երկրների ճարտարապետական միջավայրում գոյություն են ունեցել ստեղծագործական սկզբունքների առանձնահատկություններ, սակայն դա ամենևին չի բացասում ստեղծագործական ընդհանուր գծի առկայությունը»: Հայ-աղվանական առնչությունների տեսակետների առթիվ իր մեկնաբանություններում Վ. Հարությունյանը նույնպես մեջբերում է հենց Ա. Յակոբսոնի տողերը. «...Բերված նյութերի վերլուծությունը տարակույս չի թողնում, որ Աղվանքի վաղ միջնադարյան ճարտարապետության կազմավորման հարցում առավելապես նշանակա-

լից է եղել հայկական ճարտարապետության դերը, հանգամանք, որն իր բարերար բացատրությունն է գտնում ոչ միայն երկու երկրների՝ ժամանակակից պատմիչների կողմից վկայված տնտեսական և քաղաքական սերտ կապերում, այլև Աղվանքի եկեղեցու՝ հայկական եկեղեցուց կախված լինելու փաստերում»: Հայ-սելջուկյան առնչությունների կապակցությամբ միանգամայն ակնհայտ է, որ սելջուկ էմիրները իրենց անուրջներն իրականացրել են հայ ճարտարապետների ձեռքով:

Շարունակելով Նիկողայոս Մառի և Հովսեփի Օրբելու թեզերը, Ա. Յակոբսոնը գրում է. «Սելջուկյան մոնումենտալ ճարտարապետության ձևերն ու բուն ոճն ըստ երևույթին մեծապես պարտական են հայկական ճարտարապետությանն ու դրա ստեղծողներին»: Ինչ վերաբերում է հայ-բյուզանդական առնչություններին, ապա Ա. Յակոբսոնն ավելի է ընդգծում հայ ճարտարապետության ուսումնասիրության հիմնադիր Թորոս Թորամանյանի և, հետևաբար, Յոզեֆ Ստրոմբոլցի տեսակետները: Նա նշում է. «Հայ միջնադարյան ճարտարապետության կազմավորման գործընթացը մի բարդ ուղի է, մշակութային սերտ կապեր են հաստատված եղել Հայաստանի և հարևան երկրների միջև: Չի կարելի ընդունել արևմտաեվրոպական մի շարք հետազոտողների կարծիքն այն մասին, որ հայկական միջնադարյան ճարտարապետական մշակույթը ոչ այլ ինչ է, քան բյուզանդական ճարտարապետության տարբերակը, նրա արևելյան դպրոցներից մեկը կամ բյուզանդական մշակույթի գավառական դրսևորման արգասիք: Մինևույն կրոնի՝ քրիստոնեության հիման վրա առաջացած մի շարք ընդհանրությունները, հորինվածքային նման գծերը բնավ չեն որոշում Հայաստանի և Բյուզանդիայի ճարտարապետական արվեստի ընդհանուր դեմքը»: Ա. Յակոբսոնը սկզբունքային է իր գրածներում: Փաստորեն, նա Գ. Չու-

1. Stu՝ հետևյալ աշխատությունները՝ Рапесредневековый Херсонес, М. Л., 1959. Средневековый Херсонес, Л. М. 1964. Крым в средние века, Москва, 1974. Керамика и керамическое производство средневековой Таврики, Л., 1979.  
2. Stu՝ Средневековые бани в Херсонесе, Советская Археология, VIII (1946), стр. 261-278.  
3. Stu՝ Армянская средневековая архитектура в Крыму, Византийский Временник, 1956, VIII, стр. 166-191.

4. Վ. Հարությունյանը Ա. Յակոբսոնի հետ ունեցել է սերտ նամակագրություն: Նա գիտնականի գործերին անդրադարձել է մի քանի հոդվածներում: Սույն հարդորման տեղեկությունները քաղել են Վ. Հարությունյանի «Արվեստակից ժամանակակիցներս» աշխատությունից, Երևան, 2001, էջ 121-127:

բինաշվիլու հայկական ճարտարապետության սկզբունքները նենգափոխելու ձգտումների վճռական և հիմնավոր հերքողներից է: Ա. Յակոբսոնը նույն դիրքորոշումն է ունեցել նաև ադրբեջանական նենգափոխումների դեմ, որ հրապարակվել էր Ռ. Գեյուշևի, Դ. Ա. և Մ. Դ. Ախուդովների և այլոց կեղծարարական նկրտումներից բխող աշխատություններում: Ինչպես նշում է Վ. Հարությունյանը՝ «Ա. Յակոբսոնը ավելորդ է համարում անդրադառնալ Գանձասարի տաճարի ազգային պատկանելության հարցին»: Ա. Յակոբսոնի խոսքերով «Գանձասարի վանքը հայկական ճարտարապետության հանրագիտարան է» և «Ախուդովների ելույթը լի է բազմազան հերյուրանքներով»:

Հստակորեն ընկալելի է, որ Ա. Յակոբսոնը միջնադարի համընդհանուր ուսումնասիրությունները զուգահեռում է հայկականի հետ: Փաստորեն, վերոհիշյալ հոդվածներին զուգահեռ նա միաժամանակ հրատարակել է համընդհանուր միջնադարին վերաբերող ուսումնասիրություններ. “Некоторые закономерные особенности средневековой архитектуры Балкан, Восточной Европы, Закавказья, Средней Азии” (Византийский Временник, XXXIII, 1972, с. 166-189), “Проблема закономерности в развитии средневековой архитектуры” (Кавказ и Византия, Ереван, 1982) հոդվածները, “Закономерности в развитии раннесредневековой архитектуры, Л., 1983”, (հետմահու հրատարակված), “Закономерности в развитии средневековой архитектуры (Центральные области Византии, Греция, Малая Азия, Сирия, Месопотамия, Югославянские страны, Древняя Русь, Закавказье, Средняя Азия), Л., 1985 և “Армянские Хачкары, Ереван, 1986 գրքերը:

Ա. Յակոբսոնի թվարկված աշխատությունները:

5. Richard Krautheimer, Early Christian and Byzantine Architecture, Penguin books, 1965.  
6. Andre Grabar, Martyrium, 2 vol, s, Paris, 1943-46.  
7. Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները, Երևան, 2003, էջ 214-215:

րը լուրջ ներդրում են: Չնայած իրենց ոչ մեծ ծավալին, դրանք նկատելի բովանդակություն ունեն և սպասում են գիտաքննական հանգամանալի վերլուծության: Դրանցում ուրույն մոտեցմամբ տրված է միջնադարյան տաճարաշինության կազմավորումը, որը, ի տարբերություն Ռ. Կրաուտհայմերի<sup>5</sup>, որպես արևմտյան հուշարձանների փոխարեն նախասկիզբ և գերակշռություն ներկայացնում է ոչ թե արևմտաքրիստոնեական և, այնուհետև, բյուզանդական հուշարձաններ, այլ Կովկասի, Փոքր Ասիայի, Միջին Արևելքի եկեղեցական նախատիպերը: Այնուամենայնիվ, երկու մասնագետներն էլ (ի տարբերություն Անդրե Գրաբարի<sup>6</sup> և ուրիշների) ձևագոյացման տեսություններն ուղեկցում են անտիկից եկող դիֆերենցված սկզբունքով և պատմական հաջորդականության փաստական տվյալներով: Այս կապակցությամբ կատեսակետ, ըստ որի, խնդրո առարկա զարգացումները պետք է դիտարկել նշված երեք սկզբունքների համադրմամբ և ձևագոյացումը դիտել ոչ միայն ժամանակագրական, այլև հորինվածքային ձևերի տրամաբանական բարեփոխման հաջորդականության<sup>7</sup>:

Ա. Յակոբսոնն այսօր գիտական աշխարհում ճանաչված միջնադարագետ է: Նա հսկայական ներդրում ունի հայկական ճարտարապետության ուսումնասիրության բնագավառում: Կապված է եղել հայկական միջնադարյան մշակույթի և ընդհանրապես Հայաստանի հետ: Գնահատելով նրա բազմափաստակ ներդրումը, 1981 թ., ժնդյան 75-ամյակին Հայաստանի կառավարությունը նրան պարգևատրել է ՀՍՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով:

Նա եղել և մնում է հայ ժողովրդի ու նրա մշակույթի երախտավոր բարեկամը:

**Դավիթ Բերթմենջյան**  
**դոկտոր, պրոֆեսոր**

**Անաբոյի Յակոբսոնի աշխատությունները՝ նվիրված հայկական հուշարձաններին և ճարտարապետությանը**

- Из истории средневековой архитектуры в Крыму, I Церковь в селении Лака, 1934.
- Из истории средневековой архитектуры в Крыму, II Мангунская базилика, Советская Археология, IV, 1940.
- Из истории армянского средневекового зодчества, церковь в селе Дыгер. Краткие сообщения Института Истории Материальной Культуры Академии Наук СССР, XIII, 1946, с. 33-38.
- Из истории средневековой архитектуры в Крыму, III, средневековые бани в Херсонесе, Советская Археология, VIII, 1940, с. 261-78.
- Из истории армянской средневековой архитектуры, II, Татевский монастырь, Советская Археология, XI, 1947, с. 303-28.
- Из истории армянской средневековой архитектуры, церковь в Воскепаре, Краткие сообщения Института Истории Материальной Культуры Академии Наук СССР, XX, 1948, с. 29-35.
- Очерк истории зодчества Армении V-XVIII вв., Москва-Ленинград, 1950.
- Из истории армянского средневекового зодчества, V, Армянские монастыри XIIIв., Хоракерт и Мшгаванк, Советская Археология, XIV, 1950, с. 245-62.
- Из истории армянского средневекового зодчества, IV, Армянские монастыри XIIIв., Агарцин, Нор-Гетик, Сагмосаванк, Ежегодник Института Истории Искусств Академии Наук СССР, 1952, с. 317-365.
- Из истории средневековой архитектуры в Крыму, Византийский временник, 1956, VIII, с. 166-191.
- Из истории Армянской средневековой архитектуры, Гандзасарский монастырь XIII в., Исследования по Истории культуры Народов Востока, 1960, с. 145-158.
- Армянский монастырь XIVв. близ Велгорска в Крыму, ИФЖ, 1964, N.4, с. 230-235.
- Взаимоотношения и взаимосвязи армянского и

- грузинского средневекового зодчества, Советская Археология, IV, 1970, с. 41-53.
- - Бесстольная композиция с перекрытием взаимно-перекрещивающимися арками в армянской средневековой архитектуре, 1970.
- - Из истории армянского средневекового зодчества, Храм X в. в Бюракане, ИФЖ, 1971, N 2, с. 116-124.
- - Les rapports et les correlations des architectures Armenienne et Georgienne au Moyen Age, Revue des Etudes Armeniennes, VIII, 1971, p. 229-249.
- - Некоторые закономерные особенности средневековой архитектуры Балкан, Восточной Европы, Закавказья и Средней Азии, Византийский Временник, XXXIII, 1972, с. 166-189.
- - Взаимоотношения раннесредневековой архитектуры Армении и Византии, ИФЖ, N 4, с. 33-42.
- - Gli archi incrociati nell' architettura medievale Armena, Atti Primo Simposio Internazionale di Arte Armena in Bergamo, 1975, Venezia, 1978, p. 323-332.
- - Армения и Сирия. Архитектурные сопоставления, Византийский Временник, XXXIII, 1976, с. 192-206.
- - Некоторые закономерные особенности архитектуры Месембрии в XIII- X<sup>IV</sup>веках, "Преслав", N 2, София, 1976, с. 156-177.
- - Из истории армянского средневекового зодчества, Гандзасарский монастырь XIII в. ИФЖ, 1977, N 12, с. 59-76.
- - Архитектурные связи Кавказской Албании и Армении, ИФЖ, 1977, N1, с.69-84.
- - The art of Khachkars, Armenian stone crosses, Искусство Хачкаров, армянских крестных камней, Secondo Simposio Internazionale di Arte Armena in Erevan-1978, Proceedings, Erevan, 1981, vol.III, p. 156-163.
- - Ов армянских хачкарах, Историко-художественные заметки, ИФЖ, 1978, N 1, с. 215-223.
- - Проблема закономерности в развитии средневековой архитектуры, Кавказ и Византия, 1982.
- - Закономерности в развитии раннесредневековой архитектуры, Ленинград, 1983.

- Селджукские отклики на тему армянской архитектуры, ИФЖ, 1983, N 4, с. 126-130.

- Проблема света и цвета в армянской средневековой архитектуре, Республиканская научная конференция,

посвященная 120-летию Торося Тораманяна, Ереван, 1984, с. 38-40, на арм. языке, с.116-118.

- Церковь в селе Байсыз в Армении, Архитектурное наследие, 1985,N 33, с. 103-106.


David Kertmenjian

### THE RENOWNED SCHOLAR OF MEDIEVAL WORLD AND ARMENIAN ARCHITECTURE

(Summary)

Anatoly Jacobson was born at Luga Leningrad region in 1906 and passed away in the year of 1984. He is a professional medievalist, at the same time, as dealing with Armenian medieval architecture, a major. The current article represents the critical study of A. Jacobson's works, hinting on the fields of his interests: the architectural correlations of medieval cultures, morphology of church typology and regularities existing in the consisting periods of medieval architecture. A. Jacobson had his own theories implemented in his following main books and article series: " Outlines of the History of Armenian Medieval Architecture " (1950), " From the History of Medieval Architecture in the Crimea on the North Shores of the Black Sea" (1934-1983), "From the History of Armenian Architecture" ( 1946-1985), "Crimea in the Middle Ages" (1973) "Regularities in Early Medieval Architecture" (1983), " Regularities in World Medieval Architecture" (1985), "Armenian Cross-Stones" (1986). A. Jacobson was awarded for his efforts in the field of Armenian Architecture by the Armenian Government in 1981,

### ԺԱՆ - ՄԻՇԵԼ ԹԻԵՐՐԻ



Հայ միջնադարյան ճարտարապետության ու արվեստի խոշոր գիտակ և բեղմնավոր հետազոտող ժան-Միշել Թիերրին ծնվել է 1916 թ. օգոստոսի 13-ին Ֆրանսիայի Բանդյեր-դե-Լուզոն քաղաքում: Նախապես ստանալով թիշկական կրթություն, նա հետագայում Ֆրանսիայի բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնասիրել է լեզվաբանություն, պատմություն, հնագիտություն, արվեստաբանություն: Սովորել է Փարիզի Կաթոլիկական համալսարանում՝ հայերեն (գրաբար) և 1950-ական թթ. լիովին զբաղվել հայ միջնադարյան մշակույթի ուսումնասիրությամբ:

XX դ. առաջին կեսին, հատկապես 1920 թ. ինտո, Ֆրանսիայում հայկական ճարտարապետության ուսումնասիրման գործը փաստորեն ընդհատվել էր: Դա հետևանք էր օտարերկրացիների մուտքը

Արևելյան Անատոլիա թուրքիայի իշխանությունների արգելքի և խորհրդային Միությունն աշխարհից մեկուսացնող «երկաթյա վարագույրի», որի պատճառով դադարեց արևմտյան գիտնականների, արվեստաբանների այցը Հայաստան: Առաջին եվրոպական (և ընդհանրապես՝ արտասահմանյան) հետազոտողը, որը հաղթահարեց արգելքները և ճանապարհի հարթեց մյուսների համար, դոկտոր ժան-Միշել Թիերրին էր. նա իր կնոջ՝ արվեստաբան Նիկոլի հետ 1950-ական թթ. վերջերից սկսած բազմիցս եղավ Արևմտյան Հայաստանում՝ տեղում ուսումնասիրելով հայկական ճարտարապետական հուշարձանները, իսկ 1963 թ. խորհրդային Հայաստանում՝ ամբողջովին նվիրելով միջնադարյան հայ ճարտարապետության ուսումնասիրմանը: Դա շարունակվում է արդեն մոտ կես դար, որի ընթացքում նա հսկայական աշխատանք է

կատարել: Դոկտոր Թիերրիի առաջին գործը լույս տեսավ 1960թ. Փարիզում՝ «Անի-հայկական միջնադարյան մեռած քաղաք» վերնագրով: Դրան հաջորդեց հողվածների շարքը հայագիտական պարբերականներում («Չանդէս ամսօրեա», «Էջմիածին», «Բազմավէպ») և ֆրանսիական ճանաչված գիտական հանդեսներում: Այդ հողվածները հիմնականում նվիրված էին Արևմտյան Հայաստանում իր ուսումնասիրած հուշարձաններին, որոնց մեծ մասը գիտական շրջանառության մեջ դրեց հենց ինքը: Եթե նկատի ունենանք, որ 1950-ական և 60-ական թթ. նրա հետազոտած հայկական հուշարձաններից շատերն այժմ գոյություն չունեն, ապա դոկտոր Թիերրիի աշխատանքները հայագիտության համար դառնում են առավել արժեքավոր և դրանք վեր ածվում են, փաստորեն, այդ հուշարձանների մասին սկզբնաղբյուրի, ցավոք, արդեն միակ աղբյուրի: Նա ուսումնասիրել է մոռացված, կամ հայ ճարտարապետության անհայտ շատ հուշարձաններ (դրանց թվում բացառիկ արժեքավոր Ձորադիրի VIդ «հռիփսիմեստիպ» եկեղեցին): Ժ.-Մ. Թիերրիի «Կարսի Սուրբ Առաքելոց Կաթողիկեն» մենագրությունը (Լուվեն-Փարիզ, 1978) հիմք դրեց հայագիտական նոր մատենաշարի, որի երկրորդ գիրքը նույնպես պատկանում է նրան՝ դա «Հռոմոսի հայկական վանքը» գիրքն է, տպված 1980 թ.: Իսկ 1984 թ. Միլանում անգլերեն և իտալերեն լեզուներով հրատարակված «Անի» գրքում դոկտոր Թիերրին գրեց Հին Հայաստանի մայրաքաղաքի ճարտարապետական հուշարձանների բաժինը, իսկ տիկին Նիկոլ Թիերրին՝ որմնակարչությանը նվիրված մասը:

1987 թ. Փարիզի «Մազենո» հրատարակչությունը տպագրեց մեծադիր, պատկերազարդ, 600 էջից ավել, 900 լուսանկարով շքեղ մի հատոր՝ Ժան-Միշել Թիերրիի և արվեստաբանության դոկտոր Պատրիկ Տոնապետյանի գիտական համագործակցության արդյունք «Հայկական արվեստ» գիրքը: Հրատարակվել է որպես համաշխարհային արվեստի մեծագույն արտահայտությունների՝ Հին Եգիպտոսի,

Հունաստանի, Հռոմի, Բյուզանդիայի արվեստների նվիրված մատենաշարի հերթական հատոր: Այն ներկայացնում է հայկական արվեստի (ճարտարապետություն, քանդակագործություն, նկարչություն, կիրառական արվեստ) համապատկերը՝ սկզբնավորումից մինչև XVIII դարը: Արևմտյան արվեստաբանության մեջ առաջին անգամ, թեպետ համառոտ, տրված է նաև հայկական արվեստի բաղկացուցիչ մասը՝ կազմող գաղթօջախների ճարտարապետությունը և արվեստը: Գրքի վերջում, առանձին հողվածներով, ներկայացված են ամենարժեքավոր 125 հուշարձան և հուշարձանախումբ, որոնք պատկանում են Պ.Տոնապետյանի գրչին:

Ժ.-Մ. Թիերրիի՝ Վասպուրականի մշակույթի երեք տասնամյակ կանոնավոր հետազոտության արդյունքը 1989թ. տպված «Վասպուրականի հայկական հուշարձանները» ծավալուն մենագրությունն է, որը դարձավ այդ բնագավառի հիրավի մի հանրագիտարան: Նույն թվականին Անթիլիասում հրատարակվեց նաև դոկտոր Թիերրիի մի այլ մենագրություն՝ «Ղարաբաղի եկեղեցիները և վանքերը» գիրքը, որտեղ հեղինակը տեղում անձամբ կատարած ուսումնասիրությունների հիման վրա ներկայացնում է Արցախի միջնադարյան շինարարական արվեստը:

1993 թ. ֆրանսիացի գիտնականը հրատարակեց ևս երկու գիրք՝ «Տիգրան Հոնենցի Սուրբ Գրիգոր եկեղեցին» և «Հայկական վանքերի համահավաքը», որտեղ տեղեկատու բնույթի առանձին հողվածներով ներկայացված են հայկական հազարից ավելի վանք: 2000 թ. Փարիզի «Ձողիակ» հրատարակչությունը հրատարակեց դոկտոր Թիերրիի «Միջնադարյան Հայաստան: Մարդիկ և հուշարձաններ» մեծադիր, հեղինակային բարձրարվեստ լուսանկարներով պատկերազարդ գիրքը: Նա հեղինակ է «Մեծ Լարուս» հանրագիտարանում տպված «Հայկական արվեստ», «Անի», «Աղթամար», «Կարս», «Վասպուրական» և այլ հողվածների:

Դոկտոր Թիերրին այսօր հայկական միջնա-

դարյան արվեստի և ճարտարապետության արևմտյան ամենահեղինակավոր մասնագետն է: Նա հանդիսանում է Հայագիտության միջազգային միության, բյուզանդական պատմության և մշակույթի ուսումնասիրության կենտրոնի, "Revue des Etudes Armeniennes" հանդեսի խմբագրության անդամ: Արթրոնի համալսարանում վարել է «Հայ արվեստ և մշակույթ» (1977-1989թթ.), իսկ 1995-ից՝ «Անդրկովկասի քրիստոնեական արվեստ» դասընթացները: Արթրոնի համալսարանում հայ արվեստի գծով ասպիրանտների գիտական ղեկավարն է, ակտիվ մասնակցում է հայագիտական միջազգային գիտաժողովներին: Թիերրի ամուսինները այժմ էլ նույն երկրում շարունակում են արվեստագիտական հետազոտությունները, և նրանց շնորհիվ իրենց հայրենի էտամպ քաղաքը դարձել է հայագիտության ճանաչված հեղինակավոր կենտրոն:

**Ժան-Միշել Թիերրիի՝ հայ ճարտարապետությանը և արվեստին նվիրված աշխատանքների ցանկը**

1. Ani, ville morte du Moyen-Age armenien, "Jardin des Arts", Paris, 1960, դ 3, pp. 132-145 (համահեղինակ՝ Նիկոլ Թիերրի)
2. Անիի հայկական միջնադարի մեռյալ քաղաք, «Էջմիածին», 1961, N 4, էջ 37-43 (համահեղինակ՝ Նիկոլ Թիերրի)
3. Notes sur des monuments armeniens en Turquie, "REArm", II, 1965, pp. 165-184 (համահեղինակ՝ Նիկոլ Թիերրի)
- 4-7. A propos de quelques monuments chretiens du vilayet de Kars (Turquie) -
  - I. "REArm", III, 1966, pp. 73-90.
  - II. REArm, VIII, 1971, pp. 189-213
  - III. "REArm", XVII, 1983, pp. 329-394
  - IV. "REArm", XIX, 1985, pp. 285-323
- 8-16. Monasteres armeniens du Vaspurakan -
  - I. "REArm", IV, 1967, pp. 167-186

- II. "REArm", V, 1968, pp. 65-90
- III. "REArm", VI, 1969, pp. 141-180
- IV. "REArm", VII, 1970, pp. 123-170
- V. "REArm", VIII, 1971, pp. 215-228
- VI. "REArm", IX, 1972, pp. 137-178
- VII. "REArm", X, 1973-74, pp 191-232
- VIII. "REArm", XI, 1975-76, pp. 377-421
- "REArm", XII, 1977, pp. 187-214
17. Peintures murales de caractere occidental en Armenie: eglise Saint-Pierre de Tatev (debut X siecle), "Byzantion", Paris-Liege, XXXVIII, 1968, pp. 180-242 (համահեղինակ՝ Նիկոլ Թիերրի)
18. La cathedrale de Mren et sa decoration, "Cahiers Archeologiques", Paris, XXI, 1971, pp. 43-77 (համահեղինակ՝ Նիկոլ Թիերրի)
19. L'eglise Saint-Anania de Por, "Handes Amsorya", LXXXIX, Wien, 1975, pp. 183-200
20. Notes de geographie historique sur le Vaspurakan, "Revue des Etudes Byzantines", tome 34, Paris, 1976, pp. 159-173
21. Le Couvent des Saint-Apotres de Mus, "Handes Amsorya", XC, Wienne, 1976, pp. 235-256
22. L'eglise armenienne de la Mere de Dieu d'Arcuaber, "Cahiers Archeologiques", Paris, XXV, 1976, pp. 39-57
23. Les sculptures de la coupole de l'ermitage de Spitakavor en Siounie, "Bazmavep", Venise, 1977, դ 3-4, pp. 637-648
24. L'eglise de la Mere de Dieu d'Arcuaber, (Un monument du type S. Hripsime au Vaspurakan) "Atti del Primo Simposio Internazionale di Arte Armena, Bergamo - 1975", Venezia, 1978, pp. 699-708
25. La Cathedrale des Saints-Apotres de Kars (930-943) Louvain - Paris, 1978.-72p.
26. La decoration sculptee de la Cathedrale des Saints-Apotres de Kars, "II International Symposium on Armenian Art", Yerevan, 1978.- 12p.
27. Скульптурный декор собора Св. Апостолов в Карсе, "22 Международный симпозиум по армянскому искусству", Ереван, 1978.- 12 с.
28. L'eglise Surb-Yovhannes de Biwrakan, " REArm",

XIII, Paris, 1978-1979, pp. 203-233

29. *La sculpture des portails*, "Archeologia", η126, Paris, 1979, pp. 203-233

30. *Le couvent armenien d'Horomos*, Louvain-Paris, 1980.-100 p.

31. *L'église Saint-Etienne de Prusus*, "REArm", XIV, 1980, pp. 124-180

32. *Les tetracoques a niches d'angle*, "Bazmavep", 1980, η 1-4, pp. 124-180

33. *Critical study of dating methods of armenian monuments (its importance in the problem of restoration)*, "Third International Symposium on Armenian Art. Summaries of the papers", Venezia, 1981, pp. 100-101

34. *Les couvent de Gandzassar*, "REArm", XV, 1981, pp. 289-316 (համահեղինակ՝ Մ. Հասրաթյան)

35. *La decoration sculptee de la Cathedrale des Saints-Apotres de Kars*, "The Second International Symposium on Armenian Art", Collection of Reports, Vol. IV, Venezia, 1981, pp. 354-361

36. *Dadivank en Arcah*, "REArm", XVI, 1982, pp. 259-286 (համահեղինակ՝ Մ. Հասրաթյան)

37. *Церковь "Бгавор" в Акори (Армянская ССР)*, "IV Международный симпозиум по грузинскому искусству", Тбилиси, 1983.-5с.

38. *L'église "Bgavor" d'Akori*, "IV Simosium International sur l'Art Ge'orgien", Tbilissi, 1983. -6 p.

39. *Notes d'un voyage arche'ologique en Turquie orientale*, "Handes Amsorya", Wienne, 1983, pp. 379-406.

40. *Anolyse critique des procede's de datation des monuments armeniens*, "Atti del Terzo Simposio Internazionale di Arte Armena. Milano-Vicenza-Venezia, 1981", Venezia, 1984, pp. 569-581.

41. *Documents of Armenian Architecture, 12. Ani*, Milan, 1984.- 104 p. (համահեղինակներ՝ Ա. Չաղյան, Պ. Կուսնեյ, Ն. Լուիսյան, Լ. Թիերրի)

42. *Les eglises armeniennes a double abside*, "REArm", XX, Paris, 1984, pp. 515-549

43. *Монастырь Еркана (Дерсим)*, "Четвертый Международный симпозиум по армянскому искусству",

Тезисы докладов, Ереван, 1985, с. 268-270.

44. *Le couvent d'Erkan (Dersim)*, "The Fourth International Symposium on Armenian Art", Theses of Reports, Yerewan, 1985, pp. 355-358.

45. *Les Salles a coupole archaisantes armeniennes*, "Bazmavep", Venise, 1985, η 1-2, pp. 61-104.

46. *La renaissance architecturale du XVII siecle du Vaspurakan*, "Etudes armeniennes in Memoriam Haij Berberian", Lisboa, 1986, pp. 793-827.

47. *Les arts armeniens*, Paris, 1987. - 624 p. (Պ. Տնտապետյանի մասնակցությամբ)

48. *Le couvent Erkayn Enkuzik en Dersim*, "REArm", XX, 1986-1987, pp. 381-417. *L'église Saint-Etienne de Norvans*, "Handes Amsorya", Wienne, 1987, pp. 939-945.

49. *Le Mont Sepuh. Etude arche'ologique*, "REArm", XXI, 1988-1989, pp. 385-449.

50. *Մեսրուպ Լեոնան հուշարձանները (հնափոսական ու սուլմնասիրություն)*, «Էջմիածին», 1989, N 4-5-6, էջ 77-79

51. *Voyage arche'ologique en Turquie orientale, II*, "Handes Amsorya", Wienne, 1989, pp. 28-64.

52. *L'etat actuel de notre connaissance des monuments armeniens en Turquie*, "Fifts International Symposium on Armenian Art. Abstracts of the papers", Venezia, 1988, pp. 15-16.

53. *Monuments armeniens du Vaspurakan*, Paris, 1989. - 558 p.

54. *Note sur l'etat actuel des ruines de la ville d'Ani (Septembre 1989)*, "REArm", XXI, 1988-1989, p. 583.

55. *The Tetrapode Monument in Ani*, "Armenian Review", Winter, 1990, Vol. 43, Number 4/72, pp. 111-131

56. *Le couvent Saint-Georges de Xule (Xulevank)*, "REArm", XXII, 1990-1991, pp. 225-251

57. *Histoire des Saintes Hripsimiennes*, "Syria", tome LXVII, 1990, pp. 695-733 (համահեղինակ՝ Բ. Ուսիե)

58. *Deux couvents Gre'co-Armeniens sur l'Euphrate Taurique*, "Byzantion", tome LXI, Bruxelles, 1991, pp. 496-519

59. *Repertoire des monasteres armeniens*, Brepollis-Turmtout, 1993. - 250 p.

60. *Eglises et couvent du Karabagh*, Antelias-Liban,

1991.-302 p.

61. *Sasun: voyage arche'ologique*, "REArm", XXIII, , 1992, pp. 315-391

62. *Les baziliques armeniennes en Haute-Armenie (Etude preliminaire)*, "REArm", XXIV, 1993, pp. 153-180.

63. *L'églises Saint-Gregoire de Tigran Honenc a Ani (1216)*, Louvain-Paris, 1993. - 174 p.

64. *L'église martyriale triconque de Vasli (Haute Armenie)*, "REArm", XXV, 1994-1995, pp. 255-269.

65. *La Region de Divrik*, "Handes Amsorya", Wienne, 1995, pp. 325-358.

66. *Donnees arche'ologique sur les principaute's armeniennes de Cappadoce orientale au XI siecle*, "REArm",

XXVI, 1996-1997, pp. 119-172.

67. *A propos d'un sceau du couvent des XL Martyrs de Sebaste'e*, "Bulletin du Centre d'Etudes d'Asie Mineure", tome XII, Athenes, 1997-1998, pp. 41-46.

68. *Monuments armeniens de la region de Palu (Turque centrale)*, "REArm", XXVII, 1998-2000, pp. 329-358.

69. *L'Armenie au Moyen Age*, Paris, 2000. - 343 p.

70. *Monuments armeniens du canton de Basean (Pasinler)*, "REArm", XXVIII, 2001-2002, pp. 309-339.

**Մուրադ Հասրաթյան  
դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ բրթակից անդամ**

**Murad Hasratian**

*Doctor, Professor, Correspondent-member of the Academy of Sciences of RA*

**JAN-MICHELE TIERRI**

**(Summary)**

The outline is devoted to the 90th anniversary of birth of the great expert of the Armenian culture and architecture Jan-Michele Tierri. The brief narration presents the reader the portrait of the tireless researcher and fruitful scientist, who devoted all his life to studying Armenian culture and architecture. In the end, the book offers a list of Tierri's works on Armenian culture and architecture.

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԱՆԻ ՔԱՂԱՔԸ ԵՎ ԾԱՌ-ԱՔԱՐ-ՄԱՂԱՍԲԵՐԴԸ

(11-14-րդ դդ.)

Անի մայրաքաղաքի մերձակա բնակավայրերը, վանքերն ու բերդերը սերտորեն կապված են եղել քաղաքի հետ թե՛ վարչատնտեսական և թե՛ հոգևոր-մշակութային առումով: Եթե քաղաքի շրջակա Հռոմոսի, Բագնայրի, Արջո Առիճի, Տեկորի, Խծկոնքի, Մրենի վանքերի պատմությունը, դրանց կապն Անիի հետ, բավականաչափ հայտնի և ուսումնասիրված է՝ շնորհիվ այս կենտրոններում եղած վիճազների և տեղում գրված ձեռագրերի ու հիշատակարանների, ապա բերդերի վերաբերյալ շատ ավելի սակավ տեղեկություններ են պահպանվել: Ստորև կփորձենք հայտնի և նորահայտ նյութերի միջոցով ներկայացնել Անիի մերձակա բերդերից մեկի՝ Ծառաքար կամ Մաղասբերդ՝ անուններով հայտնի բերդի 11-14-րդ դարերի պատմությունը, բերդ, որի պատկառազդու աշտարակավոր պարիսպները մինչև օրս վեր են խոյանում Ախուրյանի կիրճում (այժմ Թուրքիայի տարածք): Թորոս Թորամանյանի բնորոշմամբ, այն «իր ժամանակին ամենից ամառիկ բերդն էր և ավելի ամուր, քան Անին»<sup>2</sup>:

Հենց սկզբում նշենք, որ մինչև այժմ գրականության մեջ Ծառաքարը և Մաղասբերդը համարվել են տարբեր բերդեր: «Մախազիբերդ» անունն առաջին անգամ հիշատակվում է կարծեցյալ Շապուհ

Բագրատունու («Պատմութիւն Անանուն գրուցագրի») մոտ, ըստ որի՝ բյուզանդական Մորիկ (582-602) կայսրը Մախազ անունով հայ կուսակալ է ուղարկել Արևելք և նա Ախուրյան գետի ափին կառուցել է մի բերդ ու կոչել Մախազիբերդ. «Եւ զՄախազ ոմն ի յաշխարհէն Հայոց կացոյց ի յարեւելս, այր չար եւ անաւրէն: Նայ շինեալ զամրոցն ար արն խորինա գետոյ եւ կոչեաց զնայ Մախազիբերդ»<sup>3</sup>: Աղբյուրը, տվյալ դեպքում, ոչ թե պատմագրական երկ է, այլ պատմական գրույցների ժողովածու, որի պարունակած տեղեկությունները կարող են իրականության հետ մոտավոր կապ ունենալ: Դրա օրինակներից մեկում Մախազին է վերագրվել նաև Անիի բերդի կառուցումը՝ «շինեաց եւ ամուրն Անի առ ափն Ախուրեան գետոյ»<sup>4</sup>:

Երկրորդ պատմիչը, որ նշել է բերդի անունը՝ «Մաղասայ բերդ» («Մաղասաբերդ», «Մաղասբերդ») 17-րդ դարում ապրած Ջաքարիա Սարկավազ Քանաքեռցին է, որը բերդի հիմնադրման մասին տեղեկությունը քաղելով Անանուն գրուցագրից, այն գեղարվեստական որոշ մշակման է ենթարկել և ավելացրել 1638 թ. բերդի՝ պարսկական տիրապետությունից խաբեությամբ օսմանյան թուրքերին անցնելու պատմությունը<sup>5</sup>: Ջաքարիան շատ մանրամասն է

նկարագրել բերդի տեղադրությունը, հավանական է, որ տեսել է այն:

Ինչպես տեսնում ենք, Մախազ-Մաղասի անվան հետ կապվող Մաղասբերդ անվան պատմիչների հայտնած այս երկու հիշատակությունների միջև շուրջ հազար տարվա տարբերություն կա: Անհավանական կլիներ, եթե Անիից շուրջ 5 կիլոմետր հարավ-արեւմուտք, Ախուրյան գետի կիրճի անմատչելի հրվանդանի վրա գտնվող բերդը երբևէ չհիշատակվեր 11-13-րդ դարերում, երբ Անին պատմական իրադարձությունների կիզակետում էր: Եվ այն հիշատակվել է, սակայն իր երկրորդ՝ Ծառաքար անունով:

Ղ. Ալիշանը ժամանակին, Կեչրորի տեղը որոշելու առնչությամբ, անդրադարձել է Ծառաքարին (նկատի ունենալով Վարդան Արևելցու հաղորդումը, որ Կեչրորի ամիրան գրավել է Ծառաքարը), և ենթադրել, որ դրանք գտնվել են Երասխածորում կամ Գաբեղենք գավառում<sup>6</sup>: Հետագայում տարբեր հեղինակներ, միմյանց կրկնելով, տարածել են այս տեսակետը<sup>7</sup>: Անգամ ծանոթ լինելով Ծառաքար-Մաղասբերդում գրված 1222 թ. հիշատակարանին, ուր պարզորոշ ասվում է բերդի երկանվանության մասին, ոմանք խուսափել են համապատասխան եզրահանգումից: Հատկանշական է Միքայել վրդ. Հովհաննեսյանի օրինակը, որը «Հայաստանի բերդերը» ստվար հատորում Մաղասբերդը և Ծառաքարը ներկայացնում է առանձին-առանձին, առաջինի վերբերյալ վկայակոչում Անանուն գրուցագրին և Ջաքարիա Քանաքեռցուն, երկրորդի համար՝ Կիրակոս Գանձակեցուն և Սամվել Անեցուն, նաև 1222 թ. հիշատակարանը, ուր նշվում է. «Ջայս երազահանս ի տաճիկ յարապ գրէ ի հայ գիր մեկնեալ Առաքել ի մաստասեր արեղայն, որ մականուն Վառ ասեն, եւ Մխիթար Կլելկանց եւ Շերանն, ի յԱնի քաղաքին դռան ի վերա բերդ եւ անունն Մաղասբերդ եւ բերդին անունն Ծարքար»<sup>8</sup>: Մեջբերումից հետո Մ. Հովհաննեսյանը գրում է. «Թէ ինչ ըսել կուզէ յիշատակագիրը մէջբերուած հատուածին մէջ՝ տարտամ կը մնայ, արդեօք ըսել կուզէ Անիի մօտ բերդ մը կար՝ որ Մա-


ղասբերդն էր եւ այս բերդը կը կոչուէր Ծարքար, որով կը նոյնացնէ Մաղասբերդը Ծառաքար բերդին հետ, կը մնայ ստուգելի»<sup>9</sup>: Հեղինակը ճիշտ է հասկացել հիշատակագրին, որը հետագայի ընթացողներին թուրիմացությունից զերծ պահելու համար հատուկ նշել է բերդի երկու անունները: Ստորև կտեսնենք, որ բազմաթիվ հարակից տվյալներ նույնպես խոսում են Մաղասբերդի և Ծառաքարի նույնության մասին:

Անիի 11-12-րդ դարերի պատմության մեջ կարևոր դեր է կատարել Ծառաքար անունով հիշատակվող այս բերդը, որը, ինչպես տեսանք, 1222 թ. հիշատակարանում կոչվում է «Անի քաղաքի դռան վրա»<sup>10</sup> գտնվող բերդ:

Սամվել Անեցին, որ ընդհանրապես համառոտաբան հեղինակ է, իր ժամանակագրության մեջ բավական մանրամասնորեն է պատմում Վեստ Սարգսի շինարարական ձեռնարկների մասին, նախ՝ Խծկոնքում, ապա՝ Ծառաքարում: Նա գրում է. «ՆՀԳ (1024) Մեծապատիւ վեստն Սարգիս՝ զկնի բազում շինուածոց բերդից եւ եկեղեցեաց զիրաշալի վանս զխցկունս շինեաց, պայծառ պսակաւ զարդարեալ զսուրբ քաւարանն՝ որ ճանաչի անուն սրբոյն Սարգսի»:

ՆՀԷ (1028) Նաեւ զԾառաքար վանքն՝ բերդ արարեալ վեստն Սարգիս եւ պարսպեալ հաստահեղոյս կրով՝ բրզունս ձուլածոյս, յորում եւ ընդ սրբոյ խորանարդ տաճարին կանգնելոյ յանուն սուրբ Գեորգայ՝ շինէ երկուս այլ յարակիցս զմբթաւորս՝ զսուրբ Յովհաննէս եւ զսուրբ Սեբեմոս»<sup>11</sup>: Անեցուց օգտվելով Ծառաքարի մասին տեղեկությունը փոքր-ինչ համառոտված ներկայացնում է նաեւ Կիրակոս Գանձակեցին<sup>12</sup>:

Այսպիսով, ըստ Սամվել Անեցու՝ Վեստ Սարգիսը բերդ է դարձրել Ծառաքարի վանքը, այն շրջապատել հաստ պարսպով և հզոր բուրգերով: Նկատենք, որ մինչև օրս կանգուն և հրատարակված տարբեր լուսանկարներից հայտնի բերդի պարիսպները հենց անիական շրջանի պարսպաշինության



դրոշմն են կրում: Ինչպես Ղ. Ալիշանն է նկատում «բազում մասամբ նման Անույ»<sup>13</sup>:

Սամվել Անեցու վկայությունը լույս է սփռում բերդի երկանվանության խնդրի վրա: Եթե հիմք ընդունենք Անանուն գրուցագրի հաղորդումը Մախազի մասին, որը, հավանաբար, այստեղ բյուզանդական ռազմական հենակետ է հիմնել 6-րդ դարի վերջերին, ապա պարզ է, որ դրան հաջորդած արաբական տիրապետության դժնդակ ժամանակներում, երբ Հայաստանում ոչ մի բերդ չի կառուցվել (եղածներն էլ մեծամասամբ ավերվել են), այն ևս կորցրել է իր ռազմական դերը: Ժամանակի ընթացքում այստեղ հիմնվել է մի փոքրիկ վանք, որը Սբ. Գևորգ անունով մեկ եկեղեցի ուներ: Ծառաքարը հենց այդ վանքի ա-

նունն է: Գագիկ Ա թագավորի մահից հետո (1020) երբ Բագրատունյաց գահը անցավ Հովհաննես Ա թաթին, Անիի թագավորության մեջ կարևոր դեր ունեցող Վեստ Սարգիսը, որը մեկն էր «ի գլխաւոր ազատացն Հայոց»<sup>14</sup>, Ծառաքարի վանքը բերդի վերածեց: Եիշտ է, պատմիչի հաղորդմամբ նա այստեղ նաև երկու եկեղեցի կառուցեց<sup>15</sup>, սակայն, կարծում ենք, դրանք փոքրիկ մատուռներ էին, որով քողարկվում էր վանքը ռազմական կառույցի վերափոխություն գործընթացը: Տեղին է հիշել, որ 19-րդ դարի սկզբին Մաղասբերդ այցելած Ն. Սագիսյանն այստեղ տեսել է «աւե-րակք երից փոքր մատրանց»<sup>16</sup>:

Վեստ Սարգիսը Հովհաննես Ա թաթին թագավորի մահվան ժամանակ նրա հոգաբարձուն էր

նրա կինը Կեչառիսի հիմնադիր Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի (մահ. 1021) դուստրն էր<sup>18</sup> և ուներ երկու եղբայր՝ Վասակ և Ապլջահապ, որոնցից առաջինի սերունդը հետագայում, Շաղղաղյանների ժամանակ, բարձր դիրք գրավեց Անիում:

Վեստ Սարգսի գործունեության մանրամասները զանց առնելով, նկատենք, որ նրա եռանդուն բերդաշինությունը հեռուն գնացող նպատակներ էր հետապնդում: Հովհաննես Ա թաթին մահից հետո, պատմիչների վկայությամբ, Սարգիսը փորձեց գրավել թագավորական գահը, բայց անհաջողության մատնվեց: Այնուամենայնիվ, պատմիչները նշում են, որ նա տեր էր մի շարք բերդերի: Անգամ Գագիկ Բ-ի թագադրումից հետո Սարգիսն իր ձեռքում էր պահում Անիի Ներքին բերդը, այնտեղից հարկադրված անցավ «բերդաքաղաքն Սուրմառի»<sup>19</sup>: Վրաց անանուն պատմիչը գրում է, որ Սարգիսը դաշնակցել է Վրաց Բագրատ Դ (1027-1072) թագավորի հետ և նրան միացել «Անվո ինն բերդերով, բացի Ամբերդից»<sup>20</sup>: Կարելի է չտարակուսել, որ Անիի ինը բերդերից մեկն էլ Ծառաքարն էր: Մայրաքաղաքի պաշտպանական համակարգում, հարավային ուղղությամբ, այս բերդին կարևոր դեր է վերապահվել:

Հայտնի չէ, թե Անիի բյուզանդական նվաճումից հետո ինչ է եղել Վեստ Սարգսի հետ: Սակայն հետաքրքիր է, որ հետագայում Ծառաքարն անցել է նրա կնոջ տոհմակիցներին: Վարդան Արևելցին նշում է, որ 1186 թ. անեցիները մահմեդական ավազակներից գրավեցին Ծառաքար բերդը, որն Անիի Բարսեղ եպիսկոպոսի սեփականությունն էր. «...ապին անեցիք զԾառաքար՝ զհայրենիսն տեառն Բարսղի...»<sup>21</sup>: Բարսեղ Բ եպիսկոպոսը, որը Սամվել Անեցու ժամանակակիցն էր, Ծառաքարը, որպես ժառանգական սեփականություն, կարող էր ստանալ իր իրից Հասան Մագիստրոսից<sup>22</sup>, իսկ վերջինիս արքայ Վասակը, Վեստ Սարգսի կնոջ եղբայրն էր:

Վերադառնալով Անիի պատմության 12-րդ դարի իրադարձություններին, որտեղ Ծառաքարի վանքի շատ հետաքրքիր դրվագ են ներկայաց-

նում: 1064 թ. սելջուկյան գրավումից նա Շաղղաղյան ամիրաների իշխանության տակ անցնելուց որոշ ժամանակ հետո, Մանուչե ամիրայի տիրապետության շրջանում, քաղաքն աստիճանաբար վերականգնվում է: Ապիրատյան տոհմից Վասակի որդի Բարսեղ Ա-ն շուտով Հաղբատում կաթողիկոս է օծվում (1081), իսկ Մանուչեի գլխավոր գորականներին մեկն է դառնում նրա եղբայր Գրիգորը, որը հայկական նշանակալից զինվորական ուժի էր տիրապետում: Անեցիների դիրքերի ամրապնդումը շարունակվում է նաև 12-րդ դարում, երբ խորանում է Շաղղաղյան ամիրաների ու զորացած Վրաց թագավորության միջև քաղաքի համար մղվող պայքարը: 1124-1126 և 1161-1164 թթ. քաղաքն անցնում է վրացիներին, բայց նորից վերադարձվում Շաղղաղյաններին: Երրորդ անգամ վրացիները քաղաքին տիրանում են 1174-1176 թթ.: Այս դեպքերի ժամանակ քաղաքի ամենաազդեցիկ գործիչներից էր Բարսեղ Բ Անեցին (1195 թ. նա կաթողիկոս հռչակվեց)<sup>23</sup>: 1170 թ. նա կարողացավ Վրաց թագավորի միջնորդությամբ փրկագնել Կարսի ամիրայի մոտ գերության մեջ գտնվող իր եղբորը՝ իշխան Ապիրատից<sup>24</sup>:

Հենց այս շրջանում է, որ իրադարձությունների կենտրոնում է հայտնվում Ծառաքարը: Դեպքերի մասին հայտնում է Վարդան Արևելցին, սակայն կարելի է ենթադրել, որ նրա համար սկզբնաղբյուր է հանդիսացել Մխիթար Անեցու Պատմության այժմ հանդիսավորած հատվածը, քանի որ Արևելցին Անիին անդրադառնալիս հիմնականում հենց դրանից է օգտվել:

1177 թ. մի դեպք նկարագրելուց հետո պատմիչը գրում է. «Ի նոյն աւուրս առաւ ծառաքար ի գոյս Կեչրորոյ, որ դաց հրամանաւ Ղարաշայ ամիրային՝ Կեչրորոյ, որ վաճառեաց զնա Խզլասլանայ ընդ բազում ոսկւոյ. եւ որք ոչ դադանա բնակեցոյց անդ արս վնասակարս, որք ոչ դադարէին յարեմեղութենէ ի տուէ եւ գիշերոյ. մինչեւ գրեմկղմեալ տորիստոնեայս ի խաւարային անդունդս ընկղմեալ տորիստոնեայս ի խաւարային անդունդս ոցն՝ սպանվով եւ գարշ հոտով առաջնոց մեռելոցն՝ սպանուցէին, որ եւ եօթն կրօնաւորս անուանիս դառնակսկիծ վիրօք ընդ կատակս խաչանիշ հարմամբ դանա-



կաց՝ փողոտին. որոց պատիւ տօնին խառնեսցի ի տօն մեր Լուսաւորչին Գրիգորի»<sup>25</sup>:

Խզիլ Արսւանը Գանձակի գորեղ Ելտկուզ աթաբեկի կրտսեր որդին էր, իսկ Ղարաչան՝ Կեչրորի իշխանության ամիրան: Ինչպես երևում է, Վրաց պետության մեջ 1176-77 թթ. ծագած ապստամբության<sup>26</sup> և Անիի շուրջն ստեղծված անկայուն վիճակից օգտվելով՝ Ղարաչան Անիի ամիրայից գրավել է Ծառաքարը և վաճառել<sup>27</sup>: Արևելցին Կեչրորի ամիրային հիշատակում է նաև մեկ այլ՝ Գորոզո խաչի պատմության առիթով. «Ի վեցհարիւր երեսուն եւ մի (1182) թուին Խարաչայն, որ էառ զԾառաքար եւ խորտակեաց կռանաւ զխաչն Գորոզոյ կոչեցեալ, անկեալ ի սիրտ նորա արհաւիրք երկիւղի՝ թողու յանկարծակի գտուն իւր զԿեչրօր եւ զՈւխթիսն եւ զամենայն ձորն երասխայ եւ երթայ կնաւ եւ որդւովք ի Դուին...»<sup>28</sup>: Այնուհետև պատմվում է, թե ինչպես զարհուրելի մարդու կերպարանքով իրեն հայտնված խաչի տեսիլքից վախեցած Ղարաչան Դվինից փախչում է Շահ Արմենի մոտ, որը նրան տեղումտեղը սպանում է՝ համաձայն տեսիլքում արված կանխագուշակության:

Արևելցու վերը բերված հատվածը կարելի է հասկանալ այնպես, որ Գորոզո խաչը Ծառաքարում էր, սակայն հնարավոր է, որ պատմիչը Ծառաքարի անունը տալիս է ցույց տալու համար, որ Գորոզոյ խաչը ջարդողը նույն մարդն էր, որ գրավեց Ծառաքարը: Իսկ պատմիչի հիշատակած թվականը Ղարա-

չայի Դվին գնալու և սպանվելու տարին է:

Այսպիսով, Կեչրորի չարագործ ամիրան ու խզիլ Արսւանը Ծառաքարը դարձրել էին ավազակային որջ, որն անեցիներին մշտապես անհանգստություն էր պատճառում: Ծառաքարի մահմեդականների կատարած չարագործություններից ժամանակակիցների վրա հատկապես ցնցող տպավորություն է թողել հայ յոթ հոգևորականների դաժան սպանությունը: Ուշագրավ է, որ Ծառաքարում նահատակված հոգևորականներն անմիջապես համարվել են Հայ եկեղեցու վկաներ և Անիում նրանց հիշատակը տոնվել է Սբ. Գրիգոր Լուսավորչի տոնի օրը:

Անեցիները այլևս չէին կարող հանդուրժել շուրջ 9 տարի շարունակվող այս վիճակը: Քաղաքի Սուլթան ամիրայի հետ հայերը լավ հարաբերություններ ունեին<sup>29</sup>: Եվ ահա 1186 թ. Բագրատունիների անկումից հետո առաջին անգամ անեցիները սեփական անվտանգությունը պաշտպանելու համար հարձակողական ռազմական գործողություն են ձեռնարկում: Վարդան Արևելցին գրում է. «Ի վեցհարիւր երեսուն եւ հինգ (1186) թուին առին անեցիք զԾառաքար՝ զհայրենիսն տեառն Բարսղի, յանխնայ կոտորելով զորս անդ, բաց ի կանանց եւ ի մանկանց: Ձոր լուեալ Ալիշէրն ամիրայն Դւնայ ճողէր զմորուսն եւ սեւ զգեճոյր ի վերայ կնոջն եւ որդեացն որ անդ եւ ի վերայ զօրացն կոտորման եւ ի քրիստոնեից փառաւորիւր սուրբ Երրորդութիւնն»<sup>30</sup>:

Այսպիսով, անեցիները հաջող ռազմական արշավ են իրականացնում, գրավում դժվարամատչելի բերդը: Դրանով նրանք ոչ միայն չեզոքացնում են ավազակային որջը, այլև վերականգնում Բերսեղ եպիսկոպոսի ժառանգական իրավունքը: Կարելի է ենթադրել, որ անեցիների համարձակ ելույթն անակնկալի է բերել բերդապահներին: Վտանգ ակնկալելու դեպքում Դվինի Ալիշէր ամիրան իր ընտանիքը չէր թողնի Ծառաքարում: Ամեն դեպքում, որքան էլ անեցիները չարացած էին և անխնայ կոտորել են մահմեդական զորքը, բայց խնայել են կանանց ու երեխաներին:



Ծառաքարի հաղթանակն արձանագրվել է նաև «Պատմութիւն քաղաքին յԱնույ» երկում, որի կազմողը թեև օգտվել է Վարդան Արևելցուց, սակայն եղելությունն ավելի է մանրամասնել, ուստի ավելորդ չենք համարում այն նույնպես վկայակոչել. «ԸՅԼԵ (1186)...ի սոյն թուիս... հարեան զօրօք քաղաքացիքն յԱնույ եւ գնացին ի վերայ ամուր բերդին, որ Ծարաքար անուանի, որ էր բնիկ սեփական եւ ժառանգութիւն տեառն Բարսղի կաթողիկոսին հարցն եւ եղբարցն, եւ քանդեալ զայն եւ զորս գտին արս կոտորեցին, բաց ի կանանց եւ ի տղայոց: Եւ լուեալ զայս Ալիշէր ամիրայն Դվնայ ճողէր զմորուսն եւ սեւ զգեճոյր ի վերայ կնոջն եւ որդւոցն, քանզի ի նոյն բերդին էին կինն եւ որդիքն: Բայց ոչ մեղանչեցին նոցա, այլ միայն զգօրսն կոտորեցին եւ զինչս եւ զկարասիս նոցա յափշտակեցին եւ տիրեցին բերդին եւ օրհնեցին զԼստուած, զոր լուեալ այլազգեացն

ափշեցան եւ բեկան զօրութիւնք բազկի նոցա եւ ոչ կարէին ճիգ արծակել, իսկ քրիստոնեայքն ամենայն այնմ կողմանց աշխարհին լուեալ փառաւորէին զամենասուրբ Երրորդութիւնն»<sup>31</sup>:

Այսպիսով, 1186 թ. Ծառաքարն իրավաբանորեն անցավ Անիի ամիրայությանը, սակայն փաստացի՝ անեցի հայերին: 1198թ. վերջերին, երբ մահացավ Անիի վերջին ամիրա Սուլթանը, քաղաքի դարպասները բացվեցին Ջաքարե ամիրապասալարի առաջ<sup>32</sup>: Վրաց պետության կազմում ընդգրկված Անին դարձավ Ջաքարեի տիրույթների վարչական կենտրոնը և անգամ մոնղոլական նվաճումից հետո (1236թ.) բավական ժամանակ մնաց Ջաքարյան տոհմի ձեռքում:

Ծառաքարի դեպքերին ծանոթանալուց հետո դժվար է տարակուսել, որ բերդն Անիի մերձակայքում էր, ոչ թե Երասխաձորում, կամ քաղաքից

տասնյակ կիլոմետրեր հեռու գտնվող մեկ այլ վայրում: Այս մասին շատ ավելի խոսում է 1222 թ. թարգմանված երազահանի հիշատակարանը, որին այժմ ավելի մանրամասն պիտի ծանոթանանք:

Թեպետ երազահանի թարգմանության բնօրինակը չի պահպանվել, սակայն հետագա ընդօրինակություններում (Մատենադարան, ձեռ. թիվ 695, գրված 1664 թ. Ձեյթունում և Վիեննայի Մխիթարյանների մատենադարան, ձեռ. թիվ 88, գրված 17-րդ դարի կեսերին Տրապիզոնում) արտագրվել է ձեռագրի հիշատակարանը, որտեղ մասնավորապես ասվում է. «Ձայս երազահանս ի տաճիկ յարապ գրէ ի հայ գիր մեկնեալ Առաքել իմաստասէր արեղայն, որ մականուն Վառ ասեն, եւ Մխիթար Կլեկանց եւ Շերանն, ի յԱնի քաղաքին դռան ի վերա բերդ եւ անունն Մաղասբերդ եւ բերդին անունն Ծարքար: Ի յայն բերդին զընտանն մեծ մարդ մի կայր տաճկաց, եւ այս գիրս ի հետ յայն զընտանին եւ յայս Գ(3) հոգիս փոխել են ՌՅԱ (1222) թվին ի հայ լեզու ի սահմի ամսոյ Գ(3) աւուրն, որ է աւրինեալ անգրաւ յաւիտեանս, ամէն»<sup>35</sup>:

Վիեննայում պահվող ձեռագրում հիշատակարանը փոքր-ինչ տարբեր է, բերդի անունը չկա, բայց տեղը նշված է «ի յԱնի քաղաքի մաւտն»<sup>34</sup>: Առաջին հիշատակարանում հետաքրքրական է նաև Մաղասբերդում տաճիկ գերու պահվելու տեղի՝ գնդանի («բերդին զընտանն») հիշատակությունը, որը համեմատելի է Արևելցու վերը նշված տեղեկության հետ, ըստ որի՝ Ծառաքարում քրիստոնյա գերիների պահում էին «ի խաւարային անդունդս ընկղմեալ»: Սա վկայում է, որ Ծառաքար-Մաղասբերդում թե մահմեդականների և թե քրիստոնյաների իշխանության ժամանակ գետնփոր բանտ է գործել: Առաջիններն այստեղ նետվածներին մահվան էին դատապարտում սովի ու զարշահոտության միջոցով, երկրորդները՝ չէին խուսափում գերիներից մեկի մոտ եղած գրքի թարգմանությամբ զբաղվելուց:

Առաքել Անեցի արեղան ամենայն հավանականությամբ Ծառաքարի վանքի հոգևոր սպասա-

վորն էր, իսկ Մխիթարն ու Շերանը, հավանաբար, զինվորականներ: Չի բացառվում, որ 1211 թ. Անիի Բեխենց վանքում նկարագրված «Յաղաբատի ավետարանի» լուսանցքներից մեկում պատկերված զինվորական հագուստով երիտասարդ Շերանիկը երազահանի թարմանիչներից Շերան անվանվածն է: Մանրանկարիչ Մարգարեն նրա պատկերի մոտ մակագրել է. «Շերանիկ քանի գաս, ծուկն բեր»<sup>36</sup>: Ինչպես երևում է Ախուրյան գետի ծուկն Անիի Բեխենց վանք տանող երիտասարդ զինվորականը գիր ու գրականության նկատմամբ սեր ունեցող մեկն է եղել և անհավանական չէ, որ հենց նա է Ծառաքար-Մաղասբերդի բերդապահ թարգմանիչը (Շերան-Շերանիկը հազվագյուտ անուն է):

Բուն երազահանը կրում է «Թուփառնուլը» կամ «Աղէկախօս» անվանումը: Նրա մեջ պահպանվել են միջին հայերենին բնորոշ բառեր ու արտահայտություններ, նաև շուրջ չորս տասնյակ արհեստների անուններ: Ուսումնասիրողներից ոմանք Առաքել Անեցուն են վերագրում նաև մեկ այլ աշխարհիկ երկի՝ «Պղնձե քաղաքի պատմության» թարգմանությունը<sup>36</sup>:

Այսպիսով, Անիի երկրորդ ծաղկման շրջանում Ձաքարյանների օրոք, Ծառաքար-Մաղասբերդը շարունակում էր մնալ ռազմական ամրություն, բայց նաև Առաքել Անեցու շնորհիվ՝ մշակութային ավանդ թողած կենտրոն: Այն այդ դերը պահպանել է բավական երկար ժամանակ, որի մասին հայտնի դարձավ բոլորովին վերջերս հայտնաբերված մի քանի հիշատակարանների շնորհիվ:

Մատենադարանի թիվ 3681 մատյանը, որը պարունակում է Սամվել Անեցու ժամանակագրությունը, ընդօրինակվել է Արժեշի Ուռընկար վանքում 1315 թ.: 1343 թ. Մաղասբերդում այդ ձեռագիրն անցել է Դավուց թառի Նաթանայել եպիսկոպոսին, որի հիշատակարանում նշվում է. «ՉՂԲ (1343) սահմի: Ես նուաստ Նաթ (Նաթանայել, Կ. Մ.) եպ. Դայոց թառոյ յոյժ ...ել եւ անմխիթար տրտմել եկի լալագին աչա(ւք) ...կացի ի Մաղսբերդ Ձ(6) ամիս եւ յԱստուած

հաւատարիմ հ(ոգեւ)որ եղբայրն իմ Ամիրզայն մեծաւ սիրով ընկալաւ զիս եւ քաղցրութեամբ մխիթարեց, Աստուած զինքն մխիթարէ, ամէն» (Մատենադարան, ձեռ. թիվ 3681, էջ 83բ-84ա)<sup>37</sup>:

Դավուց թառի վանքի առաջնորդ Նաթանայել եպիսկոպոսը (նա հիշվում է նաև մի անթվական հիշատակարանում)<sup>38</sup>, հավանաբար հալածանքների պատճառով, ապաստանել է Մաղասբերդում, իր հոգևոր եղբայր Ամիրզայի մոտ: Այս մասին նա գրում է այստեղ վեց ամիս մնալուց հետո և պատահական չէ, որ հիշատակարանի առաջին բառն ամսանվան հիշատակությունն է՝ «սահմի»: Սա ենթադրել է տալիս, որ նա հենց այդ ժամանակ է ձեռք բերել մատյանը և հիշատակագրել իր հետ կատարվածը, նաև երախտագիտությամբ հիշատակել Ամիրզային:

Իր բարերարին Նաթանայել եպիսկոպոսը հիշատակում է նաև 45բ էջի հիշատակարանում՝ «Քրիստոս Աստուած պահեայ զպարծանաց եղբայրքն զպարոն Ամիրզայն եւ զԹանգուրն եւ փրկեայ ի չարեաց»: Ամիրզայի պարոն անվանվելը խոսում է նրա մանր ազնվականության դասին պատկանելու մասին: Երրորդ անգամ Ամիրզան և նրա ազնվականները հիշատակվում են ձեռագրի 93բ էջում սկսվող և 94ա էջում շարունակվող թերի պահպանված երկտող հիշատակագրության մեջ. «Քրիստոս Աստուած քուն արդ բարեխաւսութեամբ... յարքայութիւնդ հոգեւոր մաւրն իմ Արագ Խաթունին, որ բազում ար(ար)... զմեզ... ..եայ զԱմիրզայն եւ զՄաղագ Խաթ(ունն)...»: Այս հիշատակագրություններով ուրվագծվում է Ամիրզայի ընտանիքի կազմը: Արագ Խաթունը հավանաբար նրա մայրն էր, որին Նաթանայելը կարող էր իր հոգևոր մայրը համարել: Մաղագ Խաթունը պետք է որ Ամիրզայի կինը եղած լինի, իսկ նախորդ հիշատակագրության մեջ նշվում է Ամիրզայի եղբայրը՝ Թանգուրը: Այս ընտանիքը բնակվում էր Մաղասբերդում, ուր և իր գիրկն էր անել տարագիր Նաթանայել Դավուցթառեցուն:

14-րդ դարի 40-ական թվականներին Անի մտակալին պատկանում էր մոնղոլների գերիշխանու-

թյունն ընդունած Ձաքարյաններին<sup>39</sup>: Ավելացնենք, որ մշտապես Անիի հետ սերտ կապ ունեցող Մաղասբերդի մասին 1222 թ. հետո մինչև 17-րդ դարն այլ տեղեկություն հայտնի չէր և Նաթանայելի հիշատակարանը մասամբ լրացնում է այդ բացը:

Ձեռագրում կան նույն շրջանի իրադարձություններին վերաբերող և պատմական գործիչների անուններ պահպանած, սակայն, ցավոք, խիստ մաշված այլ հիշատակագրություններ: Թեև դրանք կցկտուր տեղեկություններ են պարունակում, սակայն հարակից այլ նյութերի համադրումով հնարավոր է դառնում ուրվագծել Անիի շրջանում և բուն Մաղասբերդում 14-րդ դարի 40-ական թվականներին ստեղծված իրավիճակը: Նախ ներկայացնենք հիշատակագրությունները.

էջ 92բ՝ «Աստուած լոյս արայ խաւարն, որ... բազում զորաւք եկն ի վերայ բերդիս Մաղասայ...»: Դիշատակագրության մեջ նշվում է Մաղասբերդի նկատմամբ ձեռնարկված ինչ-որ հարձակման մասին:

էջ 4ա՝ «...աց սրբոցն միջնորդութեամբ ազա(տեա՞) (զՇրվ)անշահն ի յանաւրի(նաց)»:

էջ 5ա՝ «...այ զպարոն Թամարն եւ զՇրվանշահն ի ձեռա... եւ ժառանգեցայ զտունս հայրենի: Ամէն»:

էջ 114բ-115ա՝ «(Քրիստոս) որդի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, սուրբ Աստուածածնիդ միջնորդութեամբ... ած խաչիդ եւ սուրբ Ամենափրկչիդ եւ սուրբ... (պ)ահ(պանեա) զՇրվանշահ յանաւրինացն չարեն... հաստատէ...»:

Վերջին երեք հիշատակագրությունը հնարավոր է, որ գրվել են Դավուց թառում, քանի որ հատկապես վերջին հատվածում նշված Ամենափրկիչն այն նշանավոր փայտյա քանդակագործ խաչն է, որն այդ վանքի գլխավոր սրբությունն էր (այժմ պահվում է Սբ. Էջմիածնում): Դիշատակագրություններում նշված Շրվանշահն Անիում իշխած վերջին Ձաքարյան իշխանի՝ Շահնշահ Գ-ի եղբայրն էր: «Բագնայրի ավետարանի» 14-րդ դարի մի հիշատակարա-

նի գրիչը խնդրում է հիշել «...աթապակ Շահանշահին եւ եղբար իւրոյ պարոն Շրվանշահի...»<sup>40</sup>:

Շահնշահ Գ-ը «տաճկաց զորքի» հարձակման պատճառով մազապուրծ փախել է Անիից, ինչպես այդ մասին վկայում է 1357 թ. Անիում գրված մի հիշատակարան, որտեղ խոսվում է դրանից որոշ ժամանակ առաջ տեղի ունեցած դեպքերի մասին. «...զօրքն տաճկաց բազմացեալ ամբոխիւք հասին գաւառն քաղաքին Անոյ: Եւ զաղետս եւ զոր ինչ արարին ի վանս եւ ի գեաւղս եւ ի գաւառիս ո՞ր բերան պատմէ կամ ո՞ր լեզու խօսի, քանզի անխնայապէս զործեցին զիրեանց չարիս ի հաւատացեալս Սուրբ Երրորդ զոլութեանն... Եւ զորս ըմբռնեալ տանէին գերիս՝ բանդից եւ տանջանաց մատնեալ: ...Որոց զլուխ աթապակ եւ մեծ սպասալար Շահնշահի, որ հազիւ կարաց զերծանիլ ի ձեռաց թշնամեացն»<sup>41</sup>: Հավանաբար նույն դեպքերն են ակնարկվում Հովհաննավանքի մի անթվական արձանագրությունում: Գրիչորի որդի Ամսայջանը գրում է. «...հեց ելաւ պար(ոնաց) ձեռնէ զերկիրս առին, ես չբաժանեցայ ի ծառայութենես: Աստուած պարոնացն աջողում էրետ երկիրս էրեկ, Ոհանայվանք ինձ տվին հէրէնիք...»<sup>42</sup>: Ապա նշում է Հովհաննավանքում իր բարեգործությունները՝ կատարված «...վասն արեւշատութեան պարոնաց մերոց եւ պարոն աթապակ Շահանշահի եւ Շրվանշահի...»<sup>43</sup>:

Ինչպես տեսնում ենք՝ Անիի հիշատակարանի և Հովհաննավանքի արձանագրության տվյալներն ընդհանուր եզրեր ունեն Մաղասբերդում պահված ձեռագրի հիշատակագրությունների հետ, ուր հիմնական գործիչը Շրվանշահն է: Կարելի է ենթադրել, որ նա իր եղբոր նման հալածվել է: Հնարավոր է, որ Մաղասբերդը հենց Շրվանշահին էր պատկանում և Նաթանայելի հովանավոր Ամիրզան նրա ենթականերից մեկն էր:

14-րդ դարի 50-ականների սկզբին Ջաբարյանները վերջնականապես կորցրեցին Անին, հավանորեն նաև Մաղասբերդը: Սակայն Նաթանայել Հավուցթառեցու 1343 թ. հիշատակարանը վկայում

է, որ այդ ժամանակ բերդը հայերի ձեռքին էր:

16-րդ դարի սկզբին Մաղասբերդը հիշատակվում է վրացական մի փաստաթղթում, որը վերաբերում է «Սամցխե-սաթաբագոյի» հոգևոր պետերին<sup>44</sup>:

17-րդ դարում բերդի մասին, որպես գործող կենտրոն, պատմում է Ջաբարիա Քանաքեռցին (1627-1699 թթ.): Այն բնակեցված է եղել ընդհուպ մինչև 19-րդ դարը<sup>45</sup>: Մաղասբերդ-Ծառաքարը որպես հնավայր քիչ է ուսումնասիրվել<sup>46</sup>:

Ամփոփելով կարող ենք ասել, որ 6-րդ դարի վերջերին հիմնված բյուզանդական զինվորական հենակետը, որ հիմնադրի անունով կոչվել է Մաղասբերդ, հետագայում՝ արաբական տիրապետության ժամանակ, լքվել ու վերածվել է փոքրիկ վանքի, որը Ծառաքար անունն է կրել: Բագրատունյաց շրջանում արժանվույնս գնահատելով Ծառաքարի վանքի ռազմավարական դիրքը, Վեստ Սարգիսն այն կրկին դարձրել է բերդ, կառուցել հզոր պարիսպներ և բուրգեր: Այնուհետև այն դարձել է Վեստ Սարգսի կնոջ տոհմակիցների՝ Ապիրատյան-Հասանյանների սեփականությունը, որոնք բարձր դիրք էին զբաղում ամիրայական շրջանի Անիում: Շուրջ 1177 թ. Ծառաքարը գրավել է Կեչրոռի ամիրան, բերդում հաստատվածները զբաղվել են ավազակությամբ: 1186թ. անեցիները հարձակվել ու ազատագրել են Ծառաքարը: Հետագայում բերդն անցել է Ջաբարյաններին, որոնց տիրապետության տակ է մնացել մինչև 14-րդ դարի 50-ական թվականները:

Ծառաքար-Մաղասբերդն ուներ եկեղեցիներ և հոգևոր-մշակութային կենտրոն էր: 1222 թ. այստեղ Առաքել Անեցի արեղան և Մխիթարն ու Շերանն արաբերենից հայերեն են թարգմանել մի երազահան, իսկ 1343 թ. Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերից մեկում ուշագրավ հիշատակագրություններ է թողել բերդաբնակ իր բարեկամ Ամիրզային մոտ ապաստանած Հավուց թառի եպիսկոպոսը:

1. Աղբյուրներում այս անունը հիշատակվում է տարբեր կերպ՝ «Մախագիբերդ» (10-րդ դ., Անանուն զրուցագիր), «Մաղասբերդ» (1222 թ. հիշատակարան), «Մաղսբերդ» (1343 թ. հիշատակարան), «Մաղասայ բերդ», «Մաղասբերդ», «Մաղասբերդ» (Ջաբարիա Քանաքեռցի) (համապատասխան հղումները տես հոդվածում): **Ս. Երեմյանը** բերդը կոչել է «Մաղխագ բերդ», այն առնչելով Արշակունյաց արքունիքի «մաղխագ» պաշտոնի հետ (Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, Երևան, 1984, էջ 199): Մենք նախընտրում ենք առավել հաճախ հանդիպող «Մաղասբերդ» տարբերակը:

2. **Թ. Թորամանյան**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության (աշխ. ժողովածու), Երևան, 1942, էջ 311: Թ. Թորամանյանը նշում է նաև, որ ռուսական բանակի հայտնի զորահրամանատար հայագի Լոռիս Մելիքովն Անիի շրջանում «թե՛ տեղի ընտրության, թե՛ ռազմագիտորեն շինության տեսակետով ամենևն ավելի գնահատել է Մաղաս բերդը» (նույն տեղում, էջ 324):

3. Պատմութիւն Անանուն զրուցագրի (կարծեցեալ Շապուհ Բագրատունի), թարգմանությունը զրաբարից ռուսերեն, առաջաբանն ու ծանոթագրությունները **Ս. Հ. Դարբինյան-Մելիքյանի**, Երևան, 1971, էջ 51:

4. Նույն տեղում:  
5. Ջաբարիա Սարկևազ, Պատմագրութիւն, հ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 15-16:

6. **Ղ. Ալիշան**, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 47, Հ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Վիեննա, 1940, էջ 236:

7. Հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության մեջ Մաղասբերդը համարվում է Անիի մատույցը պաշտպանող մի բերդ, իսկ Ծառաքարի համար ասվում է. «Նախկին Արշարունիքի արևմտյան մասն էր կազմում Կեչրոռ գավառը համանուն քաղաքով և Ծառաքար ամրոցով» (Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1976, էջ 98): Հայկական սովետական հանրագիտարանը «Մաղասբերդ» անունով է կոչում բառահոդվածը («Մաղասբերդ, Մաղագբերդ, Մաղագիբերդ»), այն տեղադրելով Շիրակում, Անիից 4 կմ. հարավ (ՀՍՀ, Երևան, 1981, հ. 7, էջ 189), իսկ Ծառաքարը չի նշում: Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը նույնպես բերդը կոչում է «Մաղասբերդ» (նշում նաև անվան այլ տառադարձություններ) և ավելացնում «13-րդ դ. կոչվել է նաև Ծակքար» (**Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Քախչյան, Գ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1991, էջ 659): Իսկ Ծա-

ռաքարը նույն բառարանը համարում է վանք՝ «Այրարատ աշխարհի, ըստ ոմանց՝ Գաբեղյանք գավառում, հավանաբար Կեչրոռ գավառի մոտ, ըստ այլոց՝ Շիրակի գավառում, Անիի մոտ» (**Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Քախչյան, Գ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 843):

8. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար (կազմեց՝ **Ս. Մաթևոսյան**), Երևան, 1984, էջ 131: Այս և հաջորդ մեջբերումներում կատարված ընդգծումները մերն են, Կ. Ս.:

9. **Ս. Յովհաննեսյան**, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 643:

10. Այս արտահայտությունը համեմատելի է Անիի մերձակա Արջո Առիճի վանքին տրված բնութագրումին՝ «...ուխտիս Արջուառճ, որ ի դրան մայրաքաղաքիս Անոյ...» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 197):

11. Մատենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 94բ, ձեռ. թիվ 3613, էջ 60ա, Սամուելի քահանայի Անեցույ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելածներով եւ ծանօթութիւններով **Արշակ Տէր-Միջելեանի**, Վաղարշապատ, 1893, էջ 106:

12. «...Մեծապատիւ Վեստն Սարգիս զկնի բազում շինուածոյ բերդից եւ եկեղեցեաց շինեաց եւ զփառաւոր վանքն զԵսկլոսնն եւ զԵկեղեցին յանուն սրբոյն Սարգսի, եւ զԾառաքար վանքն բերդ արարեալ՝ պարսպեաց ամրագոյն, եւ եկեղեցիս շինեալ ի նմա փառաւորս»: Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ **Կ. Մելիք-Օհանջանյանի**, Երևան, 1961, էջ 89:

13. **Ղ. Ալիշան**, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 124:

14. Արիստակիսի Լաստիվերցույ Պատմութիւն (աշխատասիրությամբ՝ **Կ. Յուզբաշյանի**), Երևան, 1963, էջ 57:

15. Հետաքրքրական է Վեստ Սարգսի կառուցած մատուռներից մեկի Սուրբ Սեբեմոս կոչվելը, որն այդ անունով աղբյուրներից հայտնի միակ եկեղեցին է հայ իրականության մեջ: **Ս. Ավգերյանի** «Լիակատար վարք եւ վկայաբանութիւնք սրբոց» ընդգրկուն բազմահատորյակի մեջ Սեբեմոս անուն չկա: Արդյո՞ք եկեղեցու հայրերից Սերեմոսի (Սերինոս) անունն է:

16. **Ն. Սարգիսյան**, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 125:

17. Արիստակիսի Լաստիվերցույ Պատմութիւն, էջ 57:

18. 1042 թ արձանագրության մեջ Վեստ Սարգսի կինը գրում է.

«ես Տիկ(ն)աց Տիկին, դուստր Քրզորոյ Մագիստոսին եւ ամուսին Սարգսի արեւելից վեստիս...» (**Չ. Ալիշան**, Շիրակ, էջ 135): Ուսումնասիրողները նրան թյուրիմացաբար նույնացրել են Գրիգոր Մագիստրոս Պահլավունու (Բջնեցու) հետ (**Լեո**, Անի, Երևան, 1963, էջ 322-327, Դայ ժողովրդի պատմություն, Գ. 3, էջ 148 եւ այլն): Մինչդեռ Պահլավունի իշխանը մագիստրոսի կոչում ստացել է 1045-ին: Իսկ Վեստ Սարգսի աներն այն Գրիգոր Մագիստրոսն է, որ հիշատակվում է 1001 թ. Արզականի Սբ. Ստեփանոս եկեղեցու և 1003 թ. Կեչառիսի շինարարական արձանագրություններում: Պատմիչները նրան հիշատակում են Ապիրատ անունով: (**Գ. Սարգսյան**, **Գրիգոր-Ապիրատ Գասանյան**. Գիմնադիր Կեչառիսի վանքի (վիճագրական նոր վկայություն), «Յին Դայաստանի մշակույթը», 12, Երևան, 2002, էջ 111, Կ. Մաթևոսյան, Դազարանյա Կեչառիսի հիմնադրման պատմությունից, «Էջմիածին», 2004, Ա, էջ 77-91):

19. Արիստակիսի Լաստիվերցոյ Պատմութիւն, էջ 58:

20. **Լ. Մելիքսեթ-բեկ**, Վրաց աղբյուրները Դայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 205-206:

21. **Վարդան Արևելցի**, Տիեզերական պատմություն, աշխարհաբար թարգմանությունը **Գ. Բ. Թոսունյանի**, Երևան, 2001, էջ 136:

22. **Ն. Ակիմեան**, Ներսես Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 394:

23. **Կ. Մաթևոսյան**, Անի, Սբ. Էջմիածին, 1997, էջ 65-68:

24. **Գ. Մարգարյան**, նշվ. աշխ., էջ 120:

25. Մեջբերման վերջին տողը չկա վենետիկյան հրատարակության մեջ, որից կատարվել է Երևանյան արտատպությունը, ուստի վկայակոչում ենք Վարդանի Պատմության մոսկովյան հրատարակությունը՝ Վարդանյա Բարձրբերդեցոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկուա, 1861, էջ 171:

26. **Գ. Մարգարյան**, նշվ. աշխ., էջ 154-161:

27. **Գ. Մանանդյան**, Երկեր, հ. 9, Երևան, 1977, էջ 129-130:

28. **Վարդան Արևելցի**, էջ 135:

29. **Կ. Մաթևոսյան**, Անի, էջ 68:

30. **Վարդան Արևելցի**, էջ 136:

31. **Մխիթար Ամեցի**, Մատեան աշխարհավեպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Գ. Մարգարյանի, (հավելված), Երևան, 1983, էջ 109-110:

32. **Կ. Մաթևոսյան**, Անիում Ջաքարյանների հաստատման ժամանակն ըստ նորահայտ հիշատակարանի, «Պատմա-բանասիրական հանդես», 1997, թիվ 1, էջ 280-283, **Ա. Շահնազարյան**, Ջաքարյանների ազատամարտի առաջին փուլը, ԳԳ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Դայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 6, Երևան, 2005, էջ 140-147:

33. Դայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ժԳ դար, էջ 131:

34. Նույն տեղում, էջ 131-132:

35. Նույն տեղում, էջ 69: **Կ. Մաթևոսյան**, Անիի քաղաքացիների դիմակարները «Չաղբատի Ավետարանի» խորաններում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1984, 3, էջ 162-168:

36. **Գ. Սկրտչյան**, Առաքել Ամեցի թարգմանիչ, «Անի», 1992, թիվ 2, էջ 28-30:

37. Չեռագրի և Նթանայել եպիսկոպոսի կատարած հավելումների մասին տես **Կ. Մաթևոսյան**, Դավուց թառի վանքի և Ապիրատյան տոհմի պատմության նորահայտ տվյալներ, «Բանբեր Մատենադարանի», 17, Երևան, 2006, էջ 147-167:

38. «...Լաթանայել եպիսկոպոս Դայոց թառոյ...», **Գ. Գովսեփյան**, Դավուց Թառի ամենափրկիչը և նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Բ, Երևան, 1987, էջ 24:

39. **Վահրամ Ջաքարյանի**, Շահնշահ Գ-ի, ինչպես նաև Անիում նրանց նշանակած պաշտոնյա **Գրիգոր Խուցեսի** ու նրա որդիներ Ասիլի և Պարոնի գործունեության մասին պահպանված մի շարք տվյալներ վկայում են, որ քաղաքն այդ շրջանում համեմատաբար բարվոք վիճակում էր գտնվում, **Գ. Մանանդյան**, նշվ. աշխ., էջ 343, **Կ. Մաթևոսյան**, Անի, էջ 331, 364-365:

40. **Գ. Յովսեփեան**, Յիշատակարանց ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 891, **Գ. Գովսեփյան**, Դավուց Թառի ամենափրկիչը..., էջ 29:

41. Մատենադարան, ձեռ. թիվ 6764, էջ 264ա, **Կ. Մաթևոսյան**, Ա-

նի, էջ:

42. **Կ. Ղաֆադարյան**, Դովհանմավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 101:

43. Նույն տեղում:

44. Վրացական իրավունքի հուշարձաններ, հ. 3, Թբիլիսի, 1970, էջ 245 (վրացերեն):

45. **Թ. Թորամանյան**, նշվ. աշխ., էջ 311-312:

46. Բերդի շրջանը թուրքական իշխանությունները համարում են փակ գոտի: 2006 թ. այստեղ ուսումնասիրություն են կատարել ֆրանսիացի երիտասարդ հետազոտողները: Նրանց աշխատանքի վերաբերյալ հրապարակում է լինելու Revue des etudes Armeniennes հանդեսի առաջիկա համարում:

«ես Տիկ(ն)աց Տիկին, դուստր Քրզորոյ Մագիստոսին եւ ամուսին Սարգսի արեւելից վեստիս...» (**Չ. Ալիշամ**, Շիրակ, էջ 135): Ուսումնասիրողները նրան թյուրիմացաբար նույնացրել են Գրիգոր Մագիստրոս Պահլավունու (Բջնեցու) հետ (**Լեո**, Անի, Երևան, 1963, էջ 322-327, Գայ ժողովրդի պատմություն, Գ. 3, էջ 148 եւ այլն): Մինչդեռ Պահլավունի իշխանը մագիստրոսի կոչում ստացել է 1045-ին: Իսկ Վեստ Սարգսի աներն այն Գրիգոր Մագիստրոսն է, որ հիշատակվում է 1001 թ. Արզականի Սբ. Ստեփանոս եկեղեցու և 1003 թ. Կեչառիսի շինարարական արձանագրություններում: Պատմիչները նրան հիշատակում են Ապիրատ անունով: (**Գ. Սարգսյան**, **Գրիգոր-Ապիրատ Գասանյան**, Գիմնադիր Կեչառիսի վանքի (վիճագրական նոր վկայություն), «Յին Գայաստանի մշակույթը», 12, Երևան, 2002, էջ 111, Կ. Սաթևոսյան, Գազարամյա Կեչառիսի հիմնադրման պատմությունից, «Էջմիածին», 2004, Ա, էջ 77-91):

19. Արիստակիսի Լաստիվերցույ Պատմութիւն, էջ 58:

20. **Լ. Մելիքսեթ-բեկ**, Վրաց աղբյուրները Գայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 205-206:

21. **Վարդան Արևելցի**, Տիեզերական պատմություն, աշխարհաբար թարգմանությունը **Գ. Բ. Թոսունյանի**, Երևան, 2001, էջ 136:

22. **Ն. Ալիմեան**, Ներսես Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 394:

23. **Կ. Սաթևոսյան**, Անի, Սբ. Էջմիածին, 1997, էջ 65-68:

24. **Գ. Սարգսյան**, նշվ. աշխ., էջ 120:

25. Մեջբերման վերջին տողը չկա վենետիկյան հրատարակության մեջ, որից կատարվել է Երևանյան արտատպությունը, ուստի վկայակոչում ենք Վարդանի Պատմության մոսկովյան հրատարակությունը՝ Վարդանյա Բարձրբերդեցույ Պատմութիւն տիեզերական, Մոսկուա, 1861, էջ 171:

26. **Գ. Սարգսյան**, նշվ. աշխ., էջ 154-161:

27. **Գ. Մանանդյան**, Երկեր, հ. 9, Երևան, 1977, էջ 129-130:

28. **Վարդան Արևելցի**, էջ 135:

29. **Կ. Սաթևոսյան**, Անի, էջ 68:

30. **Վարդան Արևելցի**, էջ 136:

31. **Մխիթար Ամեցի**, Մատեան աշխարհավեպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Գ. Սարգսյանի, (հավելված), Երևան, 1983, էջ 109-110:

32. **Կ. Սաթևոսյան**, Անիում Ջաքարյանների հաստատման ժամանակն ըստ նորահայտ հիշատակարանի, «Պատմա-բանասիրական հանդես», 1997, թիվ 1, էջ 280-283, **Ա. Շահնազարյան**, Ջաքարյանների ազատամարտի առաջին փուլը, ԳԳԱ պատմության ինստիտուտ, Գայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 6, Երևան, 2005, էջ 140-147:

33. Գայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 131:

34. Նույն տեղում, էջ 131-132:

31. **Մխիթար Ամեցի**, Մատեան աշխարհավեպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ **Գ. Սարգսյանի**, (հավելված), Երևան, 1983, էջ 109-110:

32. **Կ. Սաթևոսյան**, Անիում Ջաքարյանների հաստատման ժամանակն ըստ նորահայտ հիշատակարանի, «Պատմա-բանասիրական հանդես», 1997, թիվ 1, էջ 280-283, **Ա. Շահնազարյան**, Ջաքարյանների ազատամարտի առաջին փուլը, ԳԳԱ պատմության ինստիտուտ, Գայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 6, Երևան, 2005, էջ 140-147:

33. Գայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 131:

34. Նույն տեղում, էջ 131-132:

35. Նույն տեղում, էջ 69: **Կ. Սաթևոսյան**, Անիի քաղաքացիների դիմակարները «Չաղբատի Ավետարանի» խորաններում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1984, 3, էջ 162-168:

36. **Գ. Սկրտչյան**, Առաքել Ամեցի թարգմանիչ, «Անի», 1992, թիվ 2, էջ 28-30:

37. Չեռագրի և Նթանայել եպիսկոպոսի կատարած հավելումների մասին տես **Կ. Սաթևոսյան**, Գավուց թառի վանքի և Ապիրատյան տոհմի պատմության նորահայտ տվյալներ, «Բանբեր Մատենադարանի», 17, Երևան, 2006, էջ 147-167:

38. «...Նաթանայել եպիսկոպոս Գայոց թառոյ...», **Գ. Գովսեփյան**, Գավուց Թառի ամենափրկիչը և նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Բ, Երևան, 1987, էջ 24:

39. **Վահրամ Ջաքարյանի**, Շահնշահ Գ-ի, ինչպես նաև Անիում նրանց նշանակած պաշտոնյա **Գրիգոր Խուցեսի** ու նրա որդիներ Ասիլի և Պարոնի գործունեության մասին պահպանված մի շարք տվյալներ վկայում են, որ քաղաքն այդ շրջանում համեմատաբար բարվոք վիճակում էր գտնվում, **Գ. Մանանդյան**, նշվ. աշխ., էջ 34), **Կ. Սաթևոսյան**, Անի, էջ 331, 364-365:

40. **Գ. Յովսեփեան**, Յիշատակարանց ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 891, **Գ. Գովսեփյան**, Գավուց Թառի ամենափրկիչը..., էջ 29:

41. Մատենադարան, ձեռ. թիվ 6764, էջ 264ա, **Կ. Սաթևոսյան**, Ա-

թի, էջ:

42. **Կ. Ղաֆադարյան**, Գովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 101:

43. Նույն տեղում:

44. Վրացական իրավունքի հուշարձաններ, հ. 3, Թբիլիսի, 1970, էջ 246 (վրացերեն):

45. **Թ. Թորամանյան**, նշվ. աշխ., էջ 311-312:

46. Բերդի շրջանը թուրքական իշխանությունները համարում են փակ գոտի: 2006 թ. այստեղ ուսումնասիրություն են կատարել ֆրանսիացի երիտասարդ հետազոտողները: Նրանց աշխատանքի վերաբերյալ հրապարակում է լինելու Revue des etudes Armeniennes հանդեսի առաջիկա համարում:

ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

# ԹԱՆԱՀԱՏԻ ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՅՈՒ ՎԵՐԱԿԱՆՔՆԵՐՆԵՐՆԵՐ ՆԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Հայկական վաղ միջնադարյան հանգուցա-  
յին հուշարձաններից է Թանահատի վանքը: Այն  
գտնվում է Սյունիքի մարզի Արևիս գյուղից 3 կմ հյու-  
սիս: Երբեմնի «հրաշափառ և հռչակավոր Թանա-  
տեա» /Ստ. Օրբելյան, 1986 թ., էջ 166/ վանքից պահ-  
պանվել է միայն Սբ. Ստեփանոս եկեղեցին և արևել-  
քում ավանդատնով ավարտվող հարավային սյու-  
նասրահը՝ կիսաքանդ և խարխլված վիճակում /տես  
նկ. 1/:

Թանահատի վանքի Սբ. Ստեփանոս եկեղե-  
ցու կառուցման մասին տեղեկություն է պահպանվել  
Ստ. Օրբելյանի Սյունիքի Պատմությունում: Պատմի-  
չը վկայում է, որ եկեղեցին կառուցվել է բուն հայոց  
թվականից 400 տարի առաջ՝ Ստեփանոս սուրբ Նա-  
խավկայի անունով /Ստ. Օրբելյան, 1986 թ., էջ 167/:

Սբ. Ստեփանոսը բազիլիկ տիպի միանավ  
սրահ է /գծ. 1/, նրա ուղղանկյուն աղոթասրահից  
/ներքուստ՝ 6.76x13.29 մ/ պահպանվել են պատերի՝  
հյուսիսայինը՝ միջինը 5.0 մետր, հարավայինը՝ 2.0  
մետր /տեղ-տեղ մինչև 7.8 մետր/, իսկ արևմուտքինը՝  
2.0-2.2 մ բարձրությամբ հատվածները: Սրահի եր-  
կայնական պատերին հպված են 5 զույգ որմնա-  
մույթ, որոնցից հարավ-արևմտյանը մասամբ փակել

է արևմտյան մուտքը, իսկ նրանից արևելք գտնվող  
երկրորդ որմնասյունը՝ հարավային մուտքը: Աղո-  
թասրահը արևելքից ավարտվում է արտաքինից ուղ-  
ղանկյուն պատերով պարփակված պայտածև խո-  
րանով, որից այսօր պահպանվել են հյուսիս-արևե-  
լյան անկյան 6.0-6.2 մ և դեպի հարավ ձգվող մոտ  
2.0 մ բարձրությամբ պատերը: Մինչև 70-ական թվա-  
կանները կանգուն խորանի պայտածև հաղթակա-  
մարից պահպանվել են նրա երեք հարավային և մեկ  
հյուսիսային քարերը, որոնք նստած են շուշաններով  
ոճավորված իմպոստների վրա: Խորանը հարավից  
մուտք ունի դեպի ավանդատուն, վերջինս /ներ-  
քուստ՝ 3.23x3.61 մ/ ուղղանկյուն սրահ է և համեմա-  
տաբար լավ է պահպանվել: Ավանդատան  
արևմտյան, իսկ եկեղեցու հարավային պատին հպ-  
ված է սյունասրահը, որը պահպանվել է իր հատա-  
կազմային հորինվածքով: կանգուն են միայն կամա-  
րաշարի մույթերը կրող 4 խարխիսները և դեպի  
արևմուտք ձգվող հարավային պատի մի որոշ հատ-  
ված՝ 2-3 քարի բարձրությամբ:

Հուշարձանի հորինվածքային առանձնա-  
հատկություններին, նրա ճարտարապետական ձևե-  
րին ու մանրամասներին անդրադարձել են հայկա-



Նկ. 1. Թանահատի տեսքը հարավից


կան վաղ միջնադարյան ճարտարապետությունն ու-  
սումնասիրած գրեթե բոլոր մասնագետները /Վ. Մ.  
Ղարոբյունյան, Մ. Մ. Հասրաթյան, Ա. Ալպագո-Նո-  
վելլո, Պ. Կունեո, Ա. Տեր-Մինասյան, Գ. Քոչոյան, Ռ.  
Դավթյան և այլն/: Սակայն նշանակալից և կարևորը  
պետք է համարել 1972-1975 թթ. ճարտարապետ Գ.  
Պասպարյանի կատարած ուսումնասիրությունները՝  
վիստակների մաքրման աշխատանքները և երկու  
անգամ կատարած չափագրությունները, որոնց հի-  
ման վրա 80-ականներին կազմվել է հուշարձանի վե-  
րականգնման նախագիծ, և սկսվել են շինարարա-  
կան աշխատանքներ: Սակայն ինչ-ինչ պատճառնե-  
րով այդ աշխատանքները կիսատ են մնացել:

Վերջին տարիներին /2001-2006 թթ./ կա-  
տարված ստուգողական չափագրումներից, ման-  
րակրկիտ ուսումնասիրություններից և վերլուծու-  
թյուններից ի հայտ եկան նոր փաստեր, որոնք թույլ  
տվեցին վերահամադրելու և վերստին անդրադառ-  
նալու քննվող հուշարձանի ծածկերի ու ծավալա-  
տարածական հորինվածքների մանրամասներին՝  
վերականգնման խնդիրները պարզաբանելու և ճշ-  
տումներ կատարելու նկատառումներով /2006 թ. 33

պետական բյուջեի ֆինանսավորմամբ կատարվել է  
Թանահատի վանքի վերականգնման և ամրակա-  
ման նախագիծ, ճարտարապետ՝ Ա. Սարգսյան/:

Վաղ քրիստոնեական գաղափարագեղար-  
վեստական դրսևորումները կառույցներում, նրանց  
սկզբնավորումն ու զարգացումն ուսումնասիրելու  
կամ բացահայտելու համար կարևոր է այդ դարաշր-  
ջանի յուրաքանչյուր հուշարձան: Քանի որ նրան-  
ցում օգտագործած ցանկացած հորինվածքային  
մանրամասն կամ տարր հանդիսանում է ձևատեղծ-  
ման այդ գործընթացի յուրաքանչյուր նախորդի կամ  
հաջորդի հորինվածքի բացահայտման կարևոր հան-  
գույց: Որպեսզի անդրադառնանք Թանահատի վե-  
րականգնման խնդիրների վերլուծությանը, անհրա-  
ժեշտ է մեջբերել հայկական վաղ միջնադարյան  
միանավ բազիլիկների /դահլիճ եկեղեցի/ տիպերի  
համառոտ առանձնահատկությունները:

Հետազոտողները բազիլիկների այս տիպը  
բաժանում են տարբեր ենթատիպերի: Ըստ Ա. Տեր-  
Մինասյանի՝ երկու հիմնական բաժանում կա՝ ար-  
տաքուստ շեշտված արսիդով և ուղղանկյուն պատե-  
րի մեջ ներգծված արսիդով, Վ. Հարությունյանն ա-



Չճագիր 1. Թանահատի հատակագիծը

ռաջարկել է՝ միանավ բազիլիկներ՝ արտաքին սրահով և միանավ բազիլիկներ՝ առանց սրահի, 3. Ստրժիգովակին՝ առանց թաղակիր կամարների և թաղակիր կամարներով, Պ. Կունենոն՝ ըստ թաղակիր /մեկ, երկու, երեք, չորս/ կամարների: Մենք կողմնակից ենք գիտնականների այն խմբին /Մ. Մ. Հասարայան և ուրիշներ/, որոնք առանձնացնում են՝ ա/ արտաքինից ուղղանկյուն պատի մեջ ներգծված արքիոդ, բ/ արտաքուստ շեշտված արքիոդ և գ/ սյունասրահով միանավ բազիլիկները, ընդ որում նշենք, որ սյունասրահով բազիլիկները հայկական ճարտարապետության մեջ առայժմ հայտնի են միայն այն դահլիճների հետ, որոնց արքիոդը արտաքինից ներգծված է ուղղանկյուն պատի մեջ:

Մենք համակարծիք ենք տիպային այս բաժանմանը, քանի որ բազիլիկները, միանավ թե եռանավ, ծավալատարածական փոփոխություն կրում են միայն այս դասակարգմամբ, այլապես՝ հատակագծային հորինվածքով մեկը մյուսի տրամաբանա-

կան շարունակությունը կամ զարգացման ձևերն են: Թանահատի բազիլիկը տիպային բաժանման վերջին ձևն է /տես գծ. 1/: Այսինքն, վանքի Սր Ստեփանոս եկեղեցու աղոթասրահը և արքիոդը առկա են եղել մեկ ընդհանուր՝ երկլանջ ծածկի տակ, իսկ սյունասրահը և ավանդատունը՝ երրորդ միալանջ ծածկի տակ: Մենք մանրամասնում ենք տիպային այս բաժանման ծավալատարածական հորինվածքը միայն այն պատճառով, որ արխիվում պահպանված Թանահատի վերականգնման՝ 1986 թ. նախագծում /հեղինակ՝ Յ. Գասպարյան, պահպանվել է միայն կոնստրուկտորական մասը, այսուհետ՝ նախագիծ/ արքիոդի երկլանջ ծածկը տրված է միանգամայն պատահական նիշում՝ ցածր աղոթասրահի ծածկի նիշից /տես գծ. 3/: Պետք է նկատել՝ եթե արքիոդի ծածկը /ծավալը, տանիքը/ առանձնանում է աղոթասրահի ծավալից, ապա դա բազիլիկների այն տեսակն է, որտեղ արքիոդը արտաքուստ շեշտված է ծավալում, և նրանք հիմնականում ունեն կոնաձև,




Նկ. 2. Թանահատի ավանդատան արևմտյան ճակատը

կամ քրգածն ծածկ՝ կապված արքիոդի արտաքին եզրագծի հետ /բացառությամբ՝ Շենիկ, Ջովունի, որոնց արքիոդները արտաքինից ունեն ուղղանկյուն եզրագիծ/:

Սյունասրահը հանդիսանում է Թանահատի առանձնահատկություններից մեկը և, ինչպես նշեցինք, այն պահպանվել է իր հատակագծային հորինվածքով: Սակայն տեղում կատարած ուսումնասիրությունները և պահպանված բեկորները թույլ են տալիս վերականգնել սյունասրահի հարավային պատը /գծ. 2/: Այն յուրօրինակ մի հորինվածք է. երկու 8-անիստ և երկու 16-անիստ մույթերի և նրանց համապատասխան վաղ միջնադարին բնորոշ ձևավորումներով մշակված 4 խոյանկների վրա նստած են 6 պայտածև կամարները, որոնք եզրերում՝ ավանդատան հարավ-արևմտյան անկյան և նույն կամարաշարի՝ դեպի արևմուտք ձգվող պատի վրա նստում են առանց որոնմանիցների:

Սյունասրահի կամարաշարի վերականգն-

ման իր մոտեցումներն է ունեցել Յ. Գասպարյանը /նախագծում կամարները եզրերում նստած են որոնմանկամարների վրա/: Բայց 80-ականների վերականգնման աշխատանքների ժամանակ ավանդատան արևմտյան ճակատի հարավ-արևմտյան վերին անկյունաքարին կից պահպանված հարթ երեսպատի քարը /այն պահպանված է նաև 1975 թ. չափագրություններում/ տաշված է վերին եզրից 7 սմ հաստությամբ և տեղադրված են նոր քարեր /նկ. 2/՝ նույն անկյան մոտ ընկած 30-րդ բեկորը /որոնմանից/ դրանց վրա տեղադրելու միտումով, քանի որ վերջինիս վերին նիշը տեղադրելուց հետո կհամապատասխաներ սյունասրահի կամարատակ նիշին՝ այսինքն խոյանկների վերին նիշին՝ +2.02 /նկարագրության մեջ բեկորների համարները համապատասխանեցված են Յ. Գասպարյանի բեկորների չափագրությունների գրքին/: Սակայն կամարաշարը վերականգնելուց հետո նրա պայտածև կամարի ոտքը չէր կարող հանգչել այդ նիշում, քանի որ այս կերպ կա-




Գծագիր 2. Սյունասրահի հարավային ճակատը

մարի կորագիծը /լայնացող մաս/ չէր կարող ծածկել նրանից ներս գտնվող ավանդատան արևմտյան պատի հարթությունը: Բացի վերը նշվածից նկատենք, որ 30-րդ բեկորի /այդ նույն որմնախոյակի/ վրա, ըստ պահպանված հետքերի, հանգչում է 74 սմ-ոց կամար՝ սյունասրահի 66 սմ-ոց կամարի փոխարեն /ասենք նաև, որ այն պատկանում է աղոթասրահի որմնամույթերից մեկին/: Հավանաբար վերականգնման նախագծում հեղինակը հաշվի չի առել իր կողմից չափագրած 32-րդ բեկորը, որը կատարում է այդ նույն կամարի կորագծի անցումը հարթ երեսպատի /տես գծ. 2/:

Թանախատի սյունասրահի և ավանդատան միալանջ ծածկի հարթությունը մանրակրկիտ ուսումնասիրությունների շնորհիվ վերականգնվեց: Ավանդատան վերևում՝ սբ Ստեփանոս եկեղեցու /գծ. 3/ հարավ-արևելյան պահպանված անկյունաքարը և հետքերը թույլ են տալիս ճշգրիտ գտնել այդ ծածկի հարթության նիշերը և ամբողջացնել նրա ծավալա-

տարածական հորինվածքը: Ավանդատան ծածկն ամբողջանում է շնորհիվ տեղում պահպանված թաղի կորագծի և թաղատակ նիշի, իսկ ահա սյունասրահի վերականգնված ծածկի կոնստրուկցիան իրենից ներկայացնում է բավական հետաքրքիր հորինվածք, որին կանդրադառնանք քիչ հետո:

Վաղ միջնադարի բազիլիկների սյունասրահների ծածկերի մասին տեղեկությունները խիստ սակավ են, և գիտնականներն իրենց ուսումնասիրություններում գլխավորապես անդրադառնում են նրանց հատակագծային հորինվածքներին: Այդ առումով 1986 թ. նախագծում Թանախատի սյունասրահը թաղով ծածկելու իր տարբերակն է առաջարկել Հ. Գասպարյանը: Սակայն այդտեղ տրված սյունասրահի թաղակիր կամարների վրա նստած թաղի կորագիծը բնորոշ չէ մեզ հետաքրքրող դարաշրջանի նմանատիպ կառույցներում իրականացված կորագծերի հորինվածքին: 1975 թ. սյունասրահի և նրա շրջակայքի պեղումների ժամանակ հեղինակի




Գծագիր 3. Թանախատի վանքի կտրվածքը դեպի արևելք և արևելյան ճակատը

չափագրած շուրջ 100 բեկորներից և ոչ մեկը պահուցակի, թաղի կամ թաղակիր կամարի քար չէր /բացառությամբ 30-րդ բեկորը և ավանդատան թաղի երկու քարերը/: Միևնույն ժամանակ սյունասրահի կամարաշարը վերականգնելուց հետո, եթե թաղատակ նիշն ընդունենք կամարի փակամի քարի վերին նիշը, ապա նույնիսկ պարզ կորագծի դեպքում /կիսաշրջան/ այն հատում է ծածկի հարթությունը /գծ. 3/: Հավանաբար այդ հանգամանքն է ստիպել հեղինակին թաղի վերին նիշը իջեցնել՝ ստանալով բաց կոր: Ավելին, հեղինակը թաղի տակ, առանց մեկնաբանությունների ավելացրել է պահուցակների վրա նստած թաղակիր կամարներ:

Սակայն սյունասրահի հետագա հետևողական ուսումնասիրությունները որոշակի դարձրեցին նրա ծածկի կարևոր մանրամասները: Այսպես, 1975 թ. չափագրությունները դիտարկելիս պարզվեց, որ հեղինակը տեղում նկատել և չափագրել է Սբ. Ստեփանոս եկեղեցու հարավային մուտքից վերև՝ ճա-

կատի ամբողջ բարձրությամբ /մինչև պահպանված վերին սրբատաշ շարվածքը՝ +5.32 միշ/ հարթ երեսպատի քարերի բնիկները և միևնույն ժամանակ անտեսել +3.98 միշում /նկ. 1/ մինչև այսօր պահպանված փոքրիկ սրբատաշ քարը: Ակնհայտ է դառնում, որ սբ Ստեփանոս եկեղեցու հարավային ճակատի հարթ երեսպատը չի ընդհատվել իր ամբողջ բարձրությամբ: Այսինքն, ոչ միայն թաղի կոնստրուկտիվ հանգույցների բացակայությունը, այլև եկեղեցու վերականգնված հարավային ճակատը թույլ են տալիս մեզ ճշտելու, որ սյունասրահի ծածկը եղել է ոչ թե թաղով, այլ՝ փայտե կոնստրուկցիայով:

Մանրակրկիտ ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ վերոհիշյալ որմնախոյակը /30-րդ բեկոր/ պատկանում է աղոթասրահի երկայնական պատերին հպված՝ հետագա հավելում հանդիսացող, որմնամույթերից հարավ-արևելյանին /անկյունային/, քանի որ +5.89 միշում պահպանված կրաշաղախի խոռոչը ակնհայտորեն համապատասխանում



Նկ. 3. Թանահատի ավանդատուն-գաղտնարանը

է վերոհիշյալ որմնախոյակի ելուստին: Ոչ միայն այս կարևոր հանգամանքը, այլև աղոթասրահում պահպանված նրա թաղի կոնստրուկտիվ հանգույցների բազմաթիվ բեկորները պարզեցին շինարարական փուլերից մեկում հավելյալ որմնամույթերի, նրանց վրա հանգչող որմնակամարների և եռակենտրոն պայտածև թաղը իր վրա կրող թաղակիր կամարների նիշերը և այդ փուլում կառույցի ներքին հորինվածքի ճշգրիտ վերակազմությունը:

Մենք արդեն մանրամասնել ենք Թանահատի աղոթասրահի և արքիդի ծածկի ծավալատարածական հորինվածքը: Բայց արքիդի ծածկի մասին մեր եզրահանգումները կրում են ոչ միայն տեսական բնույթ. ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ +5.28 նիշում հյուսիսային և արևելյան պատերին կից գոյություն է ունեցել սրբատաշ քարով իրակամացրած ավանդատուն-գաղտնարան, որը /նկ. 3/ պահպանվել է 2-3 շարքի բարձրությամբ /45-85 սմ/:

Խորանի գմբեթաղից վերև՝ մինչև կառույցի երկթեքի ծածկի կոնստրուկցիան, կա մոտ 2.3-2.4 մ

բարձրությամբ տարածք, և չպետք է կասկածել, որ այստեղ գործ ունենք գաղտնարանի կամ սրահի հետ, այսինքն՝ գտնվածը ոչ այլ ինչ է, քան /վերնա/սրահին կից ավանդատուն: Թերևս այս դիտարկման օրինակը հանդիսանում է Ծիծեռնավանքը, որտեղ վերնասրահը հյուսիսային և հարավային /նույնպես՝ նիշով ավելի ցածր/ ավանդատների հետ կապված է շատ փոքրիկ մուտքերով: Այդ ամենին պետք է ավելացնել, որ փլատակների մեջ գտնվեց նաև ոչ մեծ՝ 12 սմ անցքով /կարծում ենք/ պատուհանի մասամբ կտրված բեկոր, որը, հավանաբար, պատկանում է վերնասրահի՝ աղոթասրահ նայող կողմին կամ արևելյան պատին /Ծիծեռնավանք, Ծիրանավոր, Տեկոր/:

Ուսումնասիրությունների և վերլուծությունների հանրագումարում պարզվում է, որ Թանահատը վաղ միջնադարյան մյուս բազիլիկ եկեղեցիներից տարբերվում է հատակագծային և ծավալատարածական խիստ ինքնատիպ հորինվածքով: Հուշարձանի ավանդատունը, մոտ գտնվելով խորանին,



Նկ. 4. Թանահատի հյուսիսային ճակատը


այդ հատվածում /նրա թաղը/ իր վրա է կրում եկեղեցու հարավային պատը /գծ. 1/: Կառուցման այս մեթոդը բնորոշ է դարաշրջանի մյուս հուշարձանների՝ հետագայում ավելացված կամ համատեղ կառուցված ավանդատներին: Միևնույն ժամանակ սյունասրահի՝ դեպի արևմուտք ձգվող երկայնական պատի մնացորդները վկայում են, որ այն շարունակություն է ունեցել նաև արևմտյան պատի երկայնքով /Եղվարդ, Գտեվանք և այլն/, իսկ եթե ոչ, ապա գոնե հյուսիսային պատի երկայնքով: Ավանդատան այսպիսի /թեև կասկածելի/ ազուցումը խորանի ծավալին և սյունասրահի ճարտարապետական ձևերը ստիպում են մեզ ազուցման հետքեր փնտրել նաև սր Ատեփանոսի հյուսիս-արևմտյան անկյունում /նաև հյուսիս-արևելյան/, սակայն հուշարձանի բազմաշերտ կազմվածքում այդպիսի հետքեր չկան: Միևնույն ժամանակ, եթե վստահում ենք ավանդատան ազուցմանը արևելյան ճակատում, նույնը չենք կարողանում ասել եկեղեցու և ավանդատան արևմտյան պատի միացման մասին, որտեղ եկեղե-

ցու որմնախարիսխը ընդհատվում է:

Այս հանգամանքը ստիպում է մեզ անդրադառնալ Ստ. Օրբելյանի պատմությանը, որտեղ պատմիչը հանգամանորեն նկարագրում է, թե ինչպես է «...երանելի Մաշտոց Սևանցու Պատմությունից» տեղեկանում թանահատների մասին, իսկ տեղի արձանագրություններից գտնում, որ եկեղեցին կառուցվել է բուն հայոց թվականից 400 տարի առաջ: Նույն էջում պատմիչը նաև տեղեկացնում է, որ Հայր Մխիթարը «...կարգի է գցում» վանքը:

Սակայն Ալիշանը /Միսակյան, 1893 թ., էջ 251/ և Մ. Հասրաթյանը /Լրաբեր, 1974 թ., N 3, էջ 55/ տարակուսում են Թանահատի կառուցման 551-400=151 թվականի վերաբերյալ, և գտնում, որ Օրբելյանի տեքստում դարերի ընթացքում արտագրությունների ժամանակ սխալմամբ գրելաձևով իրար նման 4-ի /60/ փոխարեն 5 /400/ է գրվել, և որ Թանահատը կառուցվել է 551-60=491 թվին:

Նկատենք, որ Ստ. Օրբելյանը պատմության մեջ փորձել է վանքում պահպանված արձանագրու-




Գծագիր 4. Թանահատի վանքի արևելյան ճակատը /չափագրությունը՝ Գ. Գասպարյան/

թյունների /ոչ միայն Հայր Մխիթարի/ հետ միաժամանակ ի մի բերել նաև որոշակի պատմական /Մաշտոց Սևանցի/ տեղեկություններ, և արդյունքում տարբերակել՝ եկեղեցու կառուցման և վերակառուցման /կարգի գցելը/ մասին փաստը: Վերակառուցման /ավանդատան/ կողմնակի ապացույց է նաև վիճագրագետ Ս. Գ. Բարխուդարյանի այն վկայությունը, որ Հայր Մխիթարի մասին արձանագրությունը պահպանվել է ավանդատան հարավային պատին /Դիվան Հայ Վիճագրության, Պրակ 2, 1960 թ. էջ 94-96, Տեղեկագիր, գիրք 1, 1936 թ, էջ 99/: Այսինքն չենք բացառում, որ պատմիչը իսկապես կարող էր նույնացնել Թանահատի վանքի կառուցման /եկեղեցու հիմնման՝ 151/ և վերակառուցումների մասին /վերաանվանում՝ Ստեփանոս սուրբ Նախավկայի անունով, նաև՝ հայր Մխիթարի/ տեղեկությունները:

Այդ իսկ պատճառով, դատելով հուշարձանի

ընդհանուր հորինվածքից, նրա ճարտարապետական ձևերի /խորանի հաղթականար, իմպոստներ, ատամնավոր քիվ, սյունասրահի խոյակներ, մուտքի բարավորներ և այլն/ ու մանրամասների արխայիկ մշակումներից, կարծում ենք, որ հուշարձանը Հայաստանում քրիստոնեության տարածման առաջին տարիների կառույց է, գուցե նաև նախաքրիստոնեական ուղտատեղի /Բ. Սիմոնյան, 2000 թ. էջ 70-75/, Գ. Սիմոնյան, Գ. Սանամյան, 2001 թ. էջ 200-213, Գ. Սիմոնյան, Գ. Սանամյան, 2005 թ. էջ 159-178/, և կամ, ավելի հավանական է, որ այն վերակառուցված հեթանոսական սրբավայր /մեհյան/ է:

Բացի ինքնատիպ հորինվածքից, Թանահատը աչքի է ընկնում պատերի որմնաքների խիստ տարբերությամբ. եթե բուն կառույցի /հողմնահարված/ հարթ երեսպատի քարերն ունեն 0.45 մ-ից մինչև 0.7 մ բարձրություն /երկարությունը հասնում է



Գծագիր 5. Թանահատի վանքում օգտագործած կորերի երկրաչափական կառուցումը

տեղ-տեղ մինչև 1.3-1.4 մ / և դրված են հորիզոնական ուղղությամբ, ապա պատերի որոշ հատվածներ ունեն /թարմ/ քարերի շատ փոքր չափեր և դրված են հաճախ նաև ուղղաձիգ ուղղությամբ, ավելի ակնհայտ այն զգացվում է հուշարձանի արևելյան և հյուսիսային ճակատներում /տես գծ. 4, նկ. 4/: Թերևս արևելյան պատի այս հատվածում է, որ գիտնականները նկատել էին պատի հոծ շարվածք և վերագրել, որ Թանահատի արևելքից լուսամուտ չի ունեցել /80-ականների վերակառուցման ժամանակ հեռացվել է արևելյան պատի հավելումը/:

Վերը նկարագրած երևույթների /և ոչ միայն/ համադրումը, ստիպում է մեզ Ստ. Օրբելյանի կասկածատությամբ վերաբերվել Թանահատի կառուցման և վերակառուցման փուլերին: Այն դարերի ընթացքում ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների, և քանի որ դեռևս ավարտված չենք համարում

հուշարձանի լրիվ ուսումնասիրությունները, ձեռնպահ ենք մնում նշել շինարարական փուլերի մասին մեր վերջնական տեսակետները: Սակայն, ելնելով բազիլիկի առանձնահատկություններից, Սբ. Ստեփանոսը կարելի է, լուրջ վերապահումներով, առայժմ բաժանել երկու շինարարական փուլերի: Մենք համամիտ ենք գիտնականների այն կարծիքին, որ աղոթասրահի լայնական թռիչքը կրճատող երկայնական պատերին հաված որմնամույթերի վրա նստած թաղը /2-րդ փուլ/, հաջորդել է կառույցի ծածկի փայտե կոնստրուկցիաներին /1-ին փուլ/: Մենք արդեն անդրադարձել ենք Թանահատի երկրորդ փուլի թաղի կոնստրուկցիաների մանրամասներին, իսկ ահա փայտե կոնստրուկցիաների մասին մեր տեսակետները զուգահեռվեցին կառույցում նկատելի մի քանի հանգամանքների հետ: Այսպես, հյուսիսային և արևելյան ճակատների հետագա շի-

նարարական փուլի հարթ երեսպատի շարվածքում /զծ. 4, նկ. 4/ այսօր առկա են մի քանի քարեր, որոնք անկասկած եղել են նախորդ փուլի կոնստրուկտիվ էլեմենտներ: Մասնավորապես, երկու քար, որոնց ճիշտ կենտրոններում կան համարյա միևնույն /34.4x20.4 և 37.2x20.4 սմ/ չափերի փորվածքներ, ունեն 20-21 սմ հաստություն: Բուն կառույցը այդ նիշերում, որտեղ պահպանվել են վերոհիշյալ քարերը, ունի համարյա կրկնակի հաստությամբ երեսպատի քարեր: Այդպիսի հաստությամբ քարերը բնորոշ են պատերի վերին շարքերին և, մեր համոզմամբ, խոռոչով այդ քարերը, որոնք ունեն նույն մուգ գույնը, ինչպես բուն կառույցի բոլոր կոնստրուկտիվ դետալները /իմպոստներ, դռան բարավորներ և այլն/, աղոթասրահի նախորդ փուլի ծածկի փայտե կոնստրուկցիաների հեծանները կրող դետալներն են, որոնք հետագայում ավելացված թաղի ժամանակ անգործության են մատնվել: Այդ քարերի վրա բացված խոռոչները մեզ տալիս են որոշակի պատկերացում ծածկի փայտե կոնստրուկցիաներում հեծանների չափերի մասին, որը կարևոր է նաև դարաշրջանի դեռևս ոչ լիովին բացահայտված այդ կոնստրուկցիաների ուսումնասիրման գործում:

Թանահատի հյուսիսային ճակատի բազմաշերտ պատի /նկ. 4/ վրա աբսիդի և աղոթասրահի մեկտեղման գծով /թափված են երեսպատի քարերը/ այսօր առկա է հզոր ճաք /տեղ-տեղ նույնիսկ 4.5-5 սմ/, բայց այդ հատվածի նախորդ /հավելյալ/ շինարարական փուլի հարթ երեսպատի շարք վկայում է, որ այդպիսի, գուցե ավելի հզոր ճաք կամ բացվածք եղել է մինչ այդ փուլի վերականգնումը: Մեր կարծիքով աբսիդի և աղոթասրահի պատերի ոչ համասեռ բեռնվածությունը փայտե ծածկի ժամանակ /զմբեթարդ-փայտ/, իսկ այնուհետև անցումը թաղին /զմբեթարդ-թաղ/ մշտապես նպաստել են այդ հանգույցի խզման-քայքայմանը: Այդպիսի ճաքեր նկատվում են նաև դարաշրջանի այլ կառույցներում /Ծիծեռնավանք և այլն/, որտեղ ծածկի փայտե կոնստրուկցիաները փոխարինվել են թաղերով:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ դեռևս բացահայտված չեն Թանահատի սկզբնական հորինվածքի մանրամասները, այդ իսկ պատճառով վերականգնման նախագծում նրա հիմնական կառույցը Սբ. Ստեփանոս եկեղեցին մենք ամրակայեցինք միայն պահպանված պատերի բարձրությամբ՝ լրացնելով միայն այն հատվածները, որոնք չեն խանգարի նրա հետագա ուսումնասիրություններին:

Թանահատի և վաղմիջնադարյան հուշարձանների կարևոր առանձնահատկություններից մեկը շինարարական փուլերի կոնստրուկտիվ հանգույցներում կիրառված կորագծերի հորինվածքն է /թաղ, կամար, բացվածքներ, խորան, հաղթակամար և այլն/: Թանահատի բոլոր տեսակի չափագրությունների, գտնված բեկորների, արխիվային լուսանկարների, տեղում կատարած բազմաթիվ ուսումնասիրությունների վերլուծության արդյունքում /համադրված են նաև դարաշրջանի այլ կառույցներում օգտագործած կորագծերի հորինվածքների հետ/, կարողացանք վերականգնել կառույցում տարբեր շինարարական փուլերում օգտագործած կորագծերի ընդհանուր նկարագիրը. նրանք ունեն հիմնականում եռակենտրոն ձվաձև կամ պայտածև հորինվածք: Սակայն նյութի առատ լինելու հանգամանքը մեզ ստիպում է անդրադառնալ նրանց ուրիշ անգամ՝ ընթերցողին միայն ներկայացնելով նրանց երկրաչափական կառուցումը առանց դասակարգման և մեկնաբանությունների /զծ. 5/:

Ուսումնասիրությունների և փոփոխությունների ոչ միայն վերոհիշյալ նկարագրով Թանահատի վանքի վերականգնման և ամրակայման էքսիկային նախագիծը ստացել է 03.11.06 թ. կայացած ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի դրական եզրակացությունը /փորձագետ՝ Յ. Սանամյան/, և կատարվել է աշխատանքային նախագիծ:

Չնայած երկար տարիների ուսումնասիրություններին, այնուամենայնիվ, Թանահատը դեռևս կարող է նորանոր բացահայտումների, մեկնաբա-

Պատկերների և վերլուծությունների:

Պատկերով օգտագործված գրականության ցանկ

1. Ստ. Օրբելյան, «Սյունիքի պատմություն», 1986 թ.  
 2. Մ. Մ. Հասրաթյան, «Հայաստանի արտաքուստ քաղաքական արսիդով միանալ հուշարձանները», Լրաբեր, 1976 թ.  
 3. Հայկական ճարտարապետության պատմություն, հատոր 2, 2002 թ.  
 4. Ա. Ալպագո-Նովելլո, «Թանահատի բազիլիկան և պատան կամարի խնդիրը հայկական վաղմիջնադարյան ճարտարապետության մեջ», Պատմաբանասիրական հանդես, 1977 թ. N3  
 5. Մ. Հակոբյան, «Աշտարակի Ծիրանավոր եկեղեցին», Գուշարձան P, 1993 թ.  
 6. Գ. Ս. Բարխուդարյան, Դիվան Հայ Վիմագրության,

Պրակ 2, Երևան 1960 թ.  
 7. Գ. Ս. Բարխուդարյան, «ՀեսՄԳ պատմության և գրականության ինստիտուտի տեղեկագիր», գիրք 1, 1936 թ.  
 8. Ալիշան, «Սիսական», Վենետիկ, 1893 թ.  
 9. Ը. Տեր-Ղևորդյան, «Հայաստանի և Սիրիայի վաղքրիստոնեական ճարտարապետական առնչությունները», 2000 թ.  
 10. Վ. Մ. Հարությունյան, Դվինի V-VII դարերի ճարտարապետական հուշարձանները, 1950 թ.  
 11. Հ. Սիմոնյան, Զրիստոնեության տարածումը և հնագույն եկեղեցիաշինությունը Հայաստանում /նախնական հարցադրում/, Հայաստանը և քրիստոնյա արևելքը, Երևան 2000 թ. էջ 70-75  
 12. Հ. Սիմոնյան, Հ. Սանամյան, Ծիծեռնավանք, Սրբերը և սրբավայրերը, Երևան 2001 թ. էջ 200-213  
 13. Հ. Սիմոնյան, Հ. Սանամյան, Վանքասարի Գուշարձանները, Գուշարձան, Տարեգիրք 9, Երևան 2005 թ. էջ 159-178

Andranik Sarguissyan

THE MONASTERY OF TANAHAT

(Summary)

The Monastery of Tanahat in the village of Arevik (Syunik Marz) is one of the most significant and principal Armenian monuments of the Middle ages. Due to the survey in 2001-2006 new facts came into life that suggested another touch upon the details of the spatial-volumetric composition, shedding light on the problems as well as ways of solving them during the reconstruction and reinforcement of the monastery in 2006.

The detailed survey of the columned foyer proves that the roof of the monastery had wooden construction, while verges of the arches rested on the walls without pilasters.

Though we haven't yet determined the details of the original composition, yet due to the fragments at hand and their analysis, we succeeded in determining pilasters of a later period attached along the walls of the praying room, as well as recomposition of frescos on the walls and an exact reconstitution of the covering.

The probable addition of the avandatur once again makes us reread "The History of Syunik" by St. Orbelyan, where he gives interpretations on the building of Tanahat monastery.

The curved outlines of the junctions used in the different stages of the construction of the building have mainly three-centered oval or horseshoe-like composition which is important for the study of the early middle-age monuments.

ԻՆԵՍԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ,  
ՆՈՐԱ ԵՆԳԻՔԱՐՅԱՆ,  
ՆՈՒՄԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

## ԱՆՏԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԿԱՐԱՍԱՅԻՆ ԹԱՂՈՒՄ ԹԱԼԻՆԻՑ

681 թ. Ներսես Կամսարականի կառուցած Թալինի Աբ. Աստվածածին եկեղեցին իր ուրույն տեղն է զբաղեցնում հայկական վաղ միջնադարյան ճարտարապետության խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ կառույցների շարքում: Գտնվում է քաղաքի հյուսիսային մասում՝ մի ընդարձակ տափարակի վրա զետեղված եկեղեցական համալիրի (կաթողիկե՝ գմբեթավոր բազիլիկ, միանավ թաղակապ և Աբ. Աստվածածին եկեղեցիներ, շքամուտք դարպաս և մի շարք այլ կառույցներ) հարավային մասում (*Ե. Ասատրյան, E. Asatryan, 2005, ctp.100-102*): Նախքան վերականգնման աշխատանքների սկսելը, այն շրջափակված էր 1-1.5մ բարձրության հասնող XIX-XX դ. փլատակներով:

1998թ. ամռանը բարերարներ Անդրանիկ Դադլյանի և Գրիգոր Վարդանյանի մեկենասությամբ իրականացվեցին Աբ. Աստվածածին եկեղեցու վերականգնման աշխատանքները (ճարտ՝ *Մ. Դանիելյան*, վերականգնող՝ *Գ. Վարդանյան*): Նախատեսված էր բարեկարգել հուշարձանի շրջակայքը, հեռացնել XIX-XX դ. շինությունների փլատակները, մասնակի վերականգնել և ամրակայել պահպան-

ված ավելի վաղ՝ 1981թ. պեղումների ժամանակ ի հայտ եկած XI-XII դարերի շինությունները (*Ե. Ասատրյան, 2004, էջ 12*): Հիմնականում ծրագրված էր բացել Աբ. Աստվածածնի արևմտյան ճակատը՝ շքամուտքն ավելի դիտելի դարձնելու և արևելյան կողմի հրապարակը՝ դեպի եկեղեցին տանող աստիճանների համակարգ ու կանաչապատ ճեմուղի ձևավորելու համար:

Աշխատանքների ընթացքում լրիվ հեռացվեցին ուշ շրջանի կառույցները, պահպանելով միայն միջնադարին վերաբերող պատերը: Դրա շնորհիվ բացվեց մեծ հրապարակ և եկեղեցին բոլոր կողմերից դարձավ դիտարկելի:

Աբ. Աստվածածնից 8մ հարավ-արևելք, XIX դ. բնակելի տան փլատակների տակ, 1.5մ խորության մեջ բացվեց կարասային թաղում:

Կարասը դրված էր հորիզոնական դիրքով հյուսիսարևելքից հարավարևմուտք կողմնորոշմամբ: Պահպանվել էր երկայնակի կոտրված կարասի (աղ. 1) (բարձ.՝ 72 սմ, շուրթի տրամ.՝ 24 սմ) ստորին կեսը: Ենթադրում ենք, որ այն կոտրվել է XIX դարի բնակելի տան հիմքերը փորելու ժամանակ:

հայտնի է, որ ննջեցյալին կարասի մեջ տեղավորելու համար անոթը կիսում էին, սակայն, տվյալ դեպքում հանգուցյալը մեկ տարեկանին մոտ երեխա էր, որին զիվար չէր ամբողջական կարասում տեղավորել:\*

Ննջեցյալի ոսկորները խիստ քայքայված էին: Միայն գանգի ոսկորներից կարելի էր ենթադրել, որ կարասի մեջ կատարված էր գլխով դեպի անոթի թևանը ուղղված, կծկված դիրքով դիաթաղում: Հանգուցյալին ուղեկցող գույքը կազմված էր սև միականթ պուլիկից, նրա բերանը ծածկող փոքր թասիկից և զարդեղենից: Դամբարանում թասիկով ծածկված պուլիկ կամ սափոր դնելու այս սովորույթը, որն առատ է հելլենիստական և ուշ անտիկ թաղման ծեսում, ժառանգված է ուրարտական դասաշրջանից: Դիտարկումները հիմք են տալիս եզրակացնելու, որ այս անոթները գրեթե միշտ դրված են դեմքի և ծալած ծնկների միջև, քանի որ կծկված թասիկու պարագայում այդ տեղը ազատ էր ու հարմար: Այս ևս հաստատում է, որ մանուկը կարասում թաղվել է կծկված դիրքով:

Պուլիկը հարթ նստուկով է, գնդաձև իրանը կլորավուն ուսերով միացած շատ կարճ վզիկին, որն ավարտվում է դուրս շրջված շուրթերով: Կտրվածքում կլոր կանթն ամրացված է վզի տակ ուղղահայաց դիրքով և հանգչում է անոթի ուռուցիկ մասի վրա: Այս մասի վրա էլ՝ կանթի երկու կողմերում, ամրացված են մեկական ելնդավոր փշիկզարդերը (աղ. 1/ 9): Մանրահատ, միատարր, լավ հունցած կավից դուրզի վրա պատրաստված անոթը թրծումից ստացել է հավասարաչափ սև գույն: Արտաքինը լավ փայլեցրած է, իսկ ներսը հարթեցրած: Պուլիկների այս տեսակը լավ հայտնի է Գառնիի, Օշականի, Արտաշատի և մյուս անտիկ հուշարձանների մ.թ.ա. I դարերի և ավելի ուշ թվագրվող նյութերից (*Ջ. Դ. Խաչատրյան, 1976, տաբլ. ՂԻ. քս. 511-9: Ժ. Դ. Խաչատրյան, 1981, նկ. 518, էջ 154*):



Աղ. 1

Փոքրիկ թասն ունի հարթ նստուկ, դրանից սահուն վեր բարձրացող և լայնացող կողեր, որոնք ընդգծված անցումով միանում են անոթի ներքին տարածքի վրա հակված շուրթին (աղ. 1/ 8): Անոթը ամբողջությամբ պատված է կարմիր քուկով, ունի փայլեցված մակերես: Կավը խառնուրդներից մաքրված է, հասլված, թրծումը՝ կատարյալ: Հատակին և կողին արտաքուստ կրակի ազդեցության հետքեր են երևում, ինչը վկայում է կենցաղում դրա օգտագործված լինելու մասին:


\* Ննջեցյալի տարիքն որոշել է մարդաբան Ռ. Մկրտչյանը, որի համար շնորհակալություն ենք հայտնում:

Կարասի միջնամասում, ոսկրախառը հողում գտնվել են երկաթե քայքայված նետասլաք (աղ. 1/3), հասպիսե ճարմանդ, տարբեր նյութերից պատրաստված հուլունքներ, պարթևական դրամ: Այս ամենը վկայում է մանկան նկատմամբ ցուցաբերած հոգացության մասին:

Նեղ կաթնագույն ջղերով, կարմրաշագանակագույն հասպիսե ճարմանդն ունի ցածր, հատած կոնի տեսք: Ստորին, հարթ մակերեսին կրում է փորագիր շրջանագիծ զարդ (աղ. 1/1): ճարմանդն ազուցված է եղել սրածայր երկաթե ձողի՝ ներկայացնելով զարդաքորոցների մի առանձին տարատեսակ: Նմանատիպ զարդաքորոցների գլխիկներ հայտնի են Հայաստանի բոլոր անտիկ հուշարձաններից, իսկ Կարճաղբյուրի մ.թ.ա. III-I դդ. թվագրվող դամբարաններում դրանք հայտնաբերվել են ձողերի հետ միասին՝ ննջեցյալների կրծքին, և ծառայել են քիկնոցներն ամրացնելու համար (*Ի. Ա. Կարապետյան*, 2003, էջ 82, աղ. 53, նկ. 2,7,8):

Դամբարանում գտնված հուլունքները թեև առատ չեն, սակայն ձևով և և պատրաստման նյութով տարատեսակ են: Քարե հուլունքները երկուսն են: Առաջինը պատրաստված սարդիոնից, կողերից քիչ սեղմած, գնդաձև է: Երկրորդը հասպիսից է, խիստ քայքայված, կիսաշրջանաձև, ստորին մասը լայն և հարթ կտրած, իսկ վերին մասը՝ կորնթարդ (աղ. 1/4): Կախելու անցքը բացված է մի կողմից՝ բույթով: Իր ձևով այն կնիք է հիշեցնում: Ըստ երևույթին այն լրակազմ է եղել զարդաքորոցի հետ: Կնիք հիշեցնող այս հուլունքի զուգահեռները հայտնի չեն ոչ համաժամանակյա, ոչ վաղ, ոչ էլ ուշ նյութերի մեջ: Հաջորդ հուլունքը երկկոնաձև է, պատրաստված ոսկրից (աղ. 1/5): Ապակե շաղախե հուլունքները գլանաձև և տակառաձև են, խիստ քայքայված: Երկուսի վրա երևում են սպիտակ հիմքի վրա փաթաթած այլ գույնի մածուկե թելիկներով զարդերի հետքեր (աղ. 1/6):

Ապակե հուլունքները չորսն են: Երկուսը միջին չափերի են, կլոր, բլթակավոր, բաց կանաչա-



Աղյուսակ 1

վուն: Դրանց պատրաստելուց հետո իրարից չեն անջատել (աղ. 1/7): Մյուս երկուսը փոքր չափերի կախիկներ են: Մեկը դեղնավուն ապակուց է, պողածե, մյուսը՝ կապույտ, թափանցիկ ապակուց, և ունի ուղղանկյուն հիմքով հատած բուրգի տեսք (աղ. 1/2): Ուլունքաշարի կազմի այսպիսի հարաբերությունը, որտեղ մածուկե ու ապակե տեսակները գերակշռում են, բնորոշ է մ. թ. ա. վերջին դարերին և ուշ:

Թալիհի կարասային թաղման թվագրությունը հիմնավորելու առումով խիստ կարևոր է դրամի գյուտը: Այն դրված է եղել մանկան բերանում, ինչը փաստում է դրամի օբսիդացման հետևանքով ատամների կանաչավուն երանգի առաջացումը: Դրամը պարթևական Որոդես II արքայի (մ. թ. ա. 57-38 թթ.) արծաթե դրախման է (հնարավոր է բրոնզե մի-

ջակով՝ արծաթապատ), կշիռը՝ 3.53 գ, տրամ.՝ 19.4 մմ, կնիքների առանցքային հարաբերությունը՝ 1:2 (աղ. 2): Դրամի դիմերեսին արքայի ձախ ուղղված կրանդորին է՝ կարճ մորուքով, երկար ծալքավոր ձեղերը գոտևորող ապարոշով, պարուրածն մանյակով: Դարձերեսին դրոշմած է գահին նստած և դեպի ձախ ուղղված աղեղնավորի պատկերը, որի շուրջը կոնկալ հունարեն արծանագրությունն է.

[B] ΑΣΙΑ[ΕΩΣ] ΒΑΣΙΛΕΩ[Ν] → վերում  
ΑΡ ΣΑΚΟΥ ↓ աջից  
ΕΥΕΡΓΕΤΟΥ ΔΙΚΑΙΟΥ ← ներքևում  
[E]ΠΙΦΑΝΟΥΣ [ΦΙΛ]ΕΛΛΗΝΟ[Σ] ↓ ձախից

«Արքայից արքա Արշակի՝ բարերարի, արդարի, փառավորի, հունասերի»

Դրամագետ-հնագետ Ռուբեն Վարդանյանը տարօրինակ է համարում, որ դրամի դարձերեսին, աղեղի տակ կամ դրանից վեր, փողերանոցը նշող որևէ մենագիր չի դրոշմված, ինչն օրինաչափ է այս արքայի բոլոր դրախմաների համար:\*\*


Այսպիսով, թաղման ժեսը, ուղեկցող նյութերի տեսականին և հատկապես Որոդես II արքայի դրամի առկայությունը թույլ են տալիս Թալիհի Աբ. Աստվածածին եկեղեցու մոտ բացված կարասային թաղումը թվագրելու մ. թ. ա. I դարի II կեսով:

Քննարկվող դամբարանն այս վայրում եզակի չէ: Այս տարածքում հողային և շինարարական աշխատանքների ժամանակ քանդվել - ավերվել են հատկապես անտիկ դարաշրջանի խեցեղեն և այլ նյութեր պարունակող բազմաթիվ դամբարաններ: Այսպիսի նյութերի շարքին է պատկանում նաև նույն տարածքից գտնված արծաթե կնիք-մատանին (նկ. 21,3),\*\*\* որի սնամեջ օղակը պատրաստված է մետաղե երկու թերթիկը հատուկ ձևով իրար ձուլելու եղանակով: Այս տեխնիկական հնարով ստեղծած

մատանին թեև թողնում էր զանգվածողության տպավորություն, իրականում ծանր չէր և հեշտ էր կրելու համար: Այս հնարն անտիկ զարդագործության մեջ լայն տարածում է ստացել մ. թ. ա. III դարից: Մատանու ձվաձև քարը (զեմմա) վարդագույն սարդիոնից է: Այն խորն ազուցված է մատանու վերին շերտի վրա բացված խոռոչի մեջ, որը վրա բերված եզրերով պահվում է քարը: Քարի հարթ մակերեսը լավ փայլեցրած է, իսկ փորագրված պատկերը՝ թողնված անփայլ: Փորագրությունը բարձր որակի է, կատարված մանրակրկիտ, խիստ վարպետորեն: Պատկերված է սաղավարտով գլուխ, կիսադեմով՝ աջ: Սաղավարտը փետրափնջով է, որը կլոր գագաթից իջնում է մինչև ծոծրակը, ապա ազատ թափվում ուսերին: Դիմածածկը բարձրացրած է ճակատի վրա: Սաղավարտի տակից պարանոցի վրա են իջնում գալարուն վարսերը: Դիմագծերը հանդարտ են՝ լիքն այտերով և մի փոքր ծանր ծնոտով, ուռուցիկ շուրթերով: Քիթը պատկերված է շատ ուղիղ և սուր: Այս բոլոր պատկերագրական հատկանիշներով, անտիկ խոշոր և փոքր պլաստիկայում ներկայացվում էր Աթենասը: Կատարման գծայնությունից և չորությունից ելնելով, կարծում ենք, որ պատկերված է հռոմեական Միներվա աստվածուհին: Մատանին ներմուծված է, քանի որ փորագրումը կատարված է մեծ վարպետությամբ, մանրամասների նրբին մշակմամբ և հռոմեական արվեստին բնորոշ առանձնահատկություններով:

Այս տեսակի մատանիները, քարի նմանատիպ տեղադրումով, պատկերի խորը փորագրմամբ, մեզ տանում են հունահռոմեական աշխարհ: Նման կնիք-մատանիները լայն տարածում ունեին այդ մշակույթի ոլորտի մեջ ընդգրկված երկրներում (*A. Furtwangler*, 1900, taf. XV, 79, *F. H. Marschall*, 1907, p. 119, N 712, *М. И. Максимова*, 1979, рпс. 19 6,7,8, *Н. Guiraud*, 1989, fig. 6, 8, 10):

\*\* Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում պատմական գիտությունների թեկնածու Ռ. Վարդանյանին, որամը որոշելու և տվյալները մեզ տրամադրելու համար:  
\*\*\* Մատանին մեզ է տրամադրել Թալիհի բնակիչ Գ. Վարդանյանը:



Աղյուսակ II


Մատանու և դրամի հայտնաբերման փաստը վկայում է Թալինի տարածքի անտիկ շրջանում ունեցած կարևորության մասին: Ըստ գրավոր աղբյուրների՝ այս տարածքն անտիկ և միջնադարյան մամանակաշրջաններում եղել է Արագածոտն գավառի նշանավոր բնակավայրերից մեկը: Այն հյուսիսային կողմից գոտևորված է բարձր բլրաշարքով, որոնցից մեկի վրա (տեղացիներն անվանում են «Մուլիակի բլուր») իր ժամանակին **Թ. Թորոմանյացի** հետազոտել է մի ընդարձակ ամրոց (**Թ. Թորոմանյացի**, 1948, էջ 129): 1985 թ. այդտեղ դեռևս պահպանվում էին քառակուսի որմնահեցերով պարիսպների, ուղղանկյուն հատակագծով բնակարանների հետքեր: Բլրի ստորոտում ևս նկատվում էին պարիսպների և բնակելի շինությունների հետքեր: Պակաքած վերգետնյա նյութերով բնակավայրը թվագրվում է մ. թ. ա I հազ. մինչև մ. թ. VII դարերով (աղ. II, **Ե. Ասատրյան**, 2004, էջ 16, 21):

Այս բլրաշարքի ստորոտով, արևելք-արևմուտք ուղղվածությամբ ձգվել է մի հսկայական դամբարանադաշտ, որը 1976 թվականից ծավալված անհատական շինարարության հետևանքով ենթարկվել է մեծ ավերածության ու ոչնչացման:

1985 թ. Երևանի Պետական համալսարանի հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի արշավախումբը պեղումներ է իրականացրել դամբարանադաշտում: Պարզվել է հետևյալ պատկերը՝ վերին ճիմահողի և ջրաբերուկ հողային նստվածքի տակ, մեծ խորությամբ, իրար կից և մեկը մյուսի վրա կատարված են սալարկղային ու մի քանի անոթային թաղումներ, որոնք իջեցված են մշակութային շերտի մեջ: Ուսումնասիրողների համարակալած IV շերտը, անտիկ շինարվեստին բնորոշ չարվածք ունեցող ճարտարապետական մնացորդներով, կարմիր, շագանակագույն, սև կարասների, սափորների, գավաթների, կճուճների բեկորներով թվագրվում է հելլենիստական դարաշրջանով: Այս բնակավայրային շերտը հարավ-արևմտյան ծայրով նստած է վաղ երկաթեդարյան դամբարանների վրա

(դամբ. N 76-85) (**Պ. Ավետիսյան**, 1988):

Հավաքված փաստերի այս ամբողջությունից կարելի է եզրակացնել, որ այստեղ հելլենիստական և ուշ անտիկ դարաշրջանում գոյություն է ունեցել մի նշանակալի բնակավայր իր միջնաբերդով, միջին ու ստորին թաղամասերով և կից դամբարանադաշտով: Հենց այդ դամբարանադաշտին է պատկանել քննության առարկա կարասային և մյուս ավերված թաղումները, որոնց շատ նշանակալի և կարևոր նյութեր գտնվում են տարածքում ապրող բնակիչների ձեռքին: Դատելով Որոդես II-ի դրամի, Աթենաս-Միներվայի պատկերով կնիք-մատանու, հելլենիստական խեցեղենի փայլուն նմուշների, ոսկյա և արծաթե այլ առարկաների գոյության փաստից, բնակավայրը պետք է լիներ քաղաքային տիպի: Արագածոտնի մարզի վերջին տարիների հնագիտական ուսումնասիրություններով բացահայտվել են մեկ տասնյակի հասնող մեծ ու փոքր ամրոցներ, որոնք իրարից որոշակի հեռավորությամբ ձգվում են ներկայիս Աշտարակ-Թալին-Գյումրի մայրուղու երկու կողմով (Ագարակ, Կոշ, Ներքին և Վերին Բազմաբերդ, Կաթնաղբյուր, Աշնակ, Ակունք, Արեգ, Չաքարի բերդ և այլն) (**Ք. Վ. Կինջալով** 1961, 3.V, թ. 57-58. **Ասատրյան Ե.**, 1981 N 2, էջ 113-115: **Օհանյան Գ.**, 1980, N 6, էջ 86-90: **Ա. Մ. Ակոպյան**, 1985, թ. 557. **Ա. Մ. Ակոպյան** 1988, թ. 4-5. **Գ. Հակոբյան**, 1984, N 2, էջ 62): Դրանց հետազոտության ընթացքում հայտնաբերված ճարտարապետական, ամրաշինական, հնագիտական և դրամագիտական տվյալների քննությունը ցույց է տվել, որ այս ամրոցները սերտ կապի մեջ էին միմյանց հետ և կազմում էին պաշտպանական մի հզոր համակարգ: Այն մեծ դեր էր խաղում ոչ միայն մայրաքաղաքների (Արտաշատ, Վաղարշապատ, Դվին) հյուսիս-արևելյան մատույցների պաշտպանության, այլև հնագույն ժամանակներից այստեղով իրականացվող տարանցիկ առևտրի ապահովության գործում: Այս համակարգի յուրաքանչյուր օղակ ոչ միայն հզոր ամրոց էր, այլև առևտրի, ապրանքների փոխանցումն ապահովող կետ:



1



2



3

Նկ. 2.

Ապահովության համար անհրաժեշտ էր և պետք է լիներ մի բնակավայր - ամրոց, որն իր աշխարհայրական դիրքով, զբաղեցրած տարածքով, տնտեսական գործունեությանն անհրաժեշտ պայմաններով զորու լիներ կազմակերպելու համակարգի անխափան ծառայությունը: Հակված ենք կարծելու որ դա հենց Թալին բնակավայրն էր: Այդ փաստը հաստատում է նաև այն, որ IV դարից բնակավայրը դարձել է Կամսարականների նստոցը՝ կառուցապատված հայկական ճարտարապետության գլուխգործոց հանդիսացող եկեղեցիներով և քաղաքացիական շենքերով: Եղել է պարսպապատ, ու շատ հեռվում ունենալով Հայաստանի ամենամեծ քարավանատունը՝ կանգնած «մետաքսի» տարածքի առևտրի ճանապարհի վրա (Վ. Մ. Հարությունյան, 1960, էջ 55-60):

Առևտրական այդ ուղին ձևավորվել և գործում էր շատ ավելի վաղ ժամանակներից: Այն կուս և կազմակերպված համակարգի էր վերածվել հատկապես անտիկ դարաշրջանում, հանդիսանալով Հնդկաստանից Եկբատան եկող և Հայաստանի վրայով Մեոսիդիս ձգվող միջազգային հյուսիսային քարավանային ճանապարհի՝ Արտաշատ-Սեբաստոպոլիս մայրուղու արևմտյան թևի կարևոր հատվածը (Կ. Մ. Մանանյան, 1954, շ. 28): Այն խիստ վճռորոշ դեր էր խաղում Հայաստանի և նրա հարևան երկրների տնտեսության զարգացման գործում:

**Գրականության ցանկ**

1. **Ասատրյան Ե.**, Թալինի ճարտարապետական հուշարձանների պեղումները, տես՝ Ե. Ասատրյան, Закарин, Ер., 2000:
2. **Ասատրյան Ե.**, Թալինի շրջանի հուշարձանները, Եր., 2004:
3. **Ասատրյան Ե.**, Կաթնաղբյուրի դամբարանը, Լրաբեր (Հաս. գիտ) 1981, N 2, էջ 113-115:
4. **Ավետիսյան Պ. Ս.**, Թալինի մեծ դամբարանադաշտը, ԵՊՀ Հնագիտական հետազոտությունների կենտրոնի տարեկան հաշվետվությունը, ձեռագիր, Եր., 1988:


5. **Թորոմանյան Թ.**, Հայկական ճարտարապետությունը Եր., 1948:
6. **Խաչատրյան Ժ. Դ.**, Արտաշատ II, Անտիկ դամբարանադաշտը, Եր., 1981:
7. **Կարապետյան Ի. Ա.**, Հայաստանի նյութական մշակույթը մ. թ. ա. VI-II դդ., Եր., 2003:
8. **Հակոբյան Զ.**, Հայաստանի առևտրական առնչությունները հարևան երկրների հետ (I-III դդ.), Լրաբեր, N 2, 1984:
9. **Հարությունյան Վ. Ս.**, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Եր., 1960:
10. **Օհանյան Զ.**, Ներքին Բազմաբերդի դամբարանադաշտը, Լրաբեր (Հաս. գիտ.) 1980 N 6:
11. **Акопян А. М.**, Работы в Талинском р-не, АО, 1985.
12. **Акопян А. М.**, Новые памятники фортификации Античной Армении, Третий Всесоюз. симпозиум по проблемам элд.

культуры на Востоке, Ер. 1988.

13. **Княжалов Р. В.**, Ашнакский могильник, Труды гос. Эрмитажа, Л. 1961.
14. **Максимова М. И.**, Артюховский курган, Леп., 1979.
15. **Манабян Я. Н.**, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в до н. э. -XV в. н. э.), Ер., 1954.
16. **Хачатрян Ж. Д.**, Гарни V, Античный некрополь (результаты раскопок 1956-1972 гг.), Ер., 1976.
17. **Furtwangler A.**, Die antiken Gemmen, Leipzig, 1900.
18. **Guiraud H.**, Bagues et Anneaux a l' epoque Romaine en Gaule. Gallia. fouilles et monuments archeologiques en France mefropolitaine, memo 46, Paris 1989.
19. **Marschall F. H.**, Catalogue of Finger-rings in the British museum, London, 1907.

ՆԱԿՈՒ ՄԻՄՈՆՅԱՆ, ԼԵՎՈՆ ՎԱՍԻԼՅԱՆ, ՆԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱԴԱՅԱՆ,  
ԱՐՄԱՆ ՆԱԲԱՆԴՅԱՆ, ՏԻԳՐԱՆ ԱԼԵԿՍԱՆՅԱՆ, ՆԱՍՄԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

## ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ Է ԵՂՎԱՐԴԻ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ



Նկ. 1. Սբ. Աստվածածին եկեղեցու ընդհանուր տեսքը հարավից՝ նախքան վերականգնումը

### ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Սյունիքն իր առանձնահատուկ տեղն ունի հայոց պետականության կերտման, նրա անկախության պահպանման, հայ ժողովրդի ազատագրական պայքարի ծավալման գործում: Աշխարհագրական դիրքի և գեղատեսիլ բնության՝ բարձրաբերձ ու անմատչելի լեռների, խոր ձորերի, խիտ անտառների ընծեռած հնարավորություններն առավելագույնս օգտագործելով՝ Սյունյաց ավատատերերը կարողացել են պահպանել իրենց անկախությունը՝ բազմիցս

խորտակիչ հարվածներ հասցնելով թշնամուն: Այստեղ ամեն ինչ հիշեցնում է պատմական անցյալը՝ տեղի ունեցած պատերազմները, քաջ հայորդիների սրի հաղթանակն ու քարգործ վարպետների տաղանդը:

ՀՀ Սյունիքի մարզի եղվարդ գյուղը Սյունյաց աշխարհի հնագույն բնակավայրերից է: Գտնվում է Կապան քաղաքից 14 կմ հյուսիս-արևելք, Բարգուշատի լեռնաշղթայի մեղմաթեք, անտառապատ լանջին: Այն, թերևս, Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության (13-րդ

1. Հայկական Սովետական Հանրագիտարան (այսուհետ՝ ՀՍՀ), հատոր 3, Երևան, 1977, էջ 510: Ըստ մեկ այլ աղբյուրի (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը (այսուհետ՝ ՀՏԲ), հատոր 2, Երևան, 1988, էջ 192) եղվարդ գյուղը հեռու է Կապանից 16-17 կմ:

դ) մեջ հիշատակված Աղահորդ գյուղն է, որը 10 բաժին հարկով ներկայացված է Տաթևի վանքին հարկատու բնակավայրերի ցանկում՝ Մյուս Բաղք կամ Քաշունիք գավառի գյուղերի շարքում:<sup>2</sup> 18-րդ դ. առաջին տասնամյակներին Եղվարդը եղել է Սյունիքի ազատագրական շարժման կենտրոններից մեկը և Ղափի Բեկի զորավարներից՝ Չավնդուրի Թորոս իշխանի աթոռանիստը:<sup>3</sup> Ցարական Ռուսաստանի կազմում՝ Ելիզավետպոլ նահանգի Ջանգեզուրի գավառի Ղափանի ոստիկանական շրջանի գյուղերից էր՝ հայտնի եղվարդ անվամբ:<sup>4</sup>

Գյուղի հնասեր Սլավիկ Ջաքարյանի վկայությամբ բնակավայրից արևելք, «Մղոտի գյուղն» և սրանից դեպի հարավ-արևելք տարածվող «Շինատեղ» հանդամասերում, թերևս ավերված դամբարաններից, պատահաբար հայտնաբերվել են բրոնզե լեռնքեր, արծանիկներ, օղեր, պղնձե կաթսաներ, կավանոթներ, մոմակալներ, ձիթածրագներ և այլն: Ուշագրավ է հատկապես նրա հաղորդումը հունական ոսկեդարամի մասին: Ամենայն հավանականությամբ, գտածոները վերաբերում են բրոնզի դարին և հելլենիստական ժամանակաշրջանին:

Գյուղի տարածքում և շրջակայքում պահպանվել են նաև բազմաթիվ միջնադարյան հուշարձաններ և արձանագրություններ: Այսպես, «Սպիտակ աղբյուրի խաչ» կոչվող սարալանջին կան եկեղեցու ավերակներ, գերեզմանոց՝ մարդակերպ պատկերներով տապանաքարեր, խաչքարեր և սալատապաններ, որոնք բնորոշ են 10-19-րդ դդ:<sup>5</sup> Գյու-



Նկ. 2. Սբ. Աստվածածին եկեղեցու բարավորի արձանագրությունը

ղից հյուսիս-արևելք պահպանվել է 10-12-րդ դդ. գերեզմանոցից մի հատված՝ խաչքարերով և պատկերազարդ տապանաքարերով: Մեկ այլ գերեզմանոց և բնակատեղիի ավերակներ գտնվում են գյուղից մոտ 1 կմ հարավ, «Ծավիկի խաչ» կոչվող ծառապատ բլրակի վրա: Այստեղ կան 11-12-րդ դդ. բնորոշ կրաքարե փորագիր խաչքարեր: Գյուղից մոտ 2 կմ արևելք «Շինատեղ» գյուղատեղին է, 3 կմ արևմուտք՝ «Խաչի խուր» բնակատեղին:<sup>6</sup> Գյուղի ստորոտում «Մովտան» ձորում, եղել է ջրաղաց, որի կոտրված աղորիք-ջրաղացքարն ընկած է տեղում:<sup>7</sup> 2007 թ.՝ մեր հետազոտությունների արդյունքում, գյուղի գործող գերեզմանոցում հայտնաբերվել են 17-19-րդ դդ. բնորոշ պարզ խաչքարեր և պատկերազարդ տապանաքարեր:

2. Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1911, էջ 519: Հմմտ.՝ Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Արրահամյանի, Երևան, 1986, էջ 401: Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 275, 281:


3. Ե. Լալայան, Ջանգեզուրի գաւառ, «Ազգագրական հանդես», գիրք XII, Թիֆլիս, 1905, էջ 189-192:

4. ՀՏԲ, հատոր 2, էջ 192:

5. Տես՝ Ղիվան հայ վիճագրության, պրակ II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց՝ Ա. Գ. Բախտուարյան, Երևան, 1960, էջ 142, արձանագրություն N 419: ՀՍՀ, հատոր 3, էջ 510: ՀՏԲ, հատոր 2, էջ 192: Ս. Ջաքարյանի օրագիրը, ՀՀ մշակույթի նախարարության Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արխիվ:

6. ՀՏԲ, հատոր 2, էջ 192:

7. Ս. Ջաքարյանի օրագիրը:




Նկ. 3. Սբ. Աստվածածին եկեղեցու տեղահանույթը և 2007 թ. պեղված տարածքը

«Եղվարդ գյուղի կենտրոնում է գտնվում Սբ. Աստվածածին եկեղեցին (Նկ. 1), որի միակ` հարավային, մուտքի բարավորի վրա փորագրված է կառուցման թվականը` ԹՎ :ՌԾԽԹ: (1700) (Նկ. 2):<sup>8</sup> Եկեղեցին ուղղանկյուն հատակագծով` 20.3x13.4 մետր չափերով, եռանավ հորինվածքով բազիլիկ սրահ է (Նկ. 3): Նավերի թաղածածկերը թաղակիր կամարների միջոցով հանգչում են երկու զույգ մույթերի և կրող պատերի վրա: Խորանն աղոթասրահի արևելյան կողմում է, ունի կիսաշրջանաձև հատակագիծ և մեկ պատուհան: Խորանի աջ և ձախ կողմերում մեկական ավանդատներ են: Ընդհանուր առմամբ եկեղեցին ունի 6 պատուհան և մեկ մուտք: Թաղերը շարված են թերթաքարով, կամարները` կոփածո քարով (Նկ. 4):

Եկեղեցին կառուցված է տեղական բազմազույն, կոպտատաշ կրաքարից և ավազաքարից` կապակցված կրաշաղախով: Պատերի մեջ զետեղված են միջնադարյան խաչքարեր և տապանաքարեր (Նկ. 5, 6): Խաչքարերով է ձևավորված պատուհաններից մեկը (Նկ. 7):

Կառուցման ժամանակից ի վեր, 307 տարիների ընթացքում եկեղեցին բավականին վնասվել է: Ժամանակի ավերիչ հետքերը տեսանելի են ամենուր` հողմնահարված վեմեր ու տապանաքարեր, ճաք տված պատեր: Քիվերը և տանիքի կղմինդրի ծածկը չեն պահպանվել: Խորհրդային կարգերի օրոք պահեստի վերածված եկեղեցին ծածկվել էր ագրոչիֆերով: Այս տանիքը նույնպես քայքայված է (Նկ. 1):

8. Դիվան հայ վիճագրության, պրակ II, էջ 142; ՀՍՀ, հատոր 3, էջ 510; ՀՏԲ, հատոր 2, էջ 192:



Նկ. 4. Հատված ինտերիերից



Նկ. 7. Խաչքարերով ձևավորված պատուհան




Նկ. 5. Հարավային ճակատին ագուցված խաչքարեր



Նկ. 6. Հարավային ճակատին ագուցված տապանաքար

Եկեղեցու հարավային հրապարակի արևմտյան մասում կառուցված է երկրորդ աշխարհամարտում զոհված եղվարդեցիների հուշարձանը (ճարտ.՝ Ա. Փարսյան, Նկ. 8):

Եկեղեցու հյուսիսային, արևելյան և հարավային կողմերում տարածվող հրապարակներում կան բազմաթիվ տապանաքարեր, իսկ 30 մ դեպի հարավ ամփոփված է Դավիթ Բեկի քաջարի զինակից, Սյունիքի ազատագրական ուժերի Չավնդուրի զորախմբի հրամանատար Թորոս իշխանի աճյունը: Օրորոցաձև, արձանագիր տապանաքարի մի երեսին, ըստ Բաֆֆու, մենամարտի տեսարան է: Իրականում այստեղ` տապանաքարի հարավային երեսին, քանդակված են թամբած ծի, գավազանակիր մի անձնավորություն, կենտրոնում` անհամեմատ մեծ չափի սափոր: Արևմտյան մասում պատկերված են երկու մարդ, իսկ նրանց միջև` ծննդաներ: Տապանաքարի վերին` կիսաբոլոր, նիստին հողմնահարված արձանագրությունն է, որն ընթերցվում է հատվածաբար (աղ. 6/6): Հյուսիսային երեսին պատկերված է առյուծի գլուխը երախում բռնած աղվես, որը խորհրդանշում է այռուծակերպ հերոսի դավադիր սպանությունը: Սրա վերևի արձանագրությունը ևս եղծված է: Ընթերցվում են միայն առանձին տառեր



Նկ. 8. Երկրորդ աշխարհամարտում զոհված եղվարդեցիների հուշարձանը

(աղ. 6/5): Բաֆֆու այցելության ժամանակ՝ 1881 թ., տապանաքարի արձանագրությունն արդեն եղծված է եղել:<sup>9</sup>

Ըստ պատմական վկայությունների Թորոս իշխանը զոհվել է 1725 թ., Եղվարդի ճակատամարտում, որը տեղի է ունեցել գյուղից 8 կմ հեռու գտնվող «Շուշանների դաշտ» («Նարգիզու դամի») կոչվող վայրում, Բարգուշատի Ֆաթ-Ալի խանի հրոսակների դեմ մարտնչելիս, ազգուրաց Մելիք Ֆրանգյուլի կազմակերպած դավադրության արդյունքում: Մինչ այդ, պարբերաբար կրկնվող ասպատակություններին վերջ տալու նպատակով Չավնդուրի տանուտեր իշխան Թորոսը հայտարարում է ընդհանուր զորահավաք՝ նպատակ ունենալով արշավել Օրդուբադ, որը գրավել էին օսմանցիները:<sup>10</sup> Տեղեկանալով այդ մասին Արծվանիկ<sup>11</sup> գյուղի մելիք

Ֆրանգյուլը, խոստանալով իր աջակցությունը, համոզում է Թորոս իշխանին նախ հարձակվել օսմանցիների հետ դաշնակցած Ֆաթ-Ալի խանի վրա: Սակայն Շուշանների դաշտում ծավալված ճակատամարտի վճռական պահին, երբ հայկական զինուժի հուժկու գրոհներից պարսից բանակը դիմում է փախուստի, մահմեդականներին հարած մելիք Ֆրանգյուլը թիկունքից դավաճանաբար հարվածում է հայկական զորախմբին: Երկու կողմից հարվածների ենթարկվելով հայերը պարտվում են, իսկ Թորոս իշխանը նահատակվում է:<sup>12</sup>

Դավիթ Բեկին սատարելու և Թորոս իշխանի զորքերի կազմում Շուշանների դաշտի ճակատամարտին մասնակցելու համար պարսից շահի հրամանով Եղվարդ գյուղն ավերվում է, իսկ ապստամբ բնակիչներին 1729-1730 թթ. արտաքսում են Պարսկաստան՝ Ղարադաղի Վինա գյուղ: Եղվարդ գյուղը որպես կալվածք տրվում է Վելի բեկ Ալթնջի և Բեհբուդ բեկ անունով պարսիկներին: Դրանք էլ Եղվարդի վարելահողերը հարկի դիմաց հանձնում են Սևքար և Խղրանց գյուղերի բնակիչներին: Այստեղից էլ առանձին հանդամասեր ստացել են մինչ այժմ գործածվող «Սևքարեցոց կալեր» և «Խղրանց խութ» անվանումները:


Եղվարդեցիները հայրենիք վերադարձան մեկ դար անց, երբ ռուսական բանակը հայազգի գեներալ Վ. Մադաթովի գլխավորությամբ գրավեց Ատրպատականը, այդ թվում նաև՝ Ղարադաղը, և 1828 թ. փետրվարի 10-ին կնքված Թուրքմենչայի պայմանագրի համաձայն հայերն իրավունք ստա-

9. Բաֆֆի, Դավիթ բեկ, Երկերի ժողովածու, հատոր վեցերորդ, Երևան, 1956, էջ 562:

10. Լեո, Երկերի ժողովածու, հատոր 3, Երևան, 1973, էջ 191:

11. Ավանը կոչվել է նաև Նախիջևանի, ինչպես նաև Երիցվանիկ լեռան գագաթին կառուցված Երիցակ (Կարմիր) վանքի անունով (տես՝ Բաֆֆի, Դավիթ բեկ, էջ 491):

12. Ընտիր պատմություն Դավիթ Բեկին, Վաղարշապատ, 1981, էջ 22-23; Լեո, Երկերի ժողովածու, հատոր 3, գիրք 2, Երևան, 1973, էջ 24; ՀԱՅ, հատոր 3, Երևան, 1977, էջ 510; Հայ ժողովրդի պատմություն, Հայ ժողովուրդը ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում XIV-XVIII դդ., հատոր 4, Երևան, 1972, էջ 166-167: Տարօրինակ է, որ հանրագիտարանի միևնույն էջում ճակատամարտի տարեթիվը գրված է մի դեպքում՝ 1724, մյուս դեպքում՝ 1725 թ.: Շուշանների դաշտի ճակատամարտը 1725-ով է թվագրված Լեոյի երկում և ՀՏԲ ում:



Նկ. 9. Եկեղեցու տանիքի կղմնողի գրչանկարը

յան ներգաղթել Արևելյան Հայաստան: Եղվարդ վերադարձավ 54 հայ ընտանիք (տնտեսություն):

1840 թ. Վելի և Բեհբուդ բեկերը, չկարողանալով ըմբոստ գյուղացիներից գանձել տասանորդ կոչվող հարկը, ճարահատյալ Եղվարդի իրենց կալվածքը՝ 300 դեսյատին հողը, 90 ոսկեդրամով վաճառում են Եղվարդեցի Գրիգոր Մելիք-Ղարազյոզյանին: 1850 թ. գյուղն իր հողային կարիքները բավարարելու համար «Գոյունլու» կոչվող պետական հողատարածքից ձեռք է բերում 250 հա անտառատարածք, որը գյուղացիները համատեղ ջանքերով դարձնում են վարելահող՝ պետական գանձարան մուծելով տարեկան 250-300 ռուբլի հարկ:<sup>13</sup>

1886 թ. վիճակագրական տվյալների համաձայն Եղվարդն ուներ 67 տուն՝ 700 հայ բնակիչ:<sup>14</sup> Հետագա տարիներին նկատվում է բնակչության թվաքանակի աճ: Ըստ 1897 թ. վիճակագրության գյուղն ուներ 759 բնակիչ, 1908 թ.՝ 182 տնտեսություն և 940

բնակիչ, 4-ամյա դպրոց՝ 50-60 աշակերտով: 1918-1920 թթ. Եղվարդը դիմակայում է մուսաֆաթական հորդաներին, որոնք փորձում են գրավել Կապանի շրջանը: Այնուհետև, թերևս պատմական անբարենպաստ իրավիճակների հետևանքով, գյուղի բնակչությունն զգալիորեն նվազում է: 1926 թ. գյուղն ուներ 439 բնակիչ, 1939 թ.՝ 651 բնակիչ, 1959 թ.՝ 445 բնակիչ, 1979 թ.՝ 307,<sup>15</sup> իսկ ներկայումս՝ 260 բնակիչ: Գյուղում կա բուժկետ, միջնակարգ դպրոց և մշակույթի տուն:

ՍՐ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ  
ՎԵՐԱԿԱՆԳՆԱԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ  
ՆԱԽԱԳԾԻ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ


Ֆրանսիայում գործող «Երկիր և մշակույթ» կազմակերպությունը (նախագահ՝ Գեղամ Գևորգյան) 2007 թ. ստանձնեց Եղվարդի Սր. Աստվածածին եկե-

13. Տես՝ Ս. Չաքարյանի օրագիրը:

14. Դ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 101: Ս. Էփրիկյան, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հատոր I, Վենետիկ, 1903-1905, էջ 97:

15. ՀՏԲ, հատոր 2, էջ 192:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՃԱԿԱՏ



Նկ. 10.


ղեցու վերականգնման հայրենանվեր գործը: Մայիս ամսին կատարվեցին եկեղեցու չափագրման աշխատանքները, կազմվեց վերականգնման էքսիզային նախագիծ (Ճարտարապետ՝ Լ. Վասիլյան): Սբ. Աստվածածին եկեղեցու վերականգնման նախագծային աշխատանքների համար հիմք հանդիսացան Եղվարդի գյուղապետ Ս. Խաչատրյանի 14.03.07 թ. դիմումը, «Երկիր և մշակույթ» կազմակերպության ընդհանուր ժողովի որոշումը և ՀՀ մշակույթի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության 09.04.07 թ. N 01-18 նամակ-թույլտվությունը:

Եկեղեցու քիվերը և կղմինդրածածկ տանիքը նախագծվեցին՝ օրինակ ունենալով նույն դարաշրջանի Հալիձորի բերդի, Սբ. Մինաս, Կուսանաց, Ուժանիսի Սբ. Աստվածածին և Դավիթ Բեկ գյուղի Սբ. Ստեփանոս եկեղեցիների տանիքները: Ծածկի նախագծման համար հիմք հանդիսացավ նաև պեղումների ընթացքում հայտնաբերված կղմինդրի ձևը (Նկ. 9):

Պատերի վերևի և կենտրոնական նավի արևմտյան հատվածի խարխուլված մասերը, ըստ նախագծի, քանդվելու և վերաշարվելու են, իսկ մինչև քիվի տակը և քիվը ներառյալ, պետք է լրացվեն նոր քարերով (Նկ. 10, 11):

Գոյություն ունեցող պատուհանների օրինակով սրբատաշ, բազալտ քարերով կվերականգնվեն հարավային և արևմտյան ճակատների քանդված պատուհանների շրջանակները: Եկեղեցու սալահատակը, բեմի ճակատը, ավագ սեղանը և դրսի ճեմուղիներն իրականացվելու են տեղի կարմրավուն, կարծր քարից, որն առկա է նաև պատերի շարվածքում: Ներսի պատերի քարերի վրա հայտնաբերված կրասվադի հետքերը և վերոհիշյալ եկեղեցիների օրինակները վկայում են, որ Եղվարդի Սբ. Աստվածածին եկեղեցու պատերը նույնպես սվաղված են եղել կրաշաղախով: Սակայն նկատի ունենալով պատերի խնամքով շարված լինելը, նախատեսվում է ներսի պատերի քարերն ամրացնել բարդ շաղախի դարսերով: Այս մոտեցման շնորհիվ ոչ միայն կամրացվեն

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԱԿԱՏ



Նկ. 11.

պատերը, այլև կպահպանվեն ժամանակի շունչն ու կառուցման տեխնիկայի մասին տեղեկատվությունը:

Դահլիճի արևմտյան մույթերի արևմտյան հատվածները նախատեսվում է բարձրացնել երկու աստիճանով՝ ժայռի բնական ելքի մակարդակով:

Տանիքի կղմինդրներն ամրացվելու են կրաշաղախով, որի շնորհիվ ավելի արդյունավետ կդառնա ջրամեկուսացումը:<sup>16</sup> Ջրահեռացումն ազատ է: Քիվերը և եզրային կղմինդրն ամրացվելու են չժամգոտվող պահանգներով:

Փորձագետի եզրակացության համաձայն կապակցող բարդ շաղախը բաղկացած է լինելու հանգած կրի, պորտլանտ ցեմենտի՝ 7:3 կամ 8:2 և գետի լվացած ավազի՝ 1:3 հարաբերությամբ կազմված զանգվածից:

Պատրաստվել է նաև տարածքի բարեկարգ-

ման նախագիծը, ըստ որի եկեղեցու հարավային հրապարակը շրջափակվելու է ստորին մասում խամ քարով շարված, վերևում՝ մետաղական ճաղերով ձևավորված պարսպով: Առաջարկվում է եկեղեցու հարավային ճակատը մասամբ փակող երկրորդ աշխարհամարտում զոհված եղվարդեցիների հիշատակին կանգնեցված հուշարձանը տեղափոխել 8 մ հարավ-արևմուտք, և դեմքով շրջել դեպի արևելք՝ եկեղեցու առջևի հրապարակը: Հուշարձանի տեղում առաջարկվում է կառուցել փոքրիկ զանգակատուն, որն անհրաժեշտ կլինի գործող եկեղեցուն և կխորհրդանշի վերականգնված եկեղեցու երկրորդ ծնունդը:

Խնդիր է դրված տեղում անխաթար պահպանել պեղումների արդյունքում եկեղեցու արևելյան և հարավային ճակատների հարևանությամբ բացված գերեզմանաքարերը՝ դրանք կղզյակների տեսքով

16. Պեղումների արդյունքում հայտնաբերված կղմինդրների հարյուրավոր բեկորներից և ոչ մեկի վրա չկան կրաշաղախի հետքեր, ինչը, բերևա, վկայում է որ կղմինդրներն ամրացված են եղել փայտե հիմնակմախքի վրա:

ներառնելով եկեղեցին շրջապատող սալվածքի մեջ, իսկ ճեմուղիները կազմակերպել այնպես, որ շրջանցեն գերեզմանները: Եկեղեցին եզերող սալածածկը և ճեմուղիներն իրականացվելու են կարմրավուն, կոպտատաշ, անկանոն քարերից: Նախատեսվում է բարեկարգել նաև գյուղամիջյան ճանապարհով եկեղեցուց գատված Թորոս իշխանի և սրան մերձակա պատկերազարդ տապանաքարերով գերեզմանոցի տարածքը:

**ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ**

Պատմաճարտարապետական հուշարձանի վերականգնման գործընթացը ներառում է նաև տվյալ կառույցի և նրա շրջակա տարածքի պեղումները, որոնց խնդիրն է հանգամանորեն ուսումնասիրել հուշարձանի մշակութային շերտերը, բացահայտել եկեղեցու պատմությունը, վերականգնման փուլերն ու ճարտարապետական մանրամասները: Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արշավախումբը (ղեկ.՝ Գ. Սիմոնյան) 2007 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին իրականացրեց վերականգնվելիք հուշարձանի պեղումները, որին մասնակցեցին նաև կամավորներ «Երկիր և մշակույթ» կազմակերպությունից՝ Ֆրանսիայից, Անգլիայից, Սիրիայից, Երևանից, Կապանից:<sup>17</sup>

Պեղման ենթակա տարածքները բաժանեցինք առանձին քառակուսիների (նկ. 3): Եկեղեցու ներսում սահմանեցինք 12 քառակուսի: Աղոթասրահը և նավերը բաժանեցինք երեքական քառակուսու, որոնց սահմանները հանդիսացան մույթերը: Խորանն ու ավանդատները համարվեցին առանձին քառակուսիներ:

Նախ մաքրեցինք եկեղեցու ողջ տարածքի, այդ թվում նաև ավանդատների ու խորանի մակե-

րեսներին լցված մանր քարերի ու ավազի բարակ շերտը, որն այստեղ էր բերվել 2006-ին՝ «Նպաստաշխատանքի դիմաց» ծրագրի շրջանակում, եկեղեցու ներսում կուտակված աղբը հեռացնելուց հետո՝ հատակը հարթեցնելու համար:

N 1 քառակուսում, բետոնե հատակի տակ բացվեցին հսկա ժայռաբեկորներ: Այստեղից գտնվեցին խեցանոթների բեկորներ, որոնցից մեկը՝ կանաչ գույնի ջնարակով, և մի պղնձե իր: N 1 քառակուսու հյուսիս-արևմտյան անկյունում մոտ 1 մետր հաստությամբ կրաշաղախ էր: Նմանատիպ կրաշաղախ կար նաև եկեղեցու հարավ-արևմտյան անկյունում (N 9 քառակուսի): N 1 և N 5 քառակուսիների միջև, մույթից մինչև արևմտյան պատը ձգվում էր երկշարք քարե մի պատ, որի առավելագույն լայնությունը 54 սմ էր, երկարությունը՝ 415 սմ:

N 2 քառակուսու վերին՝ 01, շերտում հայտնաբերվեցին կողք-կողքի դրված կղմինդրներ: Այս շարքը շարունակվում էր նաև N 6 քառակուսում: N 2 քառակուսում, կղմինդրների մոտ, գտնվեցին նաև խեցեղենի հատուկենտ բեկորներ (աղ. 1/8) և կենդանիների ոսկորներ:

N 3 քառակուսու 01 շերտում հայտնաբերվեց խեցեղենի 2-3 բեկոր: Ավանդատան մուտքին հարող հատվածում և հյուսիսային մասում՝ բետոնե շերտի տակ, բացվեց կրաշաղախե հատակ:

N 4 քառակուսու՝ հյուսիսային ավանդատան վերին՝ 01 շերտը բաղկացած էր հողից ու բետոնից: Ավանդատան մուտքի երկայնքով շարված էին սալաքարեր: 02 շերտից նյութեր չհայտնաբերվեցին:

N 5 քառակուսու 01 և 02 շերտերում բացվեցին ժայռաբեկորներ ու մեծ քարեր: Նույն պատկերն է, ինչ N 1 քառակուսում: N 5 և N 6 քառակուսիների միջև՝ հարավ-արևմտյան մույթից հյուսիս, բացվեց փայտից մի չորսու, որի երկու ծայրերին փորված էին անցքեր: Գտնվեցին նաև փոքրաթիվ խեցատներ:

բացվեց բետոնե շերտ, իսկ կենտրոնական և արևմտյան կողմում՝ տարբեր չափի քարեր ու ժայռաբեկորներ: Տեղացիների վկայությամբ, այս հսկա քարերը ժամանակին տրակտորով տեղաշարժել են զանձախույզները: Այստեղ մշակութային շերտը խառնված էր: Հայտնաբերվեցին կղմինդրների և խեցանոթների բազմաթիվ բեկորներ, այդ թվում նաև՝ լից դարչնագույն և լավ թրծված, կտրվածքում կլոր կանթի մի բեկոր:

N 6 և N 7 քառակուսիների միջև բացվեց անկանոն քարերով շարված՝ 25 սմ լայնությամբ և 253 սմ երկարությամբ քարաշար մի պատ, որն սկսվելով հյուսիս-արևելյան մույթից, ձգվում էր մինչև հարավ-արևելյան մույթը: Ընդհատումից հետո պատը դառնում էր երկշարք (երկարությունը՝ 75 սմ, առավելագույն լայնությունը՝ 52 սմ) և ավարտվում N 5 քառակուսում բացված փայտե հեծանի մոտ: Նմանատիպ պատ բացվեց նաև N 5 և N 6 քառակուսիների միջակայքում: Այն երկշարք էր, առավելագույն լայնությունը՝ 61 սմ, երկարությունը՝ 222 սմ: Պատը, նախորդի նման, ավարտվում էր փայտե հիմնակմախքի մոտ:

N 7 քառակուսում, խորանի առջև նույնպես բացվեցին բետոնե, իսկ սրա տակ՝ կրաշաղախե հատակներ: 02 միավորից հայտնաբերվեցին խեցանոթների բազմաթիվ բեկորներ: Դրանց մի մասը միևնույն անոթի բեկորներ էին (աղ. 2/1; 12/2):


N 8 քառակուսու՝ եկեղեցու բեմի վերին, մոտ 25 սմ հաստությամբ շերտը կազմված էր մեծ քարերից ու փափուկ հողից: 01 շերտում հայտնաբերվեցին կենդանու մի քանի կտորված ոսկոր և ատամներ, իսկ 02 շերտի պեղումների ժամանակ՝ մի քանի խեցատներ, որոնք ունեին միևնույն զարդանախշը՝ կետիկներով ձևավորած զիզզազ, միմյանց զուգահեռ գծեր: Սրանք մեկ անոթի բեկորներ էին (աղ. 2/2; 12/8):

Խորանի կենտրոնում բացվեց իրար վրա 2-3 շարք դրված մեծ քարերով ձևավորած քառակուսի շարվածք (նկ. 12): Սրա վրա բերանքսիվայր դրված էր խաչի փորագրված պատկերով, ծված, վերևում

կտորված սալաքար: Շրջանի վրա կանգնեցված խաչի թևերն ավարտվում են երկճյուղ բացվածքներով (աղ. 4/3): Վերին թևը թերի է, ինչը վկայում է խաչքարի օգտագործման և հետագայում կտորված լինելու մասին:


N 9 քառակուսում գտնվեցին մի քանի խեցատի բեկոր և կտորված ոսկորներ: Հարավ-արևմտյան մույթի և հարավային պատի միջև կար խարխված, քարաշար մի պատ:

N 10 քառակուսում՝ եկեղեցու հարավ-արևելյան մույթից դեպի հարավային պատն ընկած հատվածում բացված բետոնի շերտի մակերեսին դրված էր 1 մետր երկարությամբ և մոտ 10 սմ լայնությամբ փայտի մի չորսու, որի ծայրերին փորված էին անցքեր: Նմանատիպ չորսուներ կային նաև կենտրոնական և հյուսիսային նավերում, որոնք տեղադրված էին հատակի վրա, ուղիղ գծով: Այս չորսուները, հա-




Նկ. 12. Քարերով ձևավորած քառակուսի շարվածք խորանում

17. Հայաստանից՝ Վազգենը, Լուսինեն, Նելին, Ռուզաննան, Նանուշը, Մարտինը, Ֆրանսիայից՝ ժանը, Հովհաննեսը, Նշանը, Անգլիայից՝ Սեդան, Սիրիայից՝ Հուրին:



Նկ. 13. Եկեղեցու արևելյան հրապարակը պեղումներից հետո



Նկ. 14. Եկեղեցու հյուսիսային հրապարակը պեղումներից հետո

վանաբար, կրել են ճաղաշար ցանկապատը, որն առանձնացնում էր խորանի առջևի հրապարակը եկեղեցու մյուս հատվածներից: Այս բազրիքը հարդարվել էր խորհրդային կարգերի օրոք, երբ եկեղեցին օգտագործվել է որպես պահեստ: N 10 քառակուսուն հավաստվեց 3 շերտ՝ վերինը՝ բետոնե, միջինը՝ գուտ քարերից կազմված և ստորինը՝ կրասվաղ: Մուտքից արևմուտք, մույթին հենված եկեղեցու դռան տակ կտրված տապանաքար էր:

N 11 քառակուսուն տեղ-տեղ բացվեցին կրաշաղախե հատակի մնացորդներ և խեցու երեք բեկոր:

N 12 քառակուսու՝ հարավային ավանդատան բետոնե հատակը եզերում էր կառույցի պատերը, իսկ կենտրոնում հողի շերտ էր: Այստեղ գտնված խեցու բեկորներից առանձնանում էին քրեղանի հատակի և շրթի մասերը (աղ. 2/4): 02 միավորում գտնվեց քրեղանի մի բեկոր, որը նույն քառակուսու վե-

րին շերտից հայտնաբերված քրեղանի մասն է:

Եկեղեցու ներսի վերին՝ 01 միավորում ուներ միջին հաշվով մոտ 30 սմ հաստություն: Հիմնավորվեց գյուղացիների վկայությունն այն մասին, որ եկեղեցին պատերազմի տարիներին օգտագործվել է որպես ցորենի պահեստ: Այդ մասին վկայում էին ոչ միայն փայտե բազրիքների հիմքերն ու դռների համար թողած բացվածքները, այլև՝ եկեղեցու ողջ տարածքում հանդիպող ցորենի մոխրացած մնացորդները:

02 շերտի հզորությունը մոտ 15 սմ էր՝ կազմված հողի բարակ շերտից, որի տակ կրաշաղախից հատակ էր:

Եկեղեցու արևելյան մասում խորանի և ավանդատների դիմաց, N 3 և N 11 քառակուսիներում, 03 միավորի հողի բարակ շերտի տակ բացվեց կավաշերտ, որն էլ, հավանաբար, հանդիսանում է մայր հողը: 03 միավորում հայտնաբերվեցին կրեմագույն

խեցանոթի բեկորներ, որոնք ունեն գայլիկոնված անցքեր (աղ. 2/1; 12/2):

Այսպիսով, եկեղեցու հատակն ուներ բարդ շերտավորում: Վերևում հողի շերտ էր, որին հաջորդում էին խորհրդային տարիներին հարդարած բետոնե, ապա հիմնարկման ժամանակի կրաշաղախե հատակները, որոնք ծածկում էին մայր հողը կամ ժայռի բնական ելքերը:

Խորանի պարագծով շարված հիմքի քարերը դրված են բնահողի վրա: Իսկ եկեղեցու պատերի կենտրոնական և արևմտյան հատվածների հիմքերն ու հատակը կազմում էին զանգվածեղ քարերն ու ժայռի ելքերը: Առանձին դեպքերում ժայռի ելքերը ներառվել են պատերի մեջ և ծառայել են որպես հիմնաքարեր: Այսպիսով, որոշակի է, որ եկեղեցու արևելյան հատվածը կառուցվել է կավահողից կազմված մայր հողի, իսկ արևմտյան հատվածը՝ բնական ժայռի ելքերի վրա:

Եկեղեցու շրջակայքում կատարված պեղման և մաքրման աշխատանքների արդյունքում բացվեցին բազմաթիվ թաղումներ և տապանաքարեր: Եկեղեցու արևելյան կողմում էին N 13 և N 14 քառակուսիները: Այստեղ, փոքր թեքությամբ արևմուտքից-արևելք իջնող հարթության վրա բացվեցին երկու խորանարդած, սրբատաշ տապանաքար և անմշակ քարերով ծածկված գերեզմաններ (նկ. 13):

Գտածոներից առանձնանում է կարմիր գույնի կավանոթի կանթի բեկորը, որի ճակատային հարթ մակերեսին կետագծերով պատկերված է բազմաշար զիզգազ (աղ. 2/5):

Եկեղեցուց հյուսիս՝ N 15 և 16 քառակուսիներում մոտ 1,5 մ բարձրությամբ քարահողային կուտակում էր, որի վերին՝ 15-20 սմ հաստությամբ հատվածը սևահող էր, մնացածը՝ շատ կարծր կավահող՝ խառնված մանր, միջին և խոշոր քարաբեկորներով:


րի հետ: Այս վայրում նկատվում են նաև բնական ժայռի ելքեր (նկ. 14):

N 16 քառակուսուում բացվեց չորս կմախք՝ երկուսը՝ սևահողի, մյուսները՝ կավահողի մեջ: Շիրմաքար ուներ միայն մեկը՝ N 76-ը: Տպավորություն այնպիսին է, որ քրիստոնեական ծեսով թաղումները կատարվել են հապճեպ, արտակարգ իրավիճակներում:

N 15 և 16 քառակուսիներում գտնվեցին նաև կարմիր և սև խեցանոթների շուրթերի, հատակների և կանթերի բազմաթիվ բեկորներ, որոնք, ամենայն հավանականությամբ, պատկանում են զարգացած միջնադարին: Հայտնաբերված խեցատներից առանձնանում է սև գույնի, կոնաձև վերադիր ելուստով զարդարված սափորը (աղ. 1/1; 12/5), օղակաձև նստուկով կժի հատակամասը (աղ. 1/3), կժի (աղ. 1/6) և կճուճների շրթնամասերը (աղ. 1/4, 3/1), մատնեքվումով զարդարված կավանոթի ռելիեֆ գոտու բեկորը (աղ. 3/2), ինչպես նաև N 15 քառակուսուում հայտնաբերված օղակաձև նստուկով թասի հատակամասը (աղ. 1/7):

Եկեղեցու արևմտյան կողմում զետեղված N 17 և N 18 քառակուսիներում մշակութային շերտը գրեթե բացակայում էր, և ժայռի բնական ելքերը կազմում էին գետնի մակերեսը: Թաղումներ չկային, իսկ բեկոտված խեցատները սակավաթիվ էին: Կարելի է հիշատակել միայն կժերի կանթերը (աղ. 2/6; 3/4):

Եկեղեցուց հարավ և մուտքից արևմուտք գտնվող N 19 քառակուսին մոտ 1 մետր բարձրությամբ բլրակ էր, որը ձևավորվել էր ժայռի բնական ելքերի վրա հողի և քարաբեկորների կուտակումից: Այստեղ կան խորանարդաձև, սրբատաշ, դեղնավուն քարերից, արձանագիր և պատկերազարդ տապանաքարեր (աղ. 9/5,6): Տապանաքարերից երկուսի տակի հողը հանվեց և դրանք նույն դիրքով իջեցվեցին եկեղեցու հիմքի մակարդակին: Պեղումների ժամանակ բացվեցին ուղիղ շարված, անմշակ քարերով ծածկված գերեզմաններ, իսկ եկեղեցու մուտքի դի-



Նկ. 15. Կրնկաքար-կշռաքարը

մաց՝ դռան կլորավուն «կրնկաքար» (նկ. 15):

Գյուղացիների վկայությամբ՝ եկեղեցին սահեատի վերածելուց հետո այս քարն օգտագործվել է որպես կշռաքար: Քառակուսուում հայտնաբերվեցին նաև խեցանոթների բեկորներ, մարդկանց և կենդանիների ոսկորներ: Ուշագրավ է կարմիր խեցու բեկորը՝ մակերեսին դաջազարդ սեպերով ձևավորված շրջանակ, որն արև է խորհրդանշում (աղ. 3/5, 12/3) Ինքնատիպ է մոտ 10 սմ երկարությամբ, աստիճանաքար նեղացող կավե խողովակաձև մանրամասն թերևս՝ անոթի ծորակը, որի մակերեսը ձևավորված է առվակաձև, ռելիեֆ ակոսներով (աղ. 3/3, 12/6): N 19 քառակուսու 02 շերտից նույնպես գտնվեցին միջնադարյան խեցեղենի բեկորներ (կժի հատակամաս՝ աղ. 1/5, կարասի շուրթ՝ աղ. 3/6, 12/7):

N 20 քառակուսին գտնվում էր N 19 քառակուսուց արևելք: Տարածքը մաքրել-հարթեցրել էին 2006 թ.՝ ըստ «Նպաստ աշխատանքի դիմաց» ծրագրի: Այստեղ՝ եկեղեցու պատի տակ, կա սրբատաշ կրաքարից ձևավորված խորանարդաձև երեք տապանաքար (աղ. 6/1, 7/4): Մուտքից անմիջապես աջ բացվեց մի մեծ, կտրված տապանաքար-խաչքար

(աղ. 4/2): Մեկ այլ խաչքար-տապանաքար բացվել էր 2006 թ., եկեղեցու շրջակայքը փլատակներից մաքրելու ժամանակ: 01 շերտի տակ բացվեցին բազմաթիվ սալատապաններ (աղ. 10):


Տապանաքարերի մոտ, ասֆալտե շերտի տակ, հայտնաբերվեցին խեցեղենի և կղմինդրի տարբեր չափերի՝ մանր և մինչև 20 սմ մեծության հարյուրավոր բեկորներ: Դրանք տարբեր տիպերի, կոյների, զարդանախշ ու անզարդ անոթների շրթնամասեր, իրանի, հատակի, կանթի բեկորներ են: Ուշագրավ է ջնարակապատ թասի շրթնամասը, որը բնորոշ է զարգացած միջնադարին (աղ. 2/3; 12/4):

N 19 և N 20 քառակուսիներից հարավ ընկած հրապարակը կիսեցինք երկու մասի՝ N 21 և N 22 քառակուսիների: Խորհրդային տարիներին, երբ եկեղեցին դարձրել էին հացահատկի պահեստ, այս հրապարակում կառուցել էին ծածկ, որի համար մի քանի շարքով փայտե հեմասյուններ էին կանգնեցրել: Արանց տեղադրման համար բազմաթիվ փոսեր էին փորել և փայտե սյուների հիմքերն ամրացրել էին բետոնե շաղախով: Այնուհետև, հրապարակի արևմտյան մասում, 1970-ական թթ. կառուցել էին երկրորդ աշխարհամարտում զոհված եղվարդեցիներին նվիրված հուշարձան: Այս շինարարության ժամանակ բարեկարգել էին հրապարակը՝ վերացրել ծածկը, տարածքը տեխնիկայի միջոցով հարթեցրել և ասֆալտապատել: 1990-ականի վերջին հրապարակի արևմտյան մասում կառուցել էին 1,5 մ բարձրությամբ հուշակոթող և երկրորդ աշխարհամարտին նվիրված հուշահամալիրը հրապարակից բաժանող հեմապատ, իսկ հարավային՝ դեպի փողոց ուղղված հատվածը ցանկապատել մետաղե ճաղերով:

N 22 և N 19 քառակուսիների սահմանագծում, հուշարձանը հրապարակից բաժանող հեմապատի մոտ բացվեց 4 գերեզման: Պեղվեց մի կմախքի ստորին հատվածը: Մարդու ոսկորների բեկորներ բացվեցին նաև կմախքից փոքր-ինչ հեռու: Ասֆալտի ծածկույթի տակ՝ 20-25 սմ խորությամբ

վրա, հուշահամալիրի հեմապատից մոտ 1 մ արևելք, բացվեցին մեկ այլ կմախքի մնացորդներ, իսկ սրանից արևելք, հյուսիս և հարավ՝ բազմաթիվ տեղահանված ոսկորներ: Տեղացիների վկայությամբ, հրապարակը տրակտորով հարթեցնելու ժամանակ ավերվել էին բազմաթիվ գերեզմաններ. տեղաշարժվել էին թե՛ շիրմաքարերը, թե՛ աճյունները:

Հրապարակի հարավ-արևմտյան մասում, հուշարձանը հրապարակից բաժանող պատի տակ, իրարից 20-40 սմ հեռավորությամբ բացվեցին արևելքից-արևմուտք իրար զուգահեռ ձգվող գերեզմաններ՝ ձևավորված անմշակ, փոքր և միջին չափերի 3-10 քարով (աղ. 9/1-4): Հնագիտական գտածոները սակավաթիվ էին: Դրանցից կարելի է հիշատա-



Նկ. 16. Արձանագիր կոթող-տապանաքարը

ները սակավաթիվ էին: Դրանցից կարելի է հիշատակել կարմիր գույնի կավից պատրաստված քրեղանի շրթնամասը (աղ. 1/2):

N 21 քառակուսու արևելյան եզրին կանգնեցված է արծանագիր կոթող-տապանաքար (նկ. 16):

**ԳԵՐԵՉՄԱՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԸ**

**N 19 քառակուսի (աղ. 9/5.6).**

N 1 գերեզման: Գտնվում է քառակուսու արևմտյան եզրին, եկեղեցու հարավ-արևմտյան անկյան մոտ, N 2 գերեզմանից արևմուտք: Խորանարդաձև, արծանագիր տապանաքար է՝ պատված զարդանախշերով: Չափերն են. երկարությունը՝ 108 սմ, լայնությունը՝ 37 սմ, բարձրությունը՝ 65 սմ:

N 2 գերեզման: Գտնվում է քառակուսու արևմտյան մասում, եկեղեցու հարավային ճակատի արևմտյան անկյան մոտ: Խորանարդաձև տապանաքար է, որի զարդանախշերով եզերված ճակատային նիստի ուղղանկյունաձև խորշում փորագրված է արծանագրություն (աղ. 8/2): Չարդանախշեր կան նաև տապանաքարի վերին և կողային նիստերի վրա: Չափերն են. երկարությունը՝ 147 սմ, լայնությունը՝ 47 սմ, բարձրությունը՝ 115 սմ:

N 3 գերեզման: Գտնվում է N 2 գերեզմանից մոտ 45 սմ հարավ-արևելք: Խորանարդաձև, կոպիտ մշակված տապանաքար է: Չափերն են. երկարությունը՝ 104 սմ, լայնությունը՝ 25 սմ, բարձրությունը՝ 85 սմ:

N 4 գերեզման: Հավան է եկեղեցու հարավային ճակատին, N 5 գերեզմանից հյուսիս, վերջինիս և եկեղեցու պատի միջև: Հարդարված է միջին չափի երկու քարով: Մեծ քարն ուղղահայաց դիրքով խրված է հողի մեջ, ունի մշակվածության հետքեր՝ երկու կողմից փոքր-ինչ հարթեցված է:

N 5 գերեզման: Գտնվում է N 4 գերեզմանից հարավ: Խորանարդաձև տապանաքարի տակ դրված են ոչ մեծ, անկանոն քարեր: ճակատը պատ-

ված է զարդանախշերով, իսկ կենտրոնի խորշում փորագրված է եռատող արծանագրություն (աղ. 7/2) Քանդակագործ են նաև տապանաքարի կողային նիստերը: Չափերն են. երկարությունը՝ 165 սմ, լայնությունը՝ 35 սմ, բարձրությունը՝ 100 սմ:

N 6 գերեզման: Գտնվում է N 5 տապանաքարից հարավ, արևելքից հավան է N 3 տապանաքարին: Գերեզմանի վրա ուղիղ գծով շարված է միջին չափի, անմշակ և անկանոն երեք քար: Կենտրոնական սալաքարը եռանկյունաձև է: Քարաշարի ընդհանուր երկարությունը մոտ 95 սմ է:


N 7 գերեզման: Գտնվում է N 6 գերեզմանից հարավ-արևմուտք: Հարդարված է հինգ քարով Սրանցից երեքը միաչափ են, անկանոն, կիսով չափ գետնի մեջ թաղված, իսկ մյուս երկուսը փոքր են, իրար զուգահեռ դրված: Քարաշարի ընդհանուր երկարությունը մոտ 105 սմ է:

N 8 գերեզման: Գտնվում է N 7 գերեզմանից հարավ: Հարդարված է երկու խոշոր քարով, որոնցից արևելյանը 50x37 սմ չափերով սալ է: Քարաշարի ընդհանուր երկարությունը մոտ 85 սմ է:


N 9 գերեզման: Գտնվում է N 7 գերեզմանից արևելք: Ծածկված է երեք քարով, որոնցից մեջտեղի՝ հորիզոնական դիրքով, երկկողմ մշակված քարն ունի 30 սմ երկարություն: Սրանից արևմուտք և արևելք դրված են գլխաքարը և ոտնաքարը: Քարաշարի ընդհանուր երկարությունը մոտ 105 սմ է:

N 10 գերեզման: Գտնվում է N 5 գերեզմանից մոտ 35 սմ հարավ: Ծածկված է երկու՝ մեկը խոշոր, երկարավուն, մյուսը՝ փոքր քարերով: Երկկողմ մշակված երկարավուն քարը դրված է հորիզոնական դիրքով. սրա երկարությունը 60 սմ է, լայնությունը՝ 19 սմ: Քարաշարի ընդհանուր երկարությունը մոտ 66 սմ է:


N 11 գերեզման: Գտնվում է N 10 գերեզմանից մոտ 70 սմ հարավ: Ծածկված է երեք քարով Կենտրոնի շիրմաքարի երկարությունը՝ 68 սմ է, լայնությունը՝ 12 սմ: Մյուս երկուսը դրված են հանգուցյալի գլխավերևում և ոտքերի ուղղությամբ: Քարա-




Աղյուսակ 1. Եղվարդ, Սբ. Աստվածածին եկեղեցի, 2007 թ. պեղումներից հայտնաբերված կավանոթների բեկորներ:




Աղյուսակ 2. Եղվարդ, Սբ. Աստվածածին եկեղեցի, 2007 թ. պեղումներից հայտնաբերված կավանոթների բեկորներ:




Աղյուսակ 3. Եղվարդ, Սբ. Աստվածածին եկեղեցի, 2007 թ. պեղումներից հայտնաբերված կավանոթների բեկորներ:




1



3



4




2




5


Աղյուսակ 4. Եղվարդի Սբ. Աստավածածին եկեղեցի, պեղված խաչքարեր և սալատապաններ:



1



2




3



4


Աղյուսակ 5. Եղվարդ, Սբ. Աստավածածին եկեղեցի, պատկերազարդ տապանաքարեր:




1



2



3



4



5



6

Աղյուսակ 6. Եղվարդ, Սր. Աստավաճածոն Եկեղեցի, պատկերազարդ տապանաքարեր:



1



2



3



4



5



6

Աղյուսակ 7. Եղվարդ, Սր. Աստավաճածոն Եկեղեցի, պատկերազարդ տապանաքարեր:




1




2



3



4



5



6

Աղյուսակ 8. Եղվարդ, Սբ. Աստվածածին Եկեղեցի, պատկերազարդ տապանաքարեր:



1




2



3



4






5





6


Աղյուսակ 9. Եղվարդ, Սբ. Աստվածածին Եկեղեցի, շարված քարերով ձևավորված գերեզմաններ:




Աղյուսակ 10. Եղվարդ, Սբ. Աստվածածին եկեղեցի, սալատապաններ:




Աղյուսակ 11. Եղվարդ, Սբ. Աստվածածին եկեղեցի, «գլխաքարերով և ոտնաքարերով» ձևավորված գերեզմաններ:



Աղյուսակ 12. Եղվարդ, Սբ. Աստավածածին եկեղեցի, 2007 թ. պեղումներից հայտնաբերված խեցեղեն:



Աղյուսակ 13. Եղվարդ, Սբ. Աստավածածին եկեղեցի, 2007 թ. պեղումներից հայտնաբերված կավանոթների բեկորներ:



Աղյուսակ 14 Եղվարդ, Սբ. Աստավածածիմ եկեղեցի, 2007 թ. պեղումներից հայտնաբերված կավանոթների բեկորներ:

չարի ընդհանուր երկարությունը 105 սմ է:

N 12 գերեզման: Գտնվում է N 11 գերեզմանից մոտ 40 սմ հարավ: Ծածկված է երեք քարով: Կենտրոնական սալի երկարությունը մոտ 60 սմ է, լայնությունը՝ 20 սմ, իսկ մյուս երկուսը դրված են հանգուցյալի գլխավերևում և ոտքերի ուղղությամբ: Կենտրոնական քարն, ինչպես N 10 ու N 11 գերեզմանի հիմնական քարերը, կոպիտ հարդարված է: Քարաշարի ընդհանուր երկարությունը մոտ 90 սմ է:

N 13 գերեզման: Գտնվում է ժայռի ելքից հարավ: Ձևավորված է յոթ անմշակ քարով: Շարվածքն անկանոն է: Թերևս խաթարվել է Երկրորդ աշխարհամարտում զոհված եղվարդեցիներին նվիրված հուշարձանի կառուցման ժամանակ:

N 14 գերեզման: Գրեթե հավասար է N 13 գերեզմանին: Հավանաբար, խաթարվել է Երկրորդ աշխարհամարտում զոհված եղվարդեցիներին նվիրված հուշարձանի կառուցման ժամանակ: Հիմնական քարն ունի մոտ 1 մ երկարություն և 16 սմ լայնություն:

N 15 գերեզման: Գտնվում է եկեղեցու պատի և N 5 գերեզմանի միջակայքում: Տապանաքարը կողերով հողի մեջ խրված, փոքր ինչ մշակված նեղ և երկար սալ է: Ունի մոտ 85 սմ երկարություն և 10 սմ լայնություն:

N 16 գերեզման: Կազմում է N 11 գերեզմանի շարունակությունը՝ դեպի արևելք: Ձևավորված է միջին չափի, ուղիղ գծով շարված չորս քարով: Արևելյանը 30x30 սմ չափերի քառակուսի քար է:

N 17 գերեզման: Գտնվում է N 16 գերեզմանից 60 սմ հարավ, զուգահեռ դիրքով: Ծածկված է մեկ մեծ, տափակ դրված, հարթ քարով, որն ունի մոտ 85 սմ երկարություն և 20 սմ հաստություն:

N 18 գերեզման: Գտնվում է N 17 գերեզմանից հարավ: Երկարավուն շիրմաքար է, որի երկարությունը 75 սմ է, լայնությունը՝ 25 սմ:

N 19 գերեզման: Գտնվում է N 18 շիրմաքարից մոտ 45 սմ հարավ-արևելք: Ծածկված է կողքի վրա դրված, ուղղանկյունաձև, շագանակագույն մի

շիրմաքարով, որին արևելքից հավասար է ոտնաքարը: Շիրմաքարն ունի մոտ 105 սմ երկարություն և 18 սմ հաստություն, իսկ գերեզմանաքարերի ընդհանուր երկարությունը 118 սմ է:

N 20 գերեզման: Գտնվում է ժայռի ելքից հարավ, N 13 գերեզմանից մոտ 1 մ արևելք: Շագանակագույն, ուղղանկյունաձև մի շիրմաքար է: Երկարությունը 80 սմ է, լայնությունը՝ 20 սմ: Արևելյան կողմում ուղղահայց դիրքով ամրացված է ոտնաքարը:

N 21 գերեզման: Գտնվում է եկեղեցու պատից մոտ 1 մ հարավ: Կազմված է երեք շիրմաքարից: Կենտրոնականը ուղղանկյունաձև, 135x35 սմ չափերով հարթ սալաքար է, որի արևելյան և արևմտյան կողմերում դրված են գլխաքար և ոտնաքար: Շիրմաքարերի ընդհանուր երկարությունը 165 սմ է:

N 22 գերեզման: Դրված է N 21 շիրմաքարին զուգահեռ, սրանից մոտ 0.8 մ հարավ: Գերեզմանը ծածկված է երկարավուն, վերևի նիստը կլոր մշակված տապանաքարով, որի վրա նշմարվում է ցրված տառերով անընթեռնելի արձանագրություն: Ունի 140 սմ երկարություն, 40 սմ լայնություն, 80 սմ բարձրություն:

N 23 գերեզման: Գտնվում է N 22 և N 24 տապանաքարերի միջև: Գերեզման է համարվում թեականորեն, քանի որ այստեղ բացված 4 քարերն ունեն ցրված, անկանոն շարվածք:

N 24 գերեզման: Գտնվում է N 22 գերեզմանից հարավ: Խորանարդաձև, սրբատաշ տապանաքարի ճակատին քանդակված է արձանագրություն, որի արևելյան կողմում պատկերված է հեծյալ և հավերժության նշան: Տապանաքարի երկարությունը 137 սմ է, լայնությունը՝ 30 սմ, բարձրությունը՝ 120 սմ (աղ. 8/6):

N 25 գերեզման: Գտնվում է N 24 գերեզմանից հարավ: Կազմված է 6 մանր ու միջին չափի քարերից: Գերեզմանաքարերն ամբողջությամբ չեն բացվել N 24 տապանաքարի տակ գտնվելու պատ-

ճառով: Շիրմաքարերի ընդհանուր երկարությունը մոտ 110 սմ է:

N 26 գերեզման: Գտնվում է N 25 գերեզմանից 60 սմ հարավ-արևելք, եկեղեցու մուտքի դիմաց: Ավերվել է մերձակա սյան բետոնապատ հիմնափոսը ձևավորելիս: Ունի անմշակ, եռանկյունաձև, վերին մասում տափակ շիրմաքար: Շրջակայքում բացվեցին մարդու ոսկորների մանր բեկորներ:

**N 20 քառակուսի (աղ. 10/1-6).**

N 27 գերեզման: Գտնվում է եկեղեցու մուտքից փոքր-ինչ արևելք՝ պատի տակ: Վրան դրված է խոշոր, ջարդված սալաքար, որն ունի 160 սմ երկարություն և 50 սմ լայնություն: Սրա արևմտյան, արևելյան և հյուսիսային մասերում փոքր և միջին չափի 3 քարեր են: Գերեզմանաքարերի ընդհանուր երկարությունը 185 սմ է:

N 28 գերեզման: Գտնվում է մուտքից հարավ-արևելք, N 27 գերեզմանին զուգահեռ դիրքով: Խորանարդաձև, սրբատաշ տապանաքարի հարավային նիստը երեք կողմից եզերում է 15 սմ լայնությամբ զարդանախշը: Կենտրոնում երկտող արձանագրության համար նախատեսված խորշ է, սակայն արձանագրությունն անհայտ պատճառներով չի փորագրվել: Զարդանախշված է նաև տապանաքարի հյուսիսային նիստը, իսկ վերին և կողային նեղ նիստերին քանդակված են խաչեր: Ունի 126 սմ երկարություն, 41 սմ լայնություն և 102 սմ բարձրություն (աղ. 7/4):

N 29 գերեզման: Գտնվում է N 28 տապանաքարից հարավ: Չնավորված է տասից ավելի անմշակ, տձև, մանր և միջին քարերով: Սրանցից երկուսը կարմրավուն են: Շարվածքը տեղ-տեղ երկշար է: Շիրմաքարերի ընդհանուր երկարությունը 195 սմ է:

N 30 գերեզման: Գտնվում է N 29 գերեզմանից հարավ, զուգահեռ դիրքով: Վրան դրված է մի խոշոր, կոպտատաշ սալաքար՝ 130 սմ երկարությամբ և 80 սմ լայնությամբ: Սալաքարի 4 կողմում շարված են միջին մեծության կոպտատաշ քարեր, ո-

րոնցից արևելյանը շագանակագույն, քառակուսի 23x22 սմ չափերով, տաշված քար է: Գերեզմանաքարերի ընդհանուր երկարությունը 200 սմ է, լայնությունը՝ 100 սմ:

N 31 գերեզման: Գտնվում է եկեղեցու պատի տակ՝ N 27 գերեզմանից արևելք: Խորանարդաձև տապանաքարի հարավային ճակատին վատ պահպանված, անկանոն տառերով երկտող արձանագրություն է, իսկ նրանից ներքև, թերևս, թնդանորի մոտ կանգնած մարդու պատկեր է: Տապանաքարի մի հատվածը կտրված է: Երկարությունը 145 սմ է, լայնությունը՝ 30 սմ, բարձրությունը՝ 85 սմ (աղ. 6/1):

N 32 գերեզման: Գտնվում է N 31 տապանաքարից հարավ, զուգահեռ դիրքով: Վրան դրված է մեջտեղից կտրված հարթ սալաքար: Տապանաքարի արևելյան, արևմտյան և հյուսիսային կողմերում դրված են մեկական, փոքր, անմշակ քարեր: Գարթ սալաքարի վերին կեսում պատկերված է երեք փորածո խաչ՝ մեջտեղինը եզրայիններից մեծ: Խաչերը պատկերված են «Ադամի գերեզմանների»՝ զիկկուրատաձև հիմքերի վրա: Սեպաձև լայնացող խաչերի թևերն ավարտվում են երեք կետերով ձևավորված «բողբոջներով», իսկ կենտրոնական և աջակողմյան խաչերի վերին և ստորին թևերից սկիզբ են առնում ականթի ոճավորված տերևներ (նկ. 17): Խաչքարտապանաքարն ունի 160 սմ երկարություն և 50 սմ լայնություն, իսկ շիրմաքարերի ընդհանուր երկարությունը 172 սմ է (աղ. 4/2):

N 33 գերեզման: Գտնվում է N 32 գերեզմանից հարավ: Վրա դրված է տձև, կոպտատաշ մի սալաքար՝ եզերված երկու փոքր անմշակ քարով: Շիրմաքարերի ընդհանուր երկարությունը 90 սմ է, լայնությունը՝ 80 սմ:

N 34 գերեզման: Գտնվում է N 30 գերեզմանից արևելք: Կազմված է երեք անմշակ քարի շարվածքով: Կենտրոնի սալատապանն ունի 35x20 սմ չափեր, եզերված է ցից դրված գլխաքարով և ոտնաքարով: Շիրմաքարերի ընդհանուր երկարությունը 65 սմ է:



Նկ. 17.

րեզմանին: Ծածկված է խոշոր, ուղղանկյունաձև, կոպտատաշ սալաքարով: Սրա չորս կողմերում դրված են մեկական փոքր քարեր: Սալատապանի երկարությունը 160 սմ է, լայնությունը՝ 65 սմ: Շիրմաքարերի ընդհանուր երկարությունը 180 սմ է, լայնությունը՝ 110 սմ:

N 36 գերեզման: Գտնվում է եկեղեցու պատի տակ՝ N 31 գերեզմանից արևելք: Խորանարդաձև, մշակված տապանաքար է, որի թե՛ արևելյան կողմում, թե՛ տակը դրված են փոքր քարեր: Տապանաքարի երկարությունը 180 սմ է, լայնությունը՝ 30 սմ, բարձրությունը՝ մոտ 60 սմ:

N 37 գերեզման: Գտնվում է N 36 տապանաքարից հարավ-արևմուտք: Ծածկված է կարմրագույն, ուղղանկյունաձև, 55x30 սմ չափերի սալաքարով, որի արևմտյան կողմում դրված է գլխաքար:

N 38 գերեզման: Գտնվում է N 36 տապանաքարից հարավ: Գերեզմանի վրա դրված է մեծ, շագանակագույն, կոպտատաշ, ուղղանկյուն սալաքար, որի երկարությունը 145 սմ է, լայնությունը՝ 70 սմ: Սրա մոտ դրված են անմշակ քարեր՝ մեկն արևմուտքում, մյուսը՝ արևելքում: Շիրմաքարերի ընդհանուր երկարությունը 185 սմ է:

N 39 գերեզման: Գտնվում է N 40 գերեզմանի հյուսիս-արևելյան կողմում: Վրան դրված է ուղղանկյունաձև, մեջտեղից կտրված կարմրավուն քար, ո-

րի չափերն են 67x35 սմ:

N 40 գերեզման: Գտնվում է N 39 գերեզմանից հարավ և N 35 գերեզմանից հյուսիս-արևելք: Գերեզմանի վրա դրված են ճաքճաք, կոպտատաշ սալաքար, իսկ սրանից արևմուտք և արևելք՝ գլխաքար ու ոտնաքար: Գիմնական շիրմաքարի չափերն են՝ 166x100 սմ, իսկ գերեզմանի ընդհանուր երկարությունը մոտ 2 մ է:

N 41 գերեզման: Գտնվում է N 38 գերեզմանից հարավ, զուգահեռ դիրքով: Չնավորված է յոթ շիրմաքարից: Դրանք միջին չափի, ուղղանկյունաձև, քառակուսի և եռանկյունաձև հարթ քարեր են: Արևմուտքից հաշված երրորդ քարը շագանակագույն է, ունի 40x26 սմ չափեր: Շիրմաքարերի ընդհանուր երկարությունը մոտ 150 սմ է:

N 42 գերեզման: Գտնվում է N 41 գերեզմանից հարավ: Վրան դրված է ուղղանկյունաձև շիրմաքար (չափերն են՝ 45x35 սմ):

N 43 գերեզման: Գտնվում է եկեղեցու պատի մոտ, N 36 տապանաքարից արևելք: Յոթ անմշակ քարերը դասավորված են բոլորաձև: Սրա գերեզման լինելը թեական է:

N 44 գերեզման: Գտնվում է N 43 գերեզմանից հարավ և N 38 գերեզմանից արևելք: Կազմված է գլխաքարից, սալատապանից և ոտնաքարից: Ուղղանկյունաձև մշակված սալատապանի չափերն են՝ 65x25 սմ, իսկ շիրմաքարերի ընդհանուր երկարությունը մոտ 1 մ է:

N 45 գերեզման: Գտնվում է N 44 գերեզմանից հարավ: Վրան դրված է մեջտեղից կտրված, մուգ շագանակագույն, ուղղանկյունաձև հարթ սալատապան: Չափերն են՝ 110x30 սմ:

N 46 գերեզման: Գտնվում է N 45 գերեզմանից հարավ-արևելք: Վրան դրված է մուգ շագանակագույն, ուղղանկյունաձև, հարթ սալատապան: Չափերն են՝ 76x35 սմ:

N 47 գերեզման: Գտնվում է N 46 տապանաքարից հարավ: Վրան դրված է հինգ, անմշակ, կոպիտ, մամռապատ քար, որոնք կազմում են կանո-

նավոր, 145 սմ երկարությամբ շարք:

N 48 գերեզման: Գտնվում է N 42 գերեզմանից հյուսիս-արևելք: Ունի երկու շիրմաքար: Հիմնականը ձվաձև է, անհարթ մակերեսով: Երկարությունը 90 սմ է, լայնությունը՝ 40 սմ: Սրանից արևմուտք գլխաքարն է: Ընդհանուր երկարությունը 101 սմ է:

N 49 գերեզման: Գտնվում է N 48 գերեզմանից հարավ, զուգահեռ դիրքով: Վրան դրված է հարթ, նեղ ու երկար շիրմաքար: Չափերն են՝ 60x17 սմ:

N 50 գերեզման: Գտնվում է N 49 գերեզմանից հարավ, զուգահեռ դիրքով: Վրան դրված է հյուսիսային կողմն ուղիղ կտրած, հարավայինը՝ կլորավուն մշակած հարթ սալատապան: Երկարությունը 75 սմ է, լայնությունը՝ 45 սմ:

N 51 գերեզման: Գտնվում է N 50 գերեզմանից հարավ: Վրան դրված է երեք մասի բաժանված, 85 սմ երկարությամբ և 65 սմ լայնությամբ հարթ սալատապան, որի արևելյան եզրին ամրացված է մի փոքրիկ գլխաքար: Շիրմաքարերի ընդհանուր երկարությունը 97 սմ է:

N 52 գերեզման: Գտնվում է N 48 գերեզմանից արևելք: Վրան դրված է անմշակ, մամռապատ, տձև երկարավուն քար: Շիրմաքարի երկարությունը 52 սմ է, լայնությունը՝ 27 սմ:

N 53 գերեզման: Գտնվում է N 52 գերեզմանից արևելք: Վրան դրված է երկու շիրմաքար: Հիմնական քարն ուղղանկյունաձև է՝ 60 սմ երկարությամբ և 35 սմ լայնությամբ: Մյուս՝ անմշակ քարն, արևելյան կողմում է: Շիրմաքարերի ընդհանուր երկարությունը 77 սմ է:

N 54 գերեզման: Գտնվում է եկեղեցու պատի տակ՝ N 43 գերեզմանից արևելք: Վրան դրված է երկու շիրմաքար: Հիմնականը կարմրավուն, սեղանաձև, 50x60 սմ չափերով հարթ սալաքար է: Արևելյան կողմում ամրացված է նեղ, երկարավուն քար:

N 55 գերեզման: Գտնվում է N 54 գերեզմանից հարավ-արևելք: Վրան դրված է կոպտատաշ, ե-

ռանկյունաձև քար՝ 40 սմ երկարությամբ և 40 սմ լայնությամբ:

N 56 գերեզման: Գտնվում է N 45 գերեզմանից արևելք: Վրան դրված է գլխաքար, սալատապան և ոտնաքար: Հիմնական քարն ուղղանկյունաձև է, դեղնագույն, հարթ մակերեսով: Չափերն են 53x20 սմ: Շիրմաքարերի ընդհանուր երկարությունը 87 սմ է:

N 57 գերեզման: Կազմում է N 46 գերեզմանի շարունակությունը՝ դեպի արևելք: Ունի չորս շիրմաքար: Հիմնական սալատապանը ուղղանկյունաձև է, հարթ մակերեսով: Չափերն են 55x30 սմ: Շիրմաքարերի ընդհանուր երկարությունը 90 սմ է:

Խաչքար: N 20 քառակուսու կանգնեցված է նաև մի խաչքար: Այն գտնվում է եկեղեցու արևելյան անկյունից մոտ 2 մ հարավ: Գյուղացիների վկայությամբ, հաված է եղել եկեղեցու հարավային պատին, հետո տեղափոխել և ամրացրել են բետոնե պատվանդանի վրա: Խաչքարը տափակ, վերևի եզրը թեթև կտրած, միջին մասում լայն, դեպի ներքև փոքր-ինչ նեղացող կրաքարե սալ է: Բնականից հարթ մակերեսին փորագծված է զուգահեռ գծերից կազմված մեծ խաչ, որի թևերն ավարտվում են երկճյուղ բացվածքներով: Ճյուղերի ծայրերն ու խաչի կենտրոնը զարդարված են շրջանակներով, որոնց կենտրոնում փոսիկներ են արված: Խաչի ստորին թևի աջ և ձախ կողմերում, ինչպես նաև՝ աջ, հորիզոնական խաչակից վերև պատկերված են սեպաձև, կենտրոնից դեպի եզրերը լայնացող թևերով փոքր խաչեր: Խաչքարի ճակատին կա հողմնահարված ու դժվարընթեռնելի արձանագրություն (աղ. 4/1): Կենտրոնական մասի աղակալած լինելը վկայում է, որ քարը ժամանակին դրվել է հորիզոնական դիրքով և ծածկված է եղել հողով: Խաչքարի բարձրությունը մոտ 1.70 մ է, լայնությունը՝ 0.8 մ, հաստությունը՝ 0.2 մ:

**N 21 քառակուսի.**

N 58 գերեզմանաքարը պատվանդանի վրա ուղղահայաց դրված, քառակող, բրգաձև գագաթով

ուղղահայաց դրված, քառակող, բրգաձև գագաթով արձանագիր հուշաքար է: Ունի 175 սմ բարձրություն, 66 սմ լայնություն և 46 սմ հաստություն: Բարձրությունը պատվանդանի հետ միասին 2.15 մ է (նկ. 16):

Այլ գերեզմաններ չեն պահպանվել, քանի որ տարածքը հարթեցվել-բարեկարգվել էր տրակտորի օգնությամբ:

**N 22 քառակուսի.**

N 59 գերեզման: Գտնվում է եկեղեցու հարավային հրապարակի կենտրոնական հատվածում: Վրան դրված է շարդողված, տափակ, ուղղանկյունաձև, շագանակագույն շիրմաքար, իսկ արևմտյան մասում՝ 2 փոքր քար: Հիմնական շիրմաքարի չափերն են 67x50 սմ:

N 60 գերեզման: Գտնվում է N 59 գերեզմանից 60 սմ հարավ-արևմուտք: Վրան դրված է միջին չափի հինգ (որից երկուսը՝ շագանակագույն) շիրմաքար: Ընդհանուր երկարությունը 110 սմ է:

N 61 գերեզման: Գտնվում է N 60 գերեզմանից 15-20 սմ հարավ: Կազմված է 4, միջին չափի անմշակ քարից: Մեծ շիրմաքարի երկարությունը մոտ 40 սմ է, լայնությունը՝ 25 սմ: Գերեզմանաքարերի ընդհանուր երկարությունը 75 սմ է:

N 62 գերեզման: Հարավից հաված է N 60 գերեզմանին: Վրա դրված է մանր և միջին չափի անմշակ 6 քար, որոնցից արևմտյան՝ մեծ քարի երկարությունը 45 սմ է, լայնությունը՝ 25 սմ: Շիրմաքարերի ընդհանուր երկարությունը 160 սմ է:

N 63 գերեզման: Գտնվում է N 62 գերեզմանից 15 սմ հարավ: Կազմված է գլխաքարից, սալատապանից և ոտնաքարից: Կենտրոնական սալաքարն ուղղանկյուն է, ունի 54 սմ երկարություն, 30 սմ լայնություն: Շիրմաքարերի ընդհանուր երկարությունը 105 սմ է:

N 64 գերեզման: Գտնվում է քառակուսու արևմտյան հատվածում, երկրորդ աշխարհամարտում զոհված եղվարդեցիներին նվիրված հուշար-

ձանի հենապատի տակ: Ունի մանր և միջին մեծությամբ, անմշակ, եռանկյունաձև, ուղղանկյունաձև և քառակուսի 14 քար, որոնք տեղ-տեղ երկշարք են: Շիրմաքարերի ընդհանուր երկարությունը 175 սմ է:

N 65 գերեզման: Գտնվում է N 64 գերեզմանից հարավ, զուգահեռ դիրքով: Ծածկված է մանր և միջին չափի անմշակ, տձև 7 քարով: Շարքի ընդհանուր երկարությունը մոտ 1 մ է:

N 66 գերեզման: Գտնվում է N 65 գերեզմանից հարավ, զուգահեռ դիրքով: Վրան դրված է միջին չափի անմշակ, եռանկյունաձև և ուղղանկյունաձև 6 քար: Շարքի ընդհանուր երկարությունը մոտ 140 սմ է:

N 67 գերեզման: Գտնվում է N 66 գերեզմանից հարավ, զուգահեռ դիրքով: Վրան դրված է ուղղանկյունաձև և քառակուսի 3 շիրմաքար, որոնց ընդհանուր երկարությունը մոտ 70 սմ է:

N 68 գերեզման: Գտնվում է N 67 գերեզմանից հարավ, զուգահեռ դիրքով: Վրան դրված է 9 քար: Սրանցից մեկը շագանակագույն է, ուղղանկյունաձև՝ 24x20 սմ չափերով: Ընդհանուր քարաշարի երկարությունը մոտ 102 սմ է:

N 69 գերեզման: Գտնվում է N 68 գերեզմանից հարավ, զուգահեռ դիրքով: Տեղում պահպանվել է միջին չափի երկու շիրմաքար: Դրանց ընդհանուր երկարությունը 50 սմ է:

N 70 գերեզման: Չգտնվում է N 68 գերեզմանին զուգահեռ, N 69-ի շարունակությամբ՝ դեպի արևելք: Վրան դրված է 5 շիրմաքար: Հիմնական քարը կոպտատաշ է և ուղղանկյունաձև, ունի 60x30 սմ չափեր: Սրա 4 կողմում դրված է մեկական քար:

N 71 գերեզման: Գտնվում է N 69 գերեզմանից հարավ, զուգահեռ դիրքով: Գերեզմանի վրա դրված են ուղղանկյունաձև և եռանկյունաձև շիրմաքարեր, որոնց ընդհանուր երկարությունը մոտ 70 սմ է:

N 72 գերեզման: Գտնվում է N 70 գերեզմանից հարավ, զուգահեռ դիրքով, N 71 գերեզմանի շարունակությամբ՝ դեպի արևելք: Գերեզմանի վրան դրված է խոշոր և միջին չափի անմշակ 5 շիրմաքար:

Սրանցից երկրորդը կուպտատաշ, ուղղանկյունաձև, 60x40 սմ չափերի սալաքար է: Քարաշարի ընդհանուր երկարությունը 180 սմ է:

N 73 գերեզման: Գտնվում է N 71 գերեզմանի արևմտյան կողմում: Խորանարդաձև տապանաքարը հիմնականում մնացել է Երկրորդ աշխարհամարտում զոհված եղվարդեցիներին նվիրված հուշարձանն արևելքից եզերող պատի մեջ: Երևացող հատվածը կուպտատաշ է: Ունի 30 սմ երկարություն, 50 սմ բարձրություն, 33 սմ լայնություն:

**N 16 քառակուսի.**

N 74 թաղում: Եկեղեցու հյուսիսային պատից մոտ մեկ մետր հեռու բացվեց մարդու գանգ, ապա և՛ կմախք: Այն կարճահասակ մարդու, հավանաբար երեխայի կմախք էր: Դին հողին էին հանձնել եկեղեցու պատին զուգահեռ՝ ոտքերը դեպի արևելք, մեջքի վրա պառկած: Գազաթոսկրը տեղ-տեղ կտրված էր, ինչը վկայում է նրա բռնի մահվան մասին: Չեռքերից մեկը ծալված է եղել կրծքին, մյուսը՝ վերև, դեպի ուսը:

N 75 թաղում: N 74 գանգից 1,5 մետր արևելք բացվեց մեկ այլ գանգ, որը, ինչպես նախորդը, գազաթոսկրի վրա ուներ կտրվածքներ: Կմախք դրված էր նույն դիրքով, սակայն ձեռքերը խաչված էին կրծքի վրա:

N 76 թաղում: Վրան դրված էր խոշոր, ծվածկ, վերին մասը կուպտատաշ մի սալաքար: Կմախքը պեղվեց 35-40 սմ խորությամբ, եկեղեցու պատի տակ, N 15 և N 16 քառակուսիների սահմանագծում: Փոքր-ինչ խաթարված կմախքի երկարությունը 190 սմ էր: Պատկանում է տարիքաց, բարձրահասակ տղամարդու:

N 77 թաղում: Երեխայի կմախքը բացվեց N 75 թաղմանը կից:

N 78 թաղում: Բացվեց 1,2 մ խորության վրա, N 76 թաղման տակ: 120 սմ երկարությամբ կմախքը պատանու էր, կամ կնոջ, քանի որ ոսկորները բարակ էին, իսկ ատամներն՝ առողջ, ամբողջությամբ պահ-

պանված: Չախ ձեռքը ծալված էր ուղիղ անկյան տակ, իսկ աջը դրված էր կրծքին:

Ընդհանրացնելով, կարող ենք նշել, որ եկեղեցու հարավային հրապարակում եղել են խիտ դասավորված գերեզմաններ: Թաղումներ չեն կատարվել միայն եկեղեցու արևմտյան կողմում, ուր բնական ժայռը բավականին բարձր է և հնարավոր չէ փորել գետինը: Գյուսիսային կողմում նույնպես բնական ժայռը բավականին բարձր է: Սակայն այստեղ, եկեղեցու հյուսիսային պատի տակ հետազայում կուտակված սևահողի և ժայռը ծածկող կավահողի մեջ կատարվել էին բռնի կերպով մահացածների հապճեպ թաղումներ, որոնցից միայն մեկն ուներ տապանաքար:

Հիմնական՝ հարավային կողմի, գերեզմանոցը մեծապես ավերվել էր խորհրդային տարիներին եկեղեցուն կից սյունածածկ շինության կառուցման, տարածքը տեխնիկայով հարթեցնելու և ճանապարհաշինության հետևանքով:

Եկեղեցու շրջակայքի շիրմաքարերը կարելի է բաժանել երկու մեծ խմբի: Առաջինը վարպետների կերտած սրբատաշ, խորանարդաձև տապանաքարերն են, որոնց նիստերի վրա կան հարթաքանդակներ և արձանագրություններ: Տապանաքարերին հորիզոնական դիրք հաղորդելու նպատակով դրանց տակ դրվել են մանր քարեր: Ուշագրավ է, որ այս տապանաքարերի մի մասը պատկանում է Ուժանիս գյուղի բնակիչներին, որոնք իրենց գյուղում այն ժամանակ եկեղեցի չունենալով, թերևս, համապատասխան նվիրատվության դիմաց, իրավունք էին ստանում իրենց հանգուցյալներին թաղել Եղվարդի եկեղեցու մուտքից արևմուտք ընկած պատվավոր հատվածում:

Սրբատաշ, միակտոր քարերից կերտած տապանաքարերն իրենց հերթին ստորաբաժանվում են երկու տիպի .ա/ կիսաբոլոր (օրորոցաձև) և երկթեք գազաթներով խորանարդաձև տապանաքարեր, բ/ հարթ կտրած գազաթներով խորանարդաձև տապանաքարեր: Արձանագրությունների վերլուծությունը

վկայում է, որ առաջին տիպի տապանաքարերը բնորոշ են 17-18-րդ դդ., իսկ երկրորդ տիպի տապանաքարերը՝ 19-րդ դ. և 20-րդ դ. սկզբին: Սա տապանաքարերի թվագրման համար կարևոր դիտարկում է: Խորանարդաձև տապանաքարերն՝ ըստ արձանագրությունների վկայությունների, հիմնականում դրվել են իշխանների, վանականների, մեծահարուստների ու նրանց հարազատների գերեզմանների վրա:

Եկեղեցու շրջակայքում բացված գերեզմանների հիմնական խումբը կազմված է անմշակ շիրմաքարերից: Սրանք կարելի է ստորաբաժանել երեք տիպերի.

1. Տձև, անտաշ քարերի ուղիղ շարվածքով ձևավորված գերեզմաններ: Գերեզմանաքարերը մանր և միջին մեծության են, հիմնականում՝ կենտ թվով: Մեծամասնություն են կազմում 5 և 7 քարից բաղկացած շիրմաները:

2. Գերեզմաններ, որոնք ձևավորված են ե-

րեք քարով: Հիմնական՝ ուղղանկյունաձև սալաքարերը դրված են շարքերի կենտրոնում, իսկ սրանց արևմտյան և արևելյան կողմերում, հաճախ ցից դիրքով, տեղադրված են գլխաքարերը և ոտնաքարերը: Երբեմն գլխաքարերը կամ ոտնաքարերը չեն պահպանվել:

3. Գերեզմաններ, որոնք ձևավորված են խոշոր, մասամբ մշակված հարթ սալատապաններով: Երբեմն սրանց 4 կողմում դրվում էին փոքր քարի, ինչպես նաև գլխաքարեր և ոտնաքարեր:

Ամփոփիչ աղյուսակը ներկայացնում է Եղվարդ գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցու շրջակայքում բացված գերեզմանների հիմնական տիպերը:

Ինչպես երևում է աղյուսակից, Սբ. Աստվածածին եկեղեցու շրջակայքի 72 գերեզմանից 24-ը ծածկված է անմշակ քարերի շարքերով: 18 գերեզմանի վրա դրված է երեք շիրմաքար, մեկը՝ ոտքերի մոտ /ոտնաքար/, մյուսը՝ գլխավերևում /գլխաքար/.

**Պեղված գերեզմանների դասկարգման աղյուսակ**

	I	II	III	IV
Քառակուսիների NN	Մի գծով շարված, անտաշ քարերով ձևավորված գերեզմաններ	Գերեզմաններ՝ ձևավորված սալատապանով, գլխաքարով և ոտնաքարով	Հարթ սալատապաններով ծածկված գերեզմաններ	Սրբատաշ, խորանարդաձև տապանաքարերով ծածկված գերեզմաններ
N 19	NN 4, 7, 8, 13, 16, 23, 24	NN 6, 9, 10, 11, 12, 14, 15, 19, 20, 21	NN 17, 18, 26	NN 1, 2, 3, 5, 22, 24
N 20	NN 29, 41, 43, 47, 57	NN 34, 37, 44, 48, 53, 54, 56	NN 27, 30, 32, 33, 35, 38, 39, 40, 42, 45, 46, 49, 50, 51, 52, 55	NN 28, 31, 36
N 22	NN 60, 61, 62, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 71, 72	N 63	N 59	N 73
Ընդամենը	24	18	20	10

երրորդը՝ կենտրոնում /սալատապան/: Դատելով  
փոքր չափերից՝ սրանք երեխաների թաղումներ են:

Այսպիսի թաղումներ, որոնց վրա արևելքից-  
արևմուտք ձգվող շարքերով տեղադրված են անմ-  
շակ, ոչ մեծ քարեր, մինչև վերջերս կատարվում են  
ոչ միայն Եղվարդում, այլև հարևան գյուղերում: Ա-  
ճյունի վրա դրված քարերը, մինչև հիմնական տա-  
պանաքարի տեղադրումը, թողնում էին տեղում: Այս  
տվորությունը տարածված է եղել առնվազն 250-300  
տարի առաջ: Նշված տիպի գերեզմանները, թերևս,  
պատկանել են ընչազուրկ խավի ներկայացուցիչնե-  
րին, որոնց հարազատները հնարավորություն չեն  
ունեցել կատարել անհրաժեշտ ծախսեր և գերեզմա-  
նի վրա տեղադրել միակտոր, խոշոր սալեր կամ գե-  
ղաքանդակ տապանաքարեր: Եվ պատահական չէ,  
որ սրանք գտնված են եկեղեցուց հեռու, ժայռոտ  
տեղանքում: Ի հակադրություն այս գերեզմանների,  
սրբատաշ տապանաքարերն ու միակտոր սալատա-  
պանները գտնվում են եկեղեցուն մոտ, պատվավոր  
մասերում: Բոլոր շիրմաքարերն էլ, քրիստոնեական  
ծեսի համաձայն, կողմնորոշված են արևելքից-  
արևմուտք:

**ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐԻ ԵՎ ԽԱՉՔԱՐԻ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Խաչքար** - քայքայված-հողմնահարված, դժ-  
վար ընթեռնելի ու անփույթ գրված արձանագրու-  
թյամբ (6 տող) (աղ. 4/1)  
Խ(Ա)ԶԱ[ՏՈՒՐԻՆ Է] (?) / [Խ]ԱԶՍ... [Բ]Ա(ՐԵ)ԽՕՍ:  
/...ՅԻՇ(Է)Ք... / .. / ՈՂՈՐ/ՄԸ Ա(ՍԷՔ):

**Տապանաքար Թորոս Իշխանի** - հարավային  
նիստին՝ 2 տող (աղ. 6/6)  
ԿԱԶՍՈՂ ԲԱՔՐԱՏ: / ԹՎ :ՈՃԳ: (1654)<sup>18</sup>

18. Դիվան հայ վիճազրության, պրակ II, էջ 142, արձ. N 418: Ս. Գ. Բարխուդարյանի վերծանած տեքստը ներկայացվում է նույնությամբ:  
Հատարակիչը նկատել է, որ տապանաքարի տարեթիվը չի համապատասխանում Թորոս Իշխանի սպանության թվականին, և  
զերակացրել է, որ գրիչը մոռացել է փորագրել տարեթվի տասնավորը (Հ=70):

**Տապանաքար N 1** - 2 տող՝

ԱՅՍ Է Տ(Ա)Պ(Ա)Ն ԼՈՒՍԱՅՈՒԳԻ ՄԷԼ/ՔՈՒՄԵԱՆ  
ՄԱՐԴԵՐՈՍԻ: 1865 ԱՄԻ:

**Տապանաքար N 2** - 3 տող (աղ. 8/2)՝

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԼՈՒՍԱՅՈՒԳԻ / ԲԱԲԱՅԻ ԾԱՏՈՒՐԵԱՆ,  
ՈՐ Է / ՈՒԺԱՆԻՍ ԳՈՒՂԱՑԻ: ՎԱԽՉԱՆՎԵՑԱՄ / 1855  
ԱՄԻ:

**Տապանաքար N 5** - 3 տող (աղ. 7/2)՝

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԼՈՒՍԱՅՈՒԳԻ / ՅԱՐՈՒԹԻ(Ո)ՒՆԻ  
ՇԱՂԱԶԱՐԵԱՆ / ՈՒԺԱՆԻՍԵՑԻ: 1861 ԱՄԻ:

**Տապանաքար N 24** - 3 տող, ՇԱՂԱԶ Իգա-

կան անձնանվան Բ տառը՝ կրկնակի փորագրված  
(աղ. 8/6)  
ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԼՈՒՍԱՅՈՒԳԻ / ՇԱՂԱԶԻ, ԿԻՆ  
ՇԱՂԱԶԱՐԻ / ՈՒԺԱՆԻՍԵՑԻ: 1845 ԱՄԻ:

**Տապանաքար N 31** - 2 տող, (աղ. 6/1)՝

ԱՅՍ Է ԴԱ(Պ)ԱՆ ԹՕ(Փ)ՉԻ ԳՐԻՔՈՐ[Ի]: / ԹՎ(ԻՆ)  
:ՈՃՀԱ: (1722)

**Տապանաքար N 7** - 5 տող (աղ. 8/1)՝

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԼՈՒՍԱՅՈՒԳԻ ԹԱԶԱԳԻԼԼԻ, ՈՐ/ԴԻ  
ԴԱՎԻԹ ԲԷԳԻ ՄԷԼ(ԻՔ)-/ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆ:  
ՎԱԽՃ/(ԱՆԵԱԼ) 1905 Թ(ՎԻՆ):

**Տապանաքար եկեղեցուց արևելք** - 4 տող

(աղ. 8/5)  
ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՄԲԱԿՈՒՄԻ ՈՐԴ(Ո)Յ ՆԱԶԱՐԻ: /  
ԳԱՂԹԵԼՈՎ Ի Ղ(Ա)ՐԱԴԱՂԵ 1847 ԱՄԻ, /  
ԱՇԽ(Ա)Տ(Ա)ՄԻՐՈՒ(ԹԵԱՍ)Ք, ՀԻԻՐ(Ա)ՄԻՐՈՒ(ԹԵԱՍ)Ք  
ԵՂԵՒ Տ(Է)Ր Բ(Ա)ՐԻ ԱՆՈՒՆԻ: / 80 ԱՄԵԱ ՉԱՆԳԵԱՄ Ի  
Տ(Է)Ր 1890 ԱՄԻ:<sup>19</sup>

**Տապանաքար եկեղեցուց արևելք** - Մեկ տա-  
պանաքարի վրա փորագրված են երկու մարդու՝ այր  
ու կնոջ հիշատակին նվիրված արձանագրություն-  
ներ.

ա). Հյուսիսային նիստին՝ 4 տող - ԱՍՏ  
ՂԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ՏԻ/ԿԻՆ ՈՍԿԻԻ, ԳՈՂԱԿԻՑ  
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵԺԼՈՒՄԵԱՆԻ: / 55 ԱՄ(Ա)Ց ՉԱՆԳԵԱՄ  
Ի Տ(Է)Ր 1894 Թ(ՎԻՆ):

բ). Հարավային նիստին՝ 6 տող - ՅԱՅՍՍ  
ՅԱՊԱՆԻ ՉԱՆԳՉԻ ՄԱՐ/ՄԻՆ ՄԵԾԱՆՈՒՆ  
ՎԱՃԱՌԱ/ՎԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵԺԼՈՒՄ/ԵԱՆԻ: ԷՐ  
ԲՆԱԿԻՉ, ԵՂԱՄ ՈՐԴԻ / ԳԻ(Ո)ԻՂԻ: 65 ԱՄԱՑ ՉԱՍԱԿԻ  
/ ՉԱՆԳԵԱՄ Ի ՏԵՐ 1898 ԱՄԻ:

**Տապանաքար եկեղեցուց արևելք** - 3 տող՝  
ՅԱՅՍՍ Տ(Ա)Պ(Ա)ՆԻ ԱՄՓՈՓԵԱԼ ԴՆԻ / ՄԱՐՄԻՆ  
ՄԻՔԱԷԼԻ, ՈՐԴՈՅ ԱՄԲԱԿՈՒՄԻ: / ԵՐԵՄԱՄԵԱ  
ՉԱՆԳԵԱՄ 1847 ԱՄԻ:

**Տապանաքար եկեղեցուց արևելք** - 3 տող՝  
ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՆՈՒԲԱՐԻ, / ՏՍԵՐ ՄԵԺԼՈՒՄԵ(Ա)Ն  
Ց(Ա)Ր(ՈՒ)ԹԻ(Ի)ՆԻ, / 16 ԱՄԵԱ ՉԱՆԳԵԱՄ 1885 ԱՄԻ:

**Տապանաքար եկեղեցուց արևելք** - 3 տող՝  
ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԽՈՆԱՐՅԻ, / ՏՍԵՐ ՆԱԶԱՐԵ(Ա)Ն  
ՄԵԺԼՈՒՄ(Ի): / 26 ԱՄԵԱ ՉԱՆԳԵԱՄ (...ԱՄԻ):

**Տապանաքար եկեղեցուց արևելք** - 5 տող՝  
ՅԱՅՍՍ Տ(Ա)Պ(Ա)ՆԻ ԱՄՓՈՓԵԱԼ ԴՆԻ / ՄԱՐՄԻՆ ՔԱՉ  
ԻՇԽ(Ա)ՆԻ ՄԷԼԻՔ Բ(Ա)ՂՏ(Ա)Ս(Ա)ՐԻ, / ՈՐԴՈՅ  
ՀՁՐԻ ՄԷԼԻՔ ԱՄՏ(Ի)ՄԻ, / ՄԵՐԵԱԼ Ի ՅԱԶԳԵՆ  
ՄԷԼԻՔ Ղ(Ա)ՐԱԿԵՕԶԻ: / ԾՆՈՒՆԴՆ 1834 ԱՄԻ,  
ԹԱՂՈՒՄՆ 1894 ԱՄԻ:

19. Այս վիճագիրը պատմական նշանակություն ունի, քանի որ հավաստում է գյուղացիների բանավոր հաղորդումներն այն մասին, որ  
եղվարդեցիները Դավիթ բեկին սատարելու համար աքսորվել են Դարաղաղ և հայրենիք են վերադարձել 1826-1828 թթ. երկրորդ ռուս-  
պարսկական պատերազմից հետո կնքված Թուրքմենչայի պայմանագրի համաձայն: Դատելով արձանագրությունից, նրանց մի մասը  
վերադարձել է գրեթե երկու տասնամյակ անց:  
20. Սա Աք. Աստվածածին եկեղեցու գերեզմանոցի հնագույն արձանագիր տապանաքարն է:

**Տապանաքար եկեղեցուց արևելք** - 3 տող  
/աղ. 6/2/՝  
ԱՅՍ Է Տ(Ա)Պ(Ա)Ն ԼՈՒՍԱՅՈՒԳԻ ԱԶԻԶԻ, / ՈՐ Է ԿԻՆ  
ՄԷԼԻՔ-ՂԱՐԱԿԵՕԶԵ(Ա)Ն ՄԷԼԻՔ ԱՎԷ/Տ(Ի)ՄԻ: 1870  
ԱՄԻ:

**Կորոնածև տապանաքար N 21**  
**քառակուսում** - 15 տող, չափածո.

1. ԱՆԳՈՒԹ ՎԻՃԱԿ-
2. Ը ԻՄ ԱՆԲԱԽՏ ԿԵԱՆՔԻՍ
3. ԽԼԵՑ ԻՆՉԱՆԻՑ ԻՍ
4. ԴԵՌ ԹԱՐՄ ՀՈԳԻՍ:
5. ԹՕՂԵՑԻ ՄԵՆԱԿ
6. ԵՍ ԻՄ ԱՄՈՒՄՆԻՍ,
7. ԱՍՏՈՒԱԾ ՉԻ ԽՂԵ-
8. ԱՑ ԻՄ ՈՐԲ ԶԱՒԱԿԻՍ:
9. ՄԱՐՄԻՆ ԱՄԵՏԻՍ
10. ԲԵԿԻ ՈՐԴՈՅ ՄԷԼԻՔ
11. ԲԱՂՂԱՍԱՐԻ, ՍԵՐ-
12. ԵԱԼ Ի ՅԱԶԳԵՆ ՄԷԼ-
13. ԻՔ ՂԱՐԱԿԵՕԶՈՎԻ:
14. ԾՆԵԱԼ 1858 ԱՄԻ,
15. ՎԱԽՃԱՆՆԵ 1898 ԱՄԻ:

**Տապանաքար Թորոս Իշխանի շիրմաքարի  
մոտ** - խորանարդած, երկթեք վերնամասով. հյու-  
սիսային նիստին՝ տարեթիվը (1 տող) (աղ. 6/3, 4)  
ԹՎ(ԻՆ) :ՈԼԵ: (1586):<sup>20</sup>

Հարավային նիստին՝ 2 տող, հողմնահար-  
ված հիշատակագրություն, որից ընթերցվում է՝  
ԱՅՍ [Է ՏԱՊԱՆ] ... /...ԻՄ Վ(Ա)ՐԴԵԻՆ, ԽԱՆԻՆ:

**Օրորոցածև տապանաքար՝ ազուցված եկե-  
ղեցու հարավային ճակատի արևելյան մասում:** ճա-  
կատին քանդակված են 4 խորանախաչեր, որոնցից

տողանոց արձանագրությունն է (աղ. 7/1)՝  
«... ԿԱՆԿԵՑՈՒՑԻ ՎԱՐՈՒՄ ԿԱՆԿԵՑՈՒՑԻ  
ՆԱՍ ՈՐԴ(Ի) ԻՍ ԳԱՐԱԽԱՆԻՆ:»<sup>21</sup>

**ԾՈՒՅԵՑԵՆԸ /ԿԱՍՏԱՆԳՐԱՆՔԻ ՓՈՐՁ/**

2007 թ. պեղումների արդյունքում հայտնա-  
բերվել է զանազան տիպի և տեսակի կավանոթների՝  
... սափորների, քրեղանների, կժերի, սրվակ-  
... կարասների /1237/ և կղմինդրների /893/ 2130

**ԿՂՄԻՆԴՐՆԵՐ** քանակը՝ 893:

Պատրաստված են խոշորահատիկ, ավազա-  
կարմիր կավից, կաղապարների մեջ: Բեկոր-  
... 175-ը պատկանում են եզրային մասերին և  
... վորություն են տալիս վերականգնել ձևերը:  
... վկայում են, որ կղմինդրները եղել են միա-  
... լուցեցել են միանաման ձև և չափեր: Վերական-  
... մեկ ամբողջական կղմինդր (նկ. 9):

Տարբեր ձևի, չափի ու տիպի խեցանոթների  
... ռենդն ունեն նուրբ, բարակից միմյան հաստ պա-  
... գտածոների մակերեսները հարդարված-կո-  
... ր: Կան նաև անհարթ, կոպիտ հարդարած մա-  
... երով խեցատներ: Թրծունը հիմնականում  
... րակ է, հավասարաչափ: խեցանոթների գու-  
... երանգներում գերակշռում է կարմրավունը,  
... ան երկգույն բեկորներ՝ մակերեսը կարմրա-  
... աստառը՝ դարչնագույն, գորշ կամ սև: Հայտ-  
... վել են նաև կրեմագույն մակերեսով և կարմ-  
... աստառով, ինչպես նաև՝ դարչնագույն մա-  
... վու սև աստառով բեկորներ:

Ըստ ֆունկցիոնալ նշանակության խեցեղե-  
... լի է ստորաբաժանել հետևյալ խմբերի. ա/  
... արական՝ կղմինդրներ, բ/ տնտեսական՝ խո-

հանոցային անոթներ, գ/ սեղանի սպասք՝ նրբախե-  
... ցի, բարձրորակ հարդարումով անոթներ, և դ/ տա-  
... րաներ՝ կարասներ:

Եղվարդում տարածված են եղել «բաց» տի-  
... պի անոթները, սակայն կիսովել են նաև «կիսաբաց»  
... և «փակ» տիպերը:

Ըստ մասերի կատարել ենք խեցատների  
... հետևյալ ստորաբաժանումը՝ ա/ շուրթեր, բ/ հատակ-  
... ներ, գ/ իրանի բեկորներ, դ/ կանթեր:

**ՇՐՔԵՐ** քանակը՝ 102:

Հիմնականում դուրս ճկված են, սակայն կան  
... նաև ուղիղ պատերի վրա դրված և ներս հակված շր-  
... թեր: Գլանաձև վզիկով անոթները սովորաբար ա-  
... վարտվում են կիսագնդաձև շրթով: Կան անմիջա-  
... պես իրանին միացած շրթերով անոթներ: Որոշ ա-  
... նոթների շուրթն իրանից կամ վզիկից զատվում է ռե-  
... լիեֆ ներձկված կամ վերադիր գոտիով: Շրթերի բե-  
... կորները հաճախ հարդարված են պռունկների եզրե-  
... ռին արված եղունգազարդերով, ակոսներով և հորի-  
... զոնական գծերով:

Շրթերից յոթն ունեն լայն պսակներ, հաստ  
... պատեր և, թերևս, պատկանել են կարասներին: Նեղ  
... բացվածքով և փոքր չափերով շրթմանասերը կժերի  
... ու սափորների մասեր են:

Բեկորներից վեցը ներկված են վառ կարմիր  
... գույնով:

Ըստ ձևի շրթերը կարելի է դասակարգել  
... հետևյալ տիպերի. ա/ դուրս փռված, լայն պսակով  
... շրթեր, բ/ ուղիղ պատերի վրա դրված, դեպի դուրս  
... կլորացող կամ հարթ կտրած շրթեր, գ/ թեք կտրած,  
... դեպի ներս հակված շրթեր, դ/ կիսագնդաձև շրթեր,  
... ե/ կտրվածքում եռանկյունաձև, սրացումով ավարտ-  
... վող շրթեր, զ/ դեպի ներս ու դուրս սնկաձև լայնացող  
... շրթեր, է/ դուրս ծավված շրթեր:

... անագրությունն առաջին անձնանվան տարընթերցումով (ԱԳԱՅՍ ... ԿԱՆԿԵՑՈՒՑԻ) հրատարակված է՝ «Գիվան հայ  
... արան», պրակ II, էջ 142, արձ. N 420: Հրատարակիչը տապանաբար սխալմամբ ներկայացրել է որպես խաչքար: ՎԱՐԱՐՇԱԿ  
... լի փորված է ուղղահայաց գծիկ, որն, ամենայն հավանականությամբ, սխալի արդյունք է և ոչ թե նոր տողի ցուցիչ:

**ՀԱՏԱԿՆԵՐ** քանակը՝ 75:

Հատակների մի մասը պահպանվել է իրանի  
... պատերի հետ միասին: Մի քանի հատակ ամբողջո-  
... վին վերականգնվել է: Դրանք բոլորը շրջանաձև են,  
... հարթ ու լայն: Անոթներից մեկի աստառին կան գու-  
... նանախշ՝ դեղին ֆոնի վրա սև գույնի կոր գծեր (աղ.  
... 13/1): Կավանոթների հատակներն ունեն հետևյալ  
... տիպերը. ա/ շրջանաձև, հարթ, բ/ շրջանաձև, ուռու-  
... ցիկ, գ/ շրջանաձև, ներձկված, դ/ օղակաձև նստու-  
... կով, ե/ շրջանաձև, իրանի պատերից նեղ:

Հատակներից մի քանիսի կավի մեջ նկատե-  
... լի են ավազաքարի հատիկներ, կան և նրբախեցի օ-  
... ռինակներ: Մեծ մասը պատրաստված է կարմիր կա-  
... վից: Հատակների մի մասի վրա առկա են դուրզի  
... պտույտի շրջանաձև հետքեր: Գունավորման տեսա-  
... կետից դրանք կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

ա/ միագույն – մակերեսն ու աստառը նույն  
... գույնի են՝ կարմրավուն,

բ/ երկգույն – մակերեսը կարմիր է, աստառը՝  
... դարչնագույն,

գ/ աստառը մոխրագույն է, մակերեսը՝ դարչ-  
... նագույն,

դ/ կարմրավուն հիմնագույնով մի բեկոր  
... զարդանախշված է կարմիր գույնով,

զ/ մեկ բեկորի աստառը սպիտակ է, մակերե-  
... սը՝ կարմիր:

**ԶԱՐԴԱՆԱԽՇ ԲԵԿՈՐՆԵՐ** քանակը 175

Գերակշռում է սանրատամ, հատուկ գործի-  
... քով պատկերված ուղիղ և ալիքաձև գծերից կազմ-  
... ված զարդանախշը (աղ. 2/1):

Գտնվել է վեց գունազարդ բեկոր, որոնցից  
... հինգի զարդանախշը մակերեսի վրա է, իսկ վեցե-  
... րորդինը՝ աստառի: Անոթի հատակի վրա՝ ներքուստ,  
... սև գույնով նկարված է ծաղկապսակ (աղ. 13/1), իսկ  
... մեկ այլ մեծ անոթի բեկորի վրա՝ միմյանց հետ հատ-  
... վող դարչնագույն կոր գծեր (աղ. 13/3): Մեկ այլ  
... դարչնագույն բեկորի վրա սև, անկանոն գծեր են:

12 բեկոր զարդարված են ռելիեֆ-ներձկված

հորիզոնական գծերով, որոնք ձգվելով բեկորների  
... ողջ մակերեսներով, առանձնացնում են շուրթն իրա-  
... նից կամ վզիկից:

Անոթներից մեկը զարդարված է քառաչառք  
... կետիկներից կազմված զիզզազ գծերով (աղ. 2/2):  
... Չորս բեկոր հարդարված է ռելիեֆ-ներձկված ալի-  
... քաձև զարդանախշով:

Եղունգազարդ են փոքր կարասների ռելիեֆ  
... գոտիները և շրթերի եզրերը:

Բեկորներից մեկի վրա մատնեքվումով հաս-  
... կազարդ է պատկերված (աղ. 3/2):

Ուշագրավ է դեղին մակերեսով մի բեկոր, ո-  
... ռի վրայի մանր ալիքազարդերը երկու կողմից եզե-  
... րում են ուղղահայաց ռելիեֆ գոտիները (աղ. 13/2):  
... Կան նաև հորիզոնական ռելիեֆ գոտիներով զար-  
... դարված բեկորներ:

Բեկորներից մեկը զարդարված է շրջանաձև  
... դասավորված սեպաձև դաջվածքներից կազմված  
... «արևի» պատկերով /աղ. 3/5/:

Չորս բեկոր ջնարակապատ են: Երեքի վրա  
... դիտվում է զարդանախշ (աղ. 2/3; 12/4), իսկ չորրորդի  
... աստառը պատված է փիրուզագույն ջնարակով:

Երկու բեկոր անգորբապատ է: Անոթի հատա-  
... կամերձ հատվածի (հաստությունը՝ 1 սմ) աստառի  
... կարմիր հիմնագույնը ծածկված է սպիտակ գույնի  
... անգործով, որի վրա տեսանելի են հարդարման հետ-  
... քեր: Մյուս՝ նրբախեցի, կարմիր հիմնագույնով անո-  
... թի մակերեսը ծածկված է կաթնագույն անգործի շեր-  
... տով:

**ԿԱՆԹԵՐ** քանակը՝ 52

Կանթերի ձևերը վկայում են ֆունկցիոնալ  
... տարբեր նշանակության, տիպերի ու չափերի անոթ-  
... ների առկայության մասին: Հիմնականում աղեղ-  
... նաձև են և արմնկաձև: Կտրվածքում ձվաձև են, մա-  
... սամբ՝ կլոր (աղ. 3/4):

Մի քանի կանթերի մակերեսներին ուղղա-  
... հայց, առավակաձև խորացումներ կան (աղ. 2/1,6):  
... Կանթերից մեկի հիմքում, իրանին միակցվելու հատ-

**Հայտնաբերված բեկորների քանակական դասակարգման աղյուսակ**

